


ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԵՆՁԵԼ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻՉՄ

Հայոց ազգայնականությունը
դասնության շրջադարձային
հանգրվաններում



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՆՁԵԼ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻՉՄ

**ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021**

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Մ 287

*Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
գիտական խորհուրդը:*

Խմբագիր՝

քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Փ. Ենգոյան

Գրախոսներ՝

բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Ս. Մուրադյան

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Է. Մինասյան

Մանուչարյան Հ. Գ.

Մ 287 Արարատիզմ: Հայոց ազգայնականությունը պատմության շրջադարձային հանգրվաններում /Հ. Գ. Մանուչարյան: -Եր., 2021, 272 էջ:

Գրքում քննվում են հայոց ազգային գաղափարախոսության՝ ազգայնականության հինգ՝ հայ ժողովրդի արարչական ծագման, հայրենիքի սրբազորման, ազգային ինքնության, ինքնահամախմբման և ինքնազատագրման գաղափարները: Նշված հիմնադրույթներին անդրադարձ է կատարվում հետևյալ հինգ ժամանակահատվածներում՝ V, X, XVIII, XIX և XX-XXI դարերում ունեցած ձեռքբերումների մակարդակով:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2494-4

© ԵՊՀ հրատ., 2021

© Մանուչարյան Հ. Գ., 2021

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց ազգային գաղափարախոսության մասին շատերն են գրել: Շատ-շատերն էլ խոսել ու խոսում են հաճախ, սակայն նրանցից ոչ մեկին դեռևս չի հաջողվել հստակեցնել, թե ինչ է հայոց ազգային գաղափարախոսությունը, ինչ ընդգրկում, կառուցվածք, համակարգ, նպատակ ու անուն ունի:

Ուսումնասիրողների մեծ մասը այն սահմանել է «Հայկական հարցի», «Հայ դատի և պահանջատիրության» շրջանակներում: Սրանք հիմնահարցեր են, որոնք սկզբնավորվել են 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և դրան հաջորդած Սան Ստեֆանոյի զինադադարի և Բեռլինի վեհաժողովի, ապա՝ Հայոց ցեղասպանության ողբերգական իրադարձություններով: Հիմնահարցի նման մոտեցմամբ անտեսվել են հայ ժողովրդի նախընթաց պատմաշրջանների հայկական ազգայնականության բազմադարյա ու բազմաշերտ դրսևորումները: Երկարամյա ուսումնասիրությունների ընթացքում մենք նպատակադրվել ենք հիմնավորել, որ ազգայնականության տարրերը հանդես են եկել դեռևս նախնադարում, նախ՝ որպես պարզունակ աշխարհընկալում, հավատք, ապա՝ ուսմունք, աշխարհայացք, որոնց շրջանակներում ձևավորվել է ազգային արժեքների բացարձակ գիտակցությունն այլ արժեքների շարքում:

Պարզվում է, որ բոլոր հին ազգերի կայացած ու ճանաչված ազգային գաղափարախոսությունները խարսխված են երեք առանցքային գաղափարների վրա: Դրանցից առաջինը ծագման, ցեղի էթնիկական ընդհանրության գիտակցումն է: Մեկ ընդհանուր նախահորից ծագած լինելու լեգենդներն ու առասպելները առկա են բոլոր հին ժողովուրդների ֆոլկլորում:

Երկրորդը սրբագործված հայրենիքի գաղափարն է, այն տարածքի, որտեղ հաստատվելով՝ մարդկային որոշակի խմբեր ստեղծել են իրենց նյութական ու հոգևոր-մշակութային արժեքների համակարգը և այն դարձրել իրենց իսկ ստեղծած առասպելներում ոգի առած դյուցազնածին բնաշխարհը:

Երրորդը ազգային ինքնության գաղափարն է: Այն տվյալ ազգի հազարամյակներով կուտակված էթնիկ ոգու ինքնաճանաչումն է: Բնականաբար, հայոց ազգային գաղափարախոսության հիմքում նույնպես առավել վառ գույներով վեր են խոյանում հայ ժողովրդի, Նոյ Նահապետի առասպելով սրբագործված հայրենիքի, արարչական ծագման և ինքնության գաղափարները: Այսուհանդերձ, յուրաքանչյուր ազգի ապրելավայրից, աշխարհագրական դիրքից ու կարգավիճակից են կախված նրա գաղափարախոսության առանձնահատկություններն ու ենթահամակարգերը: Ելնելով հայ ժողովրդին բաժին ընկած բարդ ճակատագրից՝ նկատում ենք, որ մեզանում առանձնապես կարևորվում են նաև ազգային միասնության՝ ինքնահամախմբման և սեփական ուժերով ինքնազատագրման գաղափարները:

Հայոց ազգային գաղափարախոսության այս հինգ՝ հայ ժողովրդի արարչական ծագման, հայրենիքի սրբագործման, ինքնության, ինքնահամախմբման ու ինքնազատագրման գաղափարները՝ որպես հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրագույն դրսևորումներ, ծնվել են ազգային կեցության զարթոնքի պահին և կատարելագործվել դեպի անկախություն տանող հուժկու շարժումների, ինչպես նաև ճգնաժամային ծանր իրավիճակներից դուրս գալու ճիգերի պահերին: Այս գաղափարները նշված ժամանակաշրջաններից առաջինում՝ V դարում, կերտեցին ու քարոզեցին Մ. Խորենացին, Փ. Բուզանդը, Եղիշեն, Ե. Կողբացին, Ղ. Փարպեցին, երկրորդում՝ X դարում՝ «Սա-

սունցի Դավիթ» էպոսը կերտող հայ ժողովուրդը, երրորդում՝ XVIII դարում՝ հնդկահայ լուսավորիչները՝ Հ. Էմինը, Շ. Շահամիրյանը, Մ. Բաղրամյանը, չորրորդում՝ XIX դարում՝ Խ. Աբովյանը, Ղ. Ալիշանը, Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Ս. Նազարյանցը, Գ. Արծրունին, Րաֆֆին, հինգերորդում՝ XX դարում՝ Հ. Թումանյանը, Ն. Ադոնցը, Ե. Չարենցը, Գ. Նժդեհը, Հ. Շիրազը:

Ազգային գաղափարախոսություններն ունեն երկու հիմնական ուղղվածություն. հզոր ազգերը հետապնդում են նվաճողական, թույլերը՝ ինքնապաշտպանական նպատակներ: Հայոց ազգային գաղափարախոսությունը հայ ժողովրդի տեսակի պահպանության՝ գոյապահպանության գաղափարախոսությունն է: Դժբախտաբար, բազմազգ պետությունների պետականակիր, տիտղոսակիր ազգերի շահերը պաշտպանող ուսումնասիրողները նվաճողական գաղափարախոսությունների՝ պանթոքիզմի, նացիզմի, շովինիզմի հետ խառնել են նաև ազգայնականությունը՝ դրանց հետ անվանարկելով ու մերժելով վտանգված ազգերին զգոնացնող գոյապահպանության գաղափարները:

Համընդհանուր ճանաչում ունեցող ազգային գաղափարախոսությունները անվանակոչվել են կա՛մ ազգային-էթնիկական, կա՛մ հայրենիքի հիմքի վրա: Էթնիկական գործոնի վրա հենվելու դեպքում հայոց ազգային գաղափարախոսությունը կարող է անվանվել «պանարմենիզմ»-համահայկականություն: Նվիրական ու տարողունակ այս անվանումը, սակայն, չի շեշտում աշխարհասփյուռ հայության հայրենիքում համախմբվելու, հայրենիքի կորցրած տարածքների ազատագրության խորհուրդը: Հայ ժողովրդի ոգու մեջ վեր է խոյանում հայոց լեռնաշխարհը, ինչպես Նժդեհն է նշում, «Մասիսն է դայակը հայ ոգու»: Արարատի բիր-լիական պաշտամունքը, հայությանը Արարատի շուրջ համա-

խմբելու բաղձանքը թելադրում են հայոց ազգային գաղափարախոսությունը կապել Արարատի հետ՝ այն անվանելով *արարա-տիզմ*:

Հայտնի է, որ 1980-ական թթ. վերջերին հայտնվեցինք աննախադեպ բարդ իրավիճակում: Սկսեց կործանվել սոցիալիզմի համաշխարհային համակարգը: Բազմազգ պետություններում ազգայնական շարժումներն այնքան աշխուժացան, որ երկու տարվա ընթացքում առաջացան 20 ազգային նոր պետություններ, որոնց թվում էին հայ ժողովրդի երկու հանրապետությունները: Հայոց նորանկախ հանրապետությունների շինարարությունը, դժբախտաբար, սկսվեց ոչ միայն դարաբաղա-ադրբեջանական պատերազմի ծանր պահին, այլև Սպիտակի երկրաշարժի, լիակատար շրջափակման, էներգետիկ ճգնաժամի, հազարավոր փախստական հայերի օրհասական դրության, 2016 թ. քառօրյա և 2020 թ. քառասունչորսօրյա պատերազմների ծանրագույն պայմաններում: Հայ ժողովուրդը հայտնվեց մի բարդ ու հակասական ժամանակահատվածում, որում ծավալվող կործանարար, ինչպես նաև հերոսական գործընթացները դժվար են ընկալվում ու արժևորվում: Ծայր առած համընդհանուր ճգնաժամը դարձավ ոչ միայն աղքատության պարտադրված վիճակ, այլև արժանապատիվ ապրելու իրավունքը քարոզող գաղափարախոսության մերժում: ՀՀ առաջին նախագահը ազգային գաղափարախոսությունը հռչակեց կեղծ կատեգորիա: Իսկ երկրորդ և երրորդ նախագահները, հավատալով 1994 թ. մայիսի 5-ին Բիշքեկում ստորագրված կրակի դադարեցման վերաբերյալ արձանագրությանը, բանակաշինության փոխարեն անտեսեցին ադրբեջանցիների սպառազինության մոլեգին քաղաքականությունը: «Թավշյա» հռչակված հեղափոխության արդյունքում ՀՀ 4-րդ առաջնորդը սկսեց կյանքի կոչել ապօրինի զավթված

ունեցվածքի ետ վերադարձնելու քաղաքականությունը, որով էլ սկսվեց յուրօրինակ դասակարգային պայքար, որն էլ իր հերթին անկայունության ու ճգնաժամի պատճառ դարձավ:

Օգտվելով Հայաստանում տիրող ճգնաժամային իրադրությունից, ԱՄՆ նախագահական ընտրություններից, Ռուսաստանում ստեղծված անկայուն իրավիճակից, Թուրքիայի հարավկովկասյան տարածաշրջանում հաստատվելու նկրտումներից՝ Ադրբեջանը լայնածավալ հարձակում կազմակերպեց Արցախի վրա: Ռուսաստանը, խնդիր ունենալով չեզոքացնել Թուրքիայի շահագրգիռ միջամտությունը, հստակ պայմաններով խաղաղարար ուժեր մտցրեց Արցախ, որով հաստատվեց հրադադար:

Առաջադրված նախապայմաններից ամենագործնականը թերևս պանթուրքիզմի իրականացման համար Մեղրիի տարածքով թուրք-ադրբեջանական կապի մայրուղու պահանջն էր, որի դիմաց տրամադրվում է Արցախը Հայաստանին կապող կաճանը՝ Լաչինի միջանցքը: Ազգի ապագայի նկատմամբ հավատի ու զգալի տարածքների կորուստը, սոցիալական անզորությունը հայ ժողովրդի մոտ առաջացնում են տազնապի տրամադրություն, պարտվողականության և թերարժեքության բազում բարդույթներ: Ահա այս պայմաններում է, որ հայոց ազգային գաղափարախոսության առջև ծառացած խնդիրներին ավելանում են ժողովրդին ստեղծված ճգնաժամից դուրս բերելու, հայրենիքը հայի ապրելու համար անվտանգ դարձնելու, հավատ ներշնչող գաղափարախոսության վերստին կյանքի կոչման անհրաժեշտություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ա) Հայոց ֆենոմենը

Հայը խորհրդավոր ու անմեկնելի է եղել մարդկային հասարակության ողջ ընթացքում: Սուրբ գրքում նա ներկայանում է գերընտիր՝ արարված աստծու կողմից, զտարյուն արիացի, Նոյ Նահապետի սերունդ:

Հնագույն առասպելներն ու ավանդագրույցները հային մարմնավորում են Հայկ Նահապետի, Արա Գեղեցիկի, Վահագն Վիշապաքաղի, Տիգրան Մեծի, Սասունցի Դավթի ու Սասնա մյուս քաջերի, նորոյա առասպելները՝ Անդրանիկի ու Նժդեհի պես քաջ ու անվեհեր, խոհեմ ու շրջահայաց, վեճահոգի ու բարեսիրտ: Հայի հայրենիքը իր սրբազան Արարատով Աստվածաշնչում ներկայանում է որպես ջրհեղեղից փրկված ընտիրների հանգրվան ու բնօրրան: Անողորք ու դաժան ճակատագիրը, սակայն, հային իջեցրեց երկնային արքայությունից և դարձրեց սովորական մահկանացու:

Պատմաբանը ավելի հեռուն գնաց. հային իր տանը դարձրեց եկվոր, ինչ-որ անհայտ հնդեվրոպական նախահայրենիքից անհայտ ու փոշոտ ճանապարհներով եկած, խորհրդավոր ու անիրական ժամանակների գաղթական:

Աստվածաշնչայինին, խիզախություններին, մեծագործություններին ու անհավատալի հաղթանակներին սկսեցին միահյուսել երկչոտն ու տմարդին: Դառը ճակատագրի բերումով հայի հիշողությունը XIX դարից այն կողմ չի անցել: Նա զրկվել էր նույնիսկ իր անցյալի արժեքներին հաղորդակցվելու հնարավորությունից: 70 տարի խորհրդային պետական քաղաքականության՝ անուս հարևաններին հավասարեցնելու միտումով հային

արգելվել է հպարտանալ իր նախնիների ստեղծած նյութական ու հոգևոր արժեքներով: Հայը զրկվել էր իր ավանդույթներից, հողից, քաղաքական միասնությունից, պետականությունից, իր իսկ գոյի գիտակցությունից: Պատմական հանգամանքներն այնպես են ընթացել, որ բոլոր տնտեսական կացութաձևերն ապրած հայ ժողովուրդը արտաքին պայմանների կտրուկ վատթարացման պատճառով ոչ մի կացութաձև իր ավարտին չի հասցրել, և նա չի ստեղծել ոչ մի կացութաձևի ավարտուն շրջանի արժեքներ: Հայի մշակույթին և հոգեկերտվածքին բնորոշ կողմերը անցումային շրջանների հախուռն պողոթնումներն են ու ստեղծագործական անակնկալ մեծագործությունները: Այդպիսի անցումային մի դարաշրջանի հայտնություններն են Մաշտոցն ու Խորենացին, մյուսներինը՝ Նարեկացին, Աբովյանը, Թումանյանը և մյուս հանճարները:

Թվում է, թե նիրհած անհայտությունից հանկարծ վեր հառած մեր մեծերը աշխարհ են եկել հայոց բախտի դարերն անջրպետելու, նաև կամրջելու, ճակատագրի դաժան հեգնանքով ընդհատված ու փոշիացած համազգային արժեքները հայտնագործելու, միավորելու, ամբողջացնելու և իմաստավորելու համար: Եթե մեր մեծերին չհաջողվեր վերականգնել ու ամբողջացնել մեր կորցրած արժեքները, մեր ցաքուցրիվ, բայց ահռելի ներուժը, այն չնպատակամղել ազգապահպանման գործին, դժվար է ասել, թե ուր կտանեին հային նրա իսկ արյունով ներկված հինավուրց ճանապարհները:

Հայի հայրենիքը գտնվել է ոչ միայն տարբեր բուսաբանական-աշխարհագրական գոտիների հատման կետում, ոչ միայն արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների հանդիպման վայրում, այլև գրեթե բոլոր ժամանակների աշխարհակալ պետությունների սահմանագլխին: Հատկապես Գավգամելայի ճա-

կատամարտից հետո (Ք. ա. 331 թ.) երկու մեծ աշխարհակալությունների՝ Պարսկաստանի և Հունահռոմեական աշխարհի միջև ընկած հայ ժողովուրդը մեկընդմիշտ կանգնեց քաղաքական ծանր երկընտրանքի առաջ։ Հայաստանում ձևավորվեցին պարսկամետ և հռոմեամետ խմբակցություններ, որոնք հաճախ հարկադրված հանդես էին գալիս տարբեր տերությունների բանակների կազմում՝ արյունահեղ մարտեր մղելով իրար դեմ։ Այս երևույթը հաճախ բնութագրվել է որպես պարզ դավաճանություն ու անմիաբանություն։ Բայց իրական, քաղաքական կացություններում այս կամ այն աշխարհակալության կողմն անցած քաղաքական գործչի ազգային պատվասիրությունն ասիա թե ինչպես է ըմբռնել ու մեկնաբանել Փավստոս Բուզանդը։ Ձիրավի դաշտում, մի կողմից, պարսից բանակը, մյուս կողմից՝ հայ-հռոմեականը, պատրաստվում էին մարտի։ Աղվանքի թագավոր Ուռնայրը, մոտենալով Շապուհին, ասում է. «Այրերի մեջ քաջ, եթե կամենում ես ինձ իբրև պարզև, հրաման տուր, որ Պապ թագավորի հայկական զորքերի դեմ ես ինքս դուրս գամ..., որովհետև արիաց գնդին պատշաճ է հունաց զորքերի դեմ դուրս գալ, իսկ ես իմ գնդերով հայոց իշխանների դեմ դուրս կգամ»։ Այս ամենը լսելով՝ պարսկական բանակում հայ-հռոմեական զորքերի դեմ կռվի ելած Մերուժան Արծրունին վրդովված դիմում է Ուռնայրին. «Դու գազ (փուշ) գրկեցիր, շատ զարմանալի կլինի, եթե հավաքել կարողանաս»։ Նա գաղտնի լուր է ուղարկում իր երդվյալ հակառակորդ հայոց Մուշեղ զորավարին. «Գիտցի՛ր և պատրաստվի՛ր, Մուշե՛ղ, որ Աղվանից Ուռնայր թագավորը մեծ պարծանքով քեզ պարզև է խնդրել։ Նայի՛ր, թե ինչ պիտի անես»¹։

Ահա մի հուզիչ դրվագ, որն արտահայտում է յուրայինի դեմ հարկադրված կռվի ելած հայ քաղաքական գործչի տրամադրու-

¹ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 236։

թյունը, տրամադրություն, որն ուղեկցել է նրանց դարեր շարունակ:

Հայի հոգևոր վարքագծի բնորոշ կողմերից մեկը եղել է օտարի լծից ազատագրվելու, բզկտված ու մասնատված հայրենիքը միավորելու հարատև տենչը, որը ստեղծագործելու և խիզախելու մշտական լիցք է տվել նրան: Թեև հայն ապրել է տնտեսական ու քաղաքական զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող պետությունների տիրապետության տակ ու աշխարհասփյուռ գաղթաշխարհում, հաճախ պետական քաղաքականությամբ անջրպետված, բայց նրա բոլոր հատվածներում ազգային մշակույթի և գոյատևման խնդիրները միասնական են եղել: Գաղափարական տարբեր դիրքերում կանգնած, տարբեր ուղղությունների հետևող, տարբեր նախասիրություններ ունեցող մշակութային հայ գործիչների ստեղծագործություններում արտացոլվել են համազգային տառապանքն ու վիշտը, պետականությունը կորցրած ու օտարի լծի տակ գտնված հայրենիքի մորմոքը:

Ամենածանր դարերում անգամ հայը, այնուհանդերձ, գտել է գոյատևման կենարար թելը, երբեմն տաճար, ամրոց է կառուցել, երբեմն էլ հազիվ մատյան կամ խաչքար է կերտել՝ իր ճակատագրի պես բարդ, իր հոգու պես ջինջ, իր վշտի պես անհուն: Ահա թե ինչպիսի խորաթափանցությամբ է խաչքարի մեջ այն կերտող հային տեսնում հույն գրող Միցոս Ալեքսանդրոպոլոսը. «Այս կանգնեցված նրբագեղ սալի վրա դրոշմված են հայի բնավորությունը, նկարագիրը, նրա աշխատասիրությունը, հնարամտությունը և արթունությունը, ամենանուրբ և բարդ չափերի մեջ չմոլորվելու, ճակատագրի դժվար շրջադարձերին չկորչելու նրա կարողությունը, իր սեփական խելքի հենքը: Իսկույն նկատելի է նրա համառ կռիվը այն կարծր նյութի հետ, որի վրա նրան վի-

ճակվել է ապրել իր հաղթանակը նրա նկատմամբ: Այդ սալը հայի աշխարհագրությունն է, նրա առանձնահատուկ քայլվածքը քարաշատ հողերի և պատմության դաժան ուղիների վրա»²:

Հայի հոգեկան ներաշխարհի վրա մեծապես ազդել են զանգվածային պանդխտությունը, հալածանքի, հայրենագրկության, անջատումի և կարոտի ծանր զգացումները: Հայ պանդուխտը ոչ միայն իր երկիրը ներխուժած բռնակալների յաթաղանից է տարագրվել, այլև սեփական երկրում գերի ու իրավագուրկ լինելուց: Պանդխտության ճանապարհը դեպի մահ տանող մի անեզր և օտար քաղաքների անհյուրընկալ մայրերին սովամահության տանող ուղի էր:

Մեր զարհուրելի պատմությունը մեր ժողովրդին երկար դարերով դրել է բարբարոս ժողովուրդների կրնկի տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, ինչպես նշում է Թումանյանը, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է: Այսուհանդերձ, արտաքին աշխարհի հետ ունեցած արտակարգ սևեռուն վերաբերմունքի պատճառով, անկախ նրանից, թե ինչ վիճակում է գտնվել Հայաստանը, գաղթական հայը իր մշակութային ձեռքբերումներով կանգնած է եղել հյուրընկալող ժողովուրդների մշակութային ձեռքբերումների կողքին:

Հայի համար միշտ էլ գոյություն է ունեցել գրքի պաշտամունք: Հայը ձեռագիր մատյանը պահել է հատուկ խնամքով: Թշնամու ձեռքն ընկած ձեռագիրը փրկագնել է գերությունից և ոչ թե ավարից, քայքայված գրքերը դեն չի նետել, այլ հուղարկավորել է այնպիսի սրբազան արարողություններով, ինչպես հարազատ ննջեցյալին: Աշխարհում միայն հայն է բուժվել պոեզիայի աստվածային ղողանջներով: Պատահական չէ, որ մեկ հազարամյակ Գրիգոր Նարեկացու ողբերգության մատյանը՝

² Միգոս Ալեքսանդրոպոլոս, Հայերը, Երևան, 1984, էջ 27:

«Նարեկը», եղել է ապագայի նկատմամբ հույսը չկորցրած հայի պաշտելի ու սուրբ գիրքը: Հայը դարեր շարունակ հավատացել է Նարեկացու անմահ պոեզիայի հրաշագործությանը: Այդ ճանապարհով են հայի հոգում սերմանվել այնպիսի համամարդկային բարոյական արժեքներ, ինչպիսիք են՝ մարդասիրությունը, ներողամտությունը, ընկերասիրությունը, համբերությունը, աշխատասիրությունը, հյուրասիրությունը, հայրենասիրությունը և խաղաղասիրությունը:

Հատկապես բզկտված ու տարանջատված հայրենիքի սերը պաշտամունքի չափ սուրբ ու նվիրական է հայի համար: Հայի բարոյական նկարագիրը զարդարող գեղեցիկ ու նվիրական հատկանիշներից են անսահման սերը ընտանիքի նկատմամբ, որդեսիրությունն ու ծնողասիրությունը: Հայ շինականի ընտանիքն այն կաղապարված համակարգն է եղել, որտեղ անգամ օտարի լծի տակ անաղարտ ու անխաթար պահպանվել են հայ ցեղն ու տեսակը: Հավիտենական երախտապարտ ենք հայ կնոջը, որը, դարերի ահեղ փորձությունների դեմ հերոսաբար մարտնչելով, այլազան խառնուրդներից փրկեց ու պահպանեց իրեն վստահված ազգային ամենաթանկ ժառանգությունը, ցեղային արյունը:

Ներկայումս մեզանում էկզոտիկ հավատ փնտրելու գլխավոր պատճառը ազգային ճգնաժամն է: Նման պահերին են տեղի ունենում ազգային ավանդույթների շեշտակի փլուզումները: Սոցիալական կառուցվածքի արմատական հեղաշրջումները ծնում են սուր բախումներ: Երբ ազգային խանդավառությունը փոխարինվում է հոգեբանական հոգնածությամբ, հուսահատության հորձանուտը ազգի ապագա գենոֆոնդին՝ երիտասարդությանը, տանում է դեպի այլասերում: Այս վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ են համախմբող գաղափարներ, համա-

խմբող ու հավատ ներշնչող գործիչներ: Երբ հայ ժողովրդին բաժին ընկած աննպաստ պատմական ընթացքը թելադրում է հայոց ազգային գաղափարախոսության հիմնական ուղղվածությունը, վտանգված ազգի գաղափարախոսությունը, բնականաբար, պետք է գոյապահպանության ուղղվածություն ունենա:

բ) Հայոց ազգային գաղափարախոսության էությունը

*Գաղափարը նման է բույսի
և ծաղկում է իրեն հողում:
Ն. Ադունց*

Ազգը ագրարային հարաբերություններից արդյունաբերականին անցման պատմաշրջանում ձևավորված մարդկային ամենակայուն ու համապարփակ ընդհանրությունն է:

Ազգերը միմյանցից տարբերվում են առաջին հերթին իրենց *էթնիկական* (արյունակցական) ընդհանրությամբ, երկրորդ՝ իրենց *պատմական հայրենիքով*, երրորդ՝ *լեզվով*, չորրորդ՝ *հոգեկան կերտվածքի* ընդհանրությամբ:

Վերոնշյալ չորս հատկանիշները բնութագրել ենք որպես *էթնոտարբերիչ հատկանիշներ*:

Նախազգային հանրություններից՝ տոհմից, ցեղից, ազգույթից (ժողովուրդ) ձևավորված ազգերը տարբերվում են *իրենց տնտեսական կյանքի, սոցիալական կառուցվածքի, քաղաքական համակարգի և գաղափարախոսության* ձևերով ու առանձնահատկություններով³: Նշված հանրություններում ապրող բոլոր էթնիկ ընդհանրություններն ունեցել են տնտեսակարգ, սոցիալական գրեթե նույնանման կառուցվածք, ինքնակառավարման համա-

³ Տե՛ս Հ. Մանուշարյան, Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Երևան, 1988, էջ 11:

կարգ, նույնանման հավատք, աշխարհընկալում, հետևաբար նաև նույնանման գաղափարախոսություն: Նրանց բոլորի հիմքում ընկած են *յուրաքանչյուրի ցեղի ու հայրենիքի սրբազորման և էթնիկական-ազգային ինքնության* (ինքնաճանաչման) գաղափարները: Այնուհանդերձ, ազգերի կենսակերպերի տարբերությունները առաջ են բերել նաև ազգային գաղափարախոսությունների բազմազանություն: Յուրաքանչյուր ազգի գաղափարախոսությունում շեշտվել են տվյալ ազգի առջև որոշակի դարաշրջաններում ու տարածաշրջաններում ծառացած կոնկրետ խնդիրներ:

Ինչպես ազգն է պատմական երկարատև զարգացման բարդ գործընթացի արդյունք, այնպես էլ ազգային գաղափարախոսությունը այդ նույն գործընթացի հետևանք է: Այն տոհմացեղային գաղափարաբանությունից վեր բարձրացավ, անցավ ազգույթի ֆիլտրով, բյուրեղացավ ու համազգային ճանաչում ստացած ամբողջական ուսմունք դարձավ արդյունաբերական հասարակարգին անցման փուլում և գաղափարապես նախապատրաստեց մարդկային հանրույթներից բարձրագույնի՝ ազգերի ձևավորումը:

Ազգային գաղափարախոսությունը տեսական հայացքների ավարտուն համակարգ է: Այն ազգի գործունեության հոգևոր և մտավոր հիմքն է: Նրա նպատակն է առաջադրել ազգի առջև ծառացած կենսական հրատապ խնդիրների լուծման գաղափարներ, արմատավորել դրանք մարդկանց գիտակցության մեջ և կազմակերպել դրանց իրականացման իրատեսական գործընթացը: Այն հանդես է եկել նախ որպես աշխարհըմբռնում, զգացմունք, հավատք, ապա՝ ուսմունք, աշխարհայացք, որոնց շրջանակներում տրվել է ազգային արժեքների բացարձակ գիտակցությունն այլ արժեքների շարքում: Ինչպես ցանկացած պատ-

մական շարժում, ազգայնականությունը ևս ունի իր խոր արմատները: Նրա կայացմանը նախորդել են պատմական և մշակութաբանական բնույթի ստեղծագործություններ, ֆոլկլորային հավաքածուներ, գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք նպատակամղված էին ժողովրդի մեջ հայրենասիրական ազգային զգացմունքներ առաջացնելուն:

Ազգային գաղափարախոսությունն այնպիսի մտածելակերպ է, փայփայլած իդեա, որը մարդու ուղեղը և սիրտը լցնում է կենսունակ մտքերով ու զգացումներով, դրդում նրան կազմակերպված ու համակարգված գործողությունների⁴, և, իրոք դառնում է հզոր նյութական ուժ, երբ տիրապետում է ազգի հիմնական զանգվածին:

Ազգային գաղափարախոսությունը հանդես է գալիս քաղաքական, բարոյական, գիտական, կրոնական, գեղագիտական, փիլիսոփայական հայացքների ձևով:

Ազգային գաղափարախոսությունը օժտված է զարգացման ներքին օրենքներով՝ գաղափարների հաջորդականության և ժառանգման սկզբունքով: Լինելով տվյալ պատմական պայմանների արտահայտություն՝ յուրաքանչյուր գաղափարախոսություն ներառում է նախորդ դարաշրջանների գաղափարների կենսունակ նվաճումները՝ համազգային այն գաղափարները, որոնք դեռևս չեն իրագործվել կամ արդիականությունը դեռևս չեն կորցրել:

Ազգային գաղափարախոսությունը իր բնույթով նաև ընդհանրական է: Որևէ ժողովրդի կողմից առաջադրված գաղափարները դառնում են նաև նման իրավիճակում հայտնված այլ ժողովուրդների սեփականությունը: Ազգային գաղափարախոսությունը տեսականորեն ընդհանրացնում է տվյալ ազգի արմա-

⁴ Տե՛ս **Hans Kohn**, The idea of nationalism, Macmillan: New Work, 1945, pp. 18-20:

տական շահերը, նրա ենթագիտակցության մեջ գոյություն ունեցող սոցիալական ու հոգեբանական չբյուրեղացված, չամբողջացված, հանրորեն դեռևս չմարսված տարրերը, ազգային խառնվածքի, ազգի պատմական ճակատագրի առանձնաբար գոյություն ունեցող, բայց դեռևս չհամակարգված տարրերը: Այդ բոլորը ուղղված են ազգային կյանքի ակտիվացմանն ու համախմբմանը, մեծ պայքարի նախապատրաստմանը:

Ազգի գաղափարախոսության կարևոր հիմնադրույթներից առաջինը թերևս ցեղի՝ էթնիկական, կենսաբանական ծագման ընդհանրության գիտակցումն ու սրբագործումն է, որը արտահայտվում է մարդկանց՝ որոշակի էթնոսի պատկանելու համոզմունքով: Մեկ ընդհանուր նախահորից ծագած լինելու լեզենդներն ու առասպելները առկա են բոլոր հին ժողովուրդների ֆոլկլորում: Ցեղային ընդհանրության գաղափարը ավելի գիտականորեն հիմնավորվում է մարդաբանական տիպի միատեսակության մեջ⁵:

Տոհմացեղային հանրույթի ձևավորման առաջին պայմանը մշտական բնակավայրում նստակյաց կյանքով համատեղ ապրելուն անցնելն էր,։ Սա շրջադարձային այն պահն էր, երբ թափառական հոտերի ժամանակավոր կայանատեղից *դարածքը* դառնում էր կազմավորվող տոհմացեղային հանրույթի *հայրենիքը*՝ նվիրական այն վայրը, որտեղ հաստատվելով՝ մարդկային որոշակի խումբը ստեղծում էր իր նյութական ու հոգևոր-մշակութային արժեքների համակարգը՝ այն ճանաչելով իր հայրենիքն ու իր իսկ ստեղծած լեզենդներում ոգի առած դյուցազնածին բնաշխարհը: Ցեղի ու հայրենիքի գաղափարները, սրբագործվելով, առասպելների ու լեզենդների տեսք ստանալով, մտնում են ազգի գենի ու գոյի գիտակցության մեջ՝ նրա համար դառնալով

⁵ Տե՛ս Հ. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 12:

ինքնության-ինքնաճանաչման համակարգ: Յեղային ինքնությունը ենթադրում է էթնիկական մտածողության ինքնատիպություն, էթնիկ արժեքների ինքնաճանաչում: Նրա բովանդակությունը ազգային կեցության, ազգային անցյալի, անհատի ազգային ըմբռնումների ամբողջությունն է:

Ազգային ինքնությունը Բ. Բյուզանդի բնորոշմամբ այն է, որի հիման վրա մարդկանց խումբը իրեն վկայակոչում է որպես ամբողջություն, այսինքն՝ որպես «մենք», հասարակության ցանկությունը և կարողությունը՝ պահպանելու լեզվի, մշակույթի միասնականության, կրոնի և ազգային սովորույթների ավանդական նմուշները⁶:

Անցյալի իմաստավորումը խոր արմատներ ունի: Պատմական հիշողությունը ընդունում և պահպանում է իր մեջ միայն այն, ինչի համար ազգային ինքնագիտակցությունը իր վրա պատասխանատվություն է վերցնում: *Ազգային ինքնությունը տվյալ ազգի՝ հազարամյակներով կուտակված էթնիկ ոգու ինքնաճանաչումն է:*

Արիստոտելի համոզմամբ էթնիկական ինքնությունը կազմում են մարդկային բնության մի քանի լավագույն բնութագծերը, ինչպիսիք են հայրենիքի նկատմամբ սերը, ինքնազոհողությունը, կենսունակությունը, ազնվությունը և հանուն հայրենիքի անհավասար կռիվ մղելու պատրաստակամությունը⁷:

Այն հարցին, թե ով ենք մենք՝ հայերս, ինչպես են մեզ բնութագրում մեր թշնամիները, ինչպես ենք մենք բնութագրում ինքներս մեզ, անթիվ են: Այժմ ինչպե՞ս է գիտակցում ազգային «ես»-ը փոքր հայրենիք, մեծ գաղթաշխարհի և աշխարհասփյուռ

⁶ Տե՛ս Միջազգային հարաբերությունների արդի տեսություն, Երևան, 2001, էջ 215:

⁷ Տե՛ս **J. A. Fishman**, Language and ethnicity in bilingual education. –Ln: Culture, Ethnicity and Identity, Academic Press, 1983, p. 130:

պանդխտություն ունեցող հայ ժողովուրդը: Ակնհայտ է, որ նա իրեն ճանաչում է որպես մշակութաստեղծ ժողովուրդ, որին բախտ է վիճակվել ապրել մշակույթ ոչնչացնող ժողովրդի հարևանությամբ, խաղաղասեր ժողովուրդ՝ ռազմատենչի հարևանությամբ, հին ժողովուրդ՝ նորագոյացությունների հարևանությամբ, պետականաստեղծ ժողովուրդ՝ պետականություն ոչնչացնողների հարևանությամբ, օրինաստեղծ ժողովուրդ՝ անօրենների հարևանությամբ:

Այժմ թռուցիկ անդրադարձով տեսնենք, թե ինչպես են հանրահայտ գաղափարախոսություն ունեցող ազգերը գաղափարայնացրել իրենց ցեղի, հայրենիքի և ինքնության հատկանիշներ:

- Պանսլավոնիզմի (համասլավոնականություն) հիմքում դրվել է ժողովուրդների պատմամշակութային տարատեսակների ըմբռնումը, ըստ որի՝ սլավոնական ժողովուրդները տարբերվում են եվրոպական ժողովուրդներից և պարտավոր են համախմբվել ու պահպանել իրենց տեսակը:
- Պանգերմանիզմի (համագերմանականություն) հիմքում դրվել է գերմանալեզու ժողովուրդների ցեղային ընդհանրության գաղափարը, որի նպատակն է միավորել գերմանալեզու ժողովուրդներին և հաստատել գերմանական համաեվրոպական գերիշխանություն:
- Պանթուրքիզմը (համաթուրքականություն) քարոզում էր, որ Ադրիատիկի ափերից մինչև Չինաստան ընկած թուրքալեզու ժողովուրդները եղբայրներ են:
- Սիոնիզմն էլ հռչակում է, որ աշխարհի բոլոր հրեաները միասնական ազգի անդամներ են, նրանց նպատակն է Պաղեստինում ստեղծել ազգային պետություն և աշխար-

հասփյուռ հրեաներին հավաքել պատմական հայրենիքում՝ սուրբ Սիոն լեռան ստորոտում:

Փոքր ու վտանգված ազգերից շատերի, այդ թվում և հայերի ազգային գաղափարախոսությունները հայտնի են նացիոնալիզմ անվանումով: Հիմնահարցի քննությամբ զբաղվող մասնագետները գտնում են, որ նացիոնալիզմը (ազգայնականություն) ամենատարածված գաղափարախոսությունն է աշխարհում⁸: Այն ունի բազմաթիվ դրսևորումներ ու տարատեսակներ: Այսուհանդերձ, դրանց բոլորի հիմքում էլ դարձյալ դրված են ցեղի, հարենիքի և նրանց ինքնաճանաչման-ինքնության գաղափարները: Օրինակ՝ լիբերալ նոցիոնալիզմը ազգը դիտում է որպես եղբայրական ընդհանրություն: Ավանդական նացիոնալիզմը ձգտում է ազգին համախմբել անցյալի փառահեղությունների ներքո: Մեսիական նացիոնալիզմն առաջացնում է այն զգացումը, որ տվյալ ազգի անդամները հավատում են իրենց ազգի արարչական ծագմանը⁹:

Ազգային գաղափարախոսությունը նպատակամղում է ինչպես հզոր ազգերին, բարձրացնում նրանց հուզող այն հիմնահարցերը, ինչը կապված է եղել ինքնահամախմբվելու, այլ ժողովուրդներին նվաճելու, նվաճվածներին դիմազրկելու և տարրալուծելու հետ, այնպես էլ ձգտել է արթնացնել վտանգված ազգերի խեղված ոգին, նպաստել նրանց ինքնության հաստատմանը և ի վերջո ազատության հասնելու ուղիների հայտնագործմանը: Այսինքն՝ ազգային գաղափարախոսություններն ունեն երկու հիմնական ուղղվածություն՝

⁸ Տե՛ս **M. Hagopian**, The phenomen of Revolution, New York, 1975, p. 287:

⁹ Տե՛ս **E. Haas**, Beyond the Nation-State-Functionalism and international organization, Stanford University press, 1964, էջ 465-466:

- հզոր ազգերի գաղափարախոսությունները հետապնդում են նվաճողական,

- թույլերինը՝ ինքնապաշտպանական նպատակներ¹⁰:

Բուրժուական հասարակական հարաբերությունների ձևավորման և գաղութային լայնամասշտաբ նվաճումներին զուգընթաց կյանքի կոչվեց ռասիզմը՝ իբրև նվաճողական քաղաքականության անդրանիկ ուսմունք: Այն ազգերին բաժանում է ըստ կենսաբանական հատկանիշների և ձգտում է օրինականացնել նրանց մի խմբի տիրապետությունը մյուսների վրա: Այդ տեսությունը հիմնավորվում է հանրահայտ փաստերի՝ մարդկանց կենսաբանական խմբերի մարմնի կառուցվածքի մասին համեմատական անատոմիայի տվյալների քաղաքականացման ճանապարհով: Ելնելով այդ բնական փաստերից՝ նրանք առաջ քաշեցին ստորին և բարձրագույն ռասաների մասին տեսությունը՝ մարդկությանը բաժանելով տերերի և ստրուկների ռասաների: Ռասիզմը պաշտոնական գաղափարախոսություն դարձավ Գերմանիայում: Այն հանդիսացավ նացիոնալ-սոցիալիստների պրակտիկ գործունեության ծրագիրը:

Երբ համամարդկային բարոյական սկզբունքներով ծնունդ առած ինտերնացիոնալիզմը վերանվանվեց «սոցիալիստական ինտերնացիոնալիզմ» և դարձավ բոլշևիկյան Ռուսաստանի պաշտոնական գաղափարախոսություն, նպատակամղվեց ծառայել ռուսական ամբողջատիրության և գաղութային նվաճումների շահերին: «Ռուսական կոմունիզմը»,– նշում է Ն. Բերդյաևը,– դժվար է հասկանալ նրա բնավորության երկակիության պատճառով: Մի կողմից՝ այն համաշխարհային, ինտերնացիո-

¹⁰ Տե՛ս Հ. Մանուչարյան, Ազգային գաղափարախոսություն, «Քաղաքագիտություն», Երևան, 2006, էջ 545:

նալ երևոյթ է, մյուս կողմից՝ ռուսական և ազգային երևոյթ»¹¹:
...«Տեղի ունեցավ մարքսիզմի զարմանալի ձևափոխություն, ոչ
այդքան ռուսական ծագմամբ և ոչ ռուսական բնավորությամբ,
ձեռք է բերում ռուսական ոճ, արևելյան ոճ, որը գրեթե մոտենում
է սլավոնոֆիլությանը»¹²:

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ազգերի աստի-
ճանական մերձեցման մարքսիստական ուսմունքը վերածվեց
ազգերի ծրագրավորված նվաճման և անխնա ձուլման սկզբուն-
քի:

Պանթուրքիզմն էլ հիմնավորում էր թուրքալեզու ժողովուրդ-
ներին Օսմանյան կայսրությանը հպատակվելու և ձուլվելու ան-
հրաժեշտությունը:

Ուշագրավ է, որ իրենց զավթողական ծրագրերն անարգել
իրականացնելու և ենթակա ժողովուրդներին ուժացնելու, մեծ
տերություններն իրենց գաղափարախոսությունները անարգել
պարտադրելու համար հետևողականորեն արժեգրկում ու մեր-
ժում են նվաճված ժողովուրդների ոչ միայն գոյատևելու իրա-
վունքը, այլև գոյապահպանության գաղափարախոսությունը: Այ-
սինքն՝ *նրանք ձգտում են գաղափարապես ևս նվաճել քաղաքա-
կանապես արդեն նվաճված ժողովուրդներին:*

Մեծագույն արհամարհանք տածելով փոքր ազգերի նկատ-
մամբ՝ նոր օսմանական Ֆաուդ փաշան գրել է. «Մի մեծ Գերմա-
նիա՝ 40 մլն բնակչությամբ, մի Ֆրանսիա, ... մի Անգլիա, այս բո-
լոր ազգությունները կկարողանան իրենց զորավոր և օգտակար
անհատականությունը պահպանել ժամանակի ընթացքում, բայց
մի Մոնթենեգրո, մի սերբական իշխանություն, մի հայկական
թագավորություն, ամենափոքր օգուտ չտալով ո՛չ իրենց և ո՛չ էլ

¹¹ Н. А. Бердяев, Истоки и смысл русского коммунизма, М., 1990, էջ 7:

¹² Նույն տեղում, էջ 116:

մարդկությանը, կարող են առավել կամ նվազ ցնորական պետություններ լինել, մարդկային հին բաժանումների դժբախտ մնացորդներ, ամեն նոր աշխարհակալի որսը՝ դրանով իսկ վտանգելով աշխարհի խաղաղությունը»¹³:

Փոքր ու վտանգված ժողովուրդների ազգային գաղափարախոսություններն առավել մոլեռանդությամբ էր ոչնչացնում խորհրդային դոկտրինը. «Նացիոնալիզմը գաղափարախոսություն և քաղաքականություն է,– նշվում է խորհրդային հանրագիտական բառարանում,– որը ազգային բացառիկության և ազգային գերազանցության պրոպագանդան մեջ է: Այն սերմանում է ազգային ատելություն ինչպես տարբեր երկրների ժողովուրդների, այնպես էլ միևնույն երկրի մեջ ապրող տարբեր ազգերի ու էթնոսների միջև: Ըստ միջազգային օրենսդրության՝ նացիոնալիզմը նշանակում է քաղաքական հանցագործություն և մարդու իրավունքների խախտում: Նացիոնալիզմը հասարակական-քաղաքական բարդ երևույթ է, որը ծնում է բազմաթիվ կոնֆլիկտային իրադրություններ: Նացիոնալիզմի դրսևորումները ի հայտ են գալիս պատմական հարաբերություններում, մշակույթների, տնտեսական, քաղաքական, ինչպես նաև կրոնական կենսակերպերի տարբերություններում»¹⁴:

Փոքրաթիվ ու վտանգված ազգերի և նրանց գաղափարախոսությունների դեմ անխնա սուր են ճոճում նաև վերազգային այնպիսի քաղաքական գաղափարախոսություններ, ինչպիսիք են կոսմոպոլիտիզմը, կոմունիզմը, գլոբալիզմը:

Կոսմոպոլիտիզմը կոչ է անում հրաժարվել հայրենասիրական զգացումներից, ցեղային ու ազգային ավանդույթներից ու արժեքներից հանուն «մարդկային ցեղի միասնության»: Այն հիմ-

¹³ «Արոր», Ա տարի, թիվ 6, 1910, էջ 182:

¹⁴ Политология, Краткий энциклопедический словарь, М., 1997.

նավորում էր գերտերությունների համաշխարհային տիրապետության հաստատման անհրաժեշտությունը, մերժում ժողովուրդների ազատության ու անկախության գաղափարը¹⁵:

Կոմունիզմի ուսմունքը կյանքի կոչողները համոզում էին, որ հասարակության զարգացման մի որոշակի աստիճանում լիովին կանհետանան քաղաքական ու իրավական հաստատությունները, կմահանա ազգային պետությունը, տեղի կունենա ազգերի համակողմանի մերձեցում, և, ի վերջո, վերացում: Հետևաբար անիմաստ էին համարում ազգերի և ազգային արժեքների պահպանմանն ուղղված ջանքերը:

Գլոբալացումը միջազգային հանրության զարգացման նոր ուսմունք է, որը նույնպես միտված է աշխարհի միատարրացման, միասնական տնտեսական քաղաքական կենտրոնների ու իրավական դաշտի ստեղծմանը¹⁶:

Դիմակայելով այսքան ահեղ հակառակորդներին ու նրանց գերիշխանությունը հիմնավորող գաղափարախոսություններին՝ փոքրաթիվ ու վտանգված ազգերն ի վերջո ի՞նչ են ուզում իրենց նացիոնալիզմով, որն այն կրողների ըմբռնմամբ *ազգայնականություն է*, իսկ հակառակորդների մեկնաբանությամբ՝ *ազգայնամոլություն*:

Ջին Բեթքե Էլշտեյնը պնդում է, որ «...մեր ժամանակներում առաջնային քաղաքական ուղղվածությունը նացիոնալիզմն է, և որ ինչպես միջազգային հարաբերությունների գիտակները, այնպես էլ քաղաքական տեսաբանները պետք է «նորից դպրոց գնան» և սովորեն կամ (վերասովորեն) պատմություն, աշխարհագրություն, մշակույթ, հատկապես ձեռք բերեն կրոնական և

¹⁵ Տե՛ս Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975, էջ 218:

¹⁶ Տե՛ս Практика глобализации: игры и правила Новой эпохи, М., 2000, с. 57, **А. С. Панарин**, Искушение глобализмом, М., 2003, с. 105:

ազգային համոզմունք և ինքնությունը որոշելու կարողություն, եթե նրանք ցանկանում են հաջորդ (XXI – Հ. Մ.) դարի քաղաքականության մասին որևէ հետաքրքրական կամ ըմբռնելի միտք են արտահայտել»¹⁷:

Ազգն է հասարակական ու քաղաքական բոլոր ուժերի աղբյուրը: Սեփական ազգի նկատմամբ հավատարմությունն է, որ պետք է գերակա լինի ազգի յուրաքանչյուր անդամի մեջ: «Ազգայնականությունը, – գրում է Անտոնի Դ. Սմիթը, – գաղափարական շարժում է՝ նպատակամղված ազգի ինքնիշխանության, միասնության և ինքնության պահպանմանը»¹⁸:

Փոքր ազգերի մեծ ընտանիքում յուրաքանչյուրի ապրելավայրից, գրաված տեղից ու կարգավիճակից են կախված նրա գաղափարախոսության առանձնահատկությունները՝ ենթահամակարգերը, նրբերանգները, ուղղվածությունն ու բովանդակությունը: Ելնելով հայ ժողովրդին բաժին ընկած ու դարերով նրան ուղեկցած բարդ ճակատագրից՝ կարծում ենք, որ բացի ազգային գաղափարախոսությունների հիմքում դրված *ցեղի, հայրենիքի ու ազգային ինքնության* այս ընդհանրական գաղափարներից՝ պետք է փնտրել հայ ժողովրդին բնորոշ կենսական այլ գործոններ ևս: Մեր հետազոտության արդյունքում եկանք այն կարծիքին, որ մեզանում առանձնապես կարևորվում է ազգային միասնության, այսինքն՝ *ինքնահամախմբման* և սեփական ուժերով ազատագրության՝ *ինքնազատագրման* գաղափարները:

Ինքնահամախմբման բնատուր ընդունակությունից է կախված յուրաքանչյուր ազգի կենսունակությունը: Թեև ազգը մարդկային հանրույթի առավել ամուր ու ամբողջական կառույցն է, այնուամենայնիվ ազգի՝ առանձին դասակարգերի ու սոցիալա-

¹⁷ Միջազգային հարաբերությունների արդի տեսություն, Երևան, 2001, էջ 199:

¹⁸ **Անտոնի Դ. Սմիթ**, Ազգային ինքնություն, Նևադա, 1991, էջ 74:

կան խմբերի ներքին տրոհվածությունը դժվարացնում է ազգի լիակատար համախմբումը: Այդ բոլորին եթե ավելացնենք հայ ազգի բացառիկ տրոհվածությունը տարբեր տեղությունների, համադաշնությունների, քաղաքակրթությունների և տարբեր աշխարհամասերում գտնվող գաղթավայրերի միջև, կհամոզվենք, թե ազգային միասնության ապահովումը որքան դժվարին է մեզ համար, բայց և որքան անհրաժեշտ՝ հատկապես ներկայումս վերստին *արտագաղթի ճանապարհը բռնած* հայ ժողովրդին *հայրենիքում և գենոֆոնդը սփյուռքում* ապահովելու համար: Ինքնահամախմբման կարողությունն ու բարոյական ուժն է գոտեպնդում փոքրաթիվ ժողովուրդներին գոյապահպանության համար մղված պայքարում:

«Ինչպես որ միատեղ հավաքված հարյուր կամ հիսուն տղամարդու մեջ ավելի զորություն և ուժ է լինում, քան հազարների մեջ, որոնք միմյանցից հեռու են ու անջատ, նույնպես և սովորաբար միշտ էլ ավելի հզոր է որևէ փոքրիկ ազգ կամ ցեղ, որ միաբան է, քան թե անսեր ու անմիաբան ազգը»¹⁹, – գրում է XVIII դարի նշանավոր հրապարակախոս Մովսես Բաղրամյանը:

Իսկ ինքնազատագրման գաղափարը ենթադրում է սեփական ուժերով հայրենիքի ազատագրում և անկախ ու ինքնիշխան պետականության ապահովում: Գարեգին Նժդեհը դիպուկ է ասել, որ իր ուժերից զատ ամեն ինչի ապավինող ժողովուրդը չի կարող ունենալ անկախ հայրենիք ու ազատ ապրելու հնարավորություն: Դժբախտ է այն ժողովուրդը, որն իր դժբախտությունները վերագրել է արտաքին պատճառներին, փրկության հույսը դրել արտաքին ուժերի վրա: Մոռանում ենք, որ թշվառներին անկելանոց ու ապաստան են տալիս, ոչ թե անկախ հայրենիք²⁰:

¹⁹ Մ. Բաղրամյան, Նոր տեսության որ կոչվում է հորդորակ, Երևան, 1991, էջ 104:

²⁰ Տե՛ս Գ. Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2001, էջ 64:

Այսպիսով՝ հայոց ազգային գաղափարախոսությունը սահմանվում է որպես տեսական համակարգերի ու հայացքների մի ամբողջություն, որը ներառում է հայ էթնիկական ընդհանրության (էթնոսի) արարչական ծագման, պատմական հայրենիքի սրբագործման, ազգային ինքնության, ինքնահամախմբման ու ինքնազատագրման գաղափարների ամբողջությունը:

Հայոց ազգայնականությունը հայ ժողովրդի ազգային գիտակցության բարձրագույն դրսևորումն է, որը ծնվել է ազգային կեցության զարթոնքի պահին, նախապատրաստել ազգի առաջընթացի մեծ թոփքները, այնուհետև՝ աննպաստ ու ճգնաժամային պահերին, խամրել և ամփոփվել է ազգի ոգու ընդերքում, մինչև որ ստեղծվել են քիչ թե շատ նպաստավոր պահեր, որպեսզի նորից վերածնվեն, առաջնային դառնան և իրենց մոգական ուժով գոտեպնդեն ազգի առողջ զանգվածին՝ մղելով նորանոր խիզախումների:

Հայ իրականության մեջ նախորդ ու հաջորդ պատմաշրջանների միջև խզումն այնքան խորն է եղել, որ ամեն նոր դարաշրջանի կենտրոնում կանգնած գործիչը նախ ջանքեր է թափել վերականգնելու, հայտնագործելու նախորդ պատմաշրջանի ձեռքբերումները, ապա՝ նոր մակարդակով մշակել, ուղենշել գալիքի, ապագայի հիմնապահանջները, զրոյից սկսել, վերականգնել, հաղթահարել, յուրացնել անցյալի արժեքները և նոր միայն կերտել նորը:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ ազգային ինքնության պոռթկումի ակնթարթներում է միայն վերելք ապրել ազգային կյանքը, հոգևոր ներուժի նկատմամբ հավատն ու վստահությունն են փորձության ծանր պահին կյանք տվել ազգին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց ինքնության առաջին մեծ պոռթկումը տեղի է ունեցել V դարում, երբ

աշխարհայեցողությունը և ազգային մտածողությունը հասել էին ազգային գաղափարաբանության հիմնադրույթների հայտնագործման և համակարգման մակարդակին²¹:

Հաջորդ զարթոնքն ի հայտ եկավ դասական միջնադարում՝ սկզբնավորելով արաբական լծի թոթափման գործընթացը և ամբողջացավ Բագրատունյաց պետականության ստեղծմամբ: Այն իր արտացոլումը գտավ հայոց ինքնության միջնադարյան «հանրագիտարանում»՝ էպոսում: Հաջորդ քիչ թե շատ նշանավոր թռիչքները կայացան XVIII դարավերջին Մադրասում և XIX-XX դարերի նպաստավոր փուլերում: Հայոց ազգային զարթոնքի նշված շրջադարձային այս հանգրվաններում ծնվեցին ռազմի դաշտում հայոց հաղթանակները կերտած հերոսները և նրանց անտես ուղեկիցները, հավատ ներշնչող, հաղթանակի ու ազատության գաղափարները կերտող հայոց հոգևոր մեծերը՝ Խորենացին, Նարեկացին, Շնորհալին, Չամչյանը, Աբովյանը, Րաֆֆին, Թումանյանը, Ադոնցը, Նժդեհը և ուրիշներ, որոնք հայտնաբերեցին նախորդ դարերի ազգային մոռացված արժեքները, ինքնաճանաչ դարձրին հայ ժողովրդին, ոգեշնչեցին նրանց և ուղենշեցին ճգնաժամային իրավիճակներից դուրս գալու ճանապարհը և զարգացման մայրուղիները:

Հերոսական այս պատմաշրջանների միջև ընկած մոայլ ժամանակահատվածներում ծանր ու մոայլ վարագույր է իջնում հայոց հոգևոր կյանքի վրա:

* * *

Եվ ահա վերստին հայտնվել ենք մի բարդ ու հակասական ժամանակահատվածում, որում ծավալվող հասարակական, ինչ-

²¹ Տե՛ս Հ. Մանուչարյան, Հայ քաղաքական մտքի պատմություն, Երևան, 2013, էջ 87-97:

պես նաև հերոսական գործընթացները դժվար են ընկալվում և արժևորվում:

Հայտնի է, որ 1989 թվականից սկսեց կործանվել սոցիալիզմի համաշխարհային համակարգը: Խորհրդային Միությունը հայտնվեց կառուցվածքային արմատական փոփոխությունների երկունքի մեջ: Բազմազգ պետություններում ազգայնական շարժումներն այնքան աշխուժացան, որ երկու տարվա ընթացքում 20 ազգային նոր պետություններ առաջացան: Դրանցից առաջինը թերևս Հայաստանի Հանրապետությունն էր և միջազգայնորեն դեռ չճանաչված Արցախի Հանրապետությունը: Նորանկախ Հայաստանի Հանրապետության պետական շինարարությունը ցավալիորեն սկսվեց ոչ միայն դարաբաղա-ադրբեջանական պատերազմի ծանր պահին, այլև Սպիտակի երկրաշարժից կրած անդառնալի կորուստների, լիակատար շրջափակման, էներգետիկ ճգնաժամի, Ադրբեջանից փախած հազարավոր հայերի օրհասական դրության պայմաններում:

Նախընթաց հասարակարգի տիրող դասակարգային ու կուսակցական քաղաքականությանն ու գաղափարախոսությանը փոխարինեցին ազգային ու տարածաշրջանային մարտահրավերներն ու գաղափարախոսությունները: Հասարակական-քաղաքական ու տնտեսական նոր պահանջներին համապատասխան անկախության ուղին բռնած երկրներում որոշվեց անցում կատարել դեպի շուկայական հարաբերությունները:

Ակնհայտորեն գոյություն ունեցող բարդ ու իրարամերժ այս զարգացումները գիտականորեն բացատրելու անհրաժեշտությունն այս բարդ փոխակերպումների շարունակականության պայմաններում, դրանց գիտական իմաստավորման և լուծման ուղիների մշակման փորձերը կապվում են մեծ դժվարությունների ու ռիսկի հետ:

Ակնհայտ են քաղաքական, տնտեսական, բարոյական, հոգեբանական, այսինքն՝ համընդհանուր ճգնաժամի դրսևորումներն ու հետևանքները: Հայ հասարակությունն այսօր կարիք ունի վճռական վերափոխումների, ոգևորիչ ծրագրերի ու գաղափարների, հատկապես կորցրած հավատի վերականգմանը նպաստող համոզիչ գաղափարախոսության: Սակայն ծայր առած համընդհանուր ճգնաժամը դարձավ ոչ միայն աղքատության պարտադրված վիճակ, այլև «ազգային չգիտակցված կեցություն»²², որի արդյունքում մերժվում էին ոչ միայն ազգային ինքնությունը, ապրելու հույսն ու ապագայի նկատմամբ հավատը, այլև ազգային արժանապատիվ ապրելու անհրաժեշտությունը քարոզող գաղափարախոսությունը: Կյանքի կոչվեց «Ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է» սկզբունքը: «Կեղծ քաղաքական կատեգորիա է նաև «ազգային գաղափարախոսություն» հասկացությունը,– ընդգծում է Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը,– որովհետև ժողովրդավարության պայմաններում անհնար է ողջ ազգին համախմբել մեկ միասնական գաղափարախոսության շուրջ»²³:

Լ. Խուրշուդյանը հայոց ազգային արժեքների դեմ կատարվող այս մերժողական վերաբերմունքը որակում է որպես Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականություն²⁴:

Ազգի ապագայի նկատմամբ հավատի կորուստը, սոցիալական անզորությունը առաջացնում են տագնապի տրամադրություն, պարտվողականություն և թերարժեքության բազում բարդույթներ:

²² Տե՛ս **Ս. Սարինյան**, նշվ. աշխ., էջ 281:

²³ «Հայաստանի Հանրապետություն», 26 ապրիլի, 1994:

²⁴ Տե՛ս **Լ. Խուրշուդյան**, Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 1999, էջ 233:

«Գիտական հոգեբանությունը» վաղուց է ապացուցել,– նշում է Գ. Նժդեհը,– որ աղետներ տեսած, արհավիրքների ցնցումների ենթարկված ժողովուրդները սկսում են տառապել հոգեկան ետընթացով: ... Նախ և առաջ նրան պատում է թերարժեքության տանջալից զգացումը, որի պատճառով դառնում է քաղաքական հոռետես»²⁵: Այս բարդույթը զանգվածային դարձավ հետխորհրդային Հայաստանում:

Արդի գերբարդ պատմաշրջանում հայաթափվում է Հայաստանը, *բացվում են Հարավի դռները*, ասպարեզ են մտնում հին մերժված, բայց նոր նկրտումներ ունեցող ուժերը: Հայաստանը հայ ժողովրդի համար դառնում է ապրելու համար աննպաստ երկիր: Այս պայմաններում հայոց ազգային գաղափարախոսության առջև պատմականորեն ծառացած խնդիրներին՝ ցեղի, հայրենիքի, ազգային ինքնության, ինքնահամախմբման ու ինքնագատազրման հիմնադրույթներին, ավելանում է *հայրենիքը ստեղծված ճգնաժամից դուրս բերելու և հայաթափումից փրկելու, հայրենիքը հայի ապրելու համար անվտանգ ու նպաստավոր դարձնելու, զանգվածային ներգաղթ կազմակերպելու, իսկ սփյուռքը ուժացումից փրկելու հավար ներշնչող ազգային գաղափարախոսության մշակման անհրաժեշտությունը*:

Ինչպես տեսնում ենք, հայոց ազգային գաղափարախոսությունն ունի իր հստակ նպատակը: Եվ ցանկալի է, որ նա ունենա նաև իր անունը, անուն, որը ընկալելի, ցանկալի ու նվիրական լինի յուրաքանչյուր հայի համար:

Հայտնի է, որ համընդհանուր ճանաչում ունեցող ազգային գաղափարախոսությունները հիմնականում անվանակոչվել են կա՛մ ազգային-էթնիկական հիմքով, ինչպես, օրինակ, պանսլավոնիզմը, պանթուրքիզմը և այլն, կա՛մ հայրենիքի հիմքի վրա,

²⁵ Գ. Նժդեհ, Երկեր, Երևան, 1995, էջ 74:

ինչպես, օրինակ, սիոնիզմը: Այս ուղղությամբ մեզանում ևս փորձեր են արվել, առաջադրվել են «ցեղակրոնություն» և «տարոնականություն» անվանումներով գաղափարները: Յեղի գործոնի վրա հենվելու դեպքում հայոց ազգային գաղափարախոսությունը կարող ենք անվանել «համահայկականություն»-«պանարմենիզմ»:

Իհարկե, նվիրական ու խորհրդավոր անուն է սա, սակայն այնտեղ չեն շեշտվում հայրենիքում համախմբվելու, հայրենիքի կորած տարածքների ազատագրման գաղափարները: Առանց հայրենիքի տարագիր հայությունն ի վերջո դատապարտված է կորստյան: Հայրենիքի ոգին է, որ դեպի իրեն պիտի ձգի աշխարհասփյուռ հայությանը: Ազգային ինքնության բոլոր դրսևորումների ապահով միջավայրը հայրենիքն է: Ազգային գաղափարախոսությունը օտարության մեջ միայն հայի տեսակը պահպանելու ճիգ չէ, այն նաև կորցրած հայրենիքը վերանվաճելու ուսմունք է: Կարծում ենք, որ հայոց ազգային գաղափարախոսության այս պահանջներից բխող անունը պետք է խորհրդանշի Հայաստանի և աշխարհասփյուռ հայության մերօրյա պահանջներից բխող գաղափարը: Բնականաբար, հայոց ազգային գաղափարախոսության անվանման մեջ պետք է արտացոլվի հայրենիքի գաղափարը:

Հայ ժողովրդի ոգու մեջ վեր է խոյանում Հայոց լեռնաշխարհը: Հայ էությունը մշակելու գործում առյուծի բաժինը ընկնում է հայոց լեռներին: «Մասիսն է դայակը հայ ոգու»²⁶:

Արարատի բիրիական պաշտամունքը, աշխարհասփյուռ հայությանը Արարատ լեռան շուրջ համախմբելու գերագույն նպատակը թելադրում են հայոց ազգային գաղափարախոսու-

²⁶ Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հատընտիր, Երևան, 2001, էջ 245:

թյան անունը կապել Արարատի հետ, անվանել այն **արարա-
տիզմ-արարատականություն:**

Հայոց ազգային գաղափարախոսության առաջարկված այս համակարգը հայ ժողովրդի իղձերի իրականացման ծրագիրն է, որի նպատակն է աշխարհի հայության հայացքը սևեռել դեպի իր սրբազան սարը, տեսնել նրան Արարատի շուրջբոլորը, համահավաք, հզոր ու ինքնիշխան: Ու որպես այս նվիրական նպատակների ուղեցույց-բնաբան ուզում ենք Արարատին նվիրված հազարավոր ստեղծագործություններից առանձնացնել հայ մեծ վիպասանի բաղձանքն արտահայտող հետևյալ քառատողը.

Արդյոք գալու է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ,
Եվ ամեն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմել դեպ յուրյանց սիրուն հայրենիք:
Բաֆֆի

գ) Ինչո՞ւ է վտանգված հայության գոյությունը

Հայ ժողովրդի խոռվահույզ իրադարձություններով լեցուն պատմական ճակատագիրը, նրա վտանգված լինելու հանգամանքը առաջին հերթին պայմանավորված են պատմաաշխարհագրական այն միջավայրով, որտեղ նա ծնունդ է առել ու կերտել իր բազմադարյա պատմությունը: Այդ միջավայրը հայկական բնաշխարհն է, որը հայտնի է «Մեծ Հայք» և «Փոքր Հայք» անուններով (մոտ 350 հազար քվմ տարածք):

Պատմական Հայաստանի տարածքը ֆիզիկական աշխարհագրության տեսանկյունից առանձնացած լեռնային զանգված է՝ կազմված սառած լավայի բազմաթիվ լեռներից, սարահարթերից, հովիտներից ու կիրճերից: Այն գտնվում է Իրանական ու

Փոքրասիական բարձրավանդակների միջև: Իրանական բարձրավանդակի միջին բարձրությունը, ծովի մակրևայից 1400 մետր է, Անատոլիայինը՝ 700-1200, իսկ Հայկական լեռնաշխարհինը՝ 1700-1800 մետր: Հարևան երկրների համեմատությամբ Հայկական լեռնաշխարհը իշխող դիրք ունի և յուրատեսակ բնական ամրոց է:

Հայկական լեռնաշխարհը գտնվում է երկու, միմյանցից խիստ տարբեր բուսաբանական-աշխարհագրական երկրամասերի՝ խոնավ ու անտառոտ Վրկանա-Պոնտականի և չոր ու անտառազուրկ Իրանականի հանդիպման վայրում: Այն գտնվում է ոչ միայն միմյանցից խիստ տարբեր բուսաբանական աշխարհագրական գոտիների հատման կետում, այլև արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների ու աշխարհակալ պետությունների հանդիպման վայրում, հանգամանք, որը վճռական դեր է խաղացել հայ ժողովրդի կյանքում՝ նրա պատմական տեսանելի հորիզոններում երևալու պահից սկսած:

Գտնվելով Առաջավոր Ասիայի հյուսիսարևմտյան մասում՝ Հայաստանը միշտ էլ բնական կամուրջ է եղել Արևելքի ու Արևմուտքի միջև: Այստեղով են անցել հին աշխարհի միջազգային առևտրի մայրուղիները: Հայկական լեռնաշխարհով է Իրանը հաղորդակցվել Սև ու Միջերկրական ծովերի, Միջագետքը՝ Սև ու Կասպից ծովերի ավազանների հետ: Իսկ միջերկրածովային ավազանը՝ Եվրոպան, Ասիան, Աֆրիկան իրար միացնող այս ծովը, իր ափերով կատարել է մարդկության անջատ մասերը իրար միացնողի դերը²⁷:

Հին աշխարհի քաղաքակիրթ երկրները շրջափակել են Հայկական լեռնաշխարհը և նրա հետ հաստատել մշակութային-պատմական կապ՝ նախամարդու ժամանակներից սկսած:

²⁷ Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1966, էջ 141:

Մշակութային հաղորդակցություններից ու փոխազդեցություններից ավելի շատ կարևոր է եղել Հայաստանի ռազմավարական դիրքը: Այն մեծ ճանապարհները, որոնցով փոխներթափանցվում էին դրացի ժողովուրդների մշակույթները, այնտեղ բախվում էին նաև տեղափոխվող ժողովուրդներն ու խաչաձևվում աշխարհակալների սրերը:

Հայկական լեռնաշխարհը մի բնական միջնաբերդ էր Մերձավոր Արևելքում. ոչ մի նվաճող չէր կարող հաստատվել Միջագետքում, Պարսից ծոցում, Ասորիքում ու Փոքր Ասիայում՝ առանց Հայկական լեռնաշխարհում նախապես ամրանալու:

Պատմական Հայաստանի ռազմավարական այս կարևոր դիրքն էր պատճառը, որ նա դարձավ հավերժական կռվաճաղիկ բոլոր ժամանակների աշխարհակալ պետությունների համար: «Ես գտա գրքերի մեջ, – գրում է Իբն ալ-Ֆակի Համադանին, – որ Մեքքան ավերում են հաբեշները, Մեդինան՝ սովը, Բասրան՝ ջրհեղեղը: ...Ինչ վերաբերում է Հայաստանին և Ատրպատականին, այս երկրները կործանվում են հեծելազորի սմբակներից...»²⁸:

Գրավոր աղբյուրներում հիշատակված առաջին նվաճողը, որը թափանցել է Հայկական լեռնաշխարհ, եղել է խեթական թագավոր Թուֆխալիաս 3-րդը (Ք.ա. 1400-1380 թթ.): Այնուհետև՝ Ք.ա. XIII դարից սկսած, մի անգիջում ու տևական գոտեմարտ է սկսվել Ասորեստանյան աշխարհակալության և Հայաստանի հնագույն պետության՝ Ուրարտուի միջև: Սակայն առավել մեծ հեղաբեկումները Մերձավոր Արևելքի ժողովուրդների կյանքում սկսվեցին Ք. ա. VII դարի վերջերին, երբ մարա-պարսկական դաշնակցությունը Ք. ա. 612 թ. գրավեց ու ավերեց Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն: Ասորեստանի կործանումից հետո Հա-

²⁸ **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 145:

յաստանը ևս կուլտուրապես ու քաղաքականապես կապվեց նոր աշխարհակալությանը՝ Պարսկաստանին:

Պարսկական անսահմանափակ տիրապետությունը առաջավոր Ասիայում հարատևեց մինչև Ք. ա. 331 թվականը՝ Գավգամելայի ճակատամարտը, որտեղ Ալեքսանդր Մակեդոնացին ջախջախեց պարսիկներին: Պարսկական անսահմանափակ տիրապետությունը Մերձավոր Արևելքում փոխարինվեց պարսկահունահռոմեականով:

Երկու մեծ աշխարհակալությունների միջև ընկած հայ ժողովուրդը մեկընդմիջտ կանգնեց քաղաքական ծանր երկընտրանքի առաջ: Երկու գերտերությունների մրցակցության մեջ Հայաստանի համար նպաստավորը քաղաքական չեզոքությունն էր, բայց դա կողմերից ոչ մեկին չէր բավարարում: Նրանցից յուրաքանչյուրը հայ ժողովրդից պահանջում էր ակտիվորեն մասնակցել իր ռազմական ձեռնարկումներին՝ դրա մեջ տեսնելով իր հաջողության գրավականը:

Քանի որ Հայաստանը հավասարազոր ռազմավարական նշանակություն ուներ կողմերից յուրաքանչյուր համար, ուստի Հայաստանի անցումը ախոյաններից մեկի կողմը սպառնալիք էր ստեղծում մյուսի համար: Այս անգիջում պայքարի արդյունքում Հայաստանում ստեղծվեցին պարսկամետ և հունամետ հոսանքներ, որոնք հարկադրված մարտնչող տերությունների բանակում արյունահեղ մարտեր էին մղում իրար դեմ: Այս երկու աշխարհակալությունների դարավոր պատերազմներն ավարտվեցին 387 թ. դաշնագրով, որով Հայաստանն առաջին անգամ բաժանվեց նրանց միջև: Մեծ Հայքի արևելյան մասն անցավ պարսիկներին, իսկ արևմտյան մասը՝ Հռոմին:

Մինչ նվաճողները բզկտում էին իրենց զոհը դարձած ժողովուրդներին, Մերձավոր Արևելքի երկնակամարում նոր ամպեր

էին կուտակվում: 633 թ. իսլամի դրոշի տակ միավորված արաբները ներխուժեցին Պաղեստին, Միջագետք, Պարսկաստան: Ստեղծեցին ամենահզոր աշխարհակալությունը և իրենց ձեռքը վերցրին Առաջավոր Ասիայի քաղաքական ղեկը, ինչպես նաև Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագիրը տնօրինելու իրավունքը: IX դարի կեսերից սկսած՝ սկսեց թուլանալ Արաբական խալիֆայությունը: Հավասարակշռվեցին խալիֆայության և Բյուզանդական կայսրության ուժերը:

Հայաստանը իրենց ձեռքում պահելու համար այժմ երկուսն էլ սիրաշահելու քաղաքականություն էին վարում: Ահա հայ նախարարները, այդ փոքր միջազգային նպաստավոր պահը օգտագործելով, Բագրատունիների գլխավորությամբ վերականգնեցին չորսուկես դար առաջ կորցրած ազգային պետականությունը: Հետզհետե հզորացող Բյուզանդական կայսրությունը 1045 թ. նորից վերանվաճեց Հայաստանը: Երկրի հարատևող դիմադրական ուժերը մեկընդմիշտ ջլատելու նպատակով բյուզանդացիները Հայաստանից հեռացնում էին ազնվականությանն ու կարող տարրերին և բնակեցնում կայսրության տարածքներում, հատկապես Կիլիկիայում: Հունական այս անխոհեմ քաղաքականությանը հաջորդեց մի նոր, անսպասելի արհավիրք՝ սելջուկների արշավանքը: Հայաստանում քաղաքական պայքարի ասպարեզ բացվեց Բյուզանդական կայսրության և սելջուկյան պետության համար:

Սելջուկների նորաստեղծ պետությունը տարածվում էր Աֆղանստանի սահմաններից մինչև Միջերկրական ծովը և Սև ու Կասպից ծովերից մինչև Եմեն ու Հնդկական օվկիանոս: Արևմտյան Ասիայի պատմության ղեկն այսուհետև անցավ սելջուկյան թուրքերի ձեռքը: Սակայն սելջուկյան պետությունը ինչ արագությամբ կազմավորվել էր, նույն արագությամբ էլ մասնատ-

վեց ու թուլացավ: Նրա փոխարեն XIII դարի սկզբներին Ասիայի և Եվրոպայի ժողովուրդների կյանքում սկսեցին բախտորոշ դեր խաղալ Կենտրոնական Ասիայի խորքերից դուրս եկած բազմաթիվ քոչվոր ցեղեր, որոնք պատմությանը հայտնի են մոնղոլներ ընդհանուր անվանմամբ: Նրանք իրենց տիրապետությունը հաստատեցին Խաղաղ օվկիանոսից մինչև Սև և Միջերկրական ծովերի ափերը:

1243 թ. Չմանկատուկ գյուղաքաղաքի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում մոնղոլները ջախջախեցին Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը և Մերձավոր Արևելքի քաղաքական դեկը նույնպես վերցրին իրենց ձեռքը: Մինչ այդ Հայաստանը կոխկռտած, եկած ու անհետացած նվաճողներից ամենաահավորը մոնղոլական հորդաներն էին: Ճիշտ է ասված, որ եթե սելջուկները պոկեցին Արևելքի ժողովուրդների քաղաքակրթության ծաղի ծաղիկները, ապա մոնղոլները պոկեցին նաև նրա տերևները: XIV դարի 30-ական թթ. հոգեվարք ապրող մոնղոլական տիրապետությանը փոխարինելու եկան թուրքմենական զանազան ցեղեր, իսկ XVI դարի սկզբից մինչև XVII դարի 30-ականների վերջերը կարճատև ընդմիջումներով Հայաստանը ռազմական թատերաբեմ դարձավ Օսմանյան Թուրքիայի և Սևֆյան Իրանի միջև: Թուրք-իրանական արյունահեղ ընդհարումները Հայաստանի տարածքում և Հայաստանի համար ավարտվեցին նախ 1555 թ., ապա՝ 1639 թ. պայմանագրով, որով Հայաստանը բաժանվեց նրանց միջև: Արևմտյան մասն անցավ Թուրքիային, արևելյանը՝ Պարսկաստանին:

Ինչպես տեսնում ենք Հայաստանը ոչ թե տեղական, այլ համաշխարհային հակասությունների խաչմերուկներում է եղել: Նրա մղած պատերազմները ուղղված են եղել ոչ թե տեղական հավասարազոր պետությունների դեմ, այլ Խաղաղ օվկիանոսից

մինչև Միջերկրական ծովն ընկած անձայրածիր տարածքներում հաստատված աշխարհակալ պետությունների դեմ: Այսուհանդերձ, նվաճողների այս տհաճ հերթափոխը թող չստեղծի այն տպավորությունը, թե հայ ժողովուրդը լռելայն հպատակվել ու հնազանդվել է ամեն մի զավթիչի: Հայոց պատմությունն իմաստավորում ու զարդարում են նրա մղած ազատագրական այն պատերազմները, որոնց արդյունքում հայ ժողովուրդը ազատագրեց իր հայրենիքն ու 10 անգամ վերականգնեց իր անկախ պետականությունը:

Ըստ խեթական, միտանիական և ասորական աղբյուրների՝ դեռևս II հազարամյակի կեսերին Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերն արդեն ներկայանում են որպես պետական միավորումներ: Ք. ա. IX դարում Ուրարտական պետությունը հասել էր այնպիսի հզորության, որ օգտվելով Ասորեստանում ծագած գահակալական կռիվների ընձեռած հնարավորություններից՝ հռչակվեց անկախ պետություն, որի գերիշխող դիրքը տարածաշրջանում պահպանվեց մինչև Ք. ա. 590-ական թվականները: Այնուհետև՝ Ք. ա. VI-III դարերում, Հայկական լեռնաշխարհում իրենց ինքնիշխանությունն էին պահպանում Երվանդունիները: Ք. ա. 189-1 թթ. Հայաստանում իշխում էին Արտաշեսյանները, որոնց օրոք Հայաստանը դարձավ Առաջավոր Ասիայի ամենահզոր տերությունը: 66-428 թթ. Հայաստանում իշխում էին Արշակունիները, 885-1045 թթ.՝ Բագրատունիները, 1185-1250-ական թթ.՝ Զաքարյանները, իսկ 1198-1375 թթ. հայերն իրենց պետական անկախությունը ստեղծեցին Կիլիկիայում:

Հազարամյակներում փայլատակած այս հաղթանակներն են իրավունք տվել տաղանդավոր բանաստեղծ Վ. Տերյանին դրանք գաղափարայնացնել հետևյալ հանճարեղ ստեղծագործության տողերում.

Բաբելոնն է եղել մեր ախոյանը, տե՛ս-
Անհետ կորել, անցել է չար մշուշի պես,
Ասորիքն է եղել մեր թշնամին- ահա
Դաշտ է տեղը և չըկա քարը քարի վրա:
Ամրակուռ է մեր հոգին - դարերի զավակ՝
Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:
Բարբարոսներ շատ կըգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:
Եգիպտական բուրգերը փոշի կդառնան,
Արևի պես երկիր իմ, կըվառվես վառման:

XVIII դարի վերջերին Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում հաստատվելու լուրջ հավակնություններ ունեցող Ռուսական կայսրությունը դարձավ այն իրական ուժը, որը, մի կողմից, հայերին տարավ համաշխարհային հակամարտությունների նոր ու չբացահայտված ոլորտ, մյուս կողմից դարձավ այն ուժը, որի վրա այնուհետև խարսխվեցին հայ ժողովրդի ազատագրության հույսերը: Այժմ արդեն հայ ժողովրդի նախորդ դարաշրջանի ողջ պատմական կյանքը հանգեցրեց այն համոզման, որ ստեղծված պատմական կոնկրետ իրադրության պայմաններում թուրքական ու պարսկական լուծը նա կարող էր թոթափել միայն Ռուսաստանի օգնությամբ: Դրանով է պայմանավորված XIX դարի առաջին 30-ամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայերի՝ ռուսական բանակին ցույց տված անմնացորդ նվիրումը:

Թեև այս պատերազմներում Ռուսաստանը փայլուն հաղթանակներ տարավ ու հաստատվեց Հարավկովկասում, բայց, ըստ էության, Հայաստանի ազատագրության հարցը չլուծվեց:

1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանին անցավ միայն Արևելյան Հայաստանը,

իսկ Արևմտյանը մնաց թուրքական լծի տակ: Այս իրավիճակում Հայկական հարցը հայ-ռուս-թուրքական հարց չէր միայն, այլ ռուս-թուրքական և արևմտյան մեծ տերությունների հարաբերությունների և Մերձավոր Արևելքում նրանցից յուրաքանչյուրի գերիշխանության հասնելու հարց:

Այսպիսով՝ իր իսկ պատմական հայրենիքում ակամայից հայտնվելով Արևելքի իսլամական երկրների միջև, իր գոյությանը խոչընդոտելով պանթուրքիզմի քաղաքականության իրագործման գործընթացը՝ հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը վերստին մնաց օրակարգի հարց:

1906 թ. Բեհաեդդին Շաքիրը մի նամակ ուղերձով դիմեց Կովկասի պանիսլամ պարագլուխներին՝ առաջարկելով միավորման գործը գլուխ բերել ոչ միայն Կովկասի, այլև ողջ Ռուսաստանի մասշտաբով: «Առաջին խնդիրը, – նշվում է փաստաթղթում, – Կովկասի և նույնիսկ ամբողջ Ռուսաստանի մուսուլմաններին միավորելն է: Ձեր դրացիները՝ դադստանցիները, չերքեզները պատերազմիկ մարդիկ են ...: Մեր թշնամին հանդիսացող և ձեզ՝ ռուսների լծից ազատելու դեմ ամենամեծ արգելքներից մեկը հայերն են: Մշակեցեք մի կանոնավոր ծրագիր նրանց ջլատելու համար»²⁹: Ո՛չ օսմանիզմը, ո՛չ իսլամը չէին կարող պահպանել կայսրության ամբողջությունը: Դրա համար էլ ծնունդ առավ Օսմանյան կայսրությունը ազգային տեսանկյունից միատարր դարձնելու յուրօրինակ ցեղապաշտական գաղափարախոսություն՝ թուրքիզմը:

Ըստ այս գաղափարախոսության՝ թուրքական կառավարությունը պետք է հենվեր բացառապես թուրք տարրի վրա, ձգտեր հզորանալ բուն Թուրքիայի սահմաններում: Առաջնահերթ

²⁹ Հ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 190:

խնդիր է համարվում թուրքացնել Թուրքիան: Մերժելով օսմանյան եղբայրների անբնական միասնությունը՝ էթնիկական-ազգային միասնության կոչ է արվում: Դա նշանակում է, որ բուն Թուրքիայի բոլոր ժողովուրդները պետք է ուծացվեն, կորցնեն իրենց լեզուն, ազգային մյուս հատկանիշները և թուրքացվեն: Նրանք բուն Թուրքիայի միջուկը համարում են Անատոլիան, որի մեջ Արևելյան Անատոլիա անունով մտցնում են ողջ Արևմտյան Հայաստանը: Այդ տարածքում ապրելու իրավունք էին ունենալու միայն նրանք, ովքեր խոսելու էին թուրքերեն և դավանելու էին իսլամը: Աբդուլհամիդյան դաժան նախճիրից հետո էլ հրապարակ է գալիս թուրք ազգային բուրժուազիայի ցեղասպանական ուսմունքը՝ թուրքիզմը, որը ամենամեծ արհավիրքը բերելու էր դարձյալ հայության գլխին: Իր երկրի աշխարհագրական դիրքի պատճառով, նշում է Հ. Սիմոնյանը, հայությունը, շրջապատված մուսուլմանական ծովով, կանգնում է մերկացված սրի առջև³⁰:

Օսմանյան հայրենիքի իսկական քաղաքացիներ էին հռչակվում միայն թուրքերը, և նրանք, ովքեր ծուլվում են թուրքերին: Կրոնական մոլեռանդությունը տեղի էր տալիս ցեղային մոլեռանդությանը: Նորից այլազգիների նկատմամբ ատելության կիզակետում հայերն էին: Ստեղծվել էր մի մտայնություն, որ եթե թրքությունը ուզում է փրկվել վերահաս կործանումից և գոյատևել, ապա միայն մի ելք ունի՝ Արևմտյան Հայաստանի լրիվ թուրքացումը: Իսկ դրան հասնելը այլևս հապաղում չպահանջող հրամայական անհրաժեշտություն էր: Պետք էր ստեղծել ազգային-էթնիկական միատարրություն:

Թուրքիզմից առաջացած պանթուրքիզմը Թուրքիայի հովանու ներքո բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորմանը ձգտող ցեղապաշտական ուսմունք է: Պանթուրքիզմը ամբողջո-

³⁰ Տե՛ս Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 221:

վին ուղղված է Ռուսաստանի դեմ, նրան է համարում իր գլխավոր թշնամին, քանի որ հիմնականում Ռուսաստանի կազմում են գտնվում թուրքալեզու ժողովուրդները:

Պանթուրքիզմի իրագործման առաջամարտիկները Թուրքիան և Ադրբեջանն են, իսկ այդ քաղաքականությունն ուղղված է ամենից առաջ այդ երկուսի արանքում գտնվող Հայաստանի դեմ: Հայ ժողովրդի բնաջնջմամբ թուրք ազգային բուրժուազիան լուծում էր արևմուտքից արևելք նահանջող թուրքերի համար ուղիներ հարթելու հարցը:

Իթթիհատի 1910 թ. հերթական համագումարում բժ. Նազըմը տեսականորեն հիմնավորեց այդ ճեղքվածքի ոչնչացման անխուսափելիությունը: «Մեր կայսրության ամբողջականության պահպանման մասին շոյվված խոստումներին հակառակ Եվրոպան մեզ պարտադրեց, որ լքենք ամբողջ Բալկանները: Բայց առավել սարսափելին առջևում է: Անկախ Հայաստանի հեռանկարն է: Հայերի անջատման ընթացքի մեջ ենք գտնվում այս պահին: Մի պահ երևակայեցեք արևելյան նահանգների վրա մի հայ պետության կազմությունը: Նման պետությունը թուրանական ծրագրի տապանաքարը կլինի: Իբրև վտանգավոր ու անընդունելի... մնում է միակ և մի վերջի կարելիություն. պետք է բնաջնջել հայերին մեր կայսրության մեջ: Հարցը մեկ շրջանի՝ Արևելյան Անատոլիայի մեջ բնակվող հայության բնաջնջման ձևով չի ներկայանում միայն, այլ ամբողջ կայսրության մեջ տարածված այդ նենգամիտ, ճարտար և ճկուն «էրմենի» կոչված մի ցեղի, որի եռանդին ու աշխատանքին գոհացում չի կարող տալ նեղ ու փոքր սեփական մի հայրենիքն իսկ, որն ընդարձակ կացության պահանջ է զգում իբրև գործունեության դաշտ Պոլսից մինչև Բաղդադ, Բայազետից մինչև Ադանա: Պետք է արմատից ջնջել այդ ցեղը, որը որդի պես փարվել է մեր մարմնին, կրծում է մեզ: Եթե հաջողությամբ ավարտենք այդ ծրագիրը, ընդմիշտ

լուծված կլինի հայկական խնդիրը: Կհարթվի ճանապարհը համաթուրքական գաղափարի իրականացման»³¹:

Հայ ազգի լինել-չլինելու հարցը այժմ էլ օրակարգի հարց է թուրքական պաշտոնական շրջանների համար: Ահա թե ինչ է գրում «Ենի Գազեր Իսթամբուլ Դեյլի» թերթը 1967 թ. նոյեմբերի 25-ի համարում. «Թող հայերը հիշեն, որ ապրում են Պոլսում և փոքրամասնություն են: Թերևս... այժմ ցեղասպանություն կատարելը հեշտ չէ, բայց և այնպես որևէ դեպք կարող է մթնոլորտը հեղաշրջել, և դրանից հետո Պոլսում որևէ հայ գտնելը անհնար կլինի»³²:

Ավելի հեռուն է գնում ԱՄՆ թուրք ուսանողության միության 1965 թ. սպառնալից հայտարարությունը. «Աշխարհի բոլոր ազգերի շրջանում բարի համբավ ունեցող թուրքը, զենքի ապավինելով, դեռևս քանի միլիոն անիծյալ հայերի սրի քաշելու համար հարմար պահի է սպասում: Անիծյալ հայերին աշխարհի երեսից պետք է մեկընդմիշտ մաքրենք. սա մեր սրբազան մարգարեի պատգամն է: Ով իսլամական աշխարհ, լավ գիտցեք, քանի դեռ հայ թշվառականները աշխարհի երեսից մաքրված չեն, երկրագունդը խաղաղություն և ազատություն չի ունենա: Հանուն Մուհամմեդի սիրո ամեն մի թշվառական հայի սպանելու համար արքայության եք արժանանալու: Շատ շուտով ձեր Հայաստանն էլ գերեզմանոցի ենք վերածելու...: Սա ևս պիտի իմանաք: Աստված հայ ազգի ճակատագիրը թուրքի ափի մեջ է դրել: 66 հազ. պոլսահայեր մեր ձեռքում պատանդներ են, մորթելու ոչխարներ: Ով անաստված թշվառականներ, կա՛մ մահմեդական

³¹ **Մեվլան Գադե Ռիֆաթ**, Օսմանյան յեղափոխության մուֆ ծալքերը, Բեյրութ, 1938, էջ 160-193:

³² **Ս. Պողոսյան**, Պանթուրքիզմը երեկ և այսօր, Երևան, 1990, էջ 49:

պիտի դառնաք և ընդունեք ճշմարիտ կրոնը, կա՛մ ձեզ ոչնչացնելու ենք»³³:

Թուրքիայում որպես պատվիրան է հնչում երիտթուրքերի Սալոնիկեի կենտրոնի հետևյալ կոչը. «Մահմեդականնե՛ր, բարձրացնենք մեր ծայնը և սուրը աջ ձեռքին, հրացանը ձախ ձեռքին, ռումբը գրպանում և Ալլահի անունը շուրթներիս, լույս հավատը սրտներումս՝ հռչակենք հետևյալ պահանջները.

Օսմանյան կայսրությունը՝ օսմանցի մահմեդականների համար:

Եգիպտոսը՝ Եգիպտոսի մահմեդականների համար:

Պարսկաստանը՝ Պարսկաստանի մահմեդականների համար:

Թուրանը՝ թուրանի մահմեդականների համար:

Բուխարան՝ Բուխարայի մահմեդականների համար:

Կովկասը Կովկասի մահմեդականների համար»³⁴:

1993 թ. մայիսի 1-ին՝ Անկարայում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ, Ազգային կուսակցության պարագլուխ Թուրքեշը հայտարարեց, թե թուրք ժողովուրդը լավ գիտի իր անելիքը հայերի և սերբերի հետ: Հասկանալի է, որ նա ակնարկում է օսմանյան Թուրքիայում իրագործված հայերի ցեղասպանությունը և սերբերի ջարդը: Պարզ է, որ նա հայերին ու սերբերին սպառնում է նոր եղեռնով ու ցեղասպանությամբ: Այս հանգամանքը մշտապես պետք է գիտակցեն ոչ միայն ոճրագործ ցեղերի հարևան ազգերը, այլև ողջ մարդկությունը: Ահա թե ինչու է հայոց ազգային գաղափարախոսությունը գոյապահպանության գաղափարախոսություն:

³³ Տե՛ս **София-Пресс**, Западная пан-тюркизм, София, 1989, с. 47:

³⁴ Հուշամատյան Մեծ եղեռնի 1915-1965, Պեյրուֆ, 1965, էջ 29:

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆ

Առասպելական, վիպական, պատմական և կրոնական շերտերը հայոց ազգայնականության ակունքներում

Հայտնի է, որ հայ ժողովրդի կազմավորման ինտենսիվ գործընթացը տեղի է ունեցել Ուրարտական թագավորության ժամանակ՝ Ք.ա. IX-VI դարերում: Սակայն վաղուց կազմավորված հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությունը ձևավորվեց միայն V դարում՝ ազգային գրի ու գրականության ստեղծումից հետո, համազգային բարձր մշակույթի ձեռքբերման արդյունքում և 428 թ. ազգային պետականության կորստյան հետևանքով վտանգված ժողովրդի գոյապահպանությունն ապահովող ծրագրի ու գաղափարախոսության մշակման անհրաժեշտությամբ: Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի՝ V դարում ծավալված վերելքի մթնոլորտում ի հայտ եկավ նախընթաց հազարամյակի հերոսամարտերում ինքնահաստատված, սակայն արդեն վտանգված ժողովրդի գոյապահպանությունն ապահովող գաղափարախոսություն ստեղծելու անհրաժեշտությունը: Այն առաջնային դարձավ ստեղծված ծանր կացության պահանջով, ազգի վերնախավի՝ հայոց նախարարական ամենակենսունակ տների նախաձեռնությամբ ու կյանքի կոչվեց Մեսրոպ Մաշտոցի ու նրա շնորհաշատ հետևորդների՝ Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու ջանքերով: Եթե նախընթաց պատմաշրջաններում մարդիկ իրենց փրկության հույսը որոնում էին երկնքում, ապա արդեն կազմավորված հայ ժողովրդի սկզբնավորվող ազգային գաղափարախոսության հիմքում՝ հայագիր գրականության ակունքներում, ազգային գաղափարախոսություն ստեղծողները իրենց ժողովրդի փրկությունը տեսնում էին իրենց միասնության ու հայրենասիրության մեջ:

Ազգային ինքնության, ազգային արժեքների բացահայտման զգացումը կլանել էր V դարի ազգային-ազատագրական պայքարի ամենաերևելի գործիչներին՝ Սահակ Բագրատունուն և Վահան Մամիկոնյանին: Ամենևին էլ պատահական չէր, որ հենց նրանք հանձնարարեցին ժամանակի ամենաաչքի ընկնող մտավորականներին՝ Մովսես Խորենացուն ու Ղազար Փարպեցուն, պեղել-գտնել հայ ժողովրդի ծագման ակունքներն ու անցած հերոսական ճանապարհը, պարզել, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս, և որն է մեր լինելության ու անվտանգության ապահովման երաշխիքը: Վահան Մամիկոնյանը ոչ միայն պատվիրել, այլև Ղազար Փարպեցուն տվել էր գրվելիք գրքի ծրագիրն ու ուղենշել հետապնդած նպատակը. «Վահան Մամիկոնյանը, – գրում է Ղ. Փարպեցին, – ինչպես որ Հայաստան աշխարհի հոգսն էր քաշում մյուս բոլոր արժանավոր գործողություններով, առավել ևս հարմար ու պատշաճ համարեց այս, ... շարադրել... Հայոց աշխարհում կատարվածը. մեծավ զգուշությամբ գրել ու մեկառմեկ դասավորել բոլոր հոգևորականների առաքինությունները և քաջ տղամարդկանց սխրանքները, որպեսզի ժողովրդական բազմությունները, հոգևորականների բարի վարքերը լսելով, ցանկանան նմանվող լինել նրանց ճգնություններին, և խիզախներն էլ, լսելով առաջներում գործված քաջությունների մասին, բազմապատկեն իրենց անձնական սխրանքները, իրենցից հետո թողնեն անվանի հիշատակ՝ իրենց անձերի ու ազգի համար, իսկ ծույլերն ու վախկոտները, անձամբ տեսնելով այս ամենը և լսելով այլոց պարսավանքները, բարի նախանձից կրթվելով, ջանան լավանալ»³⁵:

³⁵ **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն և թուրջ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982, էջ 15:

Հայ ժողովրդի ձևավորվող ազգային գաղափարախոսության նպատակն էր արմատավորել.

- I. հայ ժողովրդի արարչական ծագման,
- II. դրախտային ու նվիրական հայրենիքի սրբագործման,
- III. ազգային ինքնության,
- IV. ինքնահամախմբման՝ ազգային միասնության և
- V. ինքնազատագրման՝ ազգային-ազատագրական պայքարի գաղափարները:

Հայ ժողովրդի արարչական ծագման, հայրենիքի սրբագործման և ազգային ինքնության-ինքնաճանաչման ակունքների որոնումները Մովսես Խորենացուն հասցրել էին մարդկության առաջացման առասպելական ակունքներին, համաշխարհային ջրհեղեղի ու Նոյ Նահապետի ժամանակներին:

...Եւ Եհովան տեսավ, որ շատացել է մարդկանց չարությունը երկրի վրա, որոշեց ոչնչացնել մարդկանց երկրի երեսից: Սակայն Եհովան ընտրեց ամենաարդար ու բարի մարդուն՝ Նոյին, և խորհուրդ տվեց տապան շինել ու իր ցեղը փրկել վերահաս ջրհեղեղից: Եվ Նոյը 600 տարեկան էր, երբ որ ջրհեղեղը երկրի վրա եղավ: Եվ ջրհեղեղը 40 օր եղավ երկրի վրա, և ջրերը շատացան և տապանը վեր հանեցին: Եվ երկրի երեսից կենդանիները վերացան: Միայն Նոյը մնաց իր հետ եղողների հետ: Եվ յոթերորդ ամսի 18-րդ օրը տապանը Արարատ սարի վրա նստեց: 601 տարում, առաջին ամսի 1-ին ջրերը երկրի վրայից ցամաքեցին, և Նոյը տապանի ծածկոցը վեր առավ: Եվ դուրս եկան Նոյը և իր որդիները, իր կինը, որդիների կանայք և Աստված օրհնեց Նոյին և նրա որդիներին և ասաց նրանց. «Աճեցեք, շատացեք և լցրեք երկիրը...»: Եվ ես իմ ուխտը հաստատում եմ ձեզ հետ և ձեզնից հետո ձեր սերունդների հետ: Նոյի տապանից դուրս եկած որդիներն էին Սէմը, Քամը, և Հա-

բերը: Եվ սրանցից տարածվեց բոլոր երկիրը: Եվ Նոյը հողագործ դարձավ և այգի տնկեց: Եվ այս Նոյն էլ իր հերթին օրհնեց իր սերունդներին³⁶:

Համաշխարհային ջրհեղեղի մասին աստվածաշնչյան այս առասպելը Մ. Խորենացին ազգայնացրեց՝ առաջադրելով այն գաղափարը, որ Արարատ լեռան գագաթին հանգրվանած Նոյը Հայկական լեռնաշխարհում է հիմք դրել մարդկային երեք՝ Սեմական, Քամական և Հաբեթական լեզվաընտանիքներին: Սեմը Նոյի ավագ որդին էր, Սեմական լեզվաընտանիքի աֆրասիական լեզվաճյուղի հիմնադիրը: Քամը Նոյի միջնեկ որդին էր՝ արաբա-եթովպիական և եգիպտական բազմաթիվ լեզվաընտանիքների հիմնադիրը: Հաբեթը Նոյի կրտսեր որդին էր: Արաբական ավանդագրույցը Հաբեթին վերագրում է 11 որդի, որոնք դարձել են ասիական 11 ժողովուրդների ազգահայրերը: Խորենացին Հաբեթի ավագ որդի Գամերի կրտսեր որդուն՝ Թորգոմին, համարում է հայոց անվանադիր նախնի Հայկի հայրը: Այս ավանդագրույցների հիման վրա մինչև XIX դարը հայագիտության մեջ տիրապետում էր այն տեսակետը, ըստ որի՝ մարդկությունը երկու անգամ էլ՝ թե՛ Ադամի, թե՛ Նոյի ժամանակ, առաջացել է Հայաստանում, որը մարդկության բնօրրանն է կամ նախահայրենիքը, հայ ժողովուրդը՝ աշխարհի ամենահին, աստծո կողմից ընտրված, արարչի կողմից արարված արիական ժողովուրդ, իսկ հայերենը՝ մարդկության նախամայր լեզուն:

Նոյն դարի սկզբներին ժողովուրդների և նրանց լեզուների ծագման ու ցեղակցության մասին առաջացավ մի նոր տեսություն, որը կոչվեց պատմահամեմատական: Բազմաթիվ լեզուներ համեմատելով իրար հետ՝ պատմահամեմատական լեզվա-

³⁶ Տե՛ս Աստվածաշունչ, Գիրք ծննդոց, գլ. 2-Թ: Հմմ. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 99-102:

բանության հիմնադիրները նկատեցին, որ Հնդկաստանի արևելյան ծայրից մինչև Իսլանդիայի արևմտյան ափերն ապրող մի շարք ժողովուրդների լեզուների բառապաշարի հնչունաբանության և քերականության ձևերի միջև գոյություն ունեն որոշակի կապեր: Ընդունելով, որ լեզուների միջև եղած ընդհանրությունները ծագում են ընդհանուր աղբյուրից՝ նրանք հանգեցին այն եզրակացության, թե ցեղակից լեզուները առաջացել են նախկինում գոյություն ունեցող մի լեզվից:

1837 թ. Պետերմանն ապացուցեց, որ հայերենը ևս հնդեվրոպական լեզու է: Հայոց լեզվի հնդեվրոպական լինելու փաստը հաստատվելուց հետո այս տեսության հետևորդները, բնականաբար, պետք է աշխատեին պարզել, թե ովքեր են եղել հայերի հնդեվրոպական նախնիները և երբ, որտեղից ու ինչ ճանապարհով են եկել ու հաստատվել Հայկական լեռնաշխարհում: Լեզվաբանների ու պատմաբանների մի մասը ենթադրում էր, որ այդ նախահայրենիքը եղել է Բալկանյան թերակղզին: Վերջին տեսակետի անվերապահ ընդունումից հետո սկսվեցին Բալկաններից աշխարհի տարբեր վայրերը տարածվող հնդեվրոպական ցեղերի կարծեցյալ արտագաղթի ժամանակի ու ուղիների համառ որոնումները: Հենվելով հունահռոմեական պատմիչների կցկտուր տեղեկությունների վրա՝ հնդեվրոպաբանները գտան, որ հայերի հնդեվրոպական նախնիները եղել են արմենները և Ք.ա. մոտ VII դարում բնակություն են հաստատել Հայկական լեռնաշխարհում³⁷:

Վերոնշյալ տեսություններին զուգահեռ ծնունդ առավ նաև մի տեսություն, որի ներկայացուցիչներն ապացուցում էին, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը, իրոք, Հայկական բարձ-

³⁷ Տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 22, տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 423:

րավանդակն է և նրան կից՝ Սև, Կասպից ու Միջերկրական ծովերի միջև ընկած տարածքները: Փաստերը վկայում են, որ հնդեվրոպացիները Ք.ա. V-IV հազարամյակների սահմանագլխին ապրել են Հայկական լեռնաշխարհում: Լեզվաբան-արևելագետներ Յ. Կարստը և Ա. Սագգյանը վաղուց են ուշադրություն հրավիրել շումերերենի ու հայերենի փոխազդեցության վրա՝ ցույց տալով, որ հայերենում առկա են սեմական բառեր, իսկ սեմականում՝ հայկական: Այդ նմանությունը առկա է նաև սեմական ու հնդեվրոպական մյուս լեզուներում: Դա նշանակում է, որ հին հնդեվրոպացիները երկարատև շփումներ են ունեցել հին սեմական աշխարհի հետ և հնդեվրոպական լեզուն ձևավորվել է սեմական միջավայրում: Այդ շփումը կարող էր կատարվել աշխարհագրական միայն մի վայրում՝ Փոքր Ասիայի հարավարևելյան գծով Հայկական Տավրոսից հյուսիս, քանի որ սեմական բնական շրջանը այդ գծից հարավ է եղել³⁸:

Հնդեվրոպական նախահայրենիքը Մերձավոր արևելյան նշված տարածքը համարելու ապացույցներ են նաև Հայկական բարձրավանդակին հատուկ կենդանական ու բուսական անունների առկայությունը հնդեվրոպական մայր լեզվում: Ուշագրավ է աստղագետ Վ. Օլկոտի այն եզրակացությունը, թե Հայկական լեռնաշխարհում են սկիզբ առել կենդանակերպի 12 համաստեղությունների մասին հասկացությունները, այստեղ են անվանակոչվել նրանք ու տարածվել հնդեվրոպական աշխարհում³⁹:

Հնդեվրոպական մայր լեզվի տրոհումը Փոքր Ասիայում և կից տարածքներում կատարվել է Ք.ա. VI-V հազարամյակում մայր լեզվի մեջ բարբառների առաջացման, նրանց տարբերու-

³⁸ Տե՛ս **Ռ. Իշխանյան**, Լեզվաբանական նոր հայտնագործումները և հայերի ծագման հնագույն պատմության հարցեր, «Բանբեր համալսարանի», 1979, թիվ 2, էջ 98:

³⁹ Տե՛ս **В. Олькот**, Легенда звездного мира, СПб., 1914, с. 8:

թյունների խորացման, առանձին բարբառների կրող ցեղերի աշխարհագրական մեկուսացման ու արտագաղթերի պայմաններում:

Պատմական քիչ թե շատ լուսավոր գոտիներում մենք արդեն տեսնում ենք Հայկական բարձրավանդակի հնդեվրոպական բազմաթիվ ցեղախմբերի, որոնցից արմենները, խուրրիները և հայասցիները արդեն ստեղծել էին իրենց ցեղապետությունները և էթնիկական-մշակութային հող նախապատրաստել հայ ժողովրդի ձևավորման ու համահայկական միասնական պետության ստեղծման համար:

Մերձավոր արևելքի Բ. ա. III հազարամյակից եկող արձանագրություններից մի քանիսում հիշատակվում է Արմանի երկրանունը, որի առաջին հիշատակությունը պահպանվել է արքադական նշանավոր թագավոր Նարամսինի թողած այն արձանագրությունում, որում պատմվում է արքադական արքայի արշավանքի և 17 երկրների թագավորներին, այդ թվում՝ Արմանի երկրի Մադակինա թագավորին հաղթելու մասին: Armani-ի տեղադրումը համընկնում է պատմական Հայաստանի Աղձնիք նահանգի տարածքին⁴⁰:

Արմենոիդ տիպի բնիկների մեջ դեռ տոտեմական շրջանից առաջ էր եկել մի աստվածություն, որը կոչում էին Ար կամ Արա: Արան արմենների գլխավոր աստվածն էր: Հայկական բարձրավանդակի հնագույն ցեղային միություններից մեկը իր նախնական գլխավոր աստծու անունից ստացել է իր անունը և երկրանունը՝ Արմեն-Արմենիա: Այդ աստծո անվանը հանդիպում ենք ձևավորվող հայ ժողովրդի հայրենիքի ամենատարբեր վայրերում տարբեր ձևերով՝ թե՛ որպես ցեղանուն, թե՛ որպես տեղա-

⁴⁰ Տե՛ս Մ. Գալուկյան, Արմեն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրոպ, 1973, էջ 26:

նուն: «Ար» արմատով սկսվող պատմական Հայաստանի գրեթե բոլոր տեղանունները կապվում են Արմեն անվան հետ⁴¹:

Ք. ա. II հազարամյակի կեսերից սկսած՝ Հայկական լեռնաշխարհի քաղաքական և էթնիկական պատմության մեջ զգալի դեր է խաղացել Հայասա-ագգի ցեղապետությունը: Այն զբաղեցնում էր Փոքր Հայքի, Բարձր Հայքի, Տայքի ու Վանա լճից հյուսիս ընկած տարածքները:

Ք. ա. XVIII դարում Խուրի-Միտանիական ցեղերը Հյուսիսային Միջագետքի և Հայաստանի հարավային շրջաններում՝ Ծոփքում, Աղձնիքում, Վասպուրականում, հիմք են դնում մի հզոր պետության, որը գոյատևում է մինչև Ք. ա. XIII դարը: Այս միասնական պետության անկումից հետո Խուրի-Միտանիական ցեղերը Վանա ու Ուրմիա լճերի միջև ընկած տարածքներում ստեղծում են մի հզոր ցեղապետություն, որը վճռական դեր է խաղում Վանի համահայկական թագավորության հիմնադրման գործում:

Ինչպես տեսնում ենք, Նոյ Նահապետի և համաշխարհային ջրհեղեղի առասպելում ուրվագծվում է մարդկության առաջացման վաղնջական ժամանակներից մինչև տոհմացեղային հասարակության ու ցեղապետությունների առաջացման պատմությունը, որից հետո մարդկությունը թևակոխում է տոհմացեղային հանրույթներից դեպի ժողովուրդների կազմավորման ու ազգային պետությունների առաջացման պատմաշրջանը: Ահա այս անցման շրջադարձային պատմաշրջանի՝ կազմավորվող հայ ժողովրդի ձևավորվող ազգային գաղափարախոսության հիմքում Խորենացին դրել է Բաբելոնյան աշտարակաշինության և Հայկի ու Բելի հանրահայտ առասպելը, ըստ որի՝ մարդիկ փորձել են կառուցել մի քաղաք և աշտարակ, որի բարձրությունը

⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 92:

հասնելու էր երկինք: Ջայրանալով մարդկանց հանդգնության վրա՝ Աստված խառնում է լեզուները, մարդիկ այլևս իրար չեն հասկանում և ցիրուցան են լինում աշխարհով մեկ: Սրանցից մեկն էր Հապետոսության Հայկը՝ անվանի և քաջ նախարար...: «Նա չվեց դեպի Արարադի երկիր..., իր որդիներով, դուստրերով, և որդիների որդիներով, թվով մոտ երեք հարյուր հոգի»⁴²: Այնուհետև Խորենացին պատմում է, թե ինչպես Հայկը սպանեց Բելին և ազատություն ու ինքնիշխանություն հաստատեց Հայոց աշխարհում: «...Սրանից հետո,– շարունակում է Խորենացին,– Հայկը դառնում է իր բնակության տեղը, իր Կադմոս թողին...հրամայում է իր առաջին տանը բնակություն հաստատել, իսկ ինքը գնում դադարում է Հարք կոչված դաշտում..., դրանից հետո ոչ քիչ տարիներ ապրելով՝ մեռնում է՝ ամբողջ ազգը հանձնելով իր Արամանյակ որդուն: Սա իր եղբայրներից երկուսին, Խողին և Մանավազին... թողնում է Հարք կոչված տեղում, ինչպես նաև Մանավազի որդուն՝ Բազին: Սրանցից Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա որդին՝ Բազը, ժառանգում է Աղի ծովի արևմտյան հյուսիսային ափը և գավառն ու ծովը կոչում իր անունով: Ասում են, որ սրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնունյաց նահապետությունները, նաև Որդունի կոչվածը...:

Իսկ Արամանյակը, բոլոր բազմությունն առնելով, չվում է դեպի հյուսիսային արևելք և գնում իջնում է մի խոր դաշտավայր՝ բարձրագագաթ լեռներով շրջապատված, ...իսկ լեռների ստորոտում բխում էին բազմաթիվ ականակիտ աղբյուրներ...: Արամանյակը, այս խոր դաշտում բնակվելով, շենացնում էր մի մասը դաշտի հյուսիսային կողմում..., լեռն իր անվան հարմարեցնելով՝ կոչում է Արագած:

⁴² Տե՛ս Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 110:

...Արամանյակը տարիներ ապրելուց հետո ծնավ Արամայիսին: ...Արամայիսը իր բնակության համար տուն է շինում գետի ափին՝ մի բլրի վրա, և իր անունով կոչում է Արմավիր, իսկ գետը կոչում է Երասխ՝ իր թոռան Երաստի անունով, իսկ իր որդուն՝ բազմազավակ և շատակեր Շարային, ամբողջ աղխով ուղարկում է մի մերձակա արգավանդ ու բերրի դաշտ... Արագածի թիկունքում: Նրա անունով...գավառը կոչվեց Շիրակ:

Ամասիան... ծնում է Գեղամին..., արի Փառոխին և Յուլակին: ...Սրանց ծնելուց հետո... մոտենում է հարավային լեռան: ...Լեռան ստորոտում... շինում է երկու տուն:... Այս տները նա տվեց ժառանգություն իր երկու որդիներին՝ արի Փառոխին և կայտառ Յուլակին, որոնք ... իրենց անունով կոչեցին այդ տեղերը՝ ... Փառախոտ և ...Յուլակերտ: Իսկ լեռը Ամասիան իր անունով կոչեց Մասիս:

Իսկ Գեղամը... գնաց արևելյան հյուսիսում եղած մյուս լեռան հետևի կողմը՝ մի ծովակի ափ: Նա շենացնում է այդ ծովակի ափը... և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները Գեղարքունի, ինչպես կոչվում է նաև ծովը: Այստեղ նա ծնավ իր Սիսակ որդուն: ...Նրա ժառանգության սահման է կտրում ծովից դեպի արևելք մինչև մի դաշտ: ...Սիսակը այստեղ բնակվելով...՝ աշխարհը իր անունով կոչում է Սյունիք:

...Իսկ ինքը Գեղամը նորից դառնում է հիշյալ դաշտը և նույն լեռան ստորոտում՝ մի ամուր ձորակում, շինում է մի դաստակերտ և անունը դնում է Գեղամի, որը հետո նրա թոռան Գառնիկի անունով կոչվեց Գառնի: Այս է Հայկը...՝ հայ ազգի նախնին»⁴³:

Այս տիեզերական առասպելը ևս Խորենացին դարձրել է ազգային ավանդավեպ: Առասպելական հատկանիշներով հան-

⁴³ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 113-116:

դերձ այն ստեղծվել է պատմական կոնկրետ միջավայրում կոնկրետ նպատակներով ու շահագրգռություններով:

Այժմ տեսնենք, թե հայ ժողովրդի կազմավորման գործընթացում պատմական ինչ միջավայրի և շրջադարձային իրադարձությունների արձագանքներն են արտացոլվել Հայկի ու Բելի այս բազմաբովանդակ առասպելում:

Հայկի և Բելի առասպելը մեզ տանում են այն նախապատմական դարերը, երբ խուրրիների հիմնադրած Վանի թագավորությունը սկսում է միավորել Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ վերոհիշյալ ցեղերին ու ցեղապետություններին: Հայկի ժառանգների Հայկական լեռնաշխարհում տարածվելու ընթացքը հենց այդ իրողության արտացոլումն է: Առասպելի մեջ հիշատակված առաջին տեղանունները՝ Արարադի երկիր, Հարք, Հայկաշեն, Հայոց ձոր, մեզ տանում են Վանա լճի հարավարևելյան շրջանները՝ Խուրրի-Միտանիի հայրենիքը: Այդ հայրենիքում ապրող Մուրացան, Մարդպետունի, Մանդակունի, Ամատունի, Արծրունի տոհմերն իրենց ծագումով անմիջականորեն կապվում են Խուրրի-Միտանի ժողովուրդների հետ⁴⁴:

Հայկի ու Բելի առասպելում այնուհետև ուրվագծվում է Հայկական լեռնաշխարհի ցեղերի համախմբման ու միասնական համահայկական պետության ստեղծման ընթացքը: Կազմավորվող Վանի թագավորության կենտրոնից դեպի հյուսիս ուրարտական արձանագրությունները հիշատակում են այն բազմաթիվ երկրներին ու ցեղերին, որոնք իրենց արձագանքներն են գտել Հայկի ու Բելի առասպելում: Առաջին արքան Մենուան է (Ք.ա. 810-786), որը Վանա լճի շրջակայքում կառուցում է բազմաթիվ ամրոցներ, այնուհետև շարժվում դեպի Հայկական լեռնաշխար-

⁴⁴ Տե՛ս Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 230:

հի հյուսիսարևմտյան մարզեր: Արածանիի վերին հոսանքում կառուցում է Մանազկերտ, Կարին, Արաքսի վերին հոսանքում՝ Բասեն քաղաքները: Ուրարտուի արքաների՝ Մեննուայի, Արգիշտի Ա-ի, Սարգուրի Բ-ի ռազմական արշավանքների ուղղությունները մեզ հիշեցնում են Հայկի ու Նրա սերունդների՝ Արամանյակի, Արամայիսի, Գեղամի՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսում և հյուսիսարևելյան շրջաններում հաստատվելու պատումները: Այդ նվաճումները ոչ թե օտար երկրներ զավթելու շոնդալից արշավանքներ են՝ հայտնի ու տպավորիչ ճակատամարտերով, այլ հանգիստ, խաղաղ, ազգակից ու արյունակից ցեղերի միավորում: Հյուսիսում Մենուան հասնում է Կարսի շրջան և Ճորոխի Ավազան, հյուսիս-արևելքում՝ մինչև Արարատի հյուսիսային փեշերը, Արաքսի հովիտը, Արաքսի աջ ափին կառուցում է Մենուախինիլի քաղաք ամրոցը: Մենուային հաջողվում է իր շուրջը միավորել հայասա-ազգի և արմե-շուարիայի տարածքները: Մենուայի որդի Արգիշտի Ա-ն (Ք. ա. 785-84 թթ.) հաստատվում է Տայքում, Բասենում, Էթիունիում, Շիրակում, Մասիացոտնում: 782 թ. Արգիշտին հասնում է Սևանա լճի ափերը, հաստատվում Արարատյան դաշտում, կառուցում Էրեբունի ամրոցը:

Սարգուրի Բ-ն (764-735) գրավում է Էրիախի Երկիրը (Շիրակ) և այլն⁴⁵:

Փաստորեն՝ տոհմացեղային լեզուների համախմբման և ազգային լեզուների առաջացման պահից սկսած՝ ձևավորվում են նաև հայ ժողովուրդն ու Նրա լեզուն, իսկ նախնադարյան տարանջատ ցեղերի սովորական կայանատեղից Հայկական լեռնաշխարհը դառնում է կազմավորվող միասնական ժողովրդի սրբագործված հայրենիքը: Վերոհիշյալ առասպելներում ցեղի

⁴⁵ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 301-314:

արմատների հայտնագործմանն ու սրբագործմանը զուգահեռ հայտնագործվում է նաև սրբազան հայրենիքի գաղափարը:

Խորենացին հայոց լեզվի տարածման սահմաններով է որոշել նաև հայ ժողովրդի հայրենիքի սահմանները: «Իսկ արևելյան կողմից,– գրում է Խորենացին,– հայերեն խոսակցության վերջին սահմաններում (Վաղարշակը – Հ. Մ.) երկու կողմնակալ է նշանակում՝ մի-մի բյուր մարդով, նահապետական տների ցեղերից...»⁴⁶, «...իսկ արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է, նրան (Բագարատին – Հ. Մ.) նշանակեց կողմնակալ, բյուրերի և հազարների իշխան»⁴⁷:

Խորենացին էական տարբերություն է դնում «ազգի հայրենիք» ու «պետության տարածքներ» եզրույթների միջև: Հայրենիքը ողջ ժողովրդին պատկանող բնատարածքն է՝ իր բնությամբ, բնակչությամբ, լեզվով, նվիրական ու սրբազան վայրերով: Իսկ պետության տարածքն այն է, ինչքան կարողանում են գրավել նրա զինվորները. «...Քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կկտրե, այնքան կտիրե»⁴⁸:

Նոյի կնոջ՝ Նոյեմզարի գերեզմանը Խորենացին տեղադրում է Մարանդ գավառում, որը նշանակում է, թե «Մայր է անդ», այսինքն՝ հայոց ընդհանրական մայրը այնտեղ է թաղված: Այսպիսով՝ Խորենացու հայոց պատմությունը դառնում է «...մի ծննդյան վկայական մեր ազգի համար,– գրում է Ս. Մալխասյանը,– որ մինչև այդ ժամանակ չգիտեր, թե ով է ինքը, և ինչ ծագում ունի: Կապելով հայ ազգի սկզբնավորությունը Ս. գրքի հետ, ծագեցնելով հայերին Հաբեթի ցեղից՝ նա հայ ազգի համար ստեղծեց պատվավոր տեղ մյուս հին ազգերի շարքում: Հայերին

⁴⁶ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 153:

⁴⁷ Նույն տեղում, էջ 148:

⁴⁸ Նույն տեղում, էջ 107:

սերված համարելով աշտարակաշինության ժամանակակից Հայկից, նկարագրելով այս հսկա աղեղնավորին՝ իբրև ազատության սիրահարի և բռնակալ Բելին սպանողի՝ նա փառավոր և սիրելի դարձրեց հայերին իրենց ծագումը»⁴⁹:

Ի տարբերություն Խորենացու՝ Փավստոս Բուզանդը հայրենիքի գաղափարը վիպականացնում է: Բացառիկ մեծ հայրենասեր մտածող է Փավստոս Բուզանդը, որի համար նույնպես հայրենիքը այն հողն ու ջուրն է, որը ծնել ու սնել է հայ ժողովրդին, նրան ներարկել մոգական ուժ ու անպարտելի ոգի: Վիպական, անզուգական, նախադեպը չունեցող խորաթափանցությամբ է Բուզանդը ներկայացնում հայոց հողի մոգական ուժը:

Խաբեությամբ Տիգրան հրավիրված Արշակ թագավորի հավատարմությունը ստուգելու համար Շապուհն իր իմաստասերների խորհրդով Հայաստանից բերել է տալիս հող և փռում իր պալատի մի հատվածում: «Այնուհետև, հայոց Արշակ թագավորին Շապուհը բելել տվեց իր առաջ,– գրում է Բուզանդը,– և նրա ձեռքից բռնած ճեմելով՝ շրջում էր: Եվ երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան. «Արշակ թագավոր հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար... և ահա ամբողջ 30 տարի է ինձ հետ պատերազմեցիր»: Արշակ թագավորն ասում է. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ..., և երդումս, որով քեզ երդվեցի, ինձ քո առաջը բերեց, ու ահա եկա քո առաջ, և ահա ես՝ քո ծառան, քո ձեռքում եմ, ինչպես ուզում ես վարվիր ինձ հետ, եթե կամենում ես, սպանիր, որովհետև ես՝ քո ծառան, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»: Շապուհ թագավորը, նրա ձեռքից բռնած, շրջում էր ճեմելով, անմեղ ձևանալով՝ նրան բերում էր հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ (Արշակը) այն տեղն է հասնում, հայկական հողի վրա ոտք է դնում, սաստիկ

⁴⁹ Նույն տեղում, էջ 44:

ըմբոստանալով, հպարտանալով՝ խոսքը փոխում էր, սկսում էր խոսել և ասել. «Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ ու քո որդիներին իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը»: Գերի Արշակ թագավորը անընկճելի է Պարսկաստանում՝ հայկական հողի վրա: Հայրենի հողի մոգական ուժի մասին իբրև ոչ պատահական, այլ խիստ ըմբռնված ու ընդգծված գաղափար արծածվում է նաև մի այլ առիթով: Երբ Արշակին անարգելու համար ընթրիքի սեղանի վերջին տեղում են նստեցնում՝ նրա ոտքի տակ նախապես փռելով հայկական հողը, Արշակը կրկին ըմբոստանում է:

«Երբ եղավ երեկո,– շարունակում է պատմագիրը,– պարսից թագավորի ընթրիքի ժամը, սովորությունն այնպես էր, որ հայոց թագավորի համար բազմելու տեղ էին պատրաստում այնտեղ՝ նրա հետ, նրա մոտ, նրա տախտի վրա, ...իսկ այն օրը... ամենից վերջը, բոլորից ներքև Արշակի բազմելու տեղը պատրաստեցին, որի հատակում հայկական հող էին շաղ տվել: Հետո բերին բազմեցրին Արշակ արքային: Նա մի պահ այդպես մնաց նստած, ուռած-փքված, հետո ոտքի կանգնեց ու ասաց Շապուհ թագավորին. «Իմն է այդ տեղը, որտեղ դու բազմել ես, վեր կաց այդ տեղից, որ ես այդտեղ բազմեմ, որովհետև մեր տոհմի տեղն է եղել այդ, իսկ եթե իմ երկիրը հասնեմ, քեզանից խիստ վրեժխնդիր կլինեմ»:

Ուշագրավ է այն փաստը, որ Բուզանդը գիտակցաբար մայր հողի կախարդական ուժի գաղափարի հեղինակ է դարձնում թշնամիներին՝ Շապուհի խորհրդականներին, այսինքն՝ նույնիսկ օտարներն ու թշնամիներն էլ գիտեն հայոց հողի մոգական ուժի մասին: Ի դեպ, հայոց հայրենիքը նաև հարևան ժողովուրդների կողմից սրբագործելու փաստերը հազարամյակների վաղեմու-

թյուն ունեն: Ուսումնասիրելով Ք. ա. III-I հազարամյակներից եկող շումերական, արքադական, բաբելական, եբրայական սկզբնաղբյուրները՝ պրոֆ. Ա. Մովսիսյանն ի հայտ է բերել, որ Հայկական լեռնաշխարհը, ըստ այդ աղբյուրների, համարվել է աստվածների բնակության վայր, ուր հիմնվել է դրախտը, և որում արարվել են մարդկության առաջնեկները: Այս տարածքը համաշխարհային ջրհեղեղից հետո էլ դարձել է մարդկության վերածննդի երկիրը, ուր կնքվել է աստծո և մարդկանց միջև հավիտենական ուխտը: Ուսումնասիրված սկզբնաղբյուրներում Հայկական լեռնաշխարհը հայտնի է «Անմահության երկիր», «Աստվածային սուրբ օրինաց երկիր», «Աստվածների կաճառ», «Եդեմ» և այլ պատվանուններով: Հնագույն պատկերացումների համաձայն՝ մեր երկրում էր պահվում անմահության գաղտնիքը, որը խորհրդանշող «Անմահության ծաղկին» կամ «Կենաց ծառին» հասնելու համար, ըստ վիպական ավանդության, երկար դեպքերել են հին աշխարհի նշանավոր դեմքերը⁵⁰:

Առասպելականի, վիպականի և պատմականի անձայրաձիր հորիզոններում բազմակողմանիորեն մշակվել է նաև հայոց ազգային ինքնության գաղափարը: Ազգային ինքնությունը ենթադրում է ազգային ինքնաճանաչում, որի բովանդակությունը ազգային կեցության, ազգային անցյալի, անհատի ազգային արժեքների ամբողջական ընկալումն է: Էթնիկական ինքնությունը պահպանել է ժողովրդի այնպիսի լավագույն բնութագծեր, ինչպիսիք են՝ ազնվությունը, վեհանձնությունը, տեսակի պահպանության համար անհավասար կռիվ մղելու պատրաստակամու-

⁵⁰ Տե՛ս **Ա. Մովսիսյան**, Հնագույն Հայաստանում գոյություն ունեցած ազգային-գաղափարախոսական մի քանի հիմնադրույթների մասին, Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, Երևան, 2013, էջ 152:

թյունը: Ազգային ինքնությունը տվյալ ժողովրդի հազարամյակներով կուտակված ազգային ոգու ինքնագիտակցումն է:

Ի դեպ, Միջագետքի վաղագույն բնակիչների՝ շումերների թողած վերոհիշյալ գրական ժառանգության մեջ ևս աչքի են ընկնում հայ ժողովրդի նախնիների աստվածընտրյալ ժողովուրդ լինելու մասին համոզմունքները: ...Նրանք ընտրյալներ են բնության և զարթոնքի Աստծո, որը առանձնացրել է իր ընտրյալներին Հայկական լեռնաշխարհում ու վերջինիս անմատչելի դարձրել անարժան մարդկության համար: Ա. Մովսիսյանի կարծիքով սա «ընտրյալ ժողովուրդ» հասկացության կիրառման հնագույն դեպքերից է⁵¹:

Հարևան ժողովուրդների համոզմամբ հայ ժողովրդի ընտրյալ լինելու մի ուշագրավ փաստն է հաստատում նաև ավանների արքայադստեր՝ Սաթենիկի հանրահայտ ուղերձը հայոց Արտաշես թագավորին:

«Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես,
Որ հաղթեցիր Ալանների քաջ ազգին.
Եկ լսիր Ալանների գեղաջա դստեր խոսքերին
Եվ տուր պատանին:
Որովհետև օրենք չէ, որ քենի համար դյուցազունները
Ուրիշ դյուցազն զարմերի կենդանությունը ջնջեն
Կամ իբրև ծառա ստրուկների կարգում պահեն,
Եվ երկու քաջ ազգերի մեջ
Մշտնջենավոր թշնամություն հաստատեն»⁵²:

Իրոք որ, «հայ դյուցազունների համար օրենք չէր, որ ուրիշ ազգերի դյուցազուններին սպանեն կամ ստրկացնեն», իր դասական արտացոլումն է գտել նաև Բուզանդի «Հայոց պատմու-

⁵¹ Տե՛ս Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 152:

⁵² Տե՛ս Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 196:

թյան» հետևյալ դրվագում. Ձիրավի հայտնի ճակատամարտում հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը կոտորում է պարսիկների կողմից իր դեմ կռվի ելած աղվաններին ու գերի վերցնում նրանց Ուռնայր թագավորին, բայց չի սպանում, ազատ է արձակում: Պատասխանելով Պապ թագավորի հանդիմանական խոսքերին՝ Մուշեղն ասում է. «Ես իմ ընկերներին (հավասարներին – Հ. Մ.) բոլորին կոտորեցի, իսկ նրանք, որ թագ են կրում, իմ ընկերները չէին, այլ քո. եկ, ինչպես ես իմ ընկերներին սպանեցի, այնպես էլ՝ դու քոնոնց, բայց ես թագավոր մարդու վրա, որ գլխին թագ է կրում, ոչ ձեռք եմ մեկնել, ոչ մեկնում եմ, ոչ էլ կմեկնեմ: Եթե ուզում ես, ինձ սպանիր, բայց ես, եթե երբևիցե մի թագավոր մարդ ձեռքս անցնի, ինչպես շատ անգամ պատահել է, ես չեմ սպանի թագավոր մարդու, որ թագ է կրում, թեկուզ ինձ էլ սպանեն»: Ահա հայոց սպարապետի բերանով կյանքի կոչված ասպետական վեհանձնության չափանիշը հինգերորդ դարում:

Փալատոս Բուզանդից վերցված մի այլ ուշագրավ քաղվածքով այժմ տեսնենք թե թշնամի երկրի թագավորին մեծահոգաբար խնայող հայ ազնվատոհմիկ Մուշեղ Մամիկոնյանի հայրը՝ Վասակ Մամիկոնյանը, ինչպես է պատժում իր թագավորին չմեծարող պարսիկ բարձրաստիճան պաշտոնյային: «Օրերից մի օր դեպք եղավ,– գրում է նա,– որ հայոց Արշակ թագավորը մտավ շրջելու պարսից թագավորի ախոռներից մեկում, իսկ պարսից թագավորի ախոռապետը նստած էր ներսում, և երբ նա թագավորին տեսավ, լվի տեղ անգամ չդրեց, ոչ մի մեծարանք ու պատիվ ցույց չտվեց, դեռ նրան ծաղրուծանակի ենթարկեց՝ պարսկերեն ասելով՝ հայոց այծերի թագավոր, եկ այս խոտի խուրձի վրա նստիր: Երբ այս խոսքերը լսեց հայոց մեծ զորավար Վասակը՝ Մամիկոնյան տոհմից, սաստիկ բարկացավ ու զայրացավ, քաշեց իր սուրը, որ մեջքից կախված ուներ, զարկեց, տեղն

ու տեղը գլխատեց պարսից թագավորի ախոռապետին հենց ախոռի մեջ, որովհետև նա չկարողացավ լսել և տանել թագավորի անարգանքը»:

Ահա թե ինչպիսի խորությամբ է Բուզանդն ըմբռնել պետության գլխի՝ թագավորի անձի արժանապատվության պահպանման գաղափարը: Համոզված ենք, որ հենց այս գաղափարն ընդգծելու համար է Բուզանդը ընտրել է իրադարձության վայրը՝ պարսկական արքունիքն ու արքունական ախոռը, որը պարսիկների համար ավանդաբար համարվել է «ապաստանի տեղ»: Այստեղ Բուզանդը զարգացրել է հայոց արքային չհարգողին ոչ մի տեղում չներելու գաղափարը:

Բայց ահա հայոց պետականության անկումից հետո ամեն ինչ փոխվում է: Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև բաժանված և արդեն պետականությունը կորցրած հայ ժողովուրդը կորցնում է իր ազգային արժեքները, ձեռք բերում թերարժեքության բարդույթ, որի դրսևորման նկատելի ձևերն են՝ ազգային բնավորության ավանդական ձևերի խամրումը, զոհի բարդույթը, ազգային հպարտության կորուստը, անմիաբանությունը, պարտավողականությունը, ստրուկի հոգեբանությունը: Խորենացու «Հայոց պատմությունն» ավարտվում է հենց այս ողբալի իրավիճակի նկարագրությամբ. «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանայդ, խորհրդականդ և ուսուցանողդ: ...Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը ... փարափի մեջ ժողովված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում»⁵³:

Այնուհետև Խորենացին ցույց է տալիս այն համատարած անկումային տրամադրությունը, որը կլանել էր հայ հասարակու-

⁵³ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 313:

թյան յուրաքանչյուր դասի ու զբաղմունքի մարդկանց. ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամուլ, վիճակավորները՝ դատարկախոս, աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ, սովորացնելու մեջ փութաջան, զինվորականները՝ անարի, իշխանները՝ ապստամբ, դատավորները՝ տմարդի, և առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած⁵⁴:

Այժմ սեփական հնարավորություններով իր հայրենիքը փրկելու համար հայ ժողովուրդը պետք է ինքնահամախմբվեր, ապրեր ազգային միասնության գաղափարով, որը միայն կարող էր հայ ժողովրդին գոտեպնդել և մղել ինքնազատագրման անհավասար պայքարի:

Հայ ժողովրդի արարչական ծագման, պատմական հայրենիքի սրբագործման և ազգային ինքնության գաղափարները առասպելական ու վիպական զորեղ միջոցներով արմատավորելուց հետո V դարի հայ պատմիչները, հատկապես Փավստոս Բուզանդը, Եղիշեն ու Ղազար Փարպեցին, պատմական փաստերի հիման վրա մշակեցին ազգային միասնության՝ ինքնահամախմբման և ազգային-ազատագրական պայքարի՝ ինքնազատագրման կուռ ու ամբողջական գաղափարները:

Ազգային միասնությունը խաթարող առաջին կործանարար իրողությունը Հայաստանի առաջին բաժանումն էր Պարսկաստանի ու Բյուզանդական կայսրության միջև: Հենց միայն հայոց պատմությունը 387 թ. Հայաստանի բաժանումով ավարտելով՝ Բյուզանդը իր քաղաքական մեծ վրդովմունքն է արտահայտում համազգային այդ մեծ աղետի նկատմամբ: Հունաց ու պարսից թագավորները, ցավով գրում է Բուզանդը, իրար հետ համաձայնության եկան և որոշեցին հայոց աշխարհը բաժանել իրենց միջև.

⁵⁴ Տե՛ս Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 316:

«Մեր երկուսի միջև ընկած այս հզոր և հարուստ թագավորությունը լավ կլինի,– ասում էին նրանք,– որ այս միջոցով թուլացնենք ու խանգարենք այս թագավորությունը, նախ երկու մասի բաժանենք, ...հետո կաշխատենք նրանց էլ թուլացնել, աղքատացնել և մեր ծառայության ենթարկել, որպեսզի մեր մեջ չկարողանան գլուխ բարձրացնել»⁵⁵:

Ահա թե ինչ խորությամբ է ըմբռնում մեծ պատմագիրը պատմականորեն ստեղծված քաղաքական այս իրադարձության թողնելիք աղետալի հետևանքները:

Ազգային միասնությանը խաթարող ցավալի գործոններից էր ներքին անմիաբանությունը, որոնք իրագործում էին դավաճան հայ նախարարները, որոնց դասական կերպարները ստեղծել են Բուզանդն ու Եղիշեն՝ ի դեմս Մերուժան Արծրունու և Վասակ Սյունու: Ատելությամբ է Եղիշեն կերտում Վասակի կերպարը, մի մարդու, որը, ամեն միջոց գործադրելով, երկփեղկում է հայոց բանակը և դառնում նրա թուլացման ու պարտության պատճառը:

«Այս հիշատակարանը գրվեց նրա մասին,– գրում է Եղիշեն,– նրա հանցանքները կշտամբելու և նրան մեղադրելու համար, որպեսզի ամեն մարդ, որ լսի և իմանա այս բանը, նզովք կարդա նրա հետևից և նրա գործերին ցանկացող չլինի»⁵⁶:

Այսպիսով՝ Եղիշեն ուղղակի հայտարարում է, գրում է Ն. Ադոնցը, որ նա գրել է պատմություն այն բանի համար, որպեսզի գալիք սերունդները անիծեն ուխտադրուժ Վասակի հիշատակը⁵⁷:

⁵⁵ **Փավստոս Բուզանդ**, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 299:

⁵⁶ **Եղիշեն**, Վարդանանց պատմությունը, Երևան, 1958, էջ 126:

⁵⁷ Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 186:

Խորապես գիտակցելով վտանգված ազգի ազգային միասնության գաղափարի կարևորությունը՝ հայ ժողովրդի դիմադրողական ուժերը ջլատելու նպատակով հատուկ քաղաքականություն էր վարում Հազկերտը. որը «...սկսեց առաջ քաշել կրտսերներին ավագների միջից, և անարգներին՝ պատվականների միջից, և տգետներին՝ գիտունների միջից, և վախկոտներին՝ քաջ մարդկանց միջից, և էլ ինչ թվեմ, մեկ-մեկ բոլոր անարժաններին առաջ էր քաշում, իսկ բոլոր արժանավոր մարդկանց հետ էր տանում. մինչև անգամ հորն ու որդուն բաժանում էր միմյանցից»⁵⁸:

Պարսից արքունիքի վարած այս քաղաքականության դեմ հետևողականորեն պայքարում էին թե՛ հայ մտավորականները, թե՛ հայ պետական ու հասարակական գործիչները: Պատահական չէր, որ հենց առաջին նպաստավոր պահին՝ 484 թ., Նվարսակի հաշտության պայմանագրի երկրորդ կետով Վահան Մամիկոնյանը Վաղարշ թագավորից պահանջեց. «...որ մարդուն ճանաչեք ոչ թե իշխանաբար, այլ արդարությամբ իմանաք լավն ու վատը, ընտրեք պիտանին ու անպիտանը, ճանաչեք տոհմիկին ու անտոհմիկին, քաջ ու օգտակար մարդկանց պահեք լավերի ու պատվականների մեջ՝ արհամարհելով ոչնչի տեղ դնեք վատերին ու անպիտանին, սիրեք վաստակավորին և ատեք անվաստակներին»⁵⁹:

Ազգային միասնության՝ ինքնահամախմբման գաղափարի հետ V դարում մշակվեց նաև հայ ժողովրդի ինքնազատագրման՝ ազգային-ազատագրական անձնագրի պայքարի համապարփակ ծրագիր ու գաղափարախոսություն:

⁵⁸ Եղիշե, նշվ. աշխ., էջ 22:

⁵⁹ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 391:

Եղիշեն խորապես գիտակցում էր, որ մեծ արհավիրքների ենթարկված ժողովրդից բազմակի ջանքեր են պահանջվում՝ վերականգնելու ազգային ոգու կորուվը: Նա սխալ ըմբռնում ունի պատերազմի և հաղթանակի մասին և կարծում է, թե հայրենիքի համար զոհվելը անիմաստ է: Ահա այս ծանր մտայնությունից է Եղիշեն ցանկանում գաղափարի հզոր ներգործուն ուժով դուրս բերել իր հայրենակիցներին. «Ում հոգիները թուլացած են երկնավոր առաքինություններից,– գրում է մեծ հայրենասերը,– սաստիկ երկյուղի մեջ է ընկած (նրանց) մարմնի բնությունը, ամեն հողմից շարժվում է և ամեն խոսքից վրդովվում և ամեն բանից դողում. այդպիսի մարդը... մահվան ժամանակ էլ անդառնալի կորստյան է մատնվում: Ինչպես որ հնում մեկն ասել է, չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն:... Եվ այս բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից: Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր (լինել), քան մտքով կույր: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմնի տեսողությունից: ...Եթե թագավորը իմաստնությունն իրեն աթոռակից չանի, չի կարող իր վիճակի մեջ վայելուչ լինել:...Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է:.. Թագավորը միայն իր համար չէ պատասխանատու, այլ նաև նրանց համար, որոնց կորստյան պատճառ է եղել»⁶⁰:

Եղիշեից բերված այս հատվածը նրա անհուն ոգեղենության ու անվիճելի տաղանդի պերճախոս վկայությունն է: Հանուն հայրենիքի, նրա ոտնահարված պատվի և ազատության պաշտպանության համար գիտակցված մահը Եղիշեն հոչակեց անմահության, ազգային ազատագրության հավերժական ծրագիր ու գաղափարախոսություն:

⁶⁰ Եղիշե, նշվ. աշխ., էջ 20-21:

Հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական կեսդարյա պայքարի արդյունքում և այդ պայքարի գաղափարախոսությունը կերտողների ջանքերով հայ ժողովուրդը հասավ հաղթանակի: Պարսիկները հրաժարվեցին հայ ժողովրդին իրենց ծուլելու քաղաքականությունից և 484 թ. Նվարսակում կնքված պայմանագրով ճանաչեցին հայ ժողովրդի անկախությունը և Վահան Մամիկոնյանին ճանաչեցին հայոց մարզպան:

Հայ ժողովրդի ինքնության, ինքնահամախմբման ու ինքնազատագրման գործում մի կուռ ու ամբողջական համակարգ դարձան հայոց եկեղեցին ու քրիստոնեական վարդապետությունը:

Ստեղծված ծանր վիճակում, երբ անհնարին էր դարձել քաղաքական անկախության համար գերակշիռ ուժերի դեմ պայքարը ռազմի դաշտում շարունակելը, հայ ժողովրդին մնացել էր մի ելք՝ ստեղծել նոր պայմաններին համապատասխան ազգապաշտպան հուսալի կառույցներ: Այդ նորը ազգի հոգևոր ներուժը համախմբելու և նրան գաղափարախոսական պայքարի դաշտ դուրս բերելու գործի կազմակերպումը եղավ: Առաջին ամենաարդյունավետ քայլը քրիստոնեությունը պետական կրոն հռչակելն էր: Սասանյանների կողմից պաշտվող զրադաշտականությունը քիչ էր տարբերվում հայկական հեթանոսական կրոնից, և հայոց ընտրանին՝ քաղաքական ու մտավոր վերնախավը, զգալով, որ հայոց հեթանոսական գաղափարախոսությունն անգոր է պատնեշ կանգնելու պարսկական ծուլողական մեքենայի դեմ, քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն, որն էլ դարձավ ազգապահպան հզոր պատվար, և որի օգնությամբ հայ ժողովուրդը պահեց իր տեսակը նախ զրադաշտականության, ապա՝ մահմեդականության դեմ մղված դարավոր պայքարում:

Երբ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց նաև հունահռոմեական աշխարհում, և հիմա էլ սրանք էին Հայաստա-

նում ձուլողական քաղաքականություն վարում, քրիստոնեությունը հայ ժողովրդի համար կորցնում էր ազգապահպան ինստիտուտի այն գործառույթը, որը հաջողությամբ գործում էր պարսիկների դեմ: Այս նոր պայմաններում անհրաժեշտություն զգացվեց ստեղծելու Արևմուտքի ոտնձգությունները կասեցնող կառույցներ, և հայ ժողովուրդը այդ բարդ խնդիրը ևս լուծեց հաջողությամբ: Լավագույն միջոցը 451 թ. Քաղկեդոնի 4-րդ տիեզերական ժողովի առաջադրած դոգմանների մերժումն էր: 506 թ. Բաբկեն կաթողիկոսի գլխավորությամբ Դվինում կայացած ժողովը, գտնելով, որ Քրիստոսը ունի միայն մեկ, այն է՝ աստվածային բնություն, մերժեց քաղկեդոնական երկաբնակությունը:

Դարագլուխ կազմող այս քայլով համաշխարհային քրիստոնեական վարդապետությունը ազգայնացվեց, որով վերականգնվեց հայոց եկեղեցու էթնոպաշտպան գործառույթը, այժմ արդեն քրիստոնյա Արևմուտքի նկատմամբ: Սակայն երկաբնակության մերժմամբ հարցը չլուծվեց: Հայաստանը բազմաթիվ օղակներով կապված էր կայսրությանը: Ազգային-ազատագրական քաղաքական պայքարին փոխարինում է գաղափարախոսական անզիջում պայքարը: Արշակունյաց պետության անկումից հետո հայությանը համախմբող ու գլխավորող հիմնական ուժը մնացել էր հայոց եկեղեցին: Պարսկաստանի և Հռոմի առաջնահերթ նպատակն է դառնում այդ կազմակերպությունը ենթարկել իրենց կամ ոչնչացնել: Հայաստանում սկսվում է համառ, անզիջում ու տևական պայքար: Այս տեսական ու իմացական բարդ գիտելիքներ պահանջող պայքարին լծվում են հայ մշակույթի ազնվագույն ու ականավոր գործիչները՝ ստեղծելով բանավիճային-գաղափարախոսական պայքարի հարուստ գրականություն:

Հայոց եկեղեցին, ծեսի ու հավատալիքի կրողը լինելուց բացի՝ դարձավ նաև համահայկական կենտրոնացված կազմակեր-

պություն, որը մեծ դեր ուներ հայ ժողովրդին քաղաքական ընդհանուր գաղափարի շուրջ համախմբելու գործում: Եկեղեցական ժողովները իրենց նշանակությամբ համազգային միջոցառումներ էին, քանի որ բացի կրոնադավանաբանական հարցերից՝ ընդունում էին նաև աշխարհիկ օրենքներ, նորմեր, որոնք կարգավորում էին նաև աշխարհիկ հարաբերությունները:

Համազգային այս ինստիտուտը նպատակամղված էր կանոնակարգելու հոգևոր-քաղաքական բնագավառի գործընթացները կարգավորող սկզբունքները, ստեղծելու հիմնական գաղափարի շուրջ միավորված մարդկանց խումբ, մշակվեր նրանց վարքագիծը կանոնակարգող նորմերի համակարգ, բարոյական սկզբունքների ու ազգային շահերի վրա խարսխված, արդիական պահանջներից բխող քաղաքական ինստիտուտ, որում սահմանվեր հայոց եկեղեցու կազմակերպվածության աստիճանը, գործունեության ձևը, աստիճանակարգությունը և այլն: Այս նպատակով Օձնեցին ստեղծեց օրենսդրական ամուր հիմք, հավաքեց ու ամբողջացրեց չորսդարյա մի ժամանակահատվածի կանոնական այն օրենքները, որոնք ժամանակի բազմադեմ պայքարի մեջ օրինականացնում էին հայ առաքելական եկեղեցու տեղն ու դերը թե՛ համաքրիստոնեական աշխարհում, թե՛ հայ իրականության մեջ:

Այսպիսով՝ պարզվում է, որ հայոց ազգային գաղափարախոսության ձևավորումը սկսվել է V դարում՝ հայ հոգևոր մշակույթի աննախադեպ ծաղկման և ազգային-ազատագրական պայքարի բուռն վերելքի դարաշրջանում:

Մովսես Խորենացին Նոյ Նահապետի և Հայկի ու Բելի առասպելներով արմատավորեց հայ ժողովրդի արարչական ծագման և հայոց հայրենիքի սրբագործման գաղափարները, Փ. Բուզանդը՝ հայոց հայրենիքի ու ազգային ինքնության վիպական

պատումներով, Եղիշեն ու Փարպեցին՝ ազգային ինքնահամախմբման և ինքնազատագրման գաղափարներն արտացոլող պատմական իրադարձություններով ու փաստերով: Հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության համակարգում կուռ ու ամբողջական հաստատություն դարձավ հայոց առաքելական եկեղեցին՝ իր միաբնակ՝ հակաքաղկեդոնական վարդապետությամբ:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԳՐՎԱՆ

Հայոց ազգայնականության առասպելական, վիպական և պատմական շերտերը «Սասունցի Դավիթ» էպոսում

*Քաջերի սահմանը զենքը չէ միայն, ինչպես ասված է,
այլ և այն հոգեկան մղումը, որ փանում է դեպի զենքը:
Նիկողայոս Ադոնց*

«Սասունցի Դավիթ» էպոսը ժողովրդական բանահյուսություն է՝ բաղկացած վիպական ու պատմական ստեղծագործություններից, ավանդազրույցներից, առասպելներից ու լեգենդներից: Էպոսի հիմքում VII-X դարերի Հայաստանի պատմության շրջադարձային իրադարձություններն են՝ արաբական ծանր լծի առկայությունը, այդ լծի դեմ ծավալված ազգային-ազատագրական ապստամբություններն ու նրա վերջնական թոթափումը, նաև Բագրատունյաց պետականության հաստատումը:

Հայտնաբերվել և հրատարակվել է էպոսի մոտ 160 պատում⁶¹:

Էպոսի երևան գալու հետ սկսվել են էպոսագիտական հետազոտություններ, որոնք ծավալվել են հիմնականում երեք ուղղությամբ. առաջինը բանահավաքչական գործն էր, երկրորդը՝ էպոսի պատմական կորիզի հայտնաբերման, երրորդը գրական երկի առասպելաբանական ուսումնասիրությունն է, որը աշխատում է վեր հանել հնդեվրոպական միջերի հետ կապ ունեցող մոտիվներն ու դրվագները⁶²: Սակայն դյուցազնավեպը, ամուր

⁶¹ Տե՛ս Սասունցի Դավիթ: Հայ ժողովրդական հերոսավեպ, առաջաբանը, բանարանը, ծանոթագրությունները՝ Ս. Բ. Հարությունյանի, Երևան, 1981, էջ V:

⁶² Տե՛ս **Պիտեր Քաուի**, Գործողությունների զարգացումը «Սասնա ծռեր» էպոսում՝ որպես բանավոր ավանդության ազդակ, «Համաշխարհային ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժանրը», Երևան, 2006, էջ 72:

կանգնած լինելով ազգային-ազատագրական պայքարի հողի վրա, ներկայանում է ոչ միայն առասպելական ու գեղարվեստական մտածողության արգասիք, այլև ազգային գաղափարաբանության բազմաշերտ ու կուռ համակարգ: Այնտեղ նույնպես շոշափվել ու մշակվել են *հայ ժողովրդի արարչական ծագման՝ պատմական հայրենիքի սրբազորման, ազգային ինքնության, ինքնահամախմբման՝* ազգային միասնության ու հատկապես *ինքնազատագրման՝ հայրենիքի ու հայ ժողովրդի ազատագրության պայքարի գաղափարները, որոնք կազմում են* հայոց ազգային գաղափարախոսության առանցքը: Հետազոտողների ուշադրությունից վրիպած գաղափարախոսության այս հիմնախնդիրների բացահայտմանն է նվիրված ներկա ուսումնասիրության այս հանգրվանը: Հարկ է նշել, որ խորհրդային իշխանության տարիներին էպոսագիտությունը թեև մեծ հաջողությունների է հասել, սակայն հասարակարգի պահանջներով թելադրված դասակարգային ու աթեիստական մոտեցումները հանգեցրել են որոշ ծայրահեղությունների: Ուստի վերանայման կարիք ունեն էպոսի ստեղծման ժամանակի, էպիկական հերոսների և նրանց պատմական նախատիպերի լուսաբանման, Փոքր Մեծի ֆենոմենի բացահայտման և այլ հարցեր:

«Սասունցի Դավիթ» ժողովրդական հերոսական էպոսը թեև իր ասք-առասպելների բովանդակությամբ հասնում է մինչև նախնադար, բայց իրականում այն սկսվում է արաբական տիրապետության հաստատման ժամանակների իրադարձությունների արձագանքների նկարագրությամբ և հասնում մինչև նրանց երկուսուկեսդարյա լծի թոթափումը: X դարում է Հայաստանը վերջնականապես ազատագրվել արաբական լծից, վերակերտվել 428 թվականին կորցրած պետականությունը, և վերջ է տրվել ոչ միայն ֆիզիկական ստրկությանը, այլ նաև հոգևոր

ստրկամտությանը: Այս դարի հաղթական ճակատամարտերում են ծնվել Հայաստանը ազատագրող հերոսները, կերտվել նրանց հերոսական կերպարները, ինչպես նաև հաղթող ժողովրդի ազատատենչ գաղափարները:

X դարում տեղի են ունեցել հասարակական-տնտեսական արմատական տեղաշարժեր: Վերականգնվել է խաթարված տնտեսությունը, ձևավորվել խոշոր ավատատիրական հողատիրությունը, ծաղկում են ապրել քաղաքները: Աննախադեպ վերելքի այս դարում ու միջավայրում է ծնվել նաև հայ ժողովրդի էպիկական մոնումենտալ հուշարձանը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը:

Փորձենք պարզել, թե ինչպիսի պատմական անձեր ու իրադարձություններ են նյութ դարձել վեպի, ով, ում և ինչի համար է հորինվել վեպը, ինչպիսի լուսաբանություն է տալիս վեպը պատմական նյութին⁶³:

Պարզվում է, որ էպոս ստեղծողները նպատակ են դրել գտնելու, թե մոռացված անցյալի որ կետից են վերընձյուղվել հայ կյանքը, Հայաստանը ազատագրողների՝ ջոջանց տան ակունքները: Այստեղ ժողովուրդն ինքն է ի հայտ բերում իր նշանավոր նախնիներին՝ Սանասարին ու Բաղդասարին, ինքն է կերտում Մեծ ու Փոքր Մհերների և Սասունցի Դավթի կերպարները: Ահա այս հերոսների ապրած ու գործած դարաշրջանների հիման վրա էլ էպոսը բաժանվել է չորս ճյուղի, որոնցից յուրաքանչյուրում ներկայացվում է ազգային կյանքի մի ամբողջական պատմաշրջան:

Առաջին ճյուղում ներկայացվում են Զոջանց տան ծննդաբանությունը, երկրորդում՝ արաբական տիրապետության դեմ պայքարի ելած Մեծ Մհերի սխրագործությունները՝ փայլուն հաղթանակները, արաբական լծի թոթափումը և անկախ պետականու-

⁶³ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 13:

թյան ստեղծումը, երրորդում՝ Հայաստանի՝ արաբական լծից վերջնական ազատագրումը Սասունցի Դավթի գլխավորությամբ, չորրորդում՝ պետականության անկումը, անթագ ու անհայրենիք Փոքր Մհերի դեգերումներն ու ի վերջո Վանա քարաժայռում փակվելը:

Էպոսի առաջին ճյուղը սկսվում է այն դեպքերի նկարագրությամբ, թե ինչպես հայ ժողովրդին բնաջնջելու սպառնալիքի տակ Հայաստանը նվաճած Բաղդադի խալիֆը կնության է պահանջում հայոց Գագիկ թագավորի դստերը՝ Ծովինարին:

«Բաղդադու խալիֆան կանչեց, ասաց.

–Հա, ասքար, ասքար արեք, գնացեք.

Աղջիկ կը տա՝ կը տա. չի տար.

Քար քաղեցեք, ավազ մաղեցեք,

Ժողովեցեք, բերեք՝ ինչ կա»⁶⁴:

Այս անելանելի վիճակից դուրս գալու համար աղջիկը որոշում է իր ժողովրդին փրկելու համար ինքնազոհողության գնալ:

Ծովինարը, ծանր մտորումների մեջ խորասուզված, Բաղդադ գնալուց առաջ՝ Վանա ծովափին զբոսնելու ժամանակ, ծառավում է: Այդ պահին ժայռից բխում է սառնորակ աղբյուր, որից երկու բուռ ջուր է խմում Ծովինարն ու այդ ջրից հղիանում: Բաղդադում պարզվում է, որ նա երեխա է ունենալու, որի համար խալիֆը մահվան վճիռ է կայացնում: Սակայն Ծովինարի խնդրանքով մահապատիժը հետաձգվում է մինչև ծննդաբերություն: Ծնվում են երկվորյակ տղաները՝ Սանասարն ու Բաղդասարը, որոնք դարձյալ մահվան սպառնալիքի տակ անց են կացնում իրենց գերեվարված մանկությունը: Արաբական կուռքերին զոհաբերվելուց խույս տալով՝ պատանի եղբայրները մոր խորհրդով փախչում են Հայաստան և հաստատվում Սասունում:

⁶⁴ Սասունցի Դավիթ, Երևան, 1961, էջ 5:

Ինչպես տեսնում ենք, Սասնա դյուցազունների ծագումնաբանական ակունքների որոնումները էպոս ստեղծողներին տարել են նախապատմական առասպելների աշխարհ: Սանասարի և Բաղդասարի մայրը հայոց Գագիկ թագավորի դուստր Ծովինարն է, որը բեղմնավորվել է իր հայրենիքի՝ Վանա լճի ափամերձ ժայռից բխած աղբյուրից խմած ջրից: Հանդիպելով ջրի բեղմնավորող ներուժին՝ Ծովինարը ակամայից դարձել է դյուցազնատոհմի արարիչը: Ծովինարի և նրա զավակների՝ Սանասարի ու Բաղդասարի և նրա այլակրոն խալիֆ ամուսնու միջև, հակամարտությունից բացի, այլ ընդհանրություն չկա: Դիցաբանական կաղապարում այն դրսևորվում է որպես անհաշտ թշնամություն նվաճող խալիֆի և ազատատենչ հայ պատանիների միջև:

Հայկական էպոսի ծագումնաբանական ժառանգական-արյունակցական կապը անմիջական է, շաղկապված են հերոսների չորս սերունդները: Զրից զորեղանալու հատկանիշը փոխանցվել է նաև նրանց սերունդներին⁶⁵:

Որոշ էպոսագետներ, առաջնորդվելով համեմատական առասպելաբանության մեջ տիրապետող միգրացիոն տեսության ուղղությամբ, տարբեր ժամանակներում ու տարբեր վայրերում են փնտրել Ջոջանց տան նախահայրերին ու նրանց նախահայրենիքները: «Ըստ բաբելական սեպագիր փոքր ժամանակագրության,– գրում է էպոսագետ Ս. Հարությունյանը,– մ.թ.ա. 681 թ. ...Ասորեստանի Սենեխերիբ թագավորի որդիներից մեկը խռովության ժամանակ սպանում է հորը և փախչում անհայտ ուղղությամբ: ...Մեկ այլ համաժամանակյա սեպագիր աղբյուրով՝ նրանք փախչում են Ուրարտու: Պատմական այս եղելություննե-

⁶⁵ Տե՛ս **Կ. Տրեվեր**, Հայկական էպոսի ջրային անթեսուր, «Սասունցի Դավիթ», Երևան, 1939, էջ 97-102:

րը փոքր-ինչ վիպականացված հիշատակվում են նաև Աստվածաշնչի թագավորաց 4-րդ գրքում: Ասորեստանի Սենեքերիմ թագավորը ...Նինվեում իր Նեսրաքա Աստծո տաճարի մեջ երկրպագություն է կատարում, թագավորի զույգ որդիները՝ Ադրամելիք և Սանասար, սրով խփում, սպանում են հորը և փախչում Արարադա երկիրը»:

...Նույն ավանդության շարունակությունը՝ իբրև հայ իշխանական նախնիների ծագման պատմություն, գտնում ենք միջնադարյան աղբյուրներում: Մ. Խորենացին հաղորդում է, որ Սանասարն ու եղբայրը՝ Ադրամոզան, Հայաստան են գալիս Պարույր Սկայորդու ժամանակ: Վերջինս Սանասարին է տալիս Աղծնիք նահանգը, նրա սերունդները աճելով ու բազմանալով լցնում են Սիմ կոչված լեռը՝ Սասունը, իսկ եղբայրը բնակվում է նույն լեռան հարավարևելյան կողմում, և նրանից սերում են Արծրունի և Գնունի իշխանական տները»⁶⁶:

Թե որքանով են այս ավանդական վկայությունների հիմքերը իրական, պատմական, Ս. Հարությունյանը իր խնդրից դուրս է համարում: Ուսումնասիրողների մի մասն էլ համոզված է, որ անկախ նրանից՝ թե՛ Խորենացին ինքը, թե՛ հետագա դարերի իր խմբագրողներն ու ընդմիջարկողները երբ, ում և ինչի համար են օգտագործել այս առասպելը, պատմականորեն չեն հիմնավորվում⁶⁷:

Էպոսաստեղծ հայ ժողովուրդը իր պետականությունը վերակերտող նախարարական տան՝ Ջոջանց տան նախնիներին սե-

⁶⁶ Ս. Հարությունյան, Հին հայկական և առասպելաբանական ավանդույթների զարգացումը «Սանա ծոեր» էպոսում, տե՛ս «Հայկական ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը», Երևան, 2006, էջ 9:

⁶⁷ Տե՛ս Ա. Շահնազարյան, Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը, «Աշխատություններ հայկական պետական պատմական թանգարանի», Երևան, 1949, էջ 166-212:

րել է ո՛չ արաբական, ո՛չ ասորական և ո՛չ էլ հրեական ակունքներից: Ազգային արժանապատվության և ազգային գաղափարաբանության տեսանկյունից նա ավելի արժանապատիվ առասպել է ստեղծել իր ժողովրդի ծագումնաբանության մասին, քան պատմագիրներն ու փորձառու պատմաբաններն են մեկնաբանել: Սասնա դյուցազունների նախնիների՝ Սանասարի ու Բաղդասարի մայրը Ծովինարն է, հայրը՝ Վանա լճափից բխած անաղարտ աղբյուրի ջուրը:

Յեղային ինքնաճանաչման խորունկ որակները էպոս ստեղծողները դրսևորեցին նաև հայոց պատմական հայրենիքի գաղափարի կերտման ու սրբագործման ժամանակ: Բաղդադից Հայաստան փախչող Սանասարին ու Բաղդասարին զարմացնում է Հայաստանի լեռներից գահավիժող մի գետակ, որը թափով կտրում ու կիսում է մի մեծ գետի հոսանքը: Բռնելով այդ գետակի հունը՝ սկսում են հայրենիքի հայտնագործման որոնումները.

«Ու բռնեցին զէն բարակ ջուր,
Ու գնացին մեկ վերունի էրկիր հասան,–
Քարափրթա, ծոր, անդունդք, քար ու կապան,
Անտառ, արջ ու գազան»⁶⁸:

Որոշ ժամանակ այդ գետակի ակունքի մոտ մնացին, բերդի հիմքեր գցեցին, բայց մենակությունից նեղվելով՝ որոշեցին որոնել մարդաշատ բնակավայր: Եվ այդ որոնումները եղբայրների առաջ բացեցին արաբների լծի տակ հեծող մի թշվառ աշխարհ: Նախ գնում են Մուշի Մուշեղ թագավորի մոտ և բնակության տեղ խնդրում: Բայց թագավորը հենց որ իմանում է, որ Բաղդադի խալիֆի տղաներն են, սարսափահար պատասխանում է.

⁶⁸ Սասունցի Դավիթ, Երևան, 1961, էջ 25:

«...–Որ էդպես է, որդիք,
Մենք չենք իշխենա ձեզի պահել,
Էնի զորեղ թագավոր է,
Կը գա մեր առ ու գերին կը տանի»⁶⁹:

Մերժված պատանիները ուղևորվում են Արգրումի ամիրայի մոտ: Սակայն սա ևս, հենց որ լսում է, Բաղդադի խալիֆի տղաներն են, դարձյալ սարսափահար մեծում է.

«Էդ ամիրան ասաց.– Հայ, հայ, հայ,–
...-Մենք էդոնց մեռելներուց կը փախնինք,
Էդոնց կենդանուն ռաստ կը գանք:
Ոչ, ձեզի տեր չենք կարնա ընի»:⁷⁰

Համատարած վախի այս մթնոլորտում եղբայրները որոշում են թաքցնել իրենց կապը Բաղդադի խալիֆի հետ:

«Սանասար ասաց Բաղդասարին.
–Աղբեր, մենք եդ մարդու մոտեն կը փախնինք
...Արի մենք եդ շան անուն չտանք»⁷¹:

Ու այդպես էլ անում են: Ուղևորվելով Մանազկերտի Թևաթորոս թագավորի մոտ՝ առժամանակ հաստատվում ու հյուրընկալվում են այնտեղ, սակայն չհարմարվելով միջավայրին, Թևաթորոսից ստանալով որոշ օգնություն և քառասուն աղքատ ընտանիք՝ տեղափոխվում են իրենց հիմնած Սասնա տուն: Աղքատներին տներ ու իրենց համար ամրոց կառուցելուց հետո գնում են Բաղդադ, Ծովինարին վերցնում և վերադառնում են նախ իրենց պապի՝ Գագիկ թագավորի մոտ:

Հրաժարվելով Գագիկի ժառանգորդը լինելու առաջարկից, պապից ստանալով «...Ծովասար, Մարաթկա ջուր, Ճապաղջրի

⁶⁹ Սասունցի Դավիթ, էջ 27:

⁷⁰ Նույն տեղում, էջ 28:

⁷¹ Նույն տեղում, էջ 28:

Բաժն ու Քողեն»⁷²՝ վերադառնում են Սասուն: Այս բոլորից բացի՝ Սանասարն ավելի է ընդարձակում իր հայրենիքի սահմանները.

«Սև սարի բոլոր ու չորի Ծծմակաքիթ՝

Մշու վերևով պարիսպ քաշած,

Էլած էր չորի Սեղանասարու գոտին ի վեր՝

Ճապաղջրու Դուրան, Մուրադ գետի բերան,

Ու զէդ ամենն էլ տիրապետեց

...Օրերուց օր մ էլ զարկեց, գնաց չորի Մըսըր,

Չորի Բաթմանա կամուրջ, չորի Անգղա ծոր»⁷³:

Ահա Ծովինարի որդիների՝ Ջոջանց տան նախնիների հայրենիքը:

Այս տարածքը հայոց հայրենիքն է՝ նաև իր սրբազան ջրերով: Էպոսում հայոց հրաշագործ ջուրը այն հիմնական տարերքն է, որն իր զավակներին գերմարդկային ուժ է շնորհում, նրանց ծնողն է, նրանց կյանքի աղբյուրը: Հրաշագործ գետակի ակունքում են Սասնա հիմնադիր նախնիները կառուցում իրենց բերդը, քանի որ համոզված են, որ «ով էդոր ական ջուր խմե, կտրիճ կըլնի»: Սանասարը, այդ ջուրը խմելով, դյուցազնացավ: Ջրից ծնված հսկան ջրից է ստանում իր անխոցելի զենք ու զրահը, հասակն ու զորությունը, ջրից է ստանում նույնիսկ իր հրեղեն ձին՝ Քուռկիկ Ջալալին⁷⁴:

⁷² Սասունցի Դավիթ, էջ 53:

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Տե՛ս Հայկական էպոսի ջրային անթեոսը, «Սասունցի Դավիթ», Երևան, 1939, էջ 100:

Վեպի բոլոր գլխավոր հերոսները, կաթնաղբյուրում լողանալով, հզորություն են ստանում, որը դիտվում է որպես հայրենի ջրի պաշտամունքի խորհրդանիշ՝ տոտեմ⁷⁵:

Սասնա տան հիմնադիրները այդ հրաշագործ աղբյուրների մոտ են հիմնել իրենց որսի առասպելական անտառներն ու այգիները: Այդ սրբազան այգի-անտառներում են ամփոփվել նախնիների շիրիմները, նրանց անունները հավերժացնող հուշարձաններն ու տաճարները:

Հենց որ Մհերի կինը հղիանում է.

«Էդ վախտ էլավ Մհեր, գնաց Սասունա սար

Մեկ խաս բախչա մի տնկել էտու էնտեղ,

Իր սարեն կայնեցուց էնտեղ,

Էդ տեղի անուն դրեց Ծովասար:

Ծովասարեն էրկու սահաթի չափ զատն

Գնաց խորոտ վանք մի շինեց,

Վանքի անուն դրեց, Մարութա բարձր Աստվածածին»⁷⁶:

Ինչպես տեսնում ենք, հողը հայրենիք դարձավ, երբ այն պատվեց ժողովրդի պատմամշակութային և ճարտարապետական հուշարձաններով, նախնիների գերեզմաններով, այդ հողը ժողովրդի պատմական հիշողության մեջ մտավ իր առասպելներով, երգերով, հեքիաթներով:

Տեղի ու հայրենիքի հայտնագործումից ու գաղափարայնացումից հետո առաջնային է դառնում ազգային գաղափարախոսության առանձնահատկություններն արտացոլող մյուս՝ **ազգային ինքնության, ինքնահամախմբման ու ինքնազատագրման** գաղափարների ի հայտ բերումը: Այս գաղափարները ամբողջա-

⁷⁵ Տե՛ս **2. Ծառայան**, Ջուրը որպես տոտեմ նախնի «Սասնա ծռեր» էպոսում: «Համաշխարհային ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժանրը», Երևան, 2006, էջ 182:

⁷⁶ Սասունցի Դավիթ, Երևան, 1961, էջ 128:

ցան ու կատարելության հասան էպոսի հերոսական շրջանում՝ երկրորդ և երրորդ ճյուղերում, որոնցում գործող գլխավոր հերոսներն էին Սանասարից ու Դեղձուն Ճյուղ-Ծամից ծնված Մեծ Մհերն ու իր որդին՝ Դավիթը: Այս ճյուղերի հերոսների կերպարները նույնպես կերտվել են պատմական որոշակի իրադարձությունների և նրանց իմաստավորող նախնադարյան առասպելների հիմքի վրա:

Մեծ Մհերի ճյուղի հիմքում ընկած է հին հայկական արեգակի Աստված Միհրի կերպարը:

Ջոջանց տան ազգային ինքնության ակունքների բացահայտման առաջին դրսևորումը պատանի Մհերի կռիվն էր Սասունի հացի ճանապարհը փակած առյուծի դեմ:

«Գնաց, ինք ու առյուծ առան իրար:

...Կանչեց, մի ձեռ թալեց էդ առյուծի վերի ծնոտ,

Մյուս ձեռ թալեց ներքի ծնոտ,

Ճղեց էդ առյուծ մեջտեղեն

Արեց էնոր եկու կտոր»⁷⁷:

Այս փայլուն հաղթանակը միանգամից մեծ համբավ բերեց պատանի Մհերին: Սասունցիք նրան կարգեցին իրենց տեր ու առաջնորդ, իսկ մայրը նրան հանձնեց հոր՝ Սանասարի զենքն ու զրահը:

Արևի աստված Միհրի և արևի տոտեմ առյուծի միջև այս տպավորիչ մենամարտը ոչ միայն Մեծ Մհերի ներուժի բացահայտման, ազգային ինքնության-ինքնահաստատման գաղափարի խորհուրդն ունի, այլև հնարավորություն է տալիս ճշտելու հայոց արևի աստծո՝ Մհերի տեղը հնդեվրոպական համեմատական առասպելաբանության համակարգում: Ուսումնասիրողների մի մասը հակված են հայկական Միհր-Մհեր աստծուն ծագեցնել

⁷⁷ Սասունցի Դավիթ, էջ 106:

հնդիրանական օտար միջավայրից⁷⁸: Մինչդեռ էպոսի այս դրվագում ի հայտ է գալիս անմիջական կապը տոհմական համայնքի տոտեմի, առասպելի և նրա բնական հայրենիքի միջև: Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհի բնիկների մեջ դեռևս նախնադարյան հասարակարգում առաջ է եկել արևի պաշտամունքի տոտեմը՝ առյուծի կերպարանքով: Առյուծ-արևի պաշտամունքը Հայաստանի բնիկների արվեստում արտացոլվել է դեռևս ժայռապատկերներում, ապա բուռն առաջընթաց ապրել Բ.ա. III հազարամյակի հուշարձաններում, այնուհետև՝ զարգացել ու կատարելագործվել ուրարտական և միջնադարյան հավատալիքներում: Արևի աստվածությանը հայերը անվանել են Ար կամ Արա: Ուրարտական պանթեոնի երեք գլխավոր աստվածներից մեկն արևի աստվածն էր՝ Արան, որը սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Արդինի անունով⁷⁹:

Հետուրարտական շրջանում Արդինին հորջորջվում է Արամագը և ստանձնում հայոց գլխավոր աստծու դերը՝ արևի աստվածությունը զիջելով որդուն՝ Միհրին (Մհերին): Անդրադառնալով Մեծ Մհերի առյուծի դեմ մենամարտին՝ տեսնում ենք, որ երկուսն էլ արևի պաշտամունքի խորհրդանիշներն են՝ մեկը՝ նախնադարյան տոտեմի, մյուսը՝ հայ ժողովրդի արևի աստծո կարգավիճակով:

Աստվածների այս կերպափոխությունը հասարակական կյանքի հեղաշրջման արձագանքն է: Արևի տոտեմին փոխարինում է հրաշագործ դյուցազնը՝ Առյուծաձև Մհերը: Այս անցումը

⁷⁸ **Ս. Ահյան**, «Սասնա ծռեր» հայկական էպոսը և հնդեվրոպական երեք ֆունկցիաները, «Պատմաբանասիրական հանդես», 1985, թիվ 1, էջ 32-44: **Հարությունյան Ս.**, «Սասնա ծռեր» հերոսավեպի առասպելաբանական հիմքերը, «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը», Երևան, 2004, էջ 9-16:

⁷⁹ Տե՛ս **Ս. Հմայակյան**, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 44:

պայմանավորված է մեծ զարթոնք ապրող ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բուռն վերելքով:

Մեծ Միերի առասպելական սխրագործությունների շրջադարձային իրողությունը Մսրա Մելիքի հետ մենամարտն էր ու հաշտության շահեկան պայմանագրի կնքումը: Մսրա Մելիքը հենց որ լսում է Միերի քաջագործությունների մասին, նրանից պահանջում է՝ կա՛մ յոթ տարվա խարջը տա, կա՛մ կռվի հրավերն ընդունի: Հարաբերությունները պարզելու համար Միերը ուղևորվում է Մըսր: Չգտնելով հաշտության եզրեր՝ ախոյանները մենամարտի են բռնվում: Երեք օրվա ծանր պայքարից հետո Մսրա Մելիքը, որ տեսնում է, չի կարողանում հաղթել, հաշտության պայմանագիր է կնքում:

Էպոսի երկրորդ ճյուղի իրադարձությունների բարձրակետը այս պայմանագրի կնքումն էր, որի արդյունքում Հայաստանը ազատագրվում է արաբական դարավոր լծից:

Միերի սխրագործությունները փառաբանող այս առասպելը խարսխված է պատմական անհատների և ստույգ թվագրվող իրադարձությունների վրա:

Պատմությունից հայտնի է, որ Արաբական խալիֆայությունը IX դարում սկսում է թուլանալ: Եգիպտոսում, Իրաքում, Իրանում, Այսրկովկասում ծավալված ապստամբությունները խարխում են խալիֆայության հիմքերը, և նա հարկադրված ճանաչում է տեղական մանր իշխանությունների անկախությունը:

Հայաստանում իրենց ժառանգական հողատիրական իրավունքները վերականգնում են Բագրատունյաց, Արծրունյաց, Սյունյաց նախարարական տները: 855 թ. սպարապետության, իսկ 862 թ. իշխանաց իշխանի պաշտոնը անցնում է Սմբատի որդի Աշոտ Բագրատունու ձեռքը, որը 30-ամյա խաղաղ պայմաններում վերականգնում ու ծաղկեցնում է Հայաստանը:

Արաբական տիրապետության այս պատմաշրջանում միակ իրադարձությունն է սա, որն առանց արյունահեղ ճակատամարտի հաջողություն է բերել հայ ժողովրդին:

Հաջորդ ակնառու պատմական փաստը, որն իր արձագանքն է գտել էպոսում, այն է, որ Մութավաքիլ խալիֆը հայբյուզանդական մերձեցումը կանխելու ու Աշոտ Բագրատունուն սիրաշահելու նպատակով 885 թ. նրան ճանաչում է հայոց թագավոր:

Էպոսագետները իրավացիորեն նշում են, որ բոլոր էպոսների հիմքում ընկած են էպոսաստեղծ ժողովրդի պատմության ամենաշրջադարձային իրադարձությունները: Եվ եթե այդպես է, ապա IX դարի հայ ժողովրդի պատմության ամենանշանավոր իրադարձությունը արաբական լծի թոթափումն էր ու անկախ ինքնիշխան պետականության հիմնադրումը: Հետևաբար պետք է ընդունելի համարել, որ այդ մեծ գործն իրագործող Աշոտ Ա Բագրատունու (885-890 թթ.) գործունեությունն է ընկած էպոսի 2-րդ ճյուղի հերոսի՝ Մեծ Մհերի կերպարի հիմքում:

«Սասունցի Դավիթ» էպոսում պատմական հաջորդ ամենանշանավոր իրադարձությունը Հայաստանի վերջնական ազատագրումն էր արաբական դարավոր լծից, որը տեղի ունեցավ X դարի առաջին քառորդում: Ուսումնասիրողների կարծիքով էպոսի երրորդ ճյուղը հենց այդ պատմական կարևորագույն իրողության վիպական ընդհանրացումն է: Էպոսի այս դրվագում առասպելաբանական շերտը զգալիորեն տեղի է տալիս վիպական-հերոսականին:

Մեծ Մհերի մահից հետո Մարա Մելիքը հարձակվում է Հայաստանի վրա, ավերում ու վերստին ծանր լծի տակ դնում երկիրը.

«Մըսրա Մելիք որ իմացավ Սասնա Մհեր մեռե՝
...գորք հավաքեց,

Գնաց Սասնա տեղաց վերան.

...Սասուն ավրեց, առ ու ավար արավ:

Սասունցոց հպատակ դարձուց»⁸⁰:

Այս ծանր օրերին Բաղդադում՝ Իսմիլ Խաթունի խնամքի տակ գտնվող մանուկ Դավթի առաջին անհնազանդության դրսևորումը Մսրա Մելիքի թրի տակով չանցնելու դրվագն է: Հայաստան ուղարկելուց առաջ Մելիքը, որպես հնազանդության արարողություն, Դավթից պահանջում է, որ անցնի իր թրի տակով:

«Դավիթ պատասխան էտու

...Հազար էդպես Մելիք մեռնի՝

...Էս լաչակի տակով կանցնեմ.

Էնոր թրի տակով չեմ անցնի»⁸¹:

Մսրա Մելիքը, զայրացած այս հանդուգն քայլից, Դավթի ուղեկից փահլեվաններին՝ Բաթման Բուդին և Չարբահար Քամիին հանձնարարում է ճանապարհին սպանել նրան: Կանխազգալով ուղեկիցների այս չար մտադրությունը՝ Հայաստանի սահմանագլխին Դավիթը պատուհասում է նրանց և անվնաս հասնում Հայաստան:

Դավթի հաջորդ ընդհարումը տեղի է ունենում Մելիքի հարկահանների հետ, երբ նրանք Կոզբաղնի գլխավորությամբ գալիս են Հայաստան և պահանջում 7 տարվա հարկերը, այն էլ՝ այնքան նսեմացնող հարկատեսակներով, ինչպիսիք էին.

«Քառսուն էրկեն կնիկ բերեմ՝ ուղտեր բառնան,

Քառսուն կոլոտ կնիկ բերեմ՝ էրկանք աղան,

Քառսուն ազապ աղջիկ բերեմ քեզ արմաղան»⁸²:

⁸⁰ Սասունցի Դավիթ, էջ 136:

⁸¹ Նույն տեղում, էջ 151:

⁸² Նույն տեղում, էջ 203:

Դավիթը, իմանալով այս մասին, Կոզբադնին սոսկալի կտտանքների է ենթարկում և դուրս շարտում Հայաստանից: Ջայրացած Մելիքը իր հպատակ երկրներից այնքան զորք է հավաքում և շարժվում դեպի Հայաստան, որ զինվորները, մի-մի կում ջուր խմելով, ցամաքեցնում են Բաթմանա գետը:

Թշնամիների դեմ կռվի դուրս գալուց առաջ Դավիթը ձեռք է բերում իր հոր զենքն ու զրահը և հարձակվում արաբական բանակի վրա: Սկսվում է ահավոր ջարդը: Վերջապես արաբ ծերունու խնդրանքով դադարեցնում է կոտորածը և մենամարտի հրավիրում Մսրա Մելիքին: Ամենավերջին ու վճռական այս մենամարտում Թուր կեծակիով երկու կես է անում Մելիքին, որից հետո անարքա, արաբական խաժամուժ դարձած բանակը փախչում է Հայաստանից: Սա, փաստորեն, վերջին պատերազմն էր, որից հետո Հայաստանը վերջնականապես ազատագրվում է արաբական լծից:

Հայոց պատմությունից հայտնի է, որ Բագրատունյաց արքայատոհմի հիմնադիր Աշոտ Ա Բագրատունուն (885-890 թթ.) հաջորդեց ավագ որդին՝ Սմբատը (890-914 թթ.), որի օրոք Ատրպատականի Սաջյան ամիրայությունը հզորանում է և արաբների կորցրած դիրքերը Հայաստանում վերականգնելու համար տևական պայքար ծավալում Հայաստանում: Բագրատունյաց թագավորության շատ քաղաքներ ու բերդեր գրավվում են: Սմբատ արքան գերեվարվում և գլխատվում է: Լրջորեն վտանգվում է հայոց պետականության ապագան: Ահա այս չափազանց ծանր իրավիճակում էլ Սմբատի որդի Աշոտը վճռական պայքարի ելավ արաբների դեմ:

Աշոտ Երկաթի գահակալության տարիներին (914-929 թթ.) Հայաստանը վերջնականապես ազատագրվում է արաբական

լծից և բռնում բռնոն ծաղկման ու զարգացման վերընթաց 130-ամյա փառավոր ուղի:

Ինչպես տեսնում ենք, էպոսում առասպելական նյութը հմտորեն օգտագործվել է դարաշրջանի հանրահայտ գործիչների հետ կուռ միասնությամբ, որի նպատակն էր գործող պատմական անհատներին վեր բարձրացնել, գոտեպնդել, օժտել ճակատագրի դաժան փորձություններում չընկճվելու կարողությամբ: Զուտ երկրային ծագում ունեցող Աշոտ Ա-ին և Աշոտ Բ Երկաթին՝ հոգեկան բարձր հատկանիշներով օժտված ու բազում սխրագործություններ կատարած մարդկանց, էպոս ստեղծողները վերագրում են դյուցազնական, առասպելական կերպարներին հատուկ գծեր: Ազգակցական կապ է հաստատվում հայ ժողովրդի մեջ ապրող առասպելական հնագույն կերպարների և այն հերոսների միջև, որոնք կանգնած էին Հայաստանը արաբական լծից ազատագրելու գործի կենտրոնում: Ի դեմս էպոսի առանցքային այս երկու ճյուղերի հերոսների՝ Մեծ Մհերի և Դավթի՝ վիպական գործողությունների զարգացման ընթացքը դարձել է ազգային-ազատագրական պայքարի կուռ ու միասնական գաղափարախոսություն: Էպոսում գաղափարացված կարևորագույն հիմնադրույթների՝ ծագումնաբանական, ցեղային-արյունակցական կապով շաղախվում են հերոսների մի քանի սերունդներ: «Սասնա ճետերն իրար հոտ են առնում հեովից»⁸³: Հայոց լեռներում զրնգացող հարազատի ծայնը լսելով՝ ամենաձանր վիճակում գտնվողներն անգամ չեն երկյուղում:

Էպոսում նվիրական է հատկապես հայրենիքի գաղափարը, հայրենիք, որի սահմաններում են կատարվում վիպական հերոսների սխրանքները: Ո՛չ մի գայթակղություն, ո՛չ ամուսնություն,

⁸³ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, էջ 146:

ո՛չ փառք ու գահ Ջոջանց տան նախնիներին չեն կապում օտար երկրների հետ⁸⁴:

Ազգային ընդհանրությունը ներքին կապ ու տրամադրություն է ստեղծում էպոսի բոլոր սերունդների միջև, բացահայտում հերոսական հատկանիշները և դրանք ծնող պատճառները: Էպոսում այնքան խոր ու բազմակողմանիորեն է արտացոլվում ազգային ինքնությունը, որ ուսումնասիրողները կարծում են, որ ժողովուրդներին ճանաչում են իրենց էպոսներով և նրանց գլխավոր կերպարներով: Այս ֆոնի վրա առավել ընդգծվում է Ջոջանց տան քաջերի վեհանձնությունը: Նրանք նույնիսկ թշնամիների արյունը անտեղի չեն թափում, թշնամու նկատմամբ ստոր միջոցների չեն դիմում, եթե նրան իր կաթով սնած կինը խնդրում է, ապա նա բաշխում է առաջին զարկը: Նրա մեծահոգության հիմքը հաղթանակի հավատն է, միայն կատարյալ ազատություն և անկախություն ունեցող ազգը կարող է կերտել Սասունցի Դավթի վեհ կերպարը⁸⁵: Բայց ահա իրավիճակը արմատապես փոխվում է էպոսի 4-րդ ճյուղում, որի դյուցազնը Դավթի որդի Փոքր Մհերն է, սակայն հորն ու որդուն բաժանում են մոտ մեկուկես դար և պատմաքաղաքական իրարամերժ իրավիճակներ:

Դավթի ժամանակի ճգնաժամ ապրող Արաբական խալիֆայությանը հաջորդում են վերելքի ուղին բռնած նոր գիշատիչ պետություններ՝ արևմուտքից Չմշկիկ Սուլթանը՝ Բյուզանդիայի խորհրդանիշը, արևելքից՝ Կոզբաղնի թոռները՝ սելջուկները: Հակամարտություններն այս փուլում լայն ոգևորություն և հնչեղություն չեն ստանում, որովհետև տվյալ դեպքում ուժերը խիստ անհավասար են: Փոքր Մհերը նույնպես հզոր է, սակայն ստեղծ-

⁸⁴ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, էջ 146:

⁸⁵ Տե՛ս Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 39:

ված պայմանները հնարավորություն չեն տալիս հասնելու ցանկալի հաղթանակի: Դավթի ձեռքում քառասուն ջրաղացի քարի տակ պատսպարված Մսրա Մելիքին երկու կես արած Թուր կեծակին այլևս չի հասնում Միերի դեմ պայքարի ելած յոթ ձիավոր հրեշտակներին, իսկ հրեղեն ձիու՝ Քուռկիկ Զալալի «ոտ չէր դադրի վեր հողին»:

Դրա համար էլ Միերը.
«Չծին առավ, քաշեց էկավ,
Հասավ Վանա մոտ սարի մի տակ:
...Թուր որ էզար քարին,
Քար էրկու կողմեն փեղկավ,
Ինք, իր ձին գնացին մեջ,
Քար էկավ, իրար կպավ»⁸⁶:

Փոքր Միերի դյուցազնական հատկանիշները թեև սերում են վաղ առասպելաբանական նախահիմքից, բայց այն ևս ենթարկվել է վիպականացման, գաղափարայնացման ու պատմականացման՝ կապվելով պատմական այն իրադարձությունների հետ, որոնք տեղի էին ունեցել Բագրատունյաց հարստության անկման ժամանակներում:

Ըստ Պիտեր Քաուիի՝ «Միերը մտնում է Ագռավաքար, և հերոսական դարաշրջանը իր ավարտին է հասնում երկրի վրա»:
Հետազոտողը կարծում է նաև, որ «քննության նյութ պետք է դառնան նաև էպոսի վերջավորությունը և Միերի Ագռավաքարի մեջ մտնելը և նրանց առնչությունը Հայկական թագավորության անկման հետ»⁸⁷:

Իրոք, հայոց պատմությունից հայտնի է, որ Բագրատունյաց թագավորության նախավերջին գահակալ Հովհաննես Սմբատի

⁸⁶ Սասունցի Դավիթ, էջ 318:

⁸⁷ Պիտեր Քաուի, Գործողության զարգացումը «Սասնա ծռեր» էպոսում որպես բանավոր ավանդության ազդակ, «Համաշխարհային ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժանրը», Երևան, 2006, էջ 75, 79:

(1020-1041 թթ.) մահից հետո բյուզանդացիները ներխուժել են Հայաստան՝ գրավելու 1023 թ. Բյուզանդիային կտակված հայկական հողերը: Սակայն հայկական զորքերը և Անիի բնակչությունը սպարապետ Վահրամ Պահլավունու զխավորությամբ ջախջախել են նրանց և գահ բարձրացրել Աշոտ Դ-ի որդուն՝ 18-ամյա Գագիկ Բ Բագրատունուն: Բյուզանդական զորքերի մի քանի անհաջող արշավանքներից հետո Կոնստանտին Մոնոմախ կայսրը բանակցություններ վարելու պատրվակով իր մոտ է հրավիրել Գագիկին և կալանավորել, որից հետո՝ 1045 թ., բյուզանդական զորքերը ներխուժել են Հայաստան, գրավել Անին և վերացրել Բագրատունյաց թագավորությունը:

Կարծում ենք, որ պատմական այս շրջադարձային իրադարձությունների արձագանքներն են հանդիսացել էպոսի 4-րդ ճյուղի հիմնական թեման: Ոչ միայն Գագիկի մաքառումների ու դեգերումների, այլև նույնիսկ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի ազգադավ արարքներն են իրենց արձագանքը գտել էպոսում:

«Սասունա ճամփին մեկ վանք կար.

Էդ վանքի անունն էլ Մատղավանք էր:

Դավթի թշնամի թագավորներ

Իմացան, որ Մհեր պիտի գա,

Էդ ճամփով էրթա Սասուն,

Էլան, էկան վանահորն ասին.

-Ինչ ժամանակ Մհեր գա, անցնի էստեղեն,

Մարդ դրկես, մեզի իմաց տա»⁸⁸:

Վանահայրն այդպես էլ անում է, որից հետո Մհերը այդ վանքի անունը դնում է Մատնավանք:

Փաստորեն՝ Փոքր Մհերի քարաժայռում փակվելու դեպքով էպոսը չի ավարտվում: Յեղի սպառված կենսական ուժի պահ-

⁸⁸ Սասունցի Դավիթ, էջ 301:

պանության հույսով է էպոսաստեղծ ժողովուրդը Մհերին քարա-
ժայռում պատսպարել: Պատմական դառը իրականությունը վեր
է ածվել վիպական-գաղափարականի: Առասպելաստեղծ ժողո-
վուրդը մայր մտնող իր արևի վերածննդին է հավատացել, էպո-
սաստեղծ ժողովուրդը՝ իր գահագուրկ արքայի՝ իր պետականու-
թյան վերածննդի գաղափարին: Եվ շատ հզոր է այդ հավատքի
գործոնը: Այդ հավատով է հայ ժողովուրդը Արտաշեսյան հարստու-
թյան վերջին ներկայացուցչին՝ Արտավազդին, պատսպարել
Արարատի վիհերում, իսկ Փոքր Մհերին՝ Վանի ժայռախորշում:
Այդ հավատով է հայ ժողովուրդը իր առաջին պետականությու-
նը՝ Արարատի թագավորությունը կորցնելուց հետո վերակերտել
իր 10 պետականությունները: Թերթենք համաշխարհային
պատմության էջերը և տեսնենք, թե աշխարհում կա մի այլ ազգ,
որը, պատմաքաղաքական այսքան բարդ տարածքում գտնվե-
լով, կարողացած լինի բազմաթիվ դարերի ընդմիջումից հետո իր
մեջ ուժ գտնել և վերականգնել իր պետականությունը:

ԵՐՐՈՐԴ ՀԱՆԳՐՎԱՆ

Հայ ազգի և ազգայնականության ձևավորման գարթոնքը XVIII դարում

Մարդկության էթնիկական բյուրեղացման շրջադարձային փուլում՝ ագրարային հարաբերություններից արդյունաբերականին անցման ժամանակաշրջանում է տեղի ունենում հանրային բարձրագույն ձևի՝ ազգի ու ազգային գաղափարախոսության ձևավորման բարդ ու տևական գործընթացը: Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընթացող համաեվրոպական այս երևույթը XVIII դարում իր արտահայտությունն է գտել նաև հայկական գաղթաշխարհում:

«Ազգ» ֆենոմենի բնութագրման, նրա ծագման, հատկանիշների և հարակից այլ հարցերի վերաբերյալ առաջադրվել են բազմաթիվ սահմանումներ ու մոդելներ: Այդ տեսությունը մոտ 200-ամյա ճանապարհ է անցել, և տարբեր ժամանակներում տարբեր ազգերի ներկայացուցիչների կողմից տարբեր մոտեցումներ են ցուցաբերվել: Տարաբնույթ սահմանումների հիմքում հիմնականում ընկած են կա՛մ ազգային ավանդական մտածելակերպով հետազոտողների մոտեցումներն ու գնահատումները, կա՛մ դասակարգային գաղափարախոսական հիմքի վրա խարսխված մոտեցումները, կա՛մ վերազգային, ապազգային, համերկրային սկզբունքների վրա խարսխված մոտեցումները: Առանձնացվել են ազգերի առաջացման երկու հիմնական ուղիներ՝ ազգեր, որոնք ձևավորվել են այլ ժողովուրդների տարածքները գրավելու ու յուրացնելու ճանապարհով, և ազգեր, որոնք ձևավորվել են իրենց պատմական հայրենիքում:

Հասարակության զարգացման այն աստիճանում, երբ տեղի էին ունենում զանգվածային տեղաշարժեր, գաղութային լայնա-

մասշտաբ նվաճումներ, միգրացիոն աշխույժ գործընթացներ, ապրելավայրի ազատ ընտրության հնարավորություններ, ազգերի ձևավորման ավանդական բնապատմական ձևերին զուգահեռ տեղի էին ունենում ազգերի նոր եղանակներով առաջացման գործընթացներ: Նրանց հիմնական առանձնահատկությունները պայմանավորված էին նրանով, որ տարբեր ազգերին պատկանող մարդկանց միևնույն պետության տարածքում երկար ժամանակ համատեղ ապրելու ընթացքում ընդհանուր լեզվի և մշակույթի ձևավորմանը զուգընթաց աստիճանաբար ձևավորվել են նոր ազգեր: Իսկ իրենց պատմական հայրենիքում ազգերի ձևավորումը տեղի է ունեցել հազարամյակների ընթացքում արյունակից տոհմերի ու ցեղերի, էթնիկական խմբերի մերձեցման ու միավորման բնական ճանապարհով:

Ըստ այդմ՝ արդի գիտական գրականության մեջ տարածված են ազգի ըմբռնման երեք հիմնական մոտեցումներ՝ իրավաքաղաքական, սոցիոմշակութային և կենսաբանական ընդհանրության գաղափարների վրա խարսխված մոտեցումներ:

Իրավաքաղաքական մոտեցման դեպքում ազգը դիտվում է այս կամ այն պետության մեջ ապրող քաղաքացիների ընդհանրություն: Սոցիոմշակութային դեպքում շեշտը դրվում է լեզվի, մշակույթի, կրոնի, ավանդույթների ընդհանրության վրա: Բնական-կենսաբանական մոտեցման հիմքում դրվում է գենետիկական ընդհանրության գաղափարը:

Քաղաքագիտական հանրագիտական բառարանում ազգը սահմանվում է որպես «մարդկանց պատմական հանրույթ, որն առաջանում է նրա հատկանիշները կազմող ընդհանուր տարածքի, տնտեսական կապերի, լեզվի, մշակույթի, հոգևոր կերտվածքի, ավանդույթների ու սովորույթների որոշ առանձնահատկությունների ձևավորման ընթացքում:

Անգլիալեզու և ռոմանալեզու երկրներում սովորաբար գործածվում է «պետություն», «հասարակություն», «բոլոր քաղաքացիների ամբողջություն...» իմաստներով: Արևմտյան պետությունների սահմանադրություններում «ազգ» հասկացությամբ արտահայտվում է ոչ թե էթնիկական, այլ պետաքաղաքական ընդհանրությունը»⁸⁹:

Խորհրդային փիլիսոփայական բառարանում ազգը սահմանվում է որպես «Մարդկանց հանրույթի պատմականորեն կազմավորված ձև, որը փոխարինում է ազգույթին: Ազգին հատուկ է ամենից առաջ կյանքի նյութական պայմանների՝ տերիտորիայի և տնտեսական կյանքի ընդհանրություն, լեզվի ընդհանրություն, ազգային բնավորության որոշ գծերի ընդհանրություն, որոնք դրսևորվում են նրա կուլտուրայի ազգային յուրահատկության մեջ: ... Այն կազմավորվում է կապիտալիստական ֆորմացիայի ծագման ու ձևավորման հետ: Ազգի առաջացման տնտեսական հիմք են ծառացել ֆեոդալական մասնատվածության վերացումը, երկրի ներսում առանձին շրջանների տնտեսական կապերի ամրապնդումը, տեղական շուկաների միավորումը մի ընդհանուր ազգային շուկայի մեջ: Այդ ժամանակաշրջանում առաջացած ազգի ղեկավար ուժը բուրժուազիան էր, որ որոշակի կնիք դրեց նրանց սոցիալ-քաղաքական և հոգևոր կերպարի վրա»⁹⁰:

Ժամանակակից պատմագիտական և պատմափիլիսոփայական տեսությունները ձևավորվել են եվրոպական երկրների պատմության փորձի ընդհանրացման ու իմաստավորման վրա: Նրանք ունեն առանձնահատկություններ, որոնց կիրառումը հայոց պատմության նկատմամբ առաջ է բերում բազում բանա-

⁸⁹ Քաղաքագիտություն (հանրագիտական բառարան), Երևան, 2004, էջ 13:

⁹⁰ Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975, էջ 5:

վիճային խնդիրներ: Այդ տեսություններում ազգերի և ազգային մշակույթների կազմավորումը կապվում է Եվրոպայում ազգային պետությունների կազմավորման ու զարգացման հետ:

Բնական է, որ հայոց պատմությունը պետք է մեկնաբանվի ժամանակակից արևմտյան պատմագիտական տեսությունների համատեքստում: Միաժամանակ պետք է ընդգծել, որ պատմության՝ որպես գիտության առանձնահատկությունն այն է, որ այն գործ ունի եզակի, անհատական, միանգամյա երևույթների հետ, որոնք պահանջում են կոնկրետ պատմական մոտեցում: Հետևաբար հասարակագետ-հետազոտողի խնդիրն է դառնում, օբյեկտիվորեն տարբեր ճանապարհներով ձևավորված ազգերի մասին առաջադրված տեսությունները չնույնացնել, իրավաքաղաքական ճանապարհով ձևավորված ազգերի մասին ուսմունքները չփաթաթել բնական ճանապարհով ձևավորված ազգերի վզին:

Վերոնշյալ դիրքերից մոտենալով հիմնախնդրին՝ տողերիս հեղինակը իր «Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները»⁹¹ աշխատության մեջ, ամփոփելով ազգային հարցի մասնագետների ձեռքբերումները, եկել է հետևյալ եզրակացության. քանի որ ազգերը պատմականորեն ձևավորված կայուն ընդհանրություն են, հետևաբար այն սահմանելու համար պետք է ունենալ պատմական մոտեցում, և անհրաժեշտ է պարզել, թե հատկանիշների ինչ համակարգով են տարբերվում ձևավորված ազգերը միմյանցից, և հատկանիշների ինչ համակարգով՝ ազգը նախաազգային հանրությունից: Ազգերին միմյանցից տարբերող համակարգը անվանել ենք «էթնոտարբերիչ հատկանիշներ», որոնցում ներառել ենք տարածքի, ծագման, լեզվի և

⁹¹ Տե՛ս Հ. Մանուչարյան, Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Երևան 1988, էջ 10-11:

հոգեկան կերտվածքի ընդհանրության հատկանիշները: Իսկ ազգը նախազգային հանրույթներից տարբերող հատկանիշների համակարգը անվանել ենք «հանրորոշ հատկանիշներ», որոնցում ներառել ենք տնտեսական կյանքի, սոցիալական կառուցվածքի, քաղաքական համակարգի և գաղափարախոսության ընդհանրությունները: Հենց այս հատկանիշներով ենք ազգը տարբերել ազգույթից (ժողովրդից), ազգույթը՝ ցեղից, ցեղը՝ տոհմից:

Ուշագրավ է, որ հազարամյակների բնականոն ճանապարհ անցած հայ ժողովուրդի առանձին հատվածներ տարբեր երկրների գաղթաշխարհներում XVIII դարի երկրորդ կեսին ապրում էին շրջադարձային այն պահը, որում անցում էր կատարվում միջնադարից նոր դարին, ագրարային հարաբերություններից՝ արդյունաբերականին, հետևաբար նաև ազգույթից ազգին: Ահա տնտեսական, սոցիալական, քաղաքական և գաղափարական կյանքում ճլարձակվող այս նոր երևույթները առաջինը նկատել են ու բացատրել հնդկահայ լուսավորիչները: Նրանք միաժամանակ շոշափել են նաև ազգի էթնոտարբերիչ հատկանիշների՝ տարածքի (պատմական հայրենիքի), միասնական ծագման, համազգային լեզվի և ազգային հոգեկերտվածքի հիմնադրույթները:

Ազգային շարժման ճանաչված հետազոտող Միրոսլավ Խրոխը առանձնացրել է ազգի ձևավորման և ազգային ինքնագիտակցության մակարդակի երեք կառուցվածքային փուլ:

Ազգային շարժման առաջին փուլի ակտիվիստ-հայրենասերների գործունեությունը ուղղված էր լեզվի, մշակույթի, փոքր էթնոսների սոցիալական, պատմական գծերի մանրամասն հետազոտությանը և այդ փաստերի, հայրենակիցների գիտակցության մեջ ամրապնդմանը: Այդ փուլի ակտիվիստները զգում էին, որ

հայրենակիցների ինքնաճանաչողության մեջ բաց տեղերը այդպիսի տեղեկատվություններով լրացնելը ենթադրում է ազգային յուրահատուկ պահանջմունք:

Երկրորդ փուլում սկսում է գործել ակտիվիստների նոր սերունդ, որը փորձում է իրենց էթնիկական խմբերից ձեռք բերել որքան կարելի է շատ կողմնակիցներ՝ ապագա ազգի ստեղծման ծրագրերն իրականացնելու համար: Սա կատարվում է հայրենասիրական քարոզչության միջոցով և նպատակադրված է արթնացնել ազգային ինքնագիտակցությունը: Արդյունքում աստիճանաբար ազգաբնակչության զգալի մասը առանձնահատուկ տեղ է տալիս իր ազգային պատկանելությանը, և սկսում է ձևավորվել զանգվածային շարժում: Երրորդ փուլում ձեռք է բերվում մի սոցիալական ազգային կառույց, որը բաժանվում է երեք՝ պահպանողական, ազատական և ժողովրդական ուղղությունների⁹²:

Հայ իրականության մեջ առաջին փուլի գործիչները, մեր կարծիքով, Վենետիկի Մխիթարյաններն են և հնդկահայ լուսավորիչները: Մխիթարյանները եվրոպական հանրային մտքի շատ ձեռքբերումներ դարձրին հայ ժողովրդի սեփականությունը: Այնտեղ ստեղծեցին հայոց լեզվի քերականության դասագրքեր, բառարաններ, հրատարակեցին, մոռացության փոշու տակից հանեցին ու կորստից փրկեցին հայ ժողովրդի պատմագիտական հսկայական ժառանգության արժեքավոր նմուշներ, հասու և ընկալելի դարձրին դրանք հայ ժողովրդին: Բարձրացրին և նոր մակարդակի հասցրին հայագիտությունը, աշխարհին և հենց իրեն, հայ ազգին ներկայացրին միջնադարյան հայ դասական գրականության արժեքները, որով տեսական ամուր հիմքեր ստեղծեցին հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար:

⁹² Нации и национализм, Москва, 2002, էջ 125:

Հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացման համար հսկայական նշանակություն ունեցավ Միքայել Չամչյանի «Պատմութիւն հայոց»⁹³ կոթողային աշխատությունը, որով հայ ժողովուրդը հաղորդակցվեց իր ողջ պատմությանը սկզբից մինչև գրքի տպագրության ժամանակը: Չամչյանը իր նախնիների փառքով հպարտացող ու թշվառությունները ողբացող հայրենասեր գիտնական է և այդ ոգով էլ դաստիարակում է իր հայրենակիցներին: Չամչյանը 400-ամյա քնից արթնացրեց հայ ժողովրդին:

Չամչյանի վեհ գաղափարները տիրապետող քաղաքական ուղղություն են դառնում հնդկահայ լուսավորիչների՝ Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի և Մովսես Բաղրամյանի ջանքերով: Նրանց հրապարակախոսական կրակոտ երկերը նոր դարագլուխ բացեցին ազգային զարթոնքի ու ազգակերտման ասպարեզում: Այն և՛ ազգային շարժման ծրագիր էր, և՛ ազգակերտման ծրագիր ու ազատագրական գաղափարախոսություն:

Նվիրական հայրենիքի գաղափարով հայ ժողովրդին միջնադարյան դարավոր թմրության քնից արթնացնելը առաջնային կարևոր խնդիր է դառնում նրանց համար:

Բաղրամյանը, հենվելով Խորենացու և Չամչյանի ժառանգության վրա, քաղաքականացրեց այն գաղափարը, որ հայոց հայրենիքը հայ ժողովրդի ապրելատարածքն է, որ պատմական հայրենիքի մեծ գաղափար է դարձել հազարամյակների ընթացքում, որի ընթացքում այն պատվել է հայ ժողովրդի ստեղծած պատմամշակութային, ազգագրական ու ճարտարապետական հուշարձաններով: Հայոց հայրենիքը Բաղրամյանը նույնպես ներկայացնում է իբրև մի ընտրյալ երկիր՝ իր Արարատով, Նա-

⁹³ Մ. Չամչյան, Պատմություն հայոց, Վենետիկ, հ. Ա, 1784, հ. Բ, 1785, հ. Գ, 1786:

խիջևանով, դրախտի չորս գետերով և նրանց հետ կապված նվիրական ավանդազրույցներով, որոնք վկայում են, որ աստված առաջնություն է տվել այդ երկրին՝ դարձնելով նրան հետզհետեղեղյան մարդկության առաջին բնօրրանը:

«Աշխարհասույզ պատուհասից հետո նախ մեր երկիրն էր,
որ ճանաչվեց իբրև սկիզբ բոլորի մեջ,
Որի համար, ինչպես դշխո, և համորեն երկրների
գլուխ ու մայր նա անվանվեց,
Այդ ամենի հաստատումն է այն, որ տեղն, ուր
թաղվեց մայրը ընդհանրական՝ Նոյեմզարան,
Մինչև այսօր Մարանդ կոչվեց, իսկ գավառն այդ
գտնվում է մեր երկրում»⁹⁴:

Եվ այս Հայաստանը աշխարհասփյուռ հայության իրական հայրենիքն է:

Բաղրամյանը, սակայն, ցավով նշում է, որ հայ ժողովուրդը հայրենագրկվել է, կորցրել է մայր հայրենիքի մեծ գաղափարը, զրկվել նաև պատմական հիշողությունից ու դարձել անհայրենիք գաղթական:

Պատմական հայրենիքը ձևավորվում է ոչ միայն պատմականորեն՝ ազգային-էթնիկական, տնտեսական, մշակութային և այլ կապերի հիման վրա, այլև ամրագրվում միջազգային իրավունքի, միջպետական պայմանագրերի և իրավական այլ նորմերի հիման վրա: Տարածքի՝ որպես պետության կարևորագույն հատկանիշի գիտակցումով է Շահամիրյանն աննախադեպ թռիչք կատարում, իր սահմանադրության հենց առաջին հոդվածով հռչակում, որ Հայաստանը հայ ժողովրդի հայրենիքն է, որն ընդգրկում է ողջ Հայկական բարձրավանդակը, և որի հողը, նրա ընդերքը, շինություններն ու հաստատությունները հայ ժո-

⁹⁴ Նոր տետրակ ու կոչվում է հորդորակ, Երևան, 1991, էջ 27:

ղովրդի սեփականությունն են: «Ճանաչեցինք ու մեր ճանաչածը հաստատեցինք,– «Որոգայթի» հենց առաջին հոդվածում սահմանում է օրենսդիրը,– որ մեր Աղվանից աշխարհից... և Ալանաց դռնից...մինչև մեր Կորճայք աշխարհը՝ Տավրոս լեռան ստորոտում, անտեղից էլ դեպի արևմուտք, մինչև Մեծ Անտիոքը՝ Միջերկրական ծովի ափին, այնտեղից՝ հյուսիս, մինչև Մամեստիա, և այդտեղից դեպի արևմուտք, մինչև Կիլիկիա ու մեր Երրորդ Հայք աշխարհը, Կիլիկիայից էլ դեպի հյուսիս, մինչև Լենոպոնտոս՝ Սև ծովի ափին, ապա այդտեղից դեպի արևելահյուսիս, մինչև մեր Աղվանք աշխարհը և Ալանաց դուռը, դարձյալ՝ արևմտյան կողմից, Միջերկրական ծովափի Մեծ Անտիոքից դեպի արևելք, այնտեղ, ուր ավարտվում է Տավրոս լեռը, մինչև Կասպից ծովի ափը, Գիլանի սահմանը...: Այս ամբողջ աշխարհի տարածքը լեռ ու բլուրներով, անտառներով, ծովերով, լճակներով, գետերով, աղբյուրներով, քաղաքներով, դաշտերով, գյուղերով, տներով, բնակչությամբ և այն ամենով, որ կա երկրի երեսին կամ ծովի խորքում կամ էլ գետերի ու աղբյուրների հոսանքի մեջ, թե մարդկային էակ լինի և թե անասուն...ամբողջ երկիրը բոլոր կենդանիների և ծառերի բերք ու բարիքով պիտի լինի ու մնա անունով Հայաստան երկիր, իսկ այնտեղ բնակվողներն իրենց մարդկային վիճակով՝ հայեր»⁹⁵:

Նշված սահմաններով ստեղծվելիք պետության քաղաքական քարտեզը ևս ստեղծեց Շահամիրյանը և 1778 թ. տպագրել տվեց Սուրբ Ղազարում «Աշխարհացոյց Հայաստանեաց» անունով և կցեց «Որոգայթ փառացին»⁹⁶: Ի դեպ, այն ժամանակագրական կարգով 6-րդ հայկական քարտեզն է աշխարհում:

⁹⁵ **Շ. Շահամիրյան**, նշվ. աշխ., էջ 75:

⁹⁶ Տե՛ս **Վ. Գրիգորյան**, Շ. Շահամիրյանի «Աշխարհացոյց Հայաստանեաց»-ը, «Բանբեր Մատենադարանի», 1962, թիվ 6, էջ 353:

Պատմական հայրենիքի գաղափարը սրբագործելուց ու սահմանադրությամբ վավերացնելուց հետո հնդկահայ լուսավորիչները առաջադրում են հայ ժողովրդի արարչական ծագման շուրջ համախմբելու գաղափարը:

«...Մենք...նպատակամղվեցինք ազգակիցներիս պատմել մեր Արարատյան երկրի մասին Հին կտակարանով,– գրում է Բաղրամյանը,– այսինքն՝ Աստվածաշունչ մատյանով, և հնոց պատմություններով (նկատի ունի Խորենացու «Հայոց պատմությունը») հաստատել, որ նա մայրն է եղել բոլոր երկրների, իսկ նրա բնակիչները՝ ծնողը ողջ մարդկության, և որ բոլոր ազգերն ու ցեղերը ամեն մեկն իր երկիրն է ցրվել այնտեղից, բացատրելու ենք նաև, թե երբ և ինչ ցեղից սերեցին ու առաջ եկան մեր հսկաներն ու նախահայրերը, թագավորներն ու իշխանները»⁹⁷:

Աշխարհի երկրորդ ծնունդը կապելով Նոյ Նահապետի հետ, հայ ժողովրդին սերելով նրանից՝ Բաղրամյանը այնուհետև ներկայացնում է հայ ժողովրդի ներքին, արքայական ու ազնվական տների ծագումնաբանությունը, նրանց տոհմածառը՝ սկսած Նոյ Նահապետից մինչև Կիլիկիայի վերջին՝ Լևոն Վեցերորդ թագավորն ու Ղարաբաղի վերջին մելիքները: Այսպիսով՝ Բաղրամյանը, փաստորեն, ստեղծում է, ամբողջական ցեղական ու արյունակցական, մեկ ընդհանուր հորից սերված հայ միասնական ժողովրդի գաղափարը:

Բաղրամյանը ձգտում է իր ժամանակակից հայի մեջ անցյալի մեծագործությունների շարադրանքով վերականգնել ազգային միասնության գիտակցությունը:

Հայագիտության պատրաստի այս հանրահայտ նյութերով Բաղրամյանը ձգտում էր հիմնավորել, որ տոհմացեղային վաղնջական միություններից մինչև ժամանակակից ազգը ոչ միայն

⁹⁷ Նոր տետրակ..., էջ 55:

մշակութային, այլ նաև արյունակցական տեսանկյունից էլ անընդմեջ է եղել: Սա նշանակում է, որ Բաղրամյանը ձգտում է ցույց տալ, որ *նոր ժամանակի հայը, լինելով որակապես մի նոր երևույթ*, այնուամենայնիվ, նա մի պատմական ամբողջություն է, այսինքն՝ *նախնադարյան, միջնադարյան և նոր հայը նույնն են էթնիկական տեսանկյունից*:

Ազգի հաջորդ էթնոտարբերիչ հատկանիշը՝ հոգեկան կերտվածքը, ազգային առանձնահատկությունների որոշակի կողմն է, ազգային մտածելակերպի ու գործելակերպի համակարգը, որի ճանաչումը՝ ինքնաճանաչումը, ազգային գաղափարախոսության մեջ դրսևորվում է որպես ազգային ինքնություն:

Ազգային ինքնությունը ենթադրում է ազգային մտածողության ինքնատիպություն, ինքնաճանաչում: Ազգային ինքնագիտակցության բովանդակությունը հանդես է գալիս որպես ազգային կեցության, ազգային անցյալի, անհատի ազգային կերպարի տարբեր ըմբռնումների ամբողջություն:

Թեև ազգային ինքնության մասին և նրա անունից խոսում են բոլորը, սակայն քչերն են հիմնովի ճանաչում այն: Օրինակ՝ բազմադարյա պատմություն և հարուստ մշակույթ ունեցող հայությունը արդյո՞ք ինքնաճանաչ է, ինքն իրեն գիտի, թե ով է ինքը, որտեղից է գալիս և ուր է գնում: «Արդյո՞ք հայությունը ինքնաճանաչ է» հարցին Մ. Բաղրամյանը բացասական պատասխան է տալիս՝ ընդգծելով, որ ինքն իրեն ճանաչելու համար ազգը պետք է որոշակի գիտելիքներ ունենա իր մասին, այլապես.

«Այսպես հավետ ու հարատև վտանգվելով՝ հալածանքի

Ու փորձության մեջ կմնանք,

Մինչև որ մեր թշվառությունը, ավերվելն ու տառապանքը

Գիտակցել կարողանանք»⁹⁸:

⁹⁸ Նոր տեսրակ..., էջ 16:

Այդ վիճակից դուրս գալու համար Բաղրամյանը հորդորում է հայ ծնողներին, որպեսզի կրթեն ու մարզեն իրենց որդիներին, հետամուտ լինեն գիտության և իմացության: Բաղրամյանի հորդորների հասցեատերը հայ պատանին է, հայոց կորովամիտ ու դեռափթիթ մանուկը, որին ինքնաճանաչ դարձնելու համար է դիմում հայոց պատմության փառահեղ դրվագների օգնությանը:

Ազգի հոգեկան կերտվածքը յուրաքանչյուր ազգի գիտակցության մեջ նրա կյանքի յուրօրինակ պայմանների արտացոլումն է, տվյալ ազգային ընդհանրության անդամներին հատուկ մտածողության և գործողության եղանակների ամբողջությունը: Ժողովրդին շրջապատող հասարակական ու բնական միջավայրը որոշակիորեն ներգործում են նրա հույզերի, աշխարհընկալման ու պատկերացումների վրա:

Պատմության փիլիսոփայությունը անհերքելի փաստերով ապացուցում է, որ յուրաքանչյուր արժեք ձեռք է բերվել միայն որևէ ազգի պատմական հողի վրա: Հայ ազգի ընդհանրական հոգեկերտվածքի ձևավորման գործոններից կարևորը *ազգի պայմանական ճակատագիրն է եղել, որն իր հերթին էապես պայմանավորված է եղել նրա աշխարհագրական դիրքով:*

Հայ ժողովրդի ճակատագիրը պատմական հանգամանքների բերումով իր ծագման վաղնջական ժամանակներից եղել է սեփական գոյատևման և ինքնության պահպանության համար օտարների դեմ մղված մի չընդհատվող պայքար:

Բաղրամյանի այս նշանավոր աշխատության մեջ բացահայտվում են հայ ազգի հոգեկերտվածքին բնորոշ գծերը ոչ թե ժամանակից ու տարածությունից դուրս, այլ հայ ժողովրդի գոյության կոնկրետ ժամանակահատվածում՝ զարթոնքի փուլում: XVIII դարի հայի հոգեկան կերտվածքը նրա բարդ ու հակասական կյանքի յուրօրինակ պայմանների արտացոլումն է, տվյալ

պահին ստրկության մատնված ժողովրդին հատուկ մտածողության ու գործունեության եղանակների ամբողջությունը: Դիմելով հայ հոգևորականներին՝ Բաղրամյանը նշում է, որ հայրենիքի ճակատագրի պես բարդ է հայ մանուկի խառնվածքը, ուստի նրան ոչ թե պետք է պարսավել կամ անիծել, այլ կրթել նրա ստրկացված ոգին: Այդ առիթով նա գրում է.

«Իսկ որքան որ մենք ճանաչում ենք հայ ազգին,
մեր մայր հողի բնակիչները չափազանց տաքարյուն են,
Որի պատճառը կամ երկրի ճակատագիրն է, կամ թե չէ
ամեն մեկի
բնակավայրը, որոնցից և ձևավորվում է խառնվածքը
մարդկային,
Ու ըստ այդմ էլ ոմանք՝ արի, իսկ ոմանք էլ հեգ են,
իրենց
տեսքից ընկած՝ նման բախտին հայրենիքի,
Եվ անընտել ու անուսում էլ կմնան, եթե սիրով դուք
չսփոփեք
ու հովվություն չանեք ի սեր ապագայի»⁹⁹:

Հայի հայրենիքը գտնվում է գրեթե բոլոր ժամանակների աշխարհակալ պետությունների հակամարտությունների կիզակետում:

XVIII դարի հայի ներաշխարհի վրա մեծապես ազդել են զանգվածային պանդխտությունը, հալածանքը, հայրենագրությունը, անջատման ու կարոտի ծանր զգացումները: Հայը ոչ միայն իր երկիրը ներխուժած բռնակալների յաթաղանից է տուժել, այլ նաև նրանից, երբ ժողովուրդն իր սեփական երկրում ապրել է գերի ու իրավազուրկ, աղքատ ու պատվազուրկ. «Ուրեմն խոհեմությամբ ուշք դարձրեք դուք, ով հայոց երիտա-

⁹⁹ Նոր տեսրակ..., էջ 52

սարդներ, և նայեք մեր հայրերի ու ծերունիների վախկոտությանը, որոնք հոժարակամ հաշտվել են, որ իրենց զավակները այլազգիների իշխանությանը ենթարկվեն: Ահա թե ինչու ոչ կարողանում են հազնել իրենց սիրած զգեստները, հեծնել ձի ու երիվար, ոչ էլ կարողանում են իրենց դուստրերի ու կանանց գեղեցկությունն ու շքեղությունն ազատորեն ցույց տալ աշխարհին: Չեն թույլատրում նաև, որ պատանիներն ու երիտասարդները երբևէ ի հայտ բերեն իրենց արիությունն ու քաջությունը, որով, թերևս, ճանաչման ու հռչակի արժանանալով՝ նրանց անուններն ազգերի ու սերունդների մեջ հիշվեն, – այլ երիտասարդ և պիտանի ժամանակը նեղում են (նրանց պահելով) մեղավորի պես գլխիկոր և ծառայի պես ձեռքը ծալած»¹⁰⁰:

Մի կողմից դարաշրջանի սոցիալ-տնտեսական տեղաշարժերը, մյուս կողմից քաղաքական աղետները առաջ էին բերել համազգային զարթոնքի անհրաժեշտություն, բուռն ձգտում՝ բացահայտելու ժողովրդի դարերով կուտակած հոգևոր լիցքն ու մտավոր կարողությունը:

Բաղրամյանն առաջիններից մեկն էր մեզանում, որ ընկալեց հայ մարդու դարերի փորձն ու հոգու խռովքը, հին ու նոր ցավերը, բարոյական անկումներն ու տագնապները և ուղենշեց այդ վիճակից դուրս գալու ուղիները:

Հնդկահայ լուսավորիչները նախապատրաստեցին հայ կյանքի ազգային զարթոնքը, որը հանգում էր մի որոշակի նպատակի՝ լուսավորել ու կրթել հայ ազգին, համախմբել նրա ցաքուցրիվ հատվածներին և պահպանել ազգի հարատևությունը:

Նրանց առաջ ծառացել էր անցյալի արժեքների գնահատման, առկա ծանր կյանքի պատճառների բացահայտման, նոր ձևերի և սոցիալական նոր հարաբերությունների, նոր մարդու,

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 163:

ապագա հայի անհատականության բացահայտման ու դաստիարակման բարդ խնդիրը:

Բաղրամյանը քաջ գիտակցում էր, որ պարսկա-թուրքական լծից Հայաստանի ազատագրումը և անկախ պետություն ստեղծելու կարևորագույն պայմանը նախ հայրենիքի գոյի գիտակցումն են, որից հետո՝ նրա իրական տերերի մարդկային, նյութական ու ոգեղեն ներուժի բացահայտումն ու համախմբումը: Տրամաբանորեն առաջադրվում է ազգային գոյապահպանության երկրորդ գործոնը՝ ինքնահամախմբումը: Ինքնահամախմբման բնատուր ընդունակությունից են կախված յուրաքանչյուր ազգի կենսունակությունն ու հարատևությունը: Ինքնահամախմբման բնագործ է կենդանական աշխարհից տարանջատվել մարդը՝ ապրելով յուրայինի հետ: Մարդիկ համախմբվում են մեկ ընդհանուր գաղափարի՝ ընդհանուր ծագման, ընդհանուր հայրենիքի, ընդհանուր լեզվի և հոգեկերտվածքի ընդհանրության շուրջ: Ազգի ներքին տրոհվածությունը առանձին սոցիալական խմբերի, տարբեր պետությունների, քաղաքակրթությունների ու գաղթաշխարհի իր հերթին կրկնակի խնդիր է դնում Բաղրամյանի առաջ:

Պարզ է, որ թվապես, տեխնիկապես, նյութապես հայ ժողովուրդը չի կարող ուժեղ լինել իր հակառակորդ հարևաններից: Սակայն ուժը միայն նյութական ազդակները չեն կազմում: Այստեղ կարևորվում է ինքնահամախմբման՝ ազգային միասնության գործոնը: Ինքնահամախմբման կարողությունն ու բարոյական ուժն են գոտեպնդում փոքրաթիվ ժողովուրդներին ինքնազատագրման մեծ պայքարում: «Ինչպես որ միատեղ հավաքված հարյուր կամ հիսուն տղամարդու մեջ ավելի զորություն և ուժ է լինում,– գրում է Բաղրամյանը,– քան հազարների մեջ, որոնք միմյանցից հեռու են ու անջատ, նույնպես և սովորաբար միշտ էլ

ավելի հզոր է որևէ փոքրիկ ազգ կամ ցեղ, որը միաբան է, քան թե անսեր ու անմիաբան մեծ ազգը»¹⁰¹:

Բաղրամյանի կարծիքով չկան ուժեղ ու թույլ ազգեր: Կան ինքնաճանաչ ու համախմբված ազգեր, որոնք անկախ են ու ինքնիշխան, և կան անգիտակից ու անմիաբան ազգեր՝ գերևարված ու վտանգված:

Ինքնաճանաչողությունը և ինքնահամախմբումը պայմանավորում են ազգի ինքնագատագրումը:

Ազգային ազատագրական պատերազմները՝ որպես երկարատև, մասշտաբային և փոխակերպող գործընթացներ, որակական նոր փուլ են թևակոխում XVII-XVIII դարերում՝ ժամանակակից ազգերի ձևավորման դարաշրջանում:

Նվաճված ու ճնշված ժողովուրդները ազգային ազատագրության անհավասար պայքարին նախապատրաստվում են երկար ժամանակ, մշակում ազատագրության տեսություն, ռազմավարություն ու մարտավարություն: Սեփական ազգի՝ հասարակական գիտակցություն թափանցած իրավունքների պաշտպանության գաղափարն այս դարաշրջանում իշխող է դառնում հանրային կյանքի բոլոր ոլորտներում: Հայոց ազգային ազատագրական պայքարի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն ծավալվում է ոչ թե մեկուսի, լուկալ միջավայրում, այլ այնպիսի տարածաշրջանում, որտեղ խաչաձևվում են մի քանի գերտերությունների շահերը, որով նրա միջազգայնացումը դառնում է անխուսափելի: XVIII դարում հայ ժողովուրդը գտնվում էր ոչ միայն երկու տերությունների՝ Թուրքիայի ու Պարսկաստանի լծի տակ, այլև հայտնվում էր հզորացող Ռուսաստանի և եվրոպական տերությունների հակամարտությունների ոլորտում: Աշխարհաքաղաքական նման աննախադեպ զարգացումները ստի-

¹⁰¹ Նոր տեսրակ..., էջ 104:

պում են, որ ազգային-ազատագրական պայքարի քաղաքականության կերտման ժամանակ հաշվի առնվեն համաշխարհային ուժային բևեռների շահերն ու դիրքորոշումները: Որքան բարդանում են ազգային ազատագրական շարժման ուղիները մշակող գործիչների առջև ծառացած խնդիրները, այնքան տարաբնույթ ու երբեմն էլ իրարամերժ են դառնում ազատագրական շարժման առաջարկվող ծրագրերը: Տարբեր ժամանակահատվածներում ու տարբեր վայրերում ապրող գործիչները տարբեր ձևով էին ընկալում իրավիճակը և առաջադրում տարբեր ծրագրեր: Այնուամենայնիվ, որքան տարբեր լինեին այդ մոտեցումները, նրանք լրացնում էին միմյանց՝ կազմելով ազատագրության ամբողջական գաղափարաբանությունը:

Նոր պատմության այս բեկումնային պահին էր, որ ասպարեզ իջավ Իսրայել Օրին: Հռոմի Պապի, Պետրոս Մեծի, Ավստրիայի Լեոպոլդ կայսրի և այլ հզորների հետ էր անմիջականորեն առնչվում Օրին Հայաստանի ազատագրության իր ծրագիրը մշակելիս: Սա նախադեպը չունեցող մի հանդուգն ու խոհեմ քայլ էր, որով Հայաստանը փրկելու աղերսանքները նա դարձրեց համաշխարհային ներհակ ուժերը Հայաստանի ազատագրության գործին ծառայեցնելու գիտականորեն մշակված ու դիվանագիտորեն հիմնավորված ծրագիր: 1699 թ. Իսրայել Օրին մշակեց և 1700 թ. Պֆալցի Կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին ներկայացրեց Հայաստանի ազատագրության ծրագիրը, որը հայտնի է «Պֆալցյան ծրագիր» անունով¹⁰²:

Հայաստանի ազատագրության ծրագրվող արշավանքը պետք է սկսվեր 1700 թ. մայիսին: Մշակվում էր արշավանքի երթուղին, հաշվարկվում էին ծախսերը, հստակեցվում էր հայերի ցույց տրվելիք օգնության չափը և այլն: Օրու խնդիրն էր եվրո-

¹⁰² Տե՛ս **Լեո**, Երկեր, հ. 3, էջ 48-63:

պական մի իշխանի համոզել, որ Հայաստանի թագը ձեռք բերելը ընդամենը 20-25 օրվա գործ է: Սակայն շուտով Օրին զգաց, որ ավստրիացիների՝ թուրքերին տված ջարդը և 1699 թ. Կառլովիցի պայմանագիրը, որով թուրքերը վտարվեցին Եվրոպայից, խանգարեցին այդ ծրագրի իրագործմանը, որովհետև դրանից հետո Եվրոպական երկրները այլևս կարևորություն չէին տալիս Արևելքի քրիստոնյա ժողովուրդների աջակցությանը:

Հայ ժողովրդի ազատագրության հույսը մնաց Ռուսաստանը, որը Թուրքիայի ու Պարսկաստանի հաշվին իր հարավային սահմանները ընդարձակելու նպատակ ուներ: Այս իրավիճակը ըմբռնելով՝ Օրին 1701 թ. ուղևորվեց Ռուսաստան: Նրա նպատակն էր խնդրել ցարին, որ իր ձեռքը վերցնի Հայաստանի ազատագրության գործը: Նա կազմեց մի նոր ծրագիր, որը հայտնի է «Մոսկովյան ծրագիր» անունով: Ռուսաստանի օգնության դիմաց Սյունիքի հայ մելիքները խոստանում են հնազանդություն, այնպես, ինչպես ռուսահպատակ մյուս իշխանները: Ռուսաստանը պետք է տրամադրեր 25-հազարանոց բանակ, որին միանալու էին հայ ու վրաց ապստամբները: Օրին գծագրեց Հայաստանի ազատագրության իրական այն նախաշավիղը, որով քայլելու էր հայ ժողովուրդը մի ամբողջ հարյուրամյակ, մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

XVIII դարում Հայաստանի ազատագրության մի նոր ծրագիր մշակեց և դրա իրագործմանը իր կյանքը նվիրեց Հովսեփ Էմինը: Նա ծրագրում էր հայերից ու վրացիներից ստեղծել Եվրոպական տիպի բանակ՝ կրթելով ու վարժեցնելով նրանց, ազատագրելով հայերին ու վրացիներին, և ստեղծել հայ-վրացական միասնական պետություն:

Ազգային-ազատագրական պայքարի ծրագրի մշակման, ազգապահպան գաղափարների ստեղծման և նրա կյանքի կոչ-

ման համար ծավալած պրակտիկ գործունեության ասպարեզում XVIII դարում մեծ ավանդ է ներդրել հատկապես Շահամիր Շահամիրյանը: Նրա երկու մեծարժեք աշխատություններում¹⁰³, հայ-ռուսական դաշնագրի երկու նախագծերում¹⁰⁴, ժամանակի աչքի ընկնող հայ ու օտարազգի գործիչներին հղած նամակներում¹⁰⁵ արժարժվում են Հայաստանի ազատագրության բազում հիմ-նախնդիրներ, ինչպես նաև մշակվում ազատագրվելիք Հայաստանի ժողովրդավարական հանրապետական կարգերի հաստատման սահմանադրության նախագիծ:

Շահամիրյանը Հայաստանի ազատագրության խնդիրը էմի-նի նման մի կողմից կապում էր Վրաստանի հետ համագործակցության, մյուս կողմից՝ Ռուսաստանի աջակցության հետ: Բացի դրանից՝ նա ձգտում էր Հայաստանի ազատագրության խնդիրը դարձնել համազգային, ազգային-ազատագրական պայքարին մասնակից դարձնել ժողովրդական լայն զանգվածներին: Շահամիրյանը կարևորում էր նաև արտերկրի հայության դերը, որը պետք է նաև իր կապիտալը տեղափոխեր մայր հայրենիք: Որպես հայրենիք վերադարձող հայության ժամանակավոր հանգրվան և ուժերը համախմբելու վայր՝ Շահամիրյանը նախընտրում է Հայաստանին մոտիկ Ղզլարը:

Ազգային ներուժի հաջորդ կարևորագույն օղակը Շահամիրյանը համարում էր Արցախի մեկիքությունները: Նրանք պետք է վերականգնեին հայոց պետականությունը, որի տնտեսական ու ռազմական հզորությունը պետք է օգտագործվեր բովանդակ Հայաստանի ազատագրության համար:

¹⁰³ Տե՛ս Որոգայթ փառաց, Երևան, 2002: Նշավակ, Մադրաս, 1783:

¹⁰⁴ Տե՛ս Նշավակ և Դիվան հայոց պատմության աշխատությունները:

¹⁰⁵ Տե՛ս **Պ. Չոբանյան**, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981:

Հայ ազգային-ազատագրական շարժման տեսաբաններից առաջինը Մովսես Բաղրամյանն էր, որ հերքեց դրսի անշահախնդիր օգնության գաղափարը և հիմնավորեց, որ յուրաքանչյուր նվաճված ժողովուրդ ինքը պետք է իր որդիների արյան գնով ազատագրի հայրենիքը, ինքը պետք է ջանքեր թափի, միջնադարյան թմրության քնից զարթնեցնի և լուսավորության ու կրթության միջոցով ստեղծի քաղաքացիական ազգ, աճեցնի ազգին համախմբող ու պայքարի տանող ընտրանի, ստեղծի ազատագրության տնտեսական հիմք, մշակի ազատագրական պայքարի գիտականորեն հիմնավորված ռազմավարություն ու մարտավարություն:

Բաղրամյանը նաև այն նշանավոր գործիչն էր, որը ազգային-ազատագրության խնդիրը շաղկապեց սոցիալական վերափոխումների խնդրին՝ ցույց տալով, որ քաղաքական անկախությունը անհրաժեշտ նախադրյալ է ստեղծում համազգային կենսական խնդիրների լուծման, սոցիալական առաջադիմության պայքարի համար: Նա նոր ուղիներ է բացում հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական հետամնացության վերացման, ժողովրդի մարդկային ու նյութական վիթխարի ռեսուրսների օգտագործման, ժողովրդին սովից ու աղքատությունից փրկելու համար:

Հայ ժողովրդին, որին թուրքերն ու պարսիկները պահում էին պատմության ետնաբեմում, Բաղրամյանը տեսականորեն դարձրեց քաղաքական հզոր ուժ:

Բաղրամյանը առաջինը նկատեց, որ ստրկացված հայ ժողովրդի ազատագրումը սերտորեն կապված է բուրժուական հասարակական հարաբերությունների հաստատման հետ, հարաբերություններ, որոնց արդյունքում ձևավորվեց հենց ինքը՝ մարդկային էթնիկական հանրույթի բարձրագույն տեսակը՝ ազգը:

Ազգային-ազատագրական համաեվրոպական շարժումը նույնպես բուրժուական հարաբերությունների առաջացման արդյունք էր: Հայտնի է, որ նվաճված ժողովուրդների ազատագրելու և ինքնուրույն պետություն ստեղծելու իրավունքի գաղափարը առաջնային դարձավ XVIII դարի լուսավորական գաղափարախոսության մեջ և մարմնավորվեց Հյուսիսային Ամերիկայի անկախության պատերազմում ու Ֆրանսիական մեծ հեղափոխությամբ:

Արևմուտքում այդ շարժումը ուղեկցվում էր ցնծությամբ: Օրինակ, երբ Հյուսիսային Ամերիկայի անգլիացիները ապստամբություն սկսեցին՝ մայր հայրենիքից անջատվելու և անկախություն ստանալու համար, Անգլիայում ազատասիրությունը թևակոխեց մի նոր աստիճան, որի կենտրոնում կանգնած էին պետական հայտնի գործիչներ, գրողներ, որոնք ոչ թե դատապարտում էին ապստամբներին, այլ պաշտպանում էին նրանց՝ հանուն մարդկային ազատության գաղափարի: Ըստ Առնոլդ Թոյնբիի՝ Արևմուտքում ազգայնական շարժումը մեղմ էր ընթանում այն պատճառով, որ այդ երկրներում ազգայնական շարժումներն ուղեկցվում էին քաղաքական սահմանաբաժանման հստակ վիճակով, այսինքն՝ XVIII դարի վերջին նրանք կազմում էին տարածքային միասեռ զանգվածներ, որոնք էլ դառնում էին կազմավորվող ազգային պետություններ: Բայց երբ «ազգայնականության մոլուցքը» շարժվեց դեպի արևելք, ապա ի հայտ եկավ, որ ազգայնական իդեալը տարբերվում է «ժամանակակից քարտեզագրական փաստերից»: Եվ սա էր, որ աղետներ բերեց, ասում է Թոյնբին և դիմում հայերի օրինակին¹⁰⁶:

Իսկ արևելքում, ինչպես նշում է Բադրամյանը, արդեն մոտ

¹⁰⁶ Տե՛ս Հ. Գևորգյան, Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Երևան, 2005, էջ 395:

400 տարի է, ինչ գերության դատապարտված հայ ժողովուրդը անորոշ դեգերում է և նույնիսկ ազատություն չի փափագում: Նույնիսկ այդ վիճակը բնական համարելով՝ իր սրտում ցավ չի զգում՝ կտտանքներից ու տանջանքներից վիատված: Իրենց ծուլության ու հուսահատության պատճառով շատ խոշտանգումներ են տանում՝ կարծելով թե դրանով հնազանդության աստվածային պատվիրաններն են կատարում, գտնելով, որ իրենց չարչարանքների պատճառը իրենց կատարած մեղքերն են¹⁰⁷:

Ահա այսպիսի կարգավիճակ և տրամադրություն ունեցող ժողովրդին է ձգտում ոտքի հանել Բաղրամյանը: Բնականաբար, նրանից պահանջվում է ուժերի բարձրագույն լարում, տիրապետող իրականության գիտական ու հիմնավոր բացահայտում, ազատագրության պայքարի ձեռնոց նետող ժողովրդի ուժերի գերագույն ակտիվացում և շարժման ընդհանուր վերելքի ոգու ապահովում:

Մարդկության պատմությունը հարուստ է բազում ազգերի ազատագրության օրինակներով: Եթե մենք էլ նրանց հետևենք, ըստ մեծ հայրենասերի՝ մեզ համար էլ դժվար չի լինի ազատագրվել օտարների լծից, ուստի, հարգարժան հայեր, այդ ամենը տեսնելով, ձեր որդիներին ու դուստրերին սովորեցրե՛ք, որ հեռու մնան տաղտկալի կյանքից, ինչ հնար որ ունեն, որոնեն ազատության ուղիները: Հենց մեր ժամանակներում մեր աչքի առաջ համախմբվեցին ու փրկվեցին շատ ազգեր, ինչպես, օրինակ, իսպանացիներն ու պորտուգալացիները: Իսկ ռուսները անհայտությունից բարձրացան և աշխարհակալ տերություն ստեղծեցին:

«Ու ոչ թե ինչ-որ հրաշքով ու սքնանչումով կամ այլոց աջակցությամբ ու օգնությամբ,

¹⁰⁷ Տե՛ս Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 30:

Այլ շնորհիվ վերնախնամ նրանք իրենք արիացան,
մարտնչեցին և փրկվեցին (տիրողներից)»¹⁰⁸:

Ուրեմն, շարունակում է Բաղրամյանը, եկեք մենք էլ, նրանց նման մի կամք դարձած, պայքարենք մեր կեղեքիչների դեմ՝ մեր հույսը մեր և մեր աստծո վրա դնելով:

Բաղրամյանը քաջ գիտակցում է, որ նման իրավիճակում գտնվող ժողովուրդները հեշտությամբ չեն ձեռք բերում ազատություն: Ազատության համար մղվող անհավասար պայքարը համեմատում է երկունքի մեջ գտնվող կնոջ ցավերի ու տառապանքների հետ՝ եզրակացնելով, թե այդ անհուն ցավերից հետո, մանկանը տեսնելով, ինչպես մայրն է բերկրանք ապրում, այնպես էլ ազգը կապրի՝ իր ազատությունը տեսնելով¹⁰⁹:

Ահա թե ինչու են քաջամարտիկ ու աննկուն տղամարդիկ նախընտրում միանգամից զոհվել որպես նահատակներ, քան ամեն օր հազար անգամ բաց աչքերով մահը տեսնել, որովհետև նրանք մտածում են, որ սովորական մահկանացուներ են, և ավելի լավ է քաջի մահով մեռնել, քան ստրուկի պես ապրել:

Երանի թե, փափագում է մեծ հայրենասերը, մեր ազգն էլ մի օր անձը հայրենիքին նվիրաբերող նահատակի նման խորհեր: Գուցե իրենց հայրենիքի համար զոհվելը անիմաստ են համարում՝ կարծելով, թե բոլորը զոհվելու են անհավասար կռվում: Նրանք չեն հասկանում, որ թիվ ու հաշիվ չկա նրանց, ովքեր թաքստոցներում ու փախուստի ճանապարհին սրի ճարակ են դառնում, մինչդեռ նրանց մի մասն էլ բավական էր, որ իր արժանապատիվ մահով կարողանար ազատագրել իր հայրենիքը:

«Արդ, ավելի լավ կլինի, եթե, ուրեմն, ազգի մի մասը

¹⁰⁸ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 31:

¹⁰⁹ Տե՛ս Հ. Մանուչարյան, Հայկական լիբերալիզմի սկզբնավորումը և պահպանողականությունը, «Քաղաքագիտության հարցեր», Երևան, 2011, էջ 148-152:

կյանքը հանուն իր ազգի տար,
Որով և ազգը ամենայն, փարթամացած ու ճոխացած,
կարողանար ըստ փափագի ազատ-արծակ պայծառա-
նալ»¹¹⁰:

Ոչ մի ազգ, Բաղրամյանի հավաստմամբ, ազատության հա-
մար մղված պայքարում չի սպառվել կամ նվազել:

Արդ ուրեմն, եկեք մենք էլ ոտքի ելնենք, սթափեցնենք մեզ
ծուկության թմբիրից, որպեսզի մենք կենդանի, բայց չննջենք մե-
ռելի պես, առաջ նետվենք և համախոհ ու միաբան պայքարենք
հանուն մեր ազգի ու հայրենիքի ազատագրության¹¹¹:

«Այսպես հավետ ու հարատև վտանգվելով՝ հալածանքի
Ու փորձության մեջ կմնանք

Մինչև որ մեր թշվառությունը, ավերվելն ու տառապանքը
գիտակցել կարողանանք»¹¹²,– եզրակացնում է Բաղրամյանը:

Այդ թշվառությունները հասկանալու և այդ վիճակից դուրս
գալու համար անհրաժեշտ է, որ հայ ծնողները իրենց որդիներ-
րին կրթված ու մարզված վիճակում պահեն, նույնիսկ զբոսանքի
ժամանակ զինավարժությամբ զբաղվեն:

Համազգային կրթության միջոցով ազգը լուսավորելու գա-
ղափարը նույնպես նոր երևույթ է հայ իրականության մեջ, նույն-
պես կապված բուրժուական հարաբերությունների սաղմնավոր-
ման հետ: Ըստ է. Գելների՝ գրագիտության մակարդակը կապ-
ված է մարդկային պատմության երեք մեծ շրջափուլերի հետ:
Դրանցից առաջինը վաղ պետությունների ու պետական հարա-
բերությունների առաջացման շրջանն է, միջինում կամ հողագոր-
ծականում գրագիտությունը դառնում է մի քանիսի արտոնությու-

¹¹⁰ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 36:

¹¹¹ Տե՛ս Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 38:

¹¹² Նույն տեղում, էջ 16:

նը, բայց մշակութային ու ճանաչողական արժեքները կուտակելու ու կենտրոնացնելու բեղուն հնարավորություն է տալիս: Սակայն դրանց հեղինակներն ու կրողները կղերականներն էին: Համատարած գրագիտության անհրաժեշտությունը առաջանում է արդյունաբերական համակարգում: Սրա անդամները պետք է ունենային ընդհանուր կրթություն, ինչը հնարավորություն կտար նրանց յուրացնելու ուսումնական ձեռնարկներն ու հրահանգները՝ նոր գործին կամ զբաղմունքին անցնելիս: Իրենց գործունեության ընթացքում սրանք պետք է անընդհատ հաղորդակցվեն մեծ քանակով այնպիսի մարդկանց հետ, ում հետ առաջ, շատ հաճախ, չեն էլ շփվել: Սրանք ունակ լինեն հաղորդակցվելու՝ գրավոր, անձնական, այնպիսի ուղերձներով, որոնք հասցեագրված լինեն որևէ դասի: Ուստի նման հաղորդակցությունը պետք է լիներ ընդհանուր ու ստանդարտ լեզվական միջոցներով ու սխեմաներով: Սոցիալական այս կարգն ապահովող կրթական համակարգը դառնում է ծավալուն ու անխուսափելի: Կրթական այս համակարգին սպասարկողները համապատասխան են ողջ հասարակությանը, ու սրանց փոխարինելիության աստիճանն առնվազն նույնքան է, ինչքան որ հասարակության մյուս հատվածներում: Մարդու աշխատանք գտնելու հնարավորությունը, արժանապատվությունը, ապահովությունն ու ինքնահարգանքը, կախված են նրա կրթությունից: Այն փաստի գիտակցումը, որ ոչ թե բանավոր-ժողովրդական, այլ դպրոցով փոխանցվող կրթությունն է, որ արդյունաբերական շրջանի մարդուն շնորհում է դրա պետականությունը, արժանապատվությունն ու ինքնահարգանքը, հույժ կարևոր ու կենտրոնական է, քանի որ ոչ մի ուրիշ բան ունակ չէ դրան փոխարինելու¹¹³:

Բնական է, որ Բաղրամյանի ժամանակ լեռների ծերպերին

¹¹³ Տե՛ս Է. Գելներ, Ազգերը և ազգայնականությունը, Երևան, 2003, էջ 50:

պատսպարված վանքերի խցերում մի կերպ գոյատևող կրթական հաստատությունները հայ ժողովրդին միջնադարյան թմրության քնից հանելու, կազմակերպելու համախմբելու, ազգ կերտելու և նրան ազգային ազատագրական պայքարի դուրս բերելու խնդիրները լուծել չէին կարող: Այս գիտակցումով է Մ. Բաղրամյանը ազգային բյուրեղացման ու նրա ազատագրության պայքարի դուրս բերելու հիմքում դնում էր նոր, համաեվրոպական չափանիշ ունեցող աշխարհիկ դպրոցական կրթության խնդիրը: Այդ կրթությամբ էր, որ պետք է ազգը զարթոնք ապրեր, ձևավորվեր ազգի էլիտան (ընտրանին), որի տեղն ու դերը շատ էր կարևորում մեծ լուսավորիչը: Սա մի նոր երևույթ էր հայ իրականության մեջ, որին առաջինը համակարգված լուծում տվեց Բաղրամյանը: Նա կարծում էր՝ մինչև այսօր ոչ ոք մեր մեջ չգտնվեց, որ ցույց տար ազգային համախմբման ուղին:

«Ինչպես մարմին մի անգլուխ, որ փռվել է գետնի վրա
դիաթավալ ու դիտապաստ,
Այդպես էլ ազգը մեր որքան ժամանակներ
մնացել է երեսնիվայր ու անտերունջ»¹¹⁴:

Հայտնի է, որ միջնադարյան հայ ընտրանին՝ ազնվականությունը, ազատագրական պայքարի երկչուտ փորձերից հետո կա՛մ դավանափոխ էր եղել, կա՛մ դուրս մղվել հայոց պատմության թատերաբեմից: Հայաստանի լեռնային մի քանի շրջաններում՝ Սյունիքում, Արցախում, Սասունում էին միայն պահպանվել նրանց փոքրաթիվ շառավիղները, որոնց ջանքերով էլ մարմրին էին տալիս ազգային-ազատագրական շարժման առանձին առկայծումները: XVIII դարում քչերին էր հայտնի, որ հայերը սերում էին մի մշակույթից, որը ծնել էր հերոսներ:

Բաղրամյանի կարծիքով չպահպանվեցին ո՛չ իմաստունների

¹¹⁴ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 15:

գորքերը և ո՛չ էլ մեր նախնիների կամ հների պատմագրքերը, որոնք ընթերցելով՝ իմանայինք զորավոր կտրիճների ու արիների վարքը և դրանց միջոցով հասու դառնալով նրանց գործերին՝ մենք էլ հետևեինք մեր նախնիների քաջագործություններին: Այդ պատճառով էլ շատերը չեն լսել մեր նախնիների ու թագավորների քաջագործությունները: Այսպես է կործանվում ամեն մի իշխանություն, որը չունի ընտրյալ այրեր, ընտրանի, որի շնորհիվ ազգը կարողանա ոտքի կանգնել, նա ապագա չունի: Իրոք, հայ ազնվականության ոչնչացման հետևանքով է հայ ազգը կազմալուծվել, փոշիացել ու ստրկացվել:

Հայաստանի քաղաքական վերածնունդը կարող է տեղի ունենալ ազգային ընտրանու միջոցով, որը կարող է ծնվել միմիայն կրթության միջոցով: Այդ նպատակով հայացնելով, ազգայնացնելով լուսավորական դարաշրջանի արևմտաեվրոպական հսկա միտքը՝ Բաղրամյանը ձգտում էր նոր կրթության ու մշակույթի միջոցով ստեղծել ազգին համախմբող ու ազատագրության առաջնորդող նոր ընտրանի: Հենց նաև այս իմաստով էլ Բաղրամյանը դարձավ դարի ամենից նկատելի ու ինքնատիպ մտավորականը, որը մարմնավորեց իր ժողովրդի ազգային ու հասարակական իղձերն ու ձգտումները:

Ազգի քաղաքական կյանքի կազմակերպման առումով ամենօրյա մասնակցություն ունեցող ընտրանին, ըստ Բաղրամյանի, որակական որոշակի հատկանիշներ պետք է ունենա: Հայտնի է, որ ազգային շարժումը քառսից դեպի կանոնակարգվածություն ենթադրում է, որ ազգի սոցիալական բուրգի գագաթին գտնվող մարդկանց խումբը պետք է օժտված լինի բանիմաց, նվիրված, հայրենասեր, բարոյական և այլ համամարդկային արժեքներով: Նա իր գործունեության ոլորտում բարձրագույն չափանիշի կրողը պետք է լինի, քաղաքականապես առավել գործունյա

սուբյեկտ, բացառիկ մտավոր կարողություններով օժտված: Ընտրանին մտածողների, կառավարողների և հասարակական արժեքները համախմբողների խավ է: Դեռ Կոնֆուցիոսն էր նշում, որ «կառավարիչը պետք է լինի կառավարիչ, ծառան՝ ծառա, հայրը՝ հայր, որդին՝ որդի»¹¹⁵:

Բաղրամյանը ևս կարևորում է հասարակական արդար հարաբերությունները, ընտրանու տեղը և դերը ազգային կյանքում՝ գտնելով, որ ժողովուրդը պետք է հանդես բերի խոնարհություն, հնազանդություն, հարգանք, յուրաքանչյուրին գնահատի ազգային կյանքում ցուցաբերած իր արժանիքներին համապատասխան:

Մ. Բաղրամյանը անդրադառնում է նաև ազգային-ազատագրական շարժման տնտեսական հիմքի հիմնախնդրին: Թուրք-պարսկական մերժվող ռազմաֆեոդալական հարաբերություններին փոխարինելու է գալիս ազատագրված հայրենիքի և արդյունաբերական հասարակության անցման արժեքային համակարգը:

Քաղաքական անկախության ձգտող ժողովրդի ազգային-ազատագրական պատերազմը պետք է ունենա տնտեսական հզոր հիմք, որի վրա խարսխվի ազգային պետությունը, և որը պետք է որոշի հասարակության զարգացման ուղղությունը: Նվաճված քաղաքական ազատությունը և պահպանված տնտեսական կախվածությունը միշտ էլ ստրկացված կպահեն հասարակությանը: Ազատագրվող երկրի ինքնիշխանության վերականգման գլխավոր պայմանը իր բնական հարստության նկատմամբ տնտեսական անկախության նվաճումն է: Իսկ տնտեսական ինքնուրույնություն նվաճելու արմատական միջոցը սեփա-

¹¹⁵ Տե՛ս Конфуций, Лунь 1-ой, Антология мировой политической мысли, Москва, 1997, т. 1, էջ 49:

կանության ազգայնացումն է: Նրա վերածումը էկոնոմիկայի գերակշռող գործոնի՝ տնտեսական անկախության նվաճման և սոցիալական առաջադիմության կարևորագույն միջոցն է: Բաղրամյանի համոզմամբ, եթե Հայաստանի բնական ռեսուրսները ենթարկվեն համազգային շահերին, ապա կստեղծվի սոցիալ-տնտեսական և քաղաքական հզոր գործոն օտարի լծի թոթափման համար մղվող պայքարում: Հայ ազգաբնակչությունից միայն գլխահարկ ստացող թուրք-պարսկական ֆեոդալների խավը յուրացնում և վատնում է հայ ժողովրդի վիթխարի հարստությունը: Այս կապակցությամբ Բաղրամյանը մի ինքնատիպ հաշվարկ է կատարում: Պատմական Հայաստանի 20 նահանգներում ապրող հայերի թիվը հասցնում է 13 միլիոն 932 հազար բնակչի, որոնցից, մոտավոր հաշվարկներով 5 միլիոն 224 հազար 500 շունչը պարսիկներին ու թուրքերին վճարում է 20 միլիոն 898 հազար ոսկի: «Ահա տեսեք, – ցավով նշում է Բաղրամյանը –, թե կամավոր կերպով ինչքան անբավ ու անքանակ դրամ ենք վճարում այլազգիներին՝ այդ ոչինչ համարելով մեր աչքում, դեռ չհաշված մյուս վճարները...: Եթե ամբողջն ընդգրկելու լինեինք՝ նկատի ունենալով, թե որքան հարստություն՝ ոսկի, արծաթ, զարդեղեն և ուրիշ բաներ են այլազգիները շարունակ մեզնից քաշում, ապա անզոր կլինենք դրանց թիվն ու հաշիվը գրի առնել... Նրանք մեր հավատքը հայիոյելով, մեր պատիվն անարգելով ու արհամարհելով...՝ ավելին են ստանում մեզնից»¹¹⁶:

Ազգային-ազատագրական պայքարի տնտեսական հիմքի ստեղծման մի այլ ուշագրավ աղբյուր էլ է հայտնագործում Բաղրամյանը. դա յուրատեսակ *համազգային հիմնադրամի ստեղծման գաղափարն* է: Նրա կարծիքով աշխարհով մեկ սփռված հայությունը նույնպես կարող էր մեծ միջոցներ տրամադրել Հա-

¹¹⁶ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 162:

յաստանի ազատագրության գործին: Եկեք ուրեմն, կոչ է անում մեծ հայրենասերը, «սեր արթնացնենք մեր սրտերում, գուցե սիրո արծարծումով ու բորբոքմամբ խղճանք ընկած ու տառապած մեր մայր Հայաստանին և ողորմություն տանք նրան՝ որպես կարեկցանքի արժանի մեկին: Իսկ եթե ցանկանանք, տիրոջ կամքով ողորմելը դժվար չէ, այլ, ինչպես ստորև կտեսնենք, դյուրին է: Այն ողորմությունը, որը մեզնից է ելնելու, ...բնավ էլ չի պակասեցնի մեր ինչքը..., որովհետև մեր օգուտի համար ենք կատարում: Չէ որ ողորմության արժանին մեր սեփական Հայաստանն է, իսկ ողորմություն տվողը՝ հայոց օրինյալ ազգը: Բայց երբ այդ ողորմությունը մուտք գործի մեր հայրենիք, ապա կարող է լիովին սնել մարտիկներին՝ դառնալով նրանց ռոճկավարձ, Աստծով ուտքի հանել մեր ընկած ազգը, մեզնից վերցնել նախատինքը և մեզ ազատագրել նրանցից, որոնց ձեռքին հանապազ տանջվում ենք»¹¹⁷:

Եթե որևէ մեկը հայ ժողովրդի ազատագրության պայքարի գլուխ կանգնի, թող բոլորն ընդառաջ գնան նրան, նրա շուրջը համախմբվեն, այդ դեպքում արդյունքը ակնառու կլինի: Կարևորելով ազգային միասնության գաղափարը՝ Բաղրամյանը նշում է, որ մեր թշնամիները աղոթում են ու խնդրում Աստծոն, որ քրիստոնյաները չմիաբանվեն, քանի որ լավ գիտեն, որ մի հայ երիտասարդը կարող է հաղթել քսանապատիկ ավելի այլազգիների:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ» անմահ ստեղծագործությունը տալիս է Հայաստանի բաղձալի ազատագրության նաև տնտեսական հիմնավորումը, որը նույնքան կուռ ու ամբողջական է, որքան պատմական, քաղաքական ու փիլիսոփայական հիմնավորումները:

¹¹⁷ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 165:

Ռազմատենչ հարևանների հետ խաղախ հարաբերությունների պահպանման հարցը նույնպես շատ ուշագրավ տեղ է գրավում Մովսես Բաղրամյանի քաղաքական հայացքներում: «Սակայն իմացեք նաև հետևյալը,– ազատագրական պայքարի կոչ անելուց հետո գրում է Բաղրամյանը,– ինչ որ ասացինք, այդ ամենից բնավ էլ մի ենթադրեք, թե մենք ունեցել ենք այս նպատակը, որ, իբր, դրանով մենք ցանկացել ենք, որ հայ ազգն ապստամբի այլազգիների կամ իր կառավարիչների դեմ և աչք դնի նրանց ունեցվածքի վրա կամ թե նրանց որևէ վնաս պատճառի: Քավ լիցի, դա քրիստոնյաներին պատշաճ բան չէ»¹¹⁸: Պարզապես անտեղի բախումներից ու աղետներից խուսափելով՝ Բաղրամյանը խորհուրդ է տալիս զգույշ լինել ու լավ նախապատրաստվել: Նա հստակորեն սահմանազատում է ազատագրության համար մղվող արդարացի պատերազմը զավթողական նպատակներ հետապնդող անարդարացի պատերազմներից: Մ. Բաղրամյանը քաջ գիտակցում է, որ պատերազմները հսկայական զոհեր ու նյութական վնասներ են պատճառում մարդկանց, բայց դրանցից՝ ազգային-ազատագրականը անխուսափելի է և արդարացված: Նա ծրագրում էր օտար բռնակալության և ֆեոդալիզմի օրոքոցում նիրհած հայ ժողովրդին ազատագրել և օտար զավթիչների լծից ու միջնադարյան ավատատիրական կապանքներից՝ դրանով իսկ դառնալով թե՛ ազգային ազատագրության առաջնորդ, թե՛ սոցիալական ազատագրության քարոզիչ: «Երբ դուք ձեռք բերեք մեր այս հորդորական գրքույկը,– իր ընթերցողներին է դիմում Բաղրամյանը,– մի կարծեք թե ինչ-որ նոր բան ենք կամենում կատարել կամ այլոց իշխանությունը հափշտակելու ակնկալություն ունենք: Քավ լիցի: Մենք ոչ այլ ինչ ենք ցանկանում, այն էլ հոգու չափ, եթե ոչ միայն ետ ստանալ

¹¹⁸ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 165:

մեր սեփական և արդար ժառանգությունը, որ կորցրել ենք մեր անկարգության ու ծուլության պատճառով»¹¹⁹:

Բաղրամյանը առաջադրում է ազգային-ազատագրական շարժման մի նոր ու կարևոր գաղափար: Ազատագրության դրոշ բարձրացնելու համար խորհուրդ է տալիս լարել բոլոր ուժերը. այն պետք է ստեղծի համազգային շարժման խմորման նպաստող իրադրություն, ակտիվ պայքարի հանի ժողովրդական ամենալայն զանգվածներին: «Մենք կամենում ենք ասել հետևյալը, – գրում է նա, – եթե ոտքի ելնեն Հայաստան աշխարհում եղած հայ իշխանները, կամ էլ եթե որևէ մեկը ջանք թափի հայ ժողովրդի ազատագրության համար, ապա թող բոլորն ընդառաջ գնան և մեկը մյուսից ավելի թող օգնեն նրան, ընդ որում, ինչպես վերևում ասացինք, ոչ թե ինչ-որ մեծ դժկամությամբ, այլ հաճությամբ»¹²⁰:

Շարժման վերելքի այդպիսի պահեր ստեղծվում են ոչ թե միշտ, այլ միայն պատմական որոշակի ակնթարթում: Նրա ստեղծման ժամանակը, զարգացման ձևերն ու տեմպերը կախված են իրադրությունը վերահսկելու ազատագրության պայքարը գլխավորողների ունակություններից, պայքարող ժողովրդի ուժից, երկրի սոցիալ-քաղաքական իրավիճակից: Այս բոլորի գիտակցմամբ էլ Բաղրամյանը մեծագույն հայտնագործություն է կատարում նաև ազգային-ազատագրական պայքարի դրոշը բարձրացնելու պահի ճիշտ ընտրության ռազմավարության ասպարեզում:

«Ուստի և մենք եկեք, եկեք ոտքի ելնենք

ու այլևս քնով տարված՝ չմրափենք,

Արթնանալով թմրությունից ծուլության՝ մեզ արիաբար

¹¹⁹ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 55:

¹²⁰ Նույն տեղում, էջ 165:

սթափեցնենք, զգաստանանք
Եվ, աչալուրջ ուշք դնելով, մենք խելամիտ
նայենք ժամ ու ժամանակին,
Որ չլինի. թե հարմար պահն ու առիթը չգիտակցենք
և կորցնենք, երբ որ նրանք մեր ձեռքն ընկնեն»¹²¹:

Մ. Բաղրամյանը հայ երիտասարդներից պահանջում է զինված վարժված, կազմ ու պատրաստ սպասել, մինչև հարմար պահը գա: Ազատության պայքարի դրոշը պետք է բարձրացնել ճիշտ ժամանակին: Բնականաբար, այդ պահը օբյեկտիվ իրողությունների միագումար է, որն ունի որոշակի հատկանիշներ: Դրանք են.

1. տիրապետող հզոր պետության համար պետք է աննպաստ, ճգնաժամային իրավիճակ ստեղծվի,

2. տիրապետող ազգի և ճնշված ազգի միջև սոցիալական հակամարտությունները պետք է առավել սրվեն՝ պայմանավորված տնտեսական աղետներով, պատերազմներով և արտակարգ այլ դեպքերով,

3. ճնշված ազգի զանգվածների քաղաքական ակտիվությունը պետք է բարձր լինի՝ զերծ անպատասխանատվությունից ու անտարբերությունից,

4. ազատագրական շարժման հաջողությունների վրա նշանակալի ազդեցություն է թողնում նաև միջազգային իրավիճակը:

Բացի այս օբյեկտիվ պայմաններից՝ Բաղրամյանը ի հայտ է բերում նաև սուբյեկտիվ գործոնի գաղափարը: Ինչպես տեսանք, սուբյեկտիվ գործոնի կարևորագույն բաղադրամասը լայն զանգվածներին իր ետևից տանելու ընդունակ ազգային մտավորականությունն ու քաղաքական ընտրանին է: Բաղրամյանը համոզված էր, որ եթե սուբյեկտիվ գործոնը զարգացում չստանա, ա-

¹²¹ Մ. Բաղրամյան, նշվ., էջ 41:

պա ազգային ազատագրական պայքարը կա՛մ բոլորովին չի ծավալվի, կա՛մ պարտություն կկրի:

Մովսես Բաղրամյանը հայտնագործում է նաև ազգային-ազատագրական պայքարի շարժիչ ուժի գաղափարը: Այդ ուժը հայ կորովամիտ երիտասարդությունն է: Շարժման վերելքի պահին նա է, որ պետք է դառնա հզոր հասարակական- քաղաքական ուժ: Հայտնի է, որ ամեն մի պատմական դարաշրջան ծնում է անհատի որոշակի սոցիալական նոր տեսակ:

Բաղրամյանի «Նոր տետրակը» ինքնին ստեղծում է սոցիալական մի թարմ ու առողջ հոգևոր միջավայր, որի բովում պետք է փոխվի նաև ինքը՝ մարդը: Փոխվում է հասարակության մեջ նրա ունեցած նրա տեղն ու դերը: Այդ նոր երիտասարդները ազատությունը մեկնաբանում են ոչ միայն հայրենիքի, այլև ոգու ազատության, կամքի ազատության, արտաքին հանգամանքներից թխող պայմաններին համապատասխան գործելու ազատություն: Ահա նաև դրանում է Մովսես Բաղրամյանի այս ստեղծագործության համազգային անանց արժեքը:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆԳՐՎԱՆ

Հայ ազգի և հայոց ազգայնականության ձևավորումը XIX դարում

*«Ուր չիք հայրենիք՝ չեն ազգ և քաղաքացիք.
...ուր քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիք»
Ղ. Ալիշան*

XIX դարի հայոց ազգային զարթոնքի աննախադեպ վերելքին նպաստեցին քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի շրջադարձային իրադարձությունները, հատկապես 1826-1828 թթ. ռուս-պարսկական, 1853-1856 թթ. և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմները, 1861 թ. ճորտատիրական կարգերի վերացման ռեֆորմները Ռուսաստանում և 1839-1870-ական թթ. իրագործված բարենորոգումները՝ թանգիմաթը Թուրքիայում:

Առաջին շրջադարձային իրողությունը, բնականաբար, 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանի անցումն էր Ռուսաստանին, որի արդյունքում հայ ժողովրդի համար աշխարհաքաղաքական նոր միջավայր ստեղծվեց: Արմատապես փոխվեցին 1555 թ. Ամասիայի թուրք-պարսկական պայմանագրով հաստատված հարաբերությունները: Հայ ժողովրդի երկու հատվածները Թուրքիայի և Ռուսաստանի կազմում հայտնվեցին ոչ միայն երկու թշնամի պետությունների հակամարտությունների կիզակետում, այլև նոր ձևավորվող համաշխարհային ուժային բևեռների ազդեցության ոլորտներում՝ նախ «Արևելյան հարցը» շահարկող գերտերությունների, ապա աշխարհի վերաբաժանման համար ձևավորված խմբավորումների միջև. արևելահայությունը Ռուսաստանի կազմում Առաջին աշխարհամարտում հայտնվեց Անտանտի, Երկրորդ աշխարհամարտում՝ սո-

ցիալիստական ճամբարում, արևմտահայությունը Թուրքիայի կազմում հայտնվեց նախ Եռյակ միության, ապա՝ ֆաշիստական ճամբարներում:

Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ տարբեր նկրտումներ ու շահագոգռություններ ունեին Արևելյան Հայաստանը նվաճած Ռուսական և Արևմտյան Հայաստանը նվաճած Օսմանյան կայսրությունները: Գրավելով Անդրկովկասը՝ Ռուսաստանը դարձավ տարածաշրջանի հիմնական քաղաքական կլիմա ստեղծող պետությունը: Համաշխարհային տիրապետության հասնելու մայրուղի դուրս եկած Ռուսաստանին առաջին հերթին անհրաժեշտ էր Բալկանների վրայով ճանապարհի հարթել դեպի Միջերկրական ծով: Արևմտյան Հայաստանի կամ նրա առանձին շրջանների գրավումը Ռուսաստանի համար համեմատաբար երկրորդական նշանակություն ուներ և հիմնականում ծառայում էր որպես օժանդակող գործոն՝ Բալկաններում ցանկալի դիրքերում հաստատվելու համար: Դրանով պետք է բացատրել ռուս-թուրքական պատերազմներում Ռուսաստանի գրաված Հայաստանի տարածքները թուրքերին վերադարձնելու բազում փաստերը:

Թուրքերը, գրավելով Արևմտյան Հայաստանը, պայքարում էին հայոց հայրենիքը թուրքացնելու համար:

Ինչպես տեսնում ենք, ռուսներին Միջերկրական ծով և համաշխարհային տիրապետության տանող ճանապարհը անցնում էր թուրքերին ենթակա Բալկաններով, իսկ թուրքերին Թուրան տանող ճանապարհը՝ Հայաստանով:

Հայտնի է, որ ավելի քան 400 տարի անկախությունն ու պետականությունը կորցրած հայ ժողովուրդը, ընկած բարբարոս ցեղերի կրնկի տակ, կորցրել էր ազգային արժեքները, ազգային հպարտությունը, միասնությունը, ձեռք էր բերել թերարժեքու-

թյան բազում բարդույթներ՝ զոհի, անմիաբանության, պարտվողականության տրամադրություն: Աշխարհաքաղաքական այս աննպաստ դրսևորումները հայ ժողովրդին այժմ արդեն պարտադրում են սթափվել թմրության քնից, որոնել ու գտնել ազգային գոյապահպանությունն ապահովող ուղիներ:

Ազգային զարթոնքի ու համախմբման համար, այնուամենայնիվ, որոշ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին XIX դարի երկրորդ կեսին: Որոշ առաջընթաց քայլեր կատարվեցին առևտրի, արհեստների, ապրանքադրամական հարաբերությունների ու թեթև արդյունաբերության որոշ ճյուղերում:

Ապրանքադրամական հարաբերությունների ձևավորմանը զուգընթաց հասարակական նկատելի կշիռ ձեռք բերեց ազգային մտավորականությունը: Միջնադարյան վանական հաստատությունների կրթօջախներում ուսում առած մտավորականները այլևս չէին կարող բավարարել արդյունաբերական հասարակության պահանջները: Անհրաժեշտ էին նոր հարաբերությունների պահանջմունքները բավարարող մտավորականներ՝ ինժեներներ, տնտեսագետներ, հրապարակախոսներ, գրողներ, և այլն: Այս անհրաժեշտությամբ էլ սկսեցին բացվել նոր տիպի կրթական հաստատություններ: Մոտիկից շփվելով եվրոպական դպրոցների հետ, ծանոթանալով նրանց ծրագրերին՝ առաջինը Մխիթարյաններն էին, որ աստիճանաբար մեծ տեղ էին հատկացնում պատմագիտական, աշխարհագրական, լեզվագիտական առարկաներին, ինչի արդյունքում կաթոլիկ հոգևորականության կողքին կրթվեցին ու ասպարեզ իջան անվանի հայ մտավորականներ ու գիտնականներ: Ազգային կյանքում շրջադարձային դեր խաղացին 1815 թ. Մոսկվայում հիմնադրված Լազարյան ճեմարանը, 1824 թ. Թիֆլիսում հիմնադրված Ներսիսյան դպրոցը, ինչպես նաև Շուշիում, Երևանում, Ալեքսանդրապոլում

և այլուր հիմնադրված գավառական դպրոցները: Այս դպրոցներում ու արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթվեցին ու ազգային մշակութային կյանք մտան բարձրակարգ հայ մտավորականներ, որոնց գործունեության արդյունքում հայ աշխարհայացքը շրջադարձ կատարեց կղերականից դեպի իրականություն, աշխարհականացվեցին մտավոր գործունեության բոլոր բնագավառները՝ լեզուն, դպրոցը, գրականությունը, հրապարակախոսությունը և այլն: Ազգային զարթոնքի վերելքի պայմաններում լուսավորվում ու ինքնաճանաչ է դառնում հայ ժողովուրդը, որի արդյունքում ուշ միջնադարյան անդեմ զանգվածից աստիճանաբար ձևավորվում է հայ քաղաքական ազգը: Ձևավորվող հայ ազգի ազգային գաղափարախոսության ակունքների որոնումները, դարաշրջանի կենտրոնում կանգնած հայ դասական գրականության ու հրապարակախոսության տաղանդավոր հիմնադիրները՝ Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Ղ. Ալիշանը, Ռ. Պատկանյանը, Ս. Նազարյանցը, Գ. Արծրունին, Րաֆֆին, սկսեցին հայ ժողովրդի արարչական ծագման և սրբագործված հայրենիքի խամրած գաղափարների բացահայտման ու կյանքի կոչման, ազգային ինքնության բացահայտման, ազգային միասնության և ազգային-ազատագրական պայքարի գաղափարների մշակումներից:

Հայ ժողովրդի արարչական ծագման և սրբագործված հայրենիքի գաղափարայնացումը

Ինչպես արդեն նշել ենք, մինչև XIX դարը տիրապետում էր այն տեսակետը, ըստ որի՝ Հայաստանը եղել է մարդկության նախահայրենիքը, իսկ հայ ժողովուրդը՝ աշխարհի ամենահին ժո-

ղովուրդը, հայերենը՝ մարդկության նախամայր լեզուն¹²²: XIX դարում այս ավանդական տեսակետը հայտարարվեց հիմնադուրկ: Ժողովուրդների և նրանց լեզուների ծագման ու ցեղակցության մասին առաջ եկավ մի նոր տեսություն, որը կոչվեց պատմահամեմատական: Բազմաթիվ լեզուներ համեմատելով իրար հետ՝ այս տեսության հիմնադիրները նկատեցին, որ Հնդկաստանի արևելյան ծայրից մինչև Իսլանդիա ապրող մի շարք ժողովուրդների լեզուների բառապաշարի, հնչյունաբանության և քերականական ձևերի միջև գոյություն ունեն որոշակի կապեր, որոնց հիման վրա էլ առաջադրվեց նրանց ծագման ընդհանրության գաղափարը: Այդ ընդհանուր աղբյուր հանդիսացող լեզուն նրանք կոչեցին նախալեզու, որով խոսել է հնդեվրոպական նախացեղը¹²³: 1837 թ. Հ. Պետերմանը հիմնավորեց, որ հայերենը նույնպես հնդեվրոպական լեզու է¹²⁴: Այնուհետև սկսվեցին հնդեվրոպական նախացեղի նախահայրենիքի որոնումները: Որոշ ուսումնասիրողներ այն համարեցին Հնդկաստանը, մյուսները՝ Բալթիկ ծովի ափերը կամ ուղղակի Եվրոպան: Վերջին տեսակետը ընդունելի համարվելուց հետո սկսվեցին Եվրոպայից աշխարհի տարբեր վայրերը տարածվող հնդեվրոպացիների կարծեցյալ արտագաղթի ժամանակի և ուղիների որոնումները: Հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը հաստատվելուց հետո սկսեցին պարզել, թե ովքեր են եղել հայերի հնդեվրոպա-

¹²² Տե՛ս **Մ. Սեբաստացի**, Քերականութին գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730: Մ. Չամչյան, Պամութին հայոց, Վենետիկ, 1784, հ. Ա, էջ 153-164:

¹²³ Տե՛ս **F. Borr**, Vergleichende Grammatik des Sanskrit. Zend Armenischen, Griechischen, Latenischen, Altslavishcen, Gotischen und Deutschen, 3 Ausg. Bd. 1-3, B-P, 1861-71:

¹²⁴ Տե՛ս **H. Petermann**, Grammatica linguarum armeniacarum, B., 1837:

կան նախնիները և երբ են Բալկաններից հաստատվել Հայկական լեռնաշխարհում¹²⁵:

Հնդեվրոպական լեզվաընտանիքի նախահայրենիքը Բալկանները համարող տեսություններին զուգընթաց ծնունդ է առել նաև այն տեսությունը, ըստ որի՝ հնդեվրոպացիների նախահայրենիքը ոչ թե Բալկաններն են եղել, այլ Հայկական բարձրավանդակը՝ կից տարածքներով: Առաջինը Բ. Պատկանյանն էր, որ հիմնավորեց՝ հայերը տեղաբնիկ են, և այստեղ են ծնունդ առել հնդեվրոպական մայր լեզվի կրողներն ու այստեղից տարածվել իրենց ժամանակակից հայրենիքներում¹²⁶: Հետագայում այս տեսակետը հիմնավորեցին ու ամբողջացրին տարբեր երկրների անվանի լեզվաբաններ ու պատմաբաններ¹²⁷:

Փորձառու լեզվաբաններից ու պատմաբաններից բացի՝ XIX դարի հայ լուսավորիչներն ու գրողները ևս վերակենդանացրին ու կյանքի կոչեցին նախնադարյան առասպելներով ամրագրված հայ ժողովրդի արարչական ծագման ու դրախտի վերածված հայրենիքի գաղափարաբանությունը: Այդ մեծ գործին նվիրվեցին հայ ժողովրդի զարթոնքի շրջադարձային պատմաշրջանում ապրած գործիչները, որոնց ջանքերով հարթվեցին հայ ժողովրդին հին ու մշակութաստեղծ ազգերի շարքերը վերադարձնող մայրուղիները: Նրանք հոգևոր ուխտագնացություն կատարեցին դեպի հայրենիք և իրենց բանաստեղծությամբ ու վիպասանությամբ հնչեցրին հայրենասիրության, նվիրումի և ազգային արժանապատվության խրոխտ երգեր:

¹²⁵ Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 22, Հ. Ժամկոչյան և ուրիշներ, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1963, էջ 103:

¹²⁶ **Патканян К.**, Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб., 1881, էջ 33:

¹²⁷ Տե՛ս **Ռ. Իշխանյան**, Համեմատական լեզվաբանության նոր հայտնագործումները և հայերի ծագման ու հնագույն պատմության հարցերը, «Բանբեր համալսարանի», 1979, թիվ 2, էջ 98:

Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը դարձավ հայոց ազգային զարթոնքի առաջին ղողանջը և ազգային համախմբման ու ազատագրական պայքարի քաղաքական ծրագիրը: Վեպի բուն տարերքը, թեման ու աշխարհը XIX դարի առաջին երեսնամյակի հայկական իրականությունն է, որում ասպարեզ մտավ ազգային նոր հերոսի՝ Աղասու ոգին:

Աբովյանն իր վեպով հայտնագործեց հայ ժողովրդին՝ իբրև առասպելական-տիեզերական ազգի. «Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս, թե ինչ աշխարհի ծնունդ եմ ես. դրախտը մտքումս էր կենդանի, որ ինձ,... միշտ մեր երկրի անունն ու պատվականությունը իմ առաջս էր բերում. Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրենց որդին եմ: ...Հայկա զավակն եմ ես, Նոյան թոռը, Էջմիածնա որդին, Դրախտի բնակիչը»¹²⁸:

Այն հայրենիքը, որը Աբովյանի ժամանակ դարձել էր գողերի ու ավազակների պատսպարան, փաստորեն՝ այն աշխարհն է, որտեղ. «...որ դրախտն էր Եդեմական, ուր որ Աստված, բոլոր աշխարհը ջրհեղեղովը երբ որ կործանեց, հայոց սուրբ Մասսա սարը միայն արժան տեսավ, որ Նոյան տապանը նստի, ու հայոց երկրիցը էլ ետ մարդիկ բազմացան, ու ուրիշ երկրներն էլ շինություն քցեցին»¹²⁹:

Աբովյանը տաղանդավոր գիտնականի հմտությամբ բացահայտեց նաև պատմական Հայաստանի ռազմավարական դիրքի կարևորությունը: Նա քաջ գիտակցում էր, որ պատմական Հայաստանը միշտ էլ բնական կամուրջի դեր է կատարել Արևելքի ու Արևմուտքի միջև: Այն մի բնական միջնաբերդ էր Մերձավոր Արևելքում: Ոչ մի նվաճող չէր կարող հաստատվել Միջագետ-

¹²⁸ Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1981, էջ 42:

¹²⁹ Նույն տեղում, էջ 113-114:

քում, Պարսից ծոցում, Ասորիքում, Փոքր Ասիայում առանց Հայկական լեռնաշխարհում նախապես ամրանալու: «Սուրբ հայոց ազգը,– գրում է մեծ վիպասանը,– անհաղթելի Հայկա որդիքը, իրենց կյանքը, թագավորությունը, մեծությունը, փառքը, իշխանությունը, զորքը կորցնելուց հետո, որ տեսան էս գազան ազգերին, որը մեկը մյուսի ոտիցը ճուղլակ՝ ուր որ կամենում էին գնալ, Եվրոպա թե Ասիա, հայոց հողովը պետք է անց էին կացել, չեն կարող դիմանալ, աչքները երկինք գցեցին, գլուխները գոգները դրին ու հազար թրի տակից, հազար կրակի միջից՝ սիրտ-սրտի տված, հոգի-հոգու կացրած մինչև էսօր էլ իրենց գլուխը իրենց սուրբ հավատը էն վեհանձնությունովը պահպանեցին, որի օրինակը աշխարհում ոչ էլել ա, ոչ կլինի»¹³⁰:

Բազում աղետներ տեսած հայ ժողովուրդը դիմակայեց և գոյատևեց, երբ նման իրավիճակում հայտնված բազմաթիվ ժողովուրդներ ձուլվեցին նվաճողներին ու բնաջնջվեցին: Եվ Աբովյանը հավատում է ու հավատ ներշնչում ընթերցողին, որ հայ ազգը ոչ միայն կդիմակայի այլև կազատագրվի:

Անդրադառնալով պատմական հայրենիքի հիմնախնդրին՝ դեռևս 1849 թվականին «Բազմավեպում» հրատարակած «Ազգասիրություն» հոդվածում Ղ. Ալիշանը ազգի գրեթե ժամանակակից սահմանումն է տալիս՝ գաղափարայնացնելով ցեղի ու հայրենիքի տեղն ու դերը ազգային գաղափարախոսության համակարգում: «...Ազգն է միություն այնքան մարդկանց, որ մեկ նահապետե մը առաջ եկած են, մեկ հայրենի լեզու ունին, նման բնավորություն ունին և շատ հեղ նույն կրոնքը, նույն օրենք, նույն վիճակ: Ասոնց պարտքն է, որ սիրեն մեկգմեկ, կամ բոլոր զանոնք, որ ազգ բառով կիմացվին. այս է ազգասիրությունը: ...Սուտ է այն փիլիսոփան, որ ազգասիրությունը մարդասիրու-

¹³⁰ Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, էջ 114:

թյան դեմ կկարծե, որ հայրենիքը հերձված կսեպե երկրես, և կսե. բոլոր երկիրս ալ հայրենիք է լավ մարդու, ինչպես թռչունին՝ բոլոր երկինքն և ձկան՝ բոլոր ծովը: Այսպիսին չէ վերուցած մեկ մը աչքը տեսնելու թռչունը, ու թեպետ բոլոր երկինքը կթափառի, սակայն ունի բունիկ մը, ուր իր ամենեն սիրելի բաները կդնե, ուսկից չկրնար բաժանվիլ...: Կետն ալ, որ ահագին օվկիանոսին ալիքը կեռացնե, ծովեզերք մը խորունկ փոս մը ունի, ու միայն կգտնե իր երջանկության նավահանգիստը»¹³¹:

Ղևոնդ Ալիշանի հայրենասիրական ստեղծագործություններում նույնպես ամրագրվում է այն գաղափարը, որ երկրագնդի առաջին մարդիկ՝ Ադամն ու Եվան, հայեր են եղել, որ հայ ազգը ամենակատարյալ ազգն է, Հայաստանը՝ մարդկության առաջին բնօրրանը՝ երկիր դրախտավայրը¹³²:

«Մեր տերն ի երկնուց ծայրեն երբ իջավ
Երկրիս հիման քարն յԱյրարատ դրավ.
Այն մեր Մասիսու երկնածև սարեն
Աչեց ըզբոլոր՝ վերացավ նորեն»¹³³:

Ազգի էթնիկական ակունքների որոնման ասպարեզում Ալիշանը կարևորում է ժողովրդական ստեղծագործությունների սկզբնավորման տեղի ու միջավայրի գործոնը՝ որպես ազգային ոգու արտացոլման հզոր միջոց:

«Հայ ժողովրդական երգեր» գրքի առաջաբանում Ալիշանը նշում է, որ ազգային վիպերգությունը սկիզբ է առել վաղնջական ժամանակներից և առանձնահատուկ տեղ է գրավում աշխարհի համանման ստեղծագործությունների մեջ: Նրանցում արտացոլ-

¹³¹ Ղ. Ալիշան, Երկեր, Երևան, 1981, էջ 177:

¹³² Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1962, էջ 497:

¹³³ Ղ. Ալիշան, Երկեր, էջ 17:

վել են Հայկական լեռնաշխարհի բնիկների պայքարն ու մաքառումները:

«Թե որ սա աշխարհքն է ամենայն աշխարհի մայր և դայակ, – գրում է Ալիշանը, – թեպետ չեմք կրնար ըսել թե ամեն բանի ալ ինքն է օրինակ տվողը, բայց չեմք սխալիր ըսելու՝ որ առաջին երգերը Հայոց լեռներուն արծագանքներով ձևացան»¹³⁴:

Ալիշանը ցեղի ու հայրենիքի միասնության ու ներդաշնակ փոխալյամանավորվածության մասին Ռաֆայելյան վարժարանում արտասանած ճառում հիշատակելով մի իմաստունի խոսք՝ «ուր չիք հայրենիք՝ չեն ազգ և քաղաքացիք»՝ ավելացնում է՝ «ուր քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիք»¹³⁵: Քաղաքացիական հասարակությունը միայն կարող է հայրենիք կերտել, իսկ հայրենիքը՝ քաղաքացիական հասարակություն:

Հայի ու նրա հայրենիքի փոխադարձ կապի ու հայրենասիրության դասական օրինակ է Ռ. Պատկանյանի «Հայ և հայություն» բանաստեղծությունը:

Այն հարցին, թե ով է հայը, բանաստեղծը պատասխանում է՝ հայը նա է, որ ճանաչում և հարգում է իր ազգությունը և անսահմանորեն նվիրված է իր հայրենիքին: Միայն հայերեն խոսելը, ազգանվան «յան» մասնիկի առկայությունը, հայոց եկեղեցուն դավանելը, հայկական տարազ կրելը, ազգային ճաշատեսակներից օգտվելը դեռևս բավարար չեն հայ լինելու համար: Ազգային արժեքների մեջ կարևորվում են ազգային ինքնությունը, հայրենասիրությունը, նվիրվածությունը:

«Թե դու հայ ես, գիտե՞ս արդյոք՝ ով էր ազգիդ նախահայր, Որտե՞ղ, որ կողմ նա ընտրել էր ազգիս համար հայ աշխարհ:

¹³⁴ Ղ. Ալիշան, «Յուշիկ», հ. 2, «Ազգային վիպասանություն», էջ 105:

¹³⁵ «Բազմավեպ», 1845, թիվ 22, էջ 343:

Քանի տարի անկախ մընաց հայը օտար ազգերից,

Ի՞նչ էր պատճառ, որ նա ընկավ իր առաջվա փառքերից»¹³⁶:

Պատկանյանի գեղարվեստական ամենաազդեցիկ հնա-
րանքներից մեկը հայրենիքը և նրա սրբազան վայրերը սեփա-
կան հույզերի և խոհերի կենդանի հայելի դարձնելն է¹³⁷: Այս առու-
մով դասական ստեղծագործությունը «Արաքսի արտասուքը»
բանաստեղծությունն է, որում խոր ցավով պատմվում է հայ ժո-
ղովրդի քաղաքական ծանր ճակատագրի, նրա անցյալի և ներ-
կայի մասին: Արաքսի ափերով մտամոլոր քայլող բանաստեղծի
այն հարցին, թե Արաքսը ինչու սգավորի պես տխուր է, մայր
հայրենիքի խորհրդանիշ դարձած մայր Արաքսը պատասխա-
նում է. ե՞րբ ես տեսել, որ սիրելի մահից հետո նրա այրին
պճնվի, ո՞ւմ համար զարդարվի, իր ափին այժմ ապրողներն ու
տիրողները իր համար ատելի են և օտար: Ո՞ւմ համար զարդա-
րի իր հյուրընկալ ափերը, ինչո՞ւ հրապուրի իր ափի ապրողների
ճպոռտ աչքերը¹³⁸: «Արաքսի արտասուքը» հայրենիքի ու հայրե-
նասիրության թեմայով գրված ու գաղափարայնացված ամե-
նատպավորիչ ստեղծագործությունն է մեզանում:

Ազգային բյուրեղացման շրջադարձային այս պատմաշրջա-
նում հալածական հայի ու նրա ավերված հայրենիքի ծանր վի-
ճակի, հայրենիքի համար տառապող որդու կերպարի, նրա
մղած անօրինակ պայքարի ամենադրամատիկ թեման ասպա-
րեզ է բերել Րաֆֆին: «Սամվել» վեպի «Արարատյան դաշտի ա-
ռավոտը» հատվածում նախ ներկայացնում է հայրենիքի հմայքը,
այնուհետև՝ իր հերոսի՝ Սամվելի հետ շրջում ու նկարագրում է
դավաճան հայի ձեռքով հրդեհած կրակների մեջ ողջակիզվող

¹³⁶ Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1955, էջ 65:

¹³⁷ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1962, էջ 249:

¹³⁸ Տե՛ս Ռ. Պատկանյան, Երկեր, էջ 71:

սեփական ժողովրդին. «Ծխում էր Դվինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր Վաղարշապատը, ծխում էր Էջմիածնի վանքը...: Եվ թանձր ծուխը նսեմացնում էր Արարատյան դաշտի լուսապայծառ գեղեցկությունը ..., ամենուրեք տիրում էր տխուր, անապատական դատարկություն: ...Կարծես թե մի մահաբեր շունչ անցել էր այդ սքանչելի դաշտի վրայով»¹³⁹:

Մերութան Արծրունու և Վահան Մամիկոնյանի՝ իր մորեղբոր և հոր գլխավորությամբ ավերված ու ամայացված ճանապարհով Սամվելն անցնում է իր հայրենակից այն թշվառ գերիների կողքով, որոնք մի ժամանակ այդ աշխարհի երջանիկ տերերն էին: Ու երբ հանդիպում են հայրենասեր որդին ու հայրենադավ հայրը՝ Վահանը, որդին հորից հաշիվ է պահանջում, այս բոլոր չարագործությունների համար. հայրը սառնասրտորեն պատասխանում է. «Մեծ գործերը մեծ զոհեր են պահանջում»¹⁴⁰: «Ոչնչացնել հայրենի աշխարհը, ոչնչացնել հայրենի կրոնը, եկեղեցին և Հայաստանի ավերակների վրա հիմնել մի պարսկական թագավորություն, ահա այս է այն գործը, որ դու, հայր, մեծ ես կոչում»: Հայրենասեր որդու և հայրենադավ հոր ընդհարումը հանգեցնում է աննախադեպ լուծման՝ որդու կողմից հոր սպանությամբ: Իսկ երբ Սամվելի և ուրացող մոր հակամարտությունն է ավարտվում մոր սպանությամբ. բազմության միջից լսվում են ուրախաձայն աղաղակներ՝ արժանի է¹⁴¹, աղաղակներ, որոնցով ամենադրամատիկ այս հանգուցալուծումները հայ հասարակությունն ընդունում է որպես արդար պատիժ հայրենիքի և սեփական ժողովրդի դեմ անարդարացիորեն պայքարի ելած դավաճան հարազատների նկատմամբ:

¹³⁹ **Րաֆֆի**, Երկեր, հ. 7, Երևան, 1963, էջ 419:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 485:

¹⁴¹ **Խ. Աբովյան**, Վերք Հայաստանի, էջ 537:

Ազգային ինքնության գաղափարայնացումը

Ազգային ինքնությունը ենթադրում է էթնիկական մտածողության ինքնատիպություն, էթնիկ արժեքների ինքնաճանաչում: Նրա բովանդակությունը ազգային կեցության, ազգային անցյալի, անհատի ազգային ըմբռնումների ամբողջությունն է:

Հայտնի է, որ XIX դարի առաջին կեսին շատ դանդաղ էին ընթանում հայ ժողովրդի ինքնահամախմբման ու ազգային ինքնության-ինքնաճանաչման գործընթացները: Դրա գլխավոր պատճառը Խ. Աբովյանը համարում էր համազգային անգրագիտությունն ու տգիտությունը, կրթված մտավորականների, հասարակական գործիչների ու առաջնորդների բացակայությունը. «Ախր մեր ազգը, որ խեղճ ա մնացել,– «Վերքի» մի անանուն գեղջուկի բերանով հնչեցնում է հեղինակը,– թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա, որ մեզ մեկ ասող չի ըլում, թե մենք ով ենք, մեր հավատն ինչ ա, ընչի համար ենք էկել աշխարհ...»¹⁴²:

Ազգային ոգու և ինքնության՝ բարոյական այդ արժեքների նորովի բացահայտող Խ. Աբովյանի քաղաքական մտահոգությունները սկսվեցին Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու համար ծավալված ռուս-պարսկական պատերազմին զուգընթաց: «Վերք Հայաստանին» կոչված էր նախապատրաստելու հայ ընթերցողին ապրելու նոր կարգավիճակով ու համազգային շահերով:

Աբովյանը նաև հայտնագործել է Հայաստանի բնության ու հայ մարդու ճակատագրի ու տեսակի սերտ կապն ու բազում առնչությունները: Հայաստանի բնական հուշարձաններն ու Գուգարաց աշխարհի լեռներում ու ձորերում ծվարած կոթողները նա ներկայացնում է իբրև կենդանի դասագիրք ու ազգային

¹⁴² Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, էջ 16:

պատմություն: Հայաստանի ամեն քար, ըստ Աբովյանի, հայի համար պատմություն է: Ամեն բերդ ու եկեղեցի՝ կենդանի վարժապետ ու վարժատուն: Այս բարձունքներից են հայերն իրենց աշխարհին նայել, զմայլվել Նոյի տապանով, Լուսավորչի կանթեղով, Գեղարդավանքով ու Խոր վիրապով: Այսպես է ձևավորվել հայն իբրև տիեզերական ժողովուրդ՝ ստեղծելով էթնիկական ինքնության իր առասպելաբանությունը¹⁴³:

Խ. Աբովյանի գրական ժառանգության մեջ զգալի տեղ է գրավում հայ ժողովրդի հոգևոր կերտվածքի մասին օտարների հայտնած կարծիքների շարադրանքը, որոնցում ի հայտ են բերվում հայության ինքնության բնութագրումները, հրապարակ հանվում ազգային արժանապատվության մասին օտարների ըմբռնումները, որոնք վստահություն են ներշնչում ընթերցողներին: Այս տեսանկյունից ուշագրավ է հատկապես Երևանի սարդարի հետևյալ բնութագրումները. «Հայ ազգը ոչ թրից ա վախենում, ոչ թվանքից, ոչ թոփից: Կրակն ես քցում, էլի իր հավատն ա պաշտում. ծառին ես կախ անում, միսը պոկում բերանը տալիս, էլի իր խաչն ա պաշտում, իր Քրիստոսի անունը տալիս: Էս մեկ կտոր փետն ինչ ա ախր, որ սրանք էսպես ապավինել են. որդին ես քաշում, ինքն ա հետը կրակն ընկնում. հորն ես բռնում, որդին ա գլուխը մահի տալիս: ...ցամաք հացի կարոտ, մենք սրանց խանություն, բեկություն, աշխարք, պատիվ, դուլլաթ, մեծություն ենք տալիս, ախր ինչի համար չեն խեղճ գալիս, մեր մասսաբին, օրենքին հավանում, մեր հավատը ընդունում, պաշտում: Բոլորը ջնջես՝ աշխարհքը կքանդվի, չունքի երկիր շենացնողը, հաց տվողը սրանք են: ...Որ մեկի մագին դիպչում ես, ասլան ա դառնում, մարդի պատռում: ...Մեր փեղամբար Մահ-

¹⁴³ Տե՛ս Հայ քննադատության պատմություն, հ. 1, Երևան, 1985, էջ 85:

մաղն ասում ա՝ թշնամուդ աչքը հանիր. սրանց Քրիստոսը հրամայում, որ նրան սիրես, քո աչքը հանես նրան տաս»¹⁴⁴:

Թեև հայ ժողովուրդը հայտնվել էր մի իրավիճակում, որ թշնամիները «...աղջիկն ասես՝ քաշում են, տղեն ասես՝ տանում են, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում», այնուամենայնիվ Աբովյանը ընթերցողներին հավատացնում է, որ հայ ազգը այդ պայմաններում էլ մաքուր է պահել իր գեները: Ինքը նահատակվել, բայց իր կաթն ու արյունը ուրիշի հետ չի խառնել: «Սաղ Եվրոպա չկարաց դիմանալ հոնաց առաջին, գազան Աթիլայի թրին դիմանալ, Չինգիզ խանն ու Լանք Թամուրը հո՛ շատ ազգերի հոտը կտրեցին, արաբացիք կայծակի պես շատ աշխարհի գլուխ ջախփուրթ արին. թե հայք քաջ չէին, ինչպես դիմացան, ինչպես մինչև էսօր իրանց գլուխը պահեցին»¹⁴⁵:

Աբովյանի հենց այս հարցադրման ոգով էլ Ղ. Ալիշանը փորձում է բացատրել հայոց ինքնության ոգեղենությունն ու կենսունակությունը: Յուրաքանչյուր ազգի տեղը և դերը ազգերի մեծ ընտանիքում որոշելու համար նախ պետք է ճանաչել նրան, իսկ ճանաչելու լավագույն միջոցը ազգերի ձեռքբերումների համեմատությունն է: «... Թե որ բնական անկարող անհաջող ազգ մը սեպվելու համար է այս անարգությունը... այս բանիս դեմ մեր վկայութենեն ավելի ճշմարիտ և ազդու է օտարաց վկայությունը, որ զհայոց ազգը շատ արևելյան ազգերե վեր կդնեն, ...մեր ազգին պատմությունն և ինչվան հիմա աս վիճակիս մեջ մնալն ալ կցուցնեն, որ մտավոր ուժ ունեցող ազգ մը եղած պիտի ըլլա, որ այսչափ դիմացեր է: Թե որ հին ազնվականություն չունինք կըսեն, բանան սրբազան և արտաքին պատմությանց առաջի

¹⁴⁴ Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, էջ 219:

¹⁴⁵ Խ. Աբովյան, Երկեր, հ. 4, էջ 97-114:

թղթերն, և կտեսնեն, որ մեր ազգին պես փառավոր ծագումն ոչ ոք ունեցեր է և կրնա հավիտյան ունենալ¹⁴⁶:

Ռ. Պատկանյանի կարծիքով «հայ ազգությունը արթեն զարթնել էր, թեև անկողնուց տակավին չէր վերկացել»¹⁴⁷: Հայը արդեն գիտակցում էր, որ ինքը կայացող ազգ է, բայց թե որն է նրա ազգային ինքնությունը, ինչ է նրա կոչումը, որն է ազգային ծրագիրը, ինչ դրոշի տակ նա պետք է համախմբվի, դեռևս հայտնի չեն. նույնիսկ այդ հարցերը ո՛չ տվել է իրեն, ո՛չ էլ ստացել դրանց պատասխանները¹⁴⁸:

Քանի որ այս հարցերի պատասխանները կարող են գտնել կրթված ազգերը, դրա համար էլ Պատկանյանը լուրջ կարևորություն է տալիս ազգային կրթությանն ու լուսավորության խնդիրներին: Սակայն նա սկզբունքորեն դեմ է եվրոպական, քաղքեմիականությանը, որը այլասերում էր թեթևամիտ երիտասարդությանը և վնասում զարթոնք ապրող ազգի բարոյական անաղարտությանը: «Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ» և «Մայրաքաղաքում կրթած հայ աղջիկ» բանաստեղծություններում Պատկանյանը կերտում է օտարամոլ հայի ապազգային ու անդեմ կերպարը:

«Տեղը եկավ՝ հայ է նա, տեղը եկավ այլազգի,

հորք ո՛չ այդ և ո՛չ այն է, այլ ծնունդ մի նոր ազգի»...¹⁴⁹:

Ազգային ինքնության բացահայտման գործում Րաֆֆին մեծ տեղ էր տալիս ժողովուրդների պատմության ուսուցողական օրինակների բացահայտմանը: «Պատմությունը,– գրում է մեծ պատմավիպասանը,– մի վարդապետարան է, մի դասարան է, որի մեջ ապազգայի սերունդը կրթվում է՝ զգուշանալով նախորդների

¹⁴⁶ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 175:

¹⁴⁷ Ռ. Պատկանյան, Երկեր, հ. 5, էջ 72:

¹⁴⁸ Ռ. Պատկանյան, Երկեր, հ. 3, էջ 232:

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 135:

սխալներից և հետևում նրանց լավ գործերի օրինակին»։ ... Բանաստեղծը ստեղծում է ժողովրդի համար իդեալներ, բարձր համամարդկային իդեալներ։ Եթե ներկայի մեջ չի գտնում իր իդեալների տիպարները, նա մտնում է պատմության խորքերը և ժամանակների հնությունից դուրս է կոչում իր ցանկացած հերոսներին և ցանկալի իրականությունը։ Թուրք-պարսկական ծանր լծի տակ հեծող Հայաստանի մի հատվածի՝ Ղարաբաղի մելիքությունների ձեռք բերած ինքնիշխանության արժևորման մասին խոսելիս Րաֆֆին հատուկ նպատակով ներկայացնում է կենցաղային այն անհոգ ու ապահով իրավիճակը, որ տիրում էր արյան գնով ազատագրված Ղարաբաղում։ «Երկրում այնպիսի ապահովություն էր տիրում,– գրում է Րաֆֆին, «Խամսայի մելիքությունները» ստեղծագործությունում,– որ դեռահաս աղջիկները, այգիների ծառերի տակ նստած, կար էին կարում, մնում էին այնտեղ, միջև մութը պատում էր, հարսները զուգված-զարդարված դուրս էին գալիս տներից և աներկյուղ զբոսնում էին լեռների վրա՝ բոլորովին չմտածելով թե թուրքը կամ պարսիկը կգա, կհափշտակե և կտանե նրանց։ Երբ թշնամին հայտնվում էր, երկրի երիտասարդները զենքը ձեռքներում միշտ պատրաստ էին նրան հետապնդելու համար»¹⁵⁰։

Կուլտուր-լուսավորական այլ հաստատությունների բացակայությունը XIX դարի երկրորդ կեսին հայ մամուլի վրա էր դրել ազգի մտավոր գործունեության՝ գրականության, հրապարակախոսության, հանրային մտքի և ազգային ինքնության բացահայտման ողջ պատասխանատվությունը։ Ազգային չլուծված բազում հարցերը լարում էին հայ մտավոր կյանքը։ Կազմակերպում էին ընկերություններ, միություններ, կազմակերպություններ,

¹⁵⁰ **Րաֆֆի**, Երկեր, հ. 9, Երևան, 1987, էջ 450։

հիմնադրվում թերթեր, հանդեսներ, ամսագրեր, որոնց թիվը հասնում էր 114-ի¹⁵¹:

Արևելահայ մամուլի պատմության համար առանձնահատուկ դեր էին խաղում «Հյուսիսափայլը» և «Մշակը»: Հայոց ազգային ինքնության բացահայտման գործում առանձնանում են Ս. Նազարյանի «Հայերի կոչումը մարդկության մեջ» և Գ. Արծրունու «Հայերի կոչումը Ասիայում» հոդվածները:

Հայ ժողովրդի փրկության հույսը կապելով Առաջավոր Ասիայի բարբարոս ժողովուրդներին քաղաքակրթելու հետ՝ Նազարյանը վերոհիշյալ հոդվածում հայերի կոչումը համարում է Ասիայի ժողովուրդներին լուսավորելու միջնորդի դերը: Նա համոզված էր, որ հայ ազգը հեշտությամբ կարող է յուրացնել եվրոպական լուսավորությունը և տարածել հետամնաց Ասիայի ժողովուրդների մեջ: Փրկելով նրանց տգիտությունից՝ ինքն էլ կփրկվի բնաջնջումից:

Հայերին համարելով Ասիայի եվրոպացիներ՝ Արծրունին հայ առևտրաարդյունաբերական բուրժուազիայի տնտեսական հզորությունը բացատրում էր հնդեվրոպական ժողովուրդների հետ հայերի ցեղակցության հանրահայտ փաստով:

Ազգային լեզուների շուրջ ծավալված պատմահամեմատական լեզվաբանության փաստարկները Արծրունին ծառայեցրեց հայ ժողովրդի քաղաքակրթական ինքնությունը հիմնավորելու համար և Արևելյան խնդիրն ու նրա հետ կապված հայկական հարցը համարեց ոչ միայն քրիստոնեության ու մահմեդականության խնդիր, այլև քաղաքակրթությունների խնդիր, քաղաքակրթական ցեղերի՝ բարբարոսների դեմ պայքարի խնդիր¹⁵²:

¹⁵¹ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, էջ 28:

¹⁵² Տե՛ս «Մշակ», 1877, թիվ 56: Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, էջ 124:

Ազգային ինքնահամախմբման գաղափարայնացումը

Ինքնահամախմբման բնատուր ընդունակությունից է կախված յուրաքանչյուր ազգի կենսունակությունը: Թեև ազգը մարդկային հանրության առավել ամուր ու ամբողջական կառույցն է, այնուամենայնիվ ազգի ներքին տրոհվածությունն առանձին դասակարգերի ու սոցիալական խմբերի դժվարացնում է ազգի լիակատար համախմբումը: Այդ բոլորին եթե ավելացնենք հայ ազգի բացառիկ տրոհվածությունը տարբեր տերությունների, համադաշնությունների, քաղաքակրթությունների և տարբեր աշխարհամասերում գտնվող գաղթավայրերի միջև, կհամոզվենք, թե ազգային միասնության ապահովումը որքան դժվարին է մեզ համար, բայց և որքան անհրաժեշտ: Ինքնահամախմբման կարողությունն ու բարոյական ուժն է գոտեպնդում փոքրաթիվ ժողովուրդներին գոյապահպանության համար մղված պայքարում:

Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» կոչված էր հայ ընթերցողի մեջ սերմանել նաև ազգային միասնության գաղափարաբանությունը, «Հարիր հազարի» ինքնահամախմբման գաղափարը: Անդրադառնալով վիպասանի այս մտայնությանը՝ Մ. Նալբանդյանը նկատում է. «Նա ցույց է տալիս մեր ազգի ընդհանուրի վիատյալ և հուսահատ դրությունից հառաչացած սառնությունը դեպի Աղասու ընկերքը, նոցա կիսասիրտ կանացի ցավակցությունը այս կտրիճին, որով հասկացնում է Աբովյանը, թե Աղասու ընկերների հոգին ընդհանրական չէ...»¹⁵³:

Ազգային ինքնահամախմբման ու ազատասիրության պալասի գիտական ու ամբողջական բացատրությանն անդրադարձել է նաև Ղ. Ալիշանն իր 1849 թ. «Բազմավեպում» հրատարակված «Ազգասիրություն» վերոհիշյալ հոդվածում: Մեծ հայագե-

¹⁵³ Մ. Նալբանդյան, Երկեր, հ. 1, էջ 312:

տին մտահոգում է հայ ժողովրդի անմիաբանության և ազգասիրության պակասը: Նա հայրենասիրական մեծ զգացումով ու հմտությամբ է որոնում պատասխանն այն հարցի, թե ինչու է մեր ազգի մեջ պակասել առաքինությունը, և ի հայտ է բերում ութ պատճառ. «Ասոր առաջին պատճառն էր ազգասիրության ինչ ըլլալը չգիտնալն...: Այս չճանաչելու պատճառն ալ տգիտություննն կուգա: ...Լավ դաստիարակությունը կիմացնե մարդուս, որ ինքը միայն իրեն համար չէ երկրիս վրա. ավելի մեծ ընտանիք մ'ալ ունի, որ է ազգը»¹⁵⁴:

Երկրորդ պատճառը Ալիշանը համարում է ընդհանուր համազգային վիատությունն ու հուսահատությունը, և հատկապես, այդ հուսահատ վիճակի սխալ ընկալումը: Ազգը ծանր վիճակի մեջ տեսնելով՝ ոմանք կարծում են, թե դա հայի մեղքի՝ անտարբերության և թույլ տված սխալների հետևանքն է, «կամ թե մեր բախտին անիվը՝ միայն մենք խորտակել ենք մեր ձեռքով, առանց արտաքին բռնության...»¹⁵⁵:

Ազգային տրոհվածության երրորդ պատճառը համարում է հայերի ցրված լինելը տարբեր երկրների միջև: Կտրված լինելով հայրենիքից, ցրված աշխարհով մեկ՝ հայը չի զգում ու չի ապրում իր հայրենիքով: Այսուհանդերձ, հեռուներում օտարության մեջ ապրողների համար «հայրենյաց հիշատակն ավելի զորավոր է, քան զօտար երկրին ներկայությունը»¹⁵⁶:

Չորրորդ պատճառը հիշողության թուլացումն է: Հյուրընկալող երկրների քարերը, լեռները, գետերը այնտեղ ապրող հայերին չեն հիշեցնում իրենց հայրենիքը, պատմությունը, սովորությունները և այլն: Հատկապես ընդգծում է մայրենի լեզվի իմացու-

¹⁵⁴ Ղ. Ալիշան, Երկեր, էջ 183:

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 183:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 184:

թյան համազգային կարևորությունը: Ալիշանի համոզմամբ լեզուն կորցնելուց հետո կորչում է նաև ազգի հոգեկերտվածքը:

Ազգային անմիաբանության հաջորդ պատճառը համարում է հայրենիքի կորուսյալ վիճակը, օտարի լծի տակ գտնվելը, այն էլ՝ տարբեր երկրների բաժանված վիճակում:

Հայ ժողովրդի անմիաբանության հաջորդ և անհեթեթության հասնող պատճառը Ալիշանը համարում է կրոնական երկատվածությունը, որը հայ ժողովրդի համար դարձել է դարավոր չարիք: Լինելով կաթոլիկ եկեղեցու հետևորդ՝ Ալիշանը, այնուամենայնիվ, դավանաբանական խնդրին մոտենում է զուտ ազգային շահերի ու միասնության դիրքերից:

Ազգային անմիաբանության վերջին պատճառը համարում է տիրապետող այն մտայնությունը, թե ոչ բոլորը կարող են նպաստել ազգային ինքնահամախմբման գործին: Այս անտրամաբանական պատրանքը հերքելու համար Ալիշանը առաջադրում է. «Ճշմարիտ ազգասեր ըլալու համար պետք է լավ մարդ ըլալ»¹⁵⁷:

Անդրադառնալով ազգային միասնության հիմնախնդրին «Ինչ կապ կա մեր և տաճկահայաստանի հայերի մեջ» հոդվածում՝ Րաֆֆին արևելահայության և արևմտահայության մերձեցման սահմանագիծը համարում էր 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը՝ նշելով, որ մինչ այդ հայության այդ երկու հատվածները անջրպետված էին և գրեթե օտարացված միմյանցից: Բոլոր տեսակի առնչությունների հիմքը հանդիսացող տնտեսական կապեր չկային: Արևմտահայ վաճառականությունը գործ ուներ եվրոպացիների հետ, արևելահայ վաճառականությունը՝ Ռուսաստանի հետ: Հայ ժողովրդի երկու հատվածներին իրար հետ կապող արդյունավետ միջոցը Րաֆֆին համարում էր

¹⁵⁷ Ղ. Ալիշան, Երկեր, էջ 188:

գրականությունը և լրագրությունը¹⁵⁸: Սակայն տվյալ դարաշրջանում հայկական ներքին կյանքը ներկայացնող ո՛չ գրականություն, ո՛չ էլ լրատվություն դեռևս չկար: Արևելահայությունը մինչև «Մշակը» չուներ արևմտահայ կյանքը ներկայացնող լրագիր: Իսկ Կ. Պոլսի հայ լրագրությունը, ազգային կյանքի խնդիրները թողած, զբաղվում էր Եվրոպայի և պատրիարքարանի խնդիրներով: Արևելահայերը տեղեկություն չունեին Պոլսի 300.000 հայ բնակչության մասին այն դեպքում երբ Պոլսում հրատարակվում էր 10-15 հայկական թերթ:

Ազգային միասնության խնդրում Րաֆֆին կարևորում է այն գործոնը, որ ազդեցիկ տերությունները կրոնական հերձվածներով բաժանել ու տարանջատել են հայ ժողովրդին: Խոսքը հայ բողոքականների և հայ կաթոլիկների մասին է: Բնականաբար, մենք չէինք հակառակվի խղճի ազատությանը, եթե կրոնական հերձվածները Թուրքիայի հայերի մեջ չվնասեին ազգային միասնությանը: «Բայց երբ տեսնում ենք բողոքականությունը հայերի մեջ դառնում է զանազան քաղաքական նկրտումների գործիք անգլիացիների ձեռքում, որ չունի ոչինչ կապ քրիստոնեության և կրոնի հետ, երբ տեսնում ենք, որ պապականությունը մոլեռանդ կղերի ձեռքում դառնում է գործիք ուլտրամոնտանիզմի, որ մի ամբողջ ժողովուրդ շինում է պապի ու նրա արքանյակների ստրուկ, այդպիսի դեպքում չի կարելի անտարբեր մնալ: Կաթոլիկությունը, որպես աստվածաբանական սխոլաստիկա, միշտ եղել է հակառակ կրթության և ժողովրդի ազատ ոգու զարգացման, իսկ բողոքականությունը, որպես նոր աղանդ, որպես նոր խմոր, ավելի թունդ է իր ֆանատիզմով»¹⁵⁹:

¹⁵⁸ Տե՛ս **Րաֆֆի**, Երկեր, հ. 9, էջ 471:

¹⁵⁹ **Րաֆֆի**, Երկեր, հ. 9, էջ 476:

Խոսելով կրոնական տարբեր ուղղությունների առկայության մասին՝ Րաֆֆին, այնուամենայնիվ, կարծում է, որ դավանաբանական բազմազանությունները չպետք է խանգարեն ազգային միասնությանը: Այդ անջրպետները կվերանան այն ժամանակ, երբ կլինի մտքերի փոխանակություն, փոխըմբռնում, որին էլ պետք է ծառայեն հայ մամուլը և գրականությունը: Գրական նման հաղորդակցությունը կունենար նաև այն ձեռքբերումը, որի արդյունքում կստեղծվեր համազգային ընդհանուր գրական լեզու¹⁶⁰:

Ազգային պետական, քաղաքական, մշակութային միասնության բացակայության պայմաններում հայ աշխարհաբար գրական լեզվի կազմավորումը ընթանում էր բարդ պայմաններում: Արևմտահայ գրական աշխարհաբարը ձևավորվում էր միջին հայերենի, արևելահայ աշխարհաբարը՝ Արարատյան բարբառի հիման վրա: Դեռևս 1858 թվականից հրատարակվող «Հյուսիսափայլը» թեև որդեգրում էր արևելահայ գրական լեզուն, այնուամենայնիվ ձգտում էր մշակել հայ ժողովրդի՝ աշխարհագրորեն իրարից անջատ, երկու պետությունների մեջ տրոհված ազգի համար մի ընդհանուր գրական լեզու: Նա առաջինն էր հայ իրականության մեջ, որ փորձեց ստեղծել միասնական լեզու, որը մնաց որպես «Հյուսիսափայլյան դպրոցի լեզու»: Ս. Նազարյանի ծրագրում ոչնչանում էր այն անջրպետը, որն առկա էր ռուսահայերի ու թուրքահայերի միջև, և Հայաստանի տարբեր հատվածների կրթական գործը դառնում էր հայ ժողովրդի ընդհանուր գործ:

Կարևորելով ազգային միասնության գաղափարը՝ Գրիգոր Արծրունին գրում է. «Չի կարելի չխոստովանել, որ հայերը դեռևս մտավոր և բարոյական զարգացման այն պերիոդի մեջ են

¹⁶⁰ Տե՛ս Րաֆֆի, Երկեր, էջ 487:

գտնվում, երբ անհատի անձնական կամքը հասարակական գործի մեջ դեռևս ավելի զորեղ է, քան թե ամբողջ ազգի հավաքական կամքը»¹⁶¹: Գ. Արծրունին ոչ միայն հայ ժողովրդի բոլոր հատվածների, այլ նաև Արևմտյան Հայաստանում ապրող մյուս ժողովուրդների միավորման մեջ էր տեսնում Հայկական հարցի լուծման ուղիները: «Եթե թուրքաց Հայաստանի բոլոր բնակիչների, հայերի, ասորիների, քրդերի, ընդդեմ թուրքաց բռնության զենքը ձեռքին միանալու լուրը ստուգվի, այն ժամանակ կարելի է վստահությամբ ասել, որ թուրքաց Հայաստանը կատարելապես կազատվի թուրքաց տիրապետությունից: Հայաստանը ինքն իր ուժերով ձեռք կբերի այն ինքնավարությունը որ պետք է աղաչելով Եվրոպային նրանից ստանալ իբրև մի շնորհ»¹⁶²: Հայերը պետք է համոզեն իրենց հարևաններին. «Եկեք միանանք... բոլորս էլ միակերպ տանջվում ենք, համերաշխ լինենք, միասին գործենք, խնդիրք տանք, աղերսագիր միասին ստորագրենք, գանգատվենք, մենք մի երկրի մարդիկ ենք, մի հաց ենք ուտում, մի օդ ենք ծծում, մի տեղ ենք ծնվում, ապրում ու մեռնում, մի երկրի որդիք ենք, բոլորս էլ եղբայրներ ենք»¹⁶³:

Ինքնազատագրման գաղափարայնացումը

Հայոց ազգային գաղափարախոսության վերջնական նպատակն ու եզրափակիչ հիմնադրույթը ինքնազատագրման գաղափարն է, որը ենթադրում է սեփական ուժերով հայ ժողովրդի և նրա հայրենիքի ազատագրումն ու անկախ պետականության հաստատումը: Ճնշված ազգերը ազգային-ազատագրական ան-

¹⁶¹ «Մշակ», 1886, թիվ 1:

¹⁶² «Մշակ», 1880, թիվ 162, (ինգ, հ. 3, էջ 129):

¹⁶³ «Մշակ», 1881, թիվ 34:

հավասար պայքարին նախապատրաստվում են երկար ժամանակ, մշակում պայքարի տեսություն՝ մարտավարություն ու ռազմավարություն և պայքարի դրոշ բարձրացնում նպաստավոր պահին: Սեփական ազգի իրավունքների պաշտպանության գաղափարը հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցություն վերստին թափանցեց XIX դարում և հետզհետե իշխող դարձավ նույն դարի երկրորդ կեսին: Դարձյալ Խ. Աբովյանին էր բախտ վիճակվել դառնալ հայ ժողովրդի քաղաքական զարթոնքի ու ազգային-ազատագրական պայքարի ջատագովն ու դրոշակակիրը:

«Վերք Հայաստանի» վեպի հերոս Աղասին հայ ժողովրդի ինքնազատագրման բնական իրավունքի առաջադրող առաջին գեղարվեստական կերպարն էր մեր նոր գրականության մեջ: Աբովյանը գլխավոր հերոսի հետ իբրև ազատագրության գաղափարակիրներ ներկայացնում է պատմական էպոխայի աչքի ընկնող մյուս գործիչներին ևս՝ Շամշադնեցի Գրիգոր Մանուչարյանին, Արծափեցի Մանուկ Աղային, Շուլավերցի Սոսի Աղային¹⁶⁴:

Աբովյանի քաղաքական զարթոնքը սկսվում է Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միանալուն զուգընթաց: Այս բախտորոշ իրողությունը նա դիտում էր որպես հայության վերածննդի սկզբնավորում, որում Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության խնդիրը դառնում էր իրողություն: Ինքնազատագրման գլխավոր միջոց համարելով լուսավորությունը՝ Աբովյանը գրում է. «Հայոց ազգի ջանին ղուրբան, մեկ նրա երեխին ուսումն տուր, նրա էն լուսաթաթախ հոգին կրթիր..., տեսնիմ թե ջան կտա քեզ, թե չէ»¹⁶⁵:

Հ. Թամրազյանի կարծիքով Աբովյանը, ինչպես դա վայել է ճշմարիտ մեծությանը, բորբոքել է ազգային հպարտության թե-

¹⁶⁴ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1962, էջ 422:

¹⁶⁵ Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, էջ 123:

ման, որպեսզի Աղասու և քառասուն տղամարդկանց օրինակը ջերմացնի դեռ սառնարյուն հայ սերունդներին, վերջ տա դարավոր ճնշման հետևանքով առաջացած խեղճությունը: Նա սերունդներին բերում է ազատ գոյության, աշխարհում սեփական լեզուն, ոգին, հողը, մշակույթը ստեղծելու և ինքնուրույն քայլելու պատգամը»¹⁶⁶:

Հայ ժողովրդի ինքնազատագրության գաղափարախոսության կերտող նվիրյալների շարքում ևս իր առանձնահատուկ տեղն ու դերն ունի Ղևոնդ Ալիշանը: Նրա «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ», «Մասիսու սարերն», «Բամ փորոտան» բանաստեղծությունները համակել են ժամանակակիցներին: Ալիշանը պոեզիայի զգայուն դաշտ է բերում անցյալի հայրենանվեր հերոսներին՝ Մուշեղ, Վարդան, Վահան Մամիկոնյաններին: Յուրատեսակ մարտական քայլերգ է «Բամ փորոտանը».

«Բամ փորոտան բարձուստ բոմբիքն յԱյրարատեան դաշտն ի վայր.

Արի արանց արինք յեռանդն առատանան ի հրազայր.

Հրաւեր հայրենեաց հըռչակի՝ ընդհանուր,

Հոգիք հայկազանց բորբոքին ի հուր.

...

Հապ օն, արի արանց մանկունք՝

Հայրենավրեժքը Հայկազունք

Հապ օն, ի զեն գունդագունդ

Յեռեալ ի պար թունդ իր թունդ...»¹⁶⁷:

«Մասիսու սարերն» բանաստեղծության մեջ Մեծ և Փոքր Մասիսների միջև ծավալված երկխոսությունում Փոքր Մասիսը թերահավատություն է հայտնում հայ ժողովրդի ազատագրու-

¹⁶⁶ Հ. Թամրազյան, Երկեր, հ. Ա, էջ 750:

¹⁶⁷ Ալիշան, Երկեր, էջ 82:

թյան հասնելու մտքի նկատմամբ: Մեծ Մասիսը վստահորեն հակադարձում է.

«Երբ ետ դարերու առաջին անգամ
Ես Ավագ Մասիս ներսուց որոտամ,
Կանչեմ ու շնչեմ արծակեմ ծուխ բոց
Սասանեցնեմ զԱրարատն Հայոց,
Այս ընի նըշան Հայոց աշխարհին
Թե գա ժամանակ, որ գան փառքն այլ հին»¹⁶⁸:

Մասիսի հրաբխային ժայթքման բանաստեղծական պատկերի մեջ Ալիշանը դնում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերստին պոռթկման գաղափարը:

Հայրենիքի համար մարտիրոսանալու պատրաստակամությամբ են տոգորված հատկապես Միքայել Նալբանդյանի բանաստեղծությունները: Սուլթանական ու ցարական լծից հայ ժողովրդի ազատագրության իրական ուժը Նալբանդյանը համարում էր հայ հասարակ ժողովրդին: «Ազգության հաստարանը և լծակն է հասարակ ժողովուրդը,— գրում է Նալբանդյանը—, մի ազգ թող որքան կամի հարուստ լինի երևելի մարդերով, այնուամենայնիվ այդ ազգի ազատագրության մեքենան շարժվում է հասարակ ժողովրդի վրա: Նա է այդ մեքենայի առանցքը, լծակը և հաստարանը»¹⁶⁹: Նալբանդյանի համոզմամբ մարդու բնական վիճակը ազատությունն է, և նա այդ ազատությանը հասնելու մասին ստեղծում է ամբողջական ուսմունք: Ազատության նվիրված բանաստեղծություններից մնայուն են հատկապես «Ազատությունը և մանկության օրերը»:

Ազգային և սոցիալական ազատության հասնելու համար Նալբանդյանը ուղենշում է պայքարի և կրթության, զենքի ու

¹⁶⁸ Ալիշան, Երկեր, էջ 34:

¹⁶⁹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 181:

գրագիտության ճանապարհը: Թեև հայ ժողովրդի ազատագրության հույսը կապում էր Ասիական ճնշված ազգերի սոցիալական ու քաղաքական ազատության հետ, այնուամենայնիվ հայության ազատագրության վճռական ուժը համարում էր հենց իրեն, հայ ժողովրդին: «...Վայ այն ծառին և բուսականին,– գրում է մեծ հրապարակախոսը–, որի հույսը դրված է միայն գիշերային և առավոտյան բարձրից գալու ցողի վրա...: Մարդու համար վերևից եկած ազատությունը այն ցողից ավելի չէ¹⁷⁰: Թվում է, թե Նալբանդյանի հենց այս գաղափարն է լրացնում Մ. Մամուրյանը՝ գրելով՝ սպասել, որ արտաքին փրկիչները գան և հայ ժողովրդի սև պատանքը քանդեն, հիմարություն է: Հեգ և ստրուկ ժողովրդին առաջին և միակ ազատությունը ինքն է, իր ներքին ուժն է, իր միասնությունն ու հաստատ կամքն է¹⁷¹:

Հայրենիքի ազատագրության համար ծոնված երգերից իր առնականությամբ, անձնագոհության գիտակցությամբ ամենատպալմորիչ ստեղծագործությունը «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունն է, որի վերջին ամփոփիչ քառատողը ազդարարում է.

«Ամենայն տեղ մահը մի է.
Մարդ մի անգամ պիտի մեռնե.
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կըզոհվի»¹⁷²:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը կերտող մեծերի շարքում իր առանցքային տեղն ու դերն ունի Ռ. Պատկանյանը: Նա հատկապես ժողովրդի ինքնազատագրման գաղափարախոսության կերտողն

¹⁷⁰ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 56:

¹⁷¹ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1876, էջ 5:

¹⁷² Նալբանդյան, Երկեր, Երևան, 1979, էջ 19:

էր, իր ուժերի նկատմամբ հավատ ներշնչողը: Հայտնի է, որ Բեռլինի վեհաժողովը ակնհայտ դարձրեց, որ եվրոպական անշահախնդիր բարերարության գաղափարը սնանկ է: Հայ ժողովրդին դաստիարակելով իր ուժերի նկատմամբ հավատ՝ Պատկանյանը տեսականորեն մշակեց ու առաջադրեց հենց հայ ժողովրդի ինքնազատագրման գաղափարաբանությունը: Ազատությունը չի շնորհվի, համոզված է նա, այն կա՛մ կխլվի քաջությամբ, կա՛մ կվաստակվի ջանք ու ճիգով: Շնորհված ազատությունը խաբուսիկ և անկանխատեսելի է: Ինքնազատագրման գաղափարախոսության շրջադարձային բռնկումը կերտվեց Վարդանի «Երգում»՝ հայ գինվորի խրոխտ մարտակոչում.

«Հիմի էլ լռենք, եղբարք, հիմի էլ,
Երբ մեր թըշնամին իր սուրն է դըրել,
Իր օրհասական սուրը մեր կրծքին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,
Ասացեք եղբարք, հայեր, ինչ անենք, –
Հիմի էլ լռենք: ...
Թող լըռե մունջը, անդամալուծը,
Կամ որոց քաղցր է թըշնամու լուծը,
Բայց մենք, որ ունենք հոգի ու սիրտ քաջ,
Եկ անվախ ելնենք թըշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խլենք
Ու այնպես լռենք»¹⁷³:

Պատկանյանի ստեղծագործությունները, սկսած «Արաքսի արտասուքից» մինչև կյանքի վերջում գրած բանաստեղծությունները, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության իրար լրացնող կոթողային հուշարձաններ են:

¹⁷³ Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1955, էջ 230:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծ բանաստեղծի հրապարակախոսական ստեղծագործությունները նույնպես ծրագրային են, գաղափարախոսական: Դրա դասական օրինակը թերևս 1889 թ. Մ. Փորթուգալյանի առաջարկով գրած և արմենականների տպարանում հրապարակված «Վարդապետարան Հայաստանի ազատագրության» ստեղծագործությունն է¹⁷⁴: Այնտեղ յուրաքանչյուր հարց ու պատասխան հստակորեն արտացոլում է հրապարակախոսի աշխարհայացքը, ուղենշում նրա ազատագրության մայրուղիները:

«Այն հարցին, թե ով պիտի ազատագրի Հայաստանը օտարների ձեռքից, տրվում էր հետևյալ պատասխանը՝ «ինքը, հայ ազգը»:

Ինչ հնարներով:

Տարբեր՝ երբեմն զենքով, երբեմն փողով, երբեմն էլ օտարների օգնությամբ:

Կարող է Հայաստանը երբևէ դառնալ հայերի սեփականությունը:

Այո, կարող է, եթե բոլոր հայերը՝ հարուստ ու աղքատ, այր ու կին, ծեր ու պատանի, միասնաբար ու սրտանց ձգտեն Հայաստանի ազատագրությանը:... Ինչ վիճակում կլինեն հայերը, եթե չազատեն Հայաստանը:

Կբնաջնջվեն:

Որն է հայերի նշանաբանը:

Ազատություն կամ մահ»¹⁷⁵:

¹⁷⁴ Տե՛ս **Ա. Օհանյան**, Ռ. Պատկանյանի հրապարակախոսությունը, Երևան, 1981, էջ 184-196:

¹⁷⁵ **Ա. Համբարյան**, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990, էջ 72-74:

Հայ ժողովրդի ազատագրության միակ ուղին համարելով զինված պայքարը, ստեղծելով ազգանվեր հերոսների պատմական բազում կերպարներ՝ Վարդան Մամիկոնյան, Սամվել, Դավիթ Բեկ, Մխիթար Սպարապետ և այլն՝ Րաֆֆին ամբողջացրեց հայ ժողովրդի ինքնազատագրման գաղափարախոսությունը: «Ձեզանից ամեն մեկը գիտե, – գրում է մեծ վիպասանը, – թե ով էր Վարդանը: Բայց գուցե շատերը չգիտեին, թե ինչ էր Վարդանը, Վարդանը մի ամբողջ ժողովուրդ էր, Վարդանը այդ ժողովրդի մարմնացած բոլորն էր: Բողոք՝ բռնության դեմ, բողոք՝ անարդարության դեմ, բողոք՝ անազնվության դեմ...: Վարդանի անձնավորության մեջ միացած էր ժողովուրդը: Նրա փառքը ժողովրդին է պատկանում: Վարդանը, – ինքը ժողովուրդն էր...: Վարդանը ժողովրդի հոգու արտահայտության ծնունդն էր»¹⁷⁶:

Ազատագրական պայքարի գաղափարաբանությունը Րաֆֆու համոզմամբ միայն մտավորականության միջոցով կարող է դառնալ զանգվածների սեփականությունը: Նրանք պետք է լուսավորեն ժողովրդին, բարձրացնեն նրանց ազգային ինքնագիտակցությունը: Անհավասար պայքարում ժողովրդին կարող էր առաջնորդել այն գործիչը, որը խորապես գիտակցում է ազգի առջև դրված խնդիրներն ու նպատակները: Ժողովրդի ազատագրության չմարած կայծերը կարող են բռնկել լուսավորության ջահը: Երբ ժողովուրդը գիտակցում է ազատության անհրաժեշտությունը, այլևս չի կարող համակերպվել բռնակալի լծին: Երբ ժողովուրդն ինքն է ուղի կանգնում, իր լուծը թոթափում, դա լինում է այն ժամանակ, երբ նա հասկանում է, թե ինչ բան է ազատությունը: «Ազատությունը մարդ սովորում է ազատության մեջ»¹⁷⁷: Րաֆֆին, գիտականորեն հիմնավորելով հայ և

¹⁷⁶ Րաֆֆի, Դավիթ Բեկ, հ. 6, էջ 187-188:

¹⁷⁷ Րաֆֆի, Երկեր, հ. 4, էջ 491:

ռուս ժողովուրդների քաղաքական շահերի ներդաշնակության գաղափարը, ինչպես նաև ըմբռնելով անգլո-ռուսական հակամարտությունների բարդությունները, խստորեն դատապարտում է արևմտավրոպական օրինետացիայի կողմնակիցներին: Արևմտյան տերությունները, վախենալով ռուսական զենքի հաջողություններից, կանգնում են թուրքերի կողմը, խափանում արևմտահայության ազատագրությունը, Հայկական հարցը 16-րդ և 61-րդ հոդվածներով դարձնում սուլթանի կամայականությունների արյունոտ հարց¹⁷⁸: Դրա համար էլ Րաֆֆին արևմտահայության ազատագրության հույսը կապում է Ռուսաստանի և Արևելահայաստանի կողմից նրանց ցույց տրվող օգնության հետ: «...Անգլիացիք չուզեցին մտածել, որ եթե թուրքաց հայերը համակրությամբ էին վերաբերվում դեպի Ռուսաստանը, այդ ուներ յուր բնական պատճառները: Նրանք տեսնում էին ազգակիցներին ռուսական Հայաստանում ավելի բախտավոր վիճակի մեջ, մինչդեռ իրենք օրըստօրե մաշվում և ոչնչանում էին անարգ և նենգամիտ կառավարության բարբարոսությունից»¹⁷⁹:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության կերտման ասպարեզում մեծ է նաև Գրիգոր Արծրունու տեղն ու դերը: Արծրունու կյանքի կոչած «Մշակը» դարձավ հայ ժողովրդի ամենաառաջավոր մտքի կերտման մարտական օրգանը: ««Մշակը»,– գրում է Րաֆֆին,– յուր մոգական հարվածով միանգամից շարժեց հասարակական թմրած մարմինը: Մարդիկ հանկարծ աչքերը բաց արին, սկսեցին մտածել իրենց գործերի վրա: «Մշակը» ընդարձակեց, լայնացրեց հայկա-

¹⁷⁸ Տե՛ս **Րաֆֆի**, Երկեր, հ. 9, էջ 10:

¹⁷⁹ **Րաֆֆի**, Տաճկահայք, հ. 6, էջ 41-42:

կան աշխարհի նեղ հորիզոնները ոչ միայն Ռուսաստանի հայի, այլ ամենուրեք, ուր հայեր էին ապրում»¹⁸⁰:

Մի ձեռքում արոր, մյուսում հրացան բռնելու Գ. Արծրունու կոչը, արթնացրեց շատ թմրած կրքեր. «Եթե հայը,– գրում է նա,– Թուրքիայում զինվում է միայն նրա համար, որ բռնավորության դեմ պաշտպանողական դիրք բռնի միայն և ոչ թե հարձակողական,... այդ գուցե կլինի միակ միջոց թուրքաց տիրապետության տակ ճնշված հայոց ազգի համար պաշտպանել և ապահովել իր ազգային գոյությունը»¹⁸¹:

Արևմտահայության ազատագրության հույսը կապելով զինված պայքարի հետ՝ Արծրունին և նրա համախոհները մամուլը ողողում էին ազատատենչ կոչերով. Խրիմյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Ոսկանի, Րաֆֆու, Ա. Արփիարյանի՝ խնկամանը վառողամանով փոխարինելու, ազատությունը սրով ձեռք բերելու կոչերը դառնում էին ժամանակի հավատ ներնչող գաղափարները:

Արևմտահայության ազատագրական պայքարի գաղափարախոսությունը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի և Բեռլինի վեհաժողովի փաստաթղթերում շրջանառության մեջ դրվեց «Հայկական հարց» անունով:

Հայ ժողովրդի ինքնազատագրման գաղափարախոսության կյանքի կոչման գործում իրենց գնահատելի ծառայությունը մատուցեցին նորաստեղծ քաղաքական կուսակցությունները: Հայ իրականության մեջ ծնված քաղաքական առաջին կուսակցությունների առաջնահերթ խնդիրը ևս դառնում է սեփական ժողովրդին թուրքական յաթաղանից փրկելու և ինքնազատագրվե-

¹⁸⁰ «Մշակ», 1889, թիվ 9:

¹⁸¹ Գ. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1904, էջ 38:

լու պրակտիկ գործունեության ծրագրային համակարգի ստեղծումը:

Արմենական կուսակցության ծրագրերում քարոզվում էր, որ պետք է «...դրդել ժողովուրդը և առաջնորդել անկախության և ինքնօրինության իրավունքը ձեռք բերելու»¹⁸²:

1890 թ. ստեղծված վերոհիշյալ «Վարդապետարանում» ասվում էր, որ անհրաժեշտ է ոտքի հանել ժողովրդին թուրքական բռնապետության դեմ, հեղափոխությամբ տապալել այն և «իրավունք ձեռք բերել ինքնզինքն ազատորեն կառավարելու», այսինքն՝ նրանց նպատակն էր զինված պայքարով Թուրքիայի հայության համար ձեռք բերել ինքնավարություն¹⁸³:

Հնչակյան կուսակցությունը հայ ժողովրդի ազատագրության հարցի լուծումը կապում էր 3 միապետությունների՝ Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի լծի տակ հեծող հայության ազատագրման և ինքնիշխան պետության ստեղծման հետ:

Հայ հեղափոխական դաշնակցության ծրագրային հենց առաջին փաստաթղթերում կուսակցությունը հռչակվեց որպես Հայկական հարցը լուծելու համար պայքարող կուսակցություն: 1892 թ. ընդունած ծրագրի «նպատակ» բաժնում հռչակում է. «Հայ հեղափոխական դաշնակցության նպատակն է ապստամբության միջոցով Հայաստանի մեջ ձեռք բերել քաղաքական ու տնտեսական ազատություն: Այդ նպատակին հասնելու գլխավոր միջոցը դաշնակցությունը համարում է պայքարը: Միանգամայն անօգուտ և մինչև անգամ վտանգավոր է հույս դնել օտարի վրա և սպասել, թե թուրքաց կառավարությունը ինքը իր կամքով բարենորոգումներ կշնորհի հայերին: Ցանկացած վիճակը ձեռք բերելու համար մեզ մնում է միայն դիմել այն միջոցին, որին դիմել

¹⁸² «Արմենիա», 1889, մարտի 27:

¹⁸³ Տե՛ս «Զարթոնք», բացառիկ, Բեյրութ, 1968, էջ 69:

են մեզանից առաջ, միևնույն հանգամանքների մեջ գտնվող ուրիշ մեզ նման քրիստոնյա ազգեր: Այդ միջոցը ժողովրդական ապստամբությունն է: Ուրիշ ելք չկա»¹⁸⁴:

Այսպիսով՝ հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց է այն եզրակացության, որ XIX դարի հայ դասական գրողներն ու հրապարակախոսները՝ Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Ղ. Ալիշանը, Ռ. Պատկանյանը, Բաֆֆին, Ս. Նազարյանցն ու Գ. Արծրունին, նույնպես առաջադրել և մշակել են հայ ժողովրդի արարչական ծագման, սրբագործված հայրենիքի, ազգային ինքնության, ազգային միասնության և ազգային-ազատագրական պայքարի գաղափարները՝ որպես հայկական ազգայնականության համակարգված գաղափարախոսության հիմնադրույթներ:

¹⁸⁴ «Դրոշակ», 1891, թիվ 1, էջ 4:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՎԱՆ

Հայոց ազգայնականությունը արդի դարաշրջանում

Արդի դարաշրջան ասելով նկատի ունենք 1900 թվականից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը՝ 2020 թվականը: Այս 120-ամյա պատմաշրջանը ազգային գաղափարախոսություն կերտելու և քարոզելու հնարավորությունների ընձեռման առումով կարելի է բաժանել երեք սահամանազատված փուլերի: Առաջին փուլում ընդգրկել ենք 1900-1920 թվականների վերջը՝ մինչև Հայաստանի առաջին հանրապետության անկումը: Այս հախտուն 20-ամյակը ազգային գաղափարախոսություն կերտելու և քարոզելու համար նպաստավոր էր և հարուստ տեսական ձեռքբերումներով:

Երկրորդ փուլում ընդգրկել ենք 1921-1991 թվականները՝ Խորհրդային Հայաստանի գոյության 70-ամյա պատմաշրջանը, որը թեև աչքի է ընկնում տնտեսական ու մշակութային մեծ ձեռքբերումներով, սակայն սոցիալիստական ինտերնացիոնալիզմի գաղափարախոսության և կոմունիստական կուսակցության դիկտատուրայի պայմաններում խստորեն արգելվում ու դատապարտվում էր ազգայնական ցանկացած դրսևորում ու գաղափարախոսություն: Այնուամենայնիվ, ընդհանուր համազգային մշակույթի վերելքին համահունչ ստեղծվեցին ազգային ինքնությանը և ինքնահամախմբմանը նպաստող արժեքներ:

Երրորդ փուլում ընդգրկել ենք 1991 թվականից մինչև այժմ ընկած ժամանակահատվածը, որը Հայաստանի երրորդ հանրապետության պատմաշրջանն է, և որի սկզբնավորման շրջանում ազգային գաղափարախոսությունը թեև որակվեց «կեղծ կատեգորիա», սակայն, ըստ էության, ոչ մի արգելք չստեղծվեց՝ այն

կյանքի կոչելու համար, բայց նաև նոր արժեքներ էլ չստեղծվեցին՝ բացի մի քանի մասնավոր ուսումնասիրություններից¹⁸⁵:

Քաղաքական կյանքի աննախադեպ ակտիվացմանը զուգընթաց այս 120-ամյա պատմաշրջանում հայ ժողովրդի ազատագրության հարցը առավել բարդ ու բազմաշերտ դարձավ, կորուստները՝ ողբերգական, ձեռքբերումները՝ աննախադեպ:

Հայ ժողովրդի ազատագրության հույս ներշնչող առաջին բողբոջները «Հայկական բարենորոգումներ» ընդհանուր անվամբ ծլարձակվեցին 1912-1914 թթ.: Բալկանյան պատերազմում թուրքերի կրած պարտությունից հետո հայկական ազգային շրջանները գտնում էին, որ անհրաժեշտ է դիմել մեծ տերություններին, հատկապես Ռուսական կայսրությանը, որպեսզի Մակեդոնիայի և Ալբանիայի հարցերի հետ միասին քննության առնվի նաև արդեն ծրագրված բարենորոգումները հայկական նահանգներում իրականացնելու խնդիրը: Այս բարենորոգումների արևմտահայերին վերաբերող ծրագրում նախ որոշվեց Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքի շահանգներից կազմել գեներալ նահանգապետություն և տալ տեղական ինքնավարություն: Սակայն այն թուրքերի կողմից մերժվելուց հետո կյանքի կոչեցին մի նոր ծրագիր, որով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու հատվածների՝ Էրզրումի, Տրապիզոնի, Սեբաստիայի, Վանի և Բիթլիսի, Խարբերդի ու Դիարբեքի, որոնց կառավարումը հանձնվում էր եր-

¹⁸⁵ Տե՛ս Հ. Գ. Մանուչարյան, Հայության գոյապահպանության գաղափարախոսությունը, Երևան, 1994, տե՛ս նաև Լ. Խուրշուդյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 1999: Գ. Խուրդինյան, Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն, Երևան, 2003: Ս. Սարինյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 2005: Մ. Լալայան, Ցեղակրոն և տարոնական շարժումը, Երևան, 2011:

կու օտարերկրյա տեսուչների՝ Վեստենենկին ու Հոֆին¹⁸⁶: Սակայն վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմը թուրքերին հնարավորություն տվեց ոչ միայն օրակարգից հանելու այս ծրագիրը, այլև կազմակերպելու դարի առաջին մեծագույն ոճրագործությունը՝ Հայոց ցեղասպանությունը:

Արևմտահայության ազատագրության հարցը արծարծվեց նաև 1917 թ. դեկտեմբերի 29-ին, երբ ՌԽՍՖՍՀ ժողկոմխորհը ընդունեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը (դեկրետը), որի համաձայն՝ Արևմտյան Հայաստանը պետք է դառնար անկախ պետություն, իսկ Արևելյան Հայաստանը մնար Ռուսաստանի կազմում ներքին ինքնավարության իրավունքով: Ժողկոմխորհը գտնում էր, որ այս ծրագիրը իրագործելու համար անհրաժեշտ են. առաջին՝ զորքերի դուրսբերումը «Թուրքահայաստանից» և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը...: Երկրորդ՝ տարբեր երկրներում ցրված գաղթական հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները: Երրորդ՝ պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները...»¹⁸⁷: Սակայն, երբ ռուսական զորքերը հեռացան ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Անդրկովկասից, իսկ թուրքական զորքերը 1918 թ. հունվարի վերջին մտան Անդրկովկաս՝ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը դարձավ անարժեք: Նրա նշանակությունը միայն այն էր, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն առաջինը ճանաչեց հայ ժողովրդի պահանջատի-

¹⁸⁶ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 365:

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 418-419:

րությունը՝ հայ ժողովրդի պատմական իրավունքը Արևմտահայաստանի նկատմամբ:

«Խորհրդային իշխանության հրովարտակը հայերի ինքնորոշման մասին,– գրում է Ն. Ադոնցը,– կարող էր հայերի մոտ միայն թեթևացման հառաչանք առաջ բերել, քանզի նրանց կարծիքով այն բացառապես բարոյական կարգի ակտ էր՝ զրկված ամեն մի քաղաքական նշանակությունից: Հայերի ճակատագրի հրովարտակային որոշման սահմանման առթիվ նրանց սրտերում խանդավառության ոչ մի զգացում չէր էլ կարելի սպասել, քանզի հայերը ավելի լավ գիտեին, քան հրովարտակի հեղինակները, որ ներկա իշխանության մեջ քաղաքական հարցերը լուծվում են ոչ թե բարի, բայց անգոր կամեցողությամբ, այլ միայն մարտադաշտում երկաթյա զենքի ճնշմամբ: Հրատարակել հրովարտակ և միևնույն ժամանակ ետ կանչել զորքերը ռազմաճակատից նշանակում է մի ձեռքով տալ, մյուսով՝ խլել ետ»¹⁸⁸:

Հայ ժողովրդի ազատարական պայքարի ամենախոշոր ձեռքբերումը 1918 թ. մայիսյան հերոսամարտերի արդյունքում նվաճած անկախությունն էր՝ Հայոց առաջին հանրապետության ստեղծումը: Այն հռչակվեց 1918 թ. մայիսի 28-ին: Հայկական պետության վերականգնումը հնարավոր դարձավ 1918 թ. մայիսին հայ ժողովրդի մղած Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի հերոսական ճակատամարտերի արդյունքում:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումի պայմանագրով Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը: 1919 թ. փետրվարին Երևանում գումարվեց արևմտահայերի երկրորդ համագումարը, որը որոշում ընդունեց միացյալ ու անկախ Հայաստանի Հանրապետության մասին: Հիմք ընդունելով այս որոշումը՝ ՀՀ կառավարությունը 1919 թ. մայիսի 28-ին Հայաստանը հայտարարեց

¹⁸⁸ Ն. Ադոնց, Երկեր, հ. 2, Երևան, 2012, էջ 127:

միացյալ և անկախ հանրապետություն: «Միացյալ և անկախ հանրապետություն հռչակելով՝ ապահովում էր արևմտահայերի աջակցությունը, որոնց մի մասը գտնվում էր Արևելյան Հայաստանում, մյուսը՝ սփյուռքում: Հայկական հարցը Անտանտի օգնությամբ լուծելու ակնկալիքով ՀՀ կառավարությունը պատվիրակություն ուղարկեց Փարիզի հաշտության կոնֆերանս, որտեղ վճռվելու էր աշխարհի հետպատերազմյան կարգավիճակը: 1919 թ. մայիս 14-ին Փարիզի կոնֆերանսը որոշում ընդունեց Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին տալու մասին, որը հաստատեց նորաստեղծ Ազգերի լիգան: Թուրքերի հետ պայմանագիրը կնքվեց Սևրում 1920 թ. օգոստոսի 10-ին, որի համաձայն՝ Թուրքիան ՀՀ-ն ճանաչում է որպես ազատ և անկախ պետություն՝ ելքով դեպի Սև ծով: ԱՄՆ կառավարությանը իրավունք վերապահվեց որոշելու Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները: Ապագա Հայաստանի ընդհանուր տարածքը կազմելու էր 160 հազ. քկմ: Սակայն մի կողմից ՀՀ կառավարությունը ի զորու չէր պարտադրել Թուրքիային՝ կատարելու Սևրի պայմանագիրը, մյուս կողմից՝ միջազգային դրությունը կտրուկ փոխվեց ի վնաս Հայաստանի:

Տարածաշրջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո խորհրդային Ռուսաստանը կարևոր նշանակություն էր տալիս հեղափոխության նկատմամբ արևելքի ժողովուրդների դիրքորոշմանը, դիրքորոշում, որում կարևոր դերակատարություն էին վերապահում հատկապես Քեմալական Թուրքիային: Տիրապետում էր այն թյուր կարծիքը, թե իբր Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ դրսևորվող բարյացակամությամբ են պայմանավորված ռուսական հեղափոխության հաջողությունները իսլամական արևելքում: «Այս իմաստով բնորոշ է Վ. Լենինի խոստովանությունը 1920 թ. դեկտեմբերի 26-ին ՀՍԽՀ ներկա-

յացուցիչներ Ա. Բեկզադյանին, Ա. Մռավյանին և Գ. Աթարբեկյանին ընդունելության ժամանակ, ի պատասխան. «Հայ ժողովրդի սարսափելի դրության» մասին նրանց հարցադրման՝ Լենինը պատասխանում է. «Մենք ստիպված ենք ժամանակավորապես զոհաբերել հայ աշխատավորների շահերը հանուն համաշխարհային հեղափոխության շահերի: ... «Մենք չենք պատրաստվում Հայաստանի համար պատերազմել որևէ մեկի, հատկապես Քեմալի հետ»¹⁸⁹:

Ահա մտայնության այս աննպաստ մթնոլորտում էր, որ Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով Թուրքիային անցավ ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի զգալի մասը, իսկ 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում կնքված պայմանագրով Ադրբեջանին ինքնավար հանրապետության կարգավիճակով հանձնվեց Նախիջևանի մարզը¹⁹⁰, իսկ 1921 թ. հուլիսին կայացած Կովքյուրոյի արտակարգ պլենումի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը՝ ինքնավար մարզի կարգավիճակով: 1921 թ. նոյեմբերի 6-ին Մոսկվային և Մռավյանը ստորագրում են մի համաձայնագիր, որով հայկական Լոռին անցնում է Հայաստանին, իսկ նույնքան հայկական Ախալքալաքը՝ Վրաստանին: Այսպիսով, ինչպես նշում է Գ. Նժդեհը, «այդ փոքրիկ Հայաստանի ռազմագիտական բոլոր կարևոր կետերը խլված են: Նա պաշարված է մեր դարեւոր թշնամու կողմից: Այդ պաշարումը դրված է այնպիսի հաշիւներովրայ, որոնք մի ակնյայտնի իմաստ ունին՝ յարմար պարագային նուազագույն զոհողութիւններով և ամենակարճ ժամանակամիջոցում բնաջնջել հայութիւնը:

¹⁸⁹ Հայոց պատմություն, հ. 4, գիրք 1, Երևան, 2010, էջ 326:

¹⁹⁰ Տե՛ս Է. Զոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Երևան, 1979, էջ 196:

Հայաստանը խոցելի է մի շարք տարբեր կետերից. ընդամենը մի քանի ժամա ընթացքում այդ կետերով Թուրքիան կարող է կտրել, իրարից բաժանել հայկական գավառները եւ միանալ Ազերբեյջանին:

Թշնամին ունի մեզ բնաջնջելու վճիռ, մենք չունինք ինքնապաշտպանութեան ծրագիր եւ ինքնապաշտպանական զենք»¹⁹¹: Ահա այս կարգավիճակով հայ ժողովուրդը ձեռնամուխ եղավ ազգային պետականության կերտման գործին:

Հայ ժողովրդի արարչական ծագման և հայրենիքի սրբագործման գաղափարախոսությունը

Հայ ժողովուրդն իր անդառնալի կորուստների այս ողբերգական պատմաշրջանում՝ XX դարասկզբին, ստեղծված իրավիճակից դուրս գալու համար զինվորագրեց ոչ միայն իր անձնագույն ազատամարտիկ, այլև հայրենանվեր գիտնական, արվեստագետ, բանաստեղծ որդիներին, որոնք ազգային ռազմական ուժերի հետ ներդրեցին հոգևոր ներուժը և ստեղծեցին ոչնչացման եզրին հայտնված ազգի փրկության վարդապետություն՝ ազգային արժեքները վերականգնելու, համախմբելու և արժանապատիվ ապրելու համար հավատ ներշնչող գաղափարախոսություն: Վերածնվող հայի ոգու իմաստուն արարիչը առաջինը դարձավ հայ գրականությունը: Նրան էր վիճակվել գտնել ազգային ոգու կերտման գեղագիտական ու գաղափարական մայրուղիները: Հայ գրողների համար հարցերի հարցը դարեր շարունակ եղել է հայրենիքի ճակատագրի կերտումը: «Հայրենիքը հայ գրականության գլխավոր հերոսն է եղել, ամեն բանից վեր,

¹⁹¹ Գ. Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2001, էջ 60:

և ամեն բանից առաջ հայրենիքն ու նրա ճակատագիրն է»¹⁹², – գրում է պրոֆ. Ա. Ավագյանը:

Գեղարվեստական արձակում և պոեզիայում որպես կեցության հավիտենական վկաներ կերտվում են հայոց բնաշխարհն ու նրա տերը՝ անկոտրում հայը՝ անսկիզբ ժամանակներից եկող չընկճվող կամքով ու հստակ ծրագրով: Գրականություն են մտնում կատարված ողբերգական իրադարձությունները: Հառնում են ամայացած երկրի դեռ թարմ արահետները՝ ազգային հիշողության մեջ ամրագրելով սահմանից այն կողմ մնացած երկիր դրախտավայրը: Ազգային հանճարի ճանաչման և ընդունման սահմանագիծը պրոֆ. Հ. Թամրազյանը համարում է այն, թե որքանով է նա ազդել ազգային մտածողության վրա¹⁹³:

Հովհաննես Թումանյանի նախաձեռնությամբ է սկիզբ առնում բանաստեղծի, ժողովրդի ու նրա հայրենիքի միասնության թեմայի մշակման նոր փուլը: Ինչպես բնութագրում է Չարենցը. «Նա (Թումանյանը – Հ. Մ.) մեծ էր հողով, արյունով, արմատներ ուներ նա հողում» «հանճարեղ երգերում նրա իր երկրի արևն է շողում», «իր երգերը գեղջուկ նաիրցու քրտինքով էր նա ողողում»:

Իրոք, Թումանյանն իր ամբողջ ներաշխարհով հային կապեց իր պատմական հայրենիքին ու ճակատագրին: Հատկապես «Հայոց լեռներում» և «Հայրենիքիս հետ» բանաստեղծություններով հայ և համաշխարհային գրականությունը հարստացավ հայրենասիրական պոեզիայի այս երկու անհաս արժեքներով: Պրոֆ. Է. Զրբաշյանը «Հայոց լեռներում» բանաստեղծությունը համարում է հայ ժողովրդի բանաստեղծական կենսագրությունը՝

¹⁹² Ա. Ավագյան, Հայ գրականության պատմամշակութային և ազգային արժեքը, «Սփյուռքագիտություն», Տարեգիրք, Երևան, 2012, էջ 154:

¹⁹³ Տե՛ս Հ. Թամրազյան, Հայ քնարերգուներ, Երևան, 1999, էջ 108:

Ավարներով, ավերներով, խընջույքներով արյունի,
Որ դարձըրին քեզ մըշտական սև ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայցքներով անժըպիտ,

Ողբի՛ հայրենիք,

Որբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհու՛ն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում աստծո հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարա-
ղետ.

Խորհում ես դու է՛ն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս է՛ն երկիրը, ուր ծըգտում է մեր հոգին-

Հույսի՛ հայրենիք,

Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,

Իմ նո՛ր հայրենիք,

Հըզո՛ր հայրենիք¹⁹⁶:

Բանաստեղծության այս չորս տները ամփոփվում են հայրե-
նիքին ուղղված կրկներգերով, որոնցից յուրաքանչյուրում ար-
տացողվում է հայրենիքի բազմերանգ պատկերը: Առաջին երկու
տները ներկայացնում են հայ ժողովրդի ողբերգական վիճակը՝
գաղթականություն, ավեր ու խավար գյուղեր, վխտացող ջարդա-
րարներ, զրկված ու զարկված, ողբի ու որբի հայրենիք: Երրորդ

¹⁹⁶ Հ. Թումանյան, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1985, էջ 99:

տնից ծագում է հույսի շողը՝ հին ու նոր վերքերով ապրած, բայց հույս ու հավատ ներշնչող նոր ու հզոր հայրենիքը: Այս տողերը, ինչպես նշում է Է. Զրբաշյանը, «ոչ միայն տվյալ բանաստեղծության, այլև Թումանյանի հայրենասիրական քնարերգության, նրա ողջ պոեզիայի յուրօրինակ հանրագիտարանն են: Այստեղ է Թումանյանը՝ մարդկության կյանքում կատարվելիք մեծ վերափոխումների սպասումով, «հանուն կյանքի արշալուսի» և հայրենիքի փրկության խոր հավատով»¹⁹⁷:

Հայրենիքի ու հայրենասիրության թեման առաջնային դարձավ նաև Վահան Տերյանի համար: Հատկապես «Հոգևոր Հայաստան» խորագրով հրապարակախոսական ստեղծագործության և «Երկիր Նաիրի» բանաստեղծական շարքում ստեղծեց ամբողջական ուսմունք ցեղասպանության ու տարհանման ենթարկված ժողովրդի գոյապահպանության մասին: 1914 թ. հրատարակված «Հոգևոր Հայաստան» հոդվածում Վ. Տերյանը պատմափիլիսոփայական խոր վերլուծություն է կատարում հայրենիքի ապագայի մասին և առաջադրում այն խորունկ գաղափարը, թե ֆիզիկապես նվաճված հայրենիքը հնարավոր է ազատագրել ու վերակառուցել, իսկ կորցրած ու մոռացված հայրենիքը անհնար է փրկել: Ստեղծված այս ծանր իրավիճակում, երբ անհնար է դառնում քաղաքական անկախության համար պայքարը շարունակելը գերակշիռ հզոր ուժերի դեմ ռազմի դաշտում, Տերյանը առաջադրում է նոր պայմաններին համապատասխան նոր ռազմավարություն: Այդ նորը հանդիսացավ ազգի մտավոր ու մշակութային ներուժը համախմբելու և մշակութային դաշտ դուրս բերելու ծրագիրը: «Այդ հոգևոր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատասիրություն է պահանջում,– գրում է հարենասեր բանաստեղծը,– անթիվ կյանքերի տոկոս

¹⁹⁷ Է. Զրբաշյան, նշվ. աշխ., էջ 43:

հավատ և գիտակցություն, անարյուն, բայց ազնիվ, գուցե ավելի դժվար, ավելի ահավոր զոհաբերում, քան արյունի զոհաբերումը:

«Մի Րաֆֆի, մի Արծրունի, մի Նալբանդյան, մի Դուրյան նույնպես ասպետներ են, գուցե ավելի մեծ հերոսներ են, քան նրանք, որ կռվի դաշտում են զոհաբերում իրենց կյանքը»¹⁹⁸:

Նյութական հայրենիքը ավերված է, բայց ավերված է նաև հոգևոր հայրենիքը, առաջինը ողբերգական է, երկրորդը՝ աղետաբեր, նյութական կորուստը հնարավոր է վերականգնել, հոգևորը՝ անդառնալի է: Այս համոզմունքով է Տերյանը ծագում դարավոր նիրհից հանել իր ժողովրդին և տանել լուսավոր ազգերի համար բացված հորիզոնները.

Նոր օր է բացվում ազգերի համար,–

Իմ հայրենիքում տիրում է գիշեր,

Իմ հայրենիքում անթափանց խավար.

Զարթեք, վեր ելեք կենդանի ուժեր¹⁹⁹:

Այս ծանր մթնոլորտում Տերյանը, այնուամենայնիվ, վերագտավ խոշտանգված հայրենիքը՝ Երկիր Նաիրին: Այս շարքի ստեղծագործություններում Տերյանը հանրագումարի բերեց հայրենիքի քաղաքական կացության ու ապագայի մտահոգող հարցեր, Հայրենիքի ու նրա բանաստեղծի ճակատագրի տխուր ներդաշնակությունը:

Բանաստեղծին մտահոգում է, թե արդյոք կապրի Նաիրին իրենից հետո, թե ինքը այդ հինավուրց երկրի վերջին պոետն է.

Մի՞թե վերջին պոետն եմ ես,

Վերջին երգիչն իմ երկրի,

Մահն է արդյոք, թե նինջը քեզ

¹⁹⁸ Վ. Տերյան, Երկեր, հ. 2, Երևան, 1961, էջ 116:

¹⁹⁹ Նույն տեղում, էջ 70:

Պատել պայծառ Նաիրի²⁰⁰:

Ինչպես նշում է պրոֆ. Հ. Թամրազյանը, սա հանճարեղ բանաստեղծի տազնապի ճիշն՝ նվիրված ծանր ներկային և անորոշ ապագային²⁰¹:

Ազգային կենսունակ գաղափարախոսության ստեղծման ճանապարհին առանձին վեհությամբ են հնչում Տերյանի գաղափարայնացված հետևյալ տողերը.

Մի խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին,-

Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին...

Չի հասկանա ձեր հոգին և ծույլ, և օտար

Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար²⁰²:

Ինչպես տեսնում ենք, Տերյանի մոտ իշխող գաղափարը եղել է ազգային գոյության ու նրա սրբագործման գաղափարը, նրա համոզմամբ հայրենիքի երգը հնչել է Եղիշեից ու Խորենացուց ու հարատևել մինչև իր օրերը: «Երկիր Նաիրի» շարքը հայ պոեզիայի անկրկնելի էջերից է: Տերյանը հայրենասիրական պոեզիան բարձրացրեց գաղափարական նոր աստիճանի:

Վահան Տերյանի «Հոգևոր հայրենիքի» և «Երկիր Նաիրի» թեմաները ասպարեզ բերեցին Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը և հայրենասիրական անհուն պոեզիայի պոռթկումը՝ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Ուսումնասիրողներն անդրադարձել են Տերյանի և Չարենցի «Նաիրիների» թեմային՝ փորձելով բացահայտել այն անհուն կապը, որն առկա է երկու հանճարեղ բանաստեղծների ստեղծագործություններում:

Հայտնի է, որ «Նաիրի» երկիրը առաջին անգամ հիշատակվում է Ասորեստանի Թուկլուտի-Նինուրտա 1-ին թագավորի

²⁰⁰ Վ. Տերյան, նշվ. աշխ., էջ 249:

²⁰¹ Տե՛ս Հ. Թամրազյան, Հայ քնարերգուներ, Երևան, 1999, էջ 31:

²⁰² Վ. Տերյան, Երկերի ժողովածու, էջ 71:

(Ք.ա. 1243-1221) արձանագրություններից մեկում, որտեղ նա պատմում է Նաիրիի 43 դաշնակից «թագավորությունների» դեմ իր կռվի ու հաղթանակների մասին: Նաիրին տարածվում էր Վանա լճի ավազանում, Տիգրիսի և Եփրատի վերին հոսանքների ու ակունքների շրջաններում ընկած երկրների վրա, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր իշխանությունն ու անվանումը: Ազգային արժեքների բացահայտման զգացումը կլանել էր XX-րդ դարասկզբի հայ հանճարներին՝ Թումանյանին, Տերյանին, Չարենցին: Այս մեծերին էր բախտ վիճակվել պեղել-գտնել հայ ժողովրդի անցյալի խորհուրդները: Այդ որոնումներն էին Տերյանին ու Չարենցին տարել նախապատմական դարերի խորհրդավոր Նաիրիի ժամանակները: Գեղարվեստական հնարանքի այդ մեթոդը հիշեցնում է Խորենացուն, նրա Նոյ Նահապետի ժամանակների խորհրդավոր երկիրը:

Ձեռնարկելով «Երկիր Նաիրի» վեպը՝ Չարենցը հայ ժողովրդի համար ստեղծված ճակատագրական այս պահին նպատակադրվել էր պարզել, թե ինչ է Նաիրին, ովքեր են նաիրցիները, ուր են տանում նրանց արյունով ներկված ճանապարհները: Վեպը գրելու ժամանակահատվածում (1921-1924 թթ.) հախտոն, անորոշ իրադարձությունների ազգային-ազատագրական կռիվների ու հեղափոխական շարժումների, քաղաքական կուսակցությունների անհեթեթ ու անզիջում պայքարի հորձանուտում էր հայտնվել հայ ժողովուրդը:

Իրականության այս անորոշությունների մեջ Չարենցը հայրենիքի ազատագրության հուսալի ուղիներ էր փնտրում: Վեպը սկսվում և ավարտվում է Կարսի համայնապատկերի նկարագրությամբ: Վեպի գլխավոր հերոսները դառնում են քաղաքը և վիպասանը: Կարսի կերպարը դառնում է Հայաստանի և հազարամյակների անցյալից հառնող պատմական հայրենիքի որոշակիորեն տեսանելի կերպար:

Առասպելական «Նաիրիի» երկրին փոխարինում է հստակ սահմանազատված ու խորապես զգացված իր անուշ Հայաստանի մասին չքնաղ բանաստեղծությունը:

Հայրենիքին նվիրված ստեղծագործությունների մեջ ուսումնասիրողների համոզմամբ անգերազանցելին Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունն է, մի մոնումենտալ ստեղծագործություն, որի ամեն մի տողը հայրենիքի ու նրա պատմական շրջադարձային իրողությունների գեղարվեստական ընդհանրացումն է.

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ծմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթնում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում:

Ուր էլ լինեմ- չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր-
Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յարն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա .

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա .

Աշխարհի անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա .

Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում²⁰³:

²⁰³ Ե. Չարենց, Երկեր, Երևան, 1983, էջ 81:

Ընդամենը 16 տողից բաղկացած այս գլուխգործոցը դարձավ յուրօրինակ ազգային օրհներգ, հայրենասիրական աղոթք, սիրո երգում, սրբազան հայրենիքին:

«Ես իմ անուշ Հայաստանին» ստեղծագործությունը, – գրում է Ա. Իսահակյանը, – համաշխարհային պոեզիայի գագաթն է: ...Հայ տառերով, հայ բառերով այդպիսի բանաստեղծություն չի գրված՝ հայրենասիրության տեսանկյունից: ...Կարելի է ասել, որ եվրոպական համաշխարհային գրականության հայրենասիրական ժանրի բանաստեղծություններ, այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խորքով գրված բան՝ գոնե ես չեմ հիշում»²⁰⁴:

Բանաստեղծությունը եզրափակվում է համընդգրկուն ազգային սրբագործված խորհրդանիշով՝ Արարատով: Է. Ջրբաշյանի համոզմամբ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը Հայաստանի հավաքական պատկերը սահմանելու, նրա անցյալը, ներկան և ապագան համադրելու և հայ ազգային գրականության հայրենասիրական ավանդույթներն ու ձեռքբերումները հանրագումարի բերելու և նոր աստիճանի բարձրացնելու սահմանագիծն է»²⁰⁵:

Խորհրդային ժամանակաշրջանի ամենախոշոր բանաստեղծը, որն անմիջականորեն շարունակեց իր ստեղծագործություններում արտացոլել Թումանյանի ու Չարենցի հայրենիքի ու հայրենասիրության, նոր ու հզոր հայրենիք ունենալու, պահպանելու, սերունդների գիտակցության մեջ ամրապնդելու ու հավերժացնելու գաղափարները, Հովհաննես Շիրազն էր: Հայտնի է, որ 1930-ական թթ. անհատի պաշտամունքի դաժան քաղաքականությանը հաջորդած Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեղմացան բռնաճնշումներն ու ազգային մտածողության

²⁰⁴ Ա. Իսահակյան, Երկեր, հ. 5, էջ 125:

²⁰⁵ Է. Ջրբաշյան, Չորս գագաթ, Երևան, 1982, էջ 446:

հետապնդումները: Պետականորեն թույլատրվեց, որ հայրենասեր գրողներն ու բանաստեղծները անդրադառնան խորհրդային հայրենիքի ու հայրենասիրության թեմաներին: Նպաստավոր այս պահը օգտագործելով՝ հայ գրողները խորհրդային անծայրածիր հայրենիքի ու հայրենասիրության ալիքի վրա վեր հանեցին նաև հայ ժողովրդի հայրենիքի սրբագործման ու Արևմտահայաստանի՝ գերությունից ազատագրման գաղափարները: Ահա այս նպաստավոր ակնթարթում ստեղծվեցին Հ. Շիրազի հայրենասիրական բանաստեղծությունները: Առաջիններից էր. «Որն է բաբո մեր հայրենիք» բանաստեղծությունը, որում իր հայրենիքից անտեղյակ պատանու հարցին բանաստեղծը ներկայացնում է մոռացված հայրենիքի մի ամբողջական համայնապատկեր.

«Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք» հարցին բանաստեղծը պատասխանում է.

-Էն, որ ունի բարձր երկինք,
Էն, որ ունի կարմիր արև՝
Յուր կապուտակ գլխի վերև.
Էն, որ ունի լեռն Ալազյազ,
Հավքերն՝ աշուղ, ջրերը՝ սագ:
Էն, որ տեսքով իր Սևանի՝
Մազերն արծակ ու գեղանի՝
Նստած հարսի կնմանի:
Էն, որ ունի աշխարհի թագ՝
Քանց թագավոր՝ Մասիս ճերմակ,
Ճերմակ Մասիս՝ սիրտը մրմուռ,
Գլուխը վեր՝ դրախտի դուռ:
Էն, որ ունի Մասիսն ի վար
Հին-հին բերդեր, վանքեր մթար,

Որ ավերակ, բայց դեռ դարեր
Լուռ կ'աղոթեն երկինքն ի վեր:
Էն, որ ունի Արագ, Տղմուտ,
Եւ ավերը մամռոտ ու մութ
Գերեզմաններն են պապերուդ...
Էն, որ Ղազբեկն ու Արագած'
Արտերու մեջ՝ փխպեր կանգնած'
Ձեռ կզարնեն գինով թասին
Ու կծայնեն մեր Մասիսին,
Թե՛ «Հե՛յ, բաբո, բավ չէ՞ մենակ
Պանդուխտ մնաս ամպերու տակ...»²⁰⁶:

Ուշագրավ է, որ 1937 թ. բովով անցած Շիրազը ոչ միայն չքնաղ հայրենիքն է ներկայացնում, այլև համարձակվում է ակնարկել այդ հայրենիքի պանդուխտ լինելը, սրտի մրմուռը, ավերակ վիճակը և այլն: Թերևս առաջին անգամ են այս ակնարկներում հնչում հայրենիքի ազատագրության մարտահրավերները:

«Բնության երևույթների և առարկաների անձնավորումով,– գրում է շիրազագետ Ս. Մուրադյանը,– Շիրազը կերտում է Հայոց աշխարհի շղթայված լեռնագագաթների հոգեբանությունը. Հայաստանի ամեն մի լեռ մի քարացած հայ է անմեռ: Առնու լեռը հովիվ է քաջ, բլուրների հոտն իր առաջ, աչքն աղոթող՝ ծովն է Վանա՝ Նարեկացին սարն է Սասնա, Վարագա լեռն արծվի պես քարացել է՝ հայրիկն է, տես Արարատը Հայկն է վիմաց՝ երևանվող հույսի դիմաց»²⁰⁷:

Շիրազը անկրկնելի մասիսապաշտ է: Նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում հիշվում է Մասիսը, յուրաքանչյուրում ներկայանում է մի նոր կողմով ու հմայքով:

²⁰⁶ Հ. Շիրազ, Բանաստեղծություններ, Երևան, 1980, 172:

²⁰⁷ Ս. Մուրադյան, Հովհաննես Շիրազ, գիրք Ա, Երևան, 2012, էջ 219:

Պետք է նշել, որ ներկայացված տաղանդաշատ բանաստեղծներից ոչ մեկը իր առաջ խնդիր չէր դրել ստեղծելու հայոց ազգային համապարփակ գաղափարախոսություն: Նրանք իրենց ստեղծագործություններից յուրաքանչյուրում տարբեր մասնավոր խնդիրներ են դրել իրենց առջև: Քննարկվող պատմաշրջանում առաջինը Գարեգին Նժդեհն էր, որ իր առջև խնդիր էր դրել կերտել ազգային գաղափարախոսություն: Այս խնդիրներին նվիրված նրա աշխատությունները ո՛չ գիտական են, ո՛չ էլ գեղարվեստական: Նրանք հրապարակախոսական ժանրի դասական ստեղծագործություններ են:

Հրապարակախոսությունը հասարակական-քաղաքական ստեղծագործության տեսակ է, որի առաջնահերթ նպատակն է առաջադրել ու զանգվածի ուշադրությունը հրավիրել ժամանակաշրջանի ամենահրատապ խնդիրների վրա, ինչպես նաև ուղենշել նրա լուծման մայրուղիները:

Ինչպես արդեն նշել ենք, մեզ հայտնի ազգային գաղափարախոսությունները անվանակոչվել են կա՛մ ցեղի, կա՛մ հայրենիքի անուններով, ինչպես, օրինակ, «պանգերմանիզմ», «պանթուրքիզմ», «սիոնիզմ» և այլն: Գ. Նժդեհը նույնպես իր առաջադրած գաղափարները կյանքի կոչեց նախ ցեղի՝ «ցեղակրոնություն», ապա՝ հայրենիքի՝ «տարոնականություն» անվանումներով: Նժդեհն իր համախոհների հետ գործում էր սփյուռքում: Ձուլման ու օտարացման պայմաններում ապրող հայությանը անհրաժեշտ էին հույս ներշնչող գաղափարներ: 1932 թ. նոյեմբերին Սոֆիայում, Հայկ Ասատրյանի խմբագրությամբ հրատարակված «Խռովք» հանդեսում լույս տեսավ Գ. Նժդեհի «Ցեղակրոնությունն իբրև հաղթանակի զորույթ» հոդվածը, որով սկզբնավորվեց ցեղի ու հայրենիքի սրբագործման ուսմունքը:

1933 թ. Նժդեհը ԱՄՆ-ում կազմակերպեց ցեղակրոն շարժումը և հիմնադրեց «Ցեղակրոն ուխտը», որի գաղափարական ու կազմակերպչական հիմնադրույթները տպագրվեցին Բոստոնի «Հայրենիք» թերթի 1933 թ. ինը համարներում:

Էթնիկական տեսակի սրբագործման հարցը Նժդեհը կապում էր նրա հայրենիքի որակների հետ, մշակում ժողովուրդների ու նրանց հայրենիքների սերտ կապերն ու հոգևոր փոխազդեցությունները: «Փոխադարձ է ազդեցությունը երկրի և այն մշակող ժողովրդի միջև: Հնագույն ժամանակներում, ինչպես եւ քաղաքակրթության լուսաբացին, առաւել չափով զօրաւոր է եղել բնութեան ազդեցութիւնը մարդու վրայ:

Անհամար թելերով է կապուած իր գետերին, իր Վոլգային ոռոսական հոգին:

Ծովի, ծովեզրերի ծնունդն է յոյնը:

Անապատն է կաղապարել արաբի էութիւնը: Իսկ հայ էութիւնը մշակելու գործում ազդեցութեան առիծի բաժինը ընկել է Հայոց լեռներին:

Մասիսն է դայեակը հայ ոգու»,– գրում է Նժդեհը²⁰⁸:

Ցեղակրոնությունը ոչ թե անհատի, այլ ողջ ցեղի տեսակը բխեցնում է հայրենիքի յուրահատկություններից ու նվիրականության մակարդակներից: Ճանաչելով ցեղի արժեքները՝ նրա արարչական ծագման գաղափարը Նժդեհը սերտորեն կապում է նրա հայրենիքի սրբագործման փաստի հետ: Հայ ժողովրդի ստեղծած հին աստվածները Նժդեհի համոզմամբ վկայում են հայ ժողովրդի արարչական ծագման փաստը: Կարևորելով ցեղայինի գործոնը ժողովուրդների պատմության մեջ՝ Նժդեհը փորձում է տալ ցեղի ինքնատիպ սահմանումը. «Ինչ է ցեղը» հարցին Նժդեհը քիչ է համարում մարդաբանության տված բնու-

²⁰⁸ Գ. Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2001, էջ 245:

թագրումները: «Յեղը» դիմագծորեն ազգայինն է, այն տիպականը, որով ժողովուրդները տարբերվում են միմյանցից: Այսպիսով՝ Նժդեհը մարդկային հանրության բոլոր մակարդակների մեջ առաջնայինը համարում է նախնականը, զտարյուն էթնիկականը:

Ցեղակրոնությունը նախապատրաստելով աշխարհասփյուռ հայության համախմբման գործընթացը, կարևորելով ցեղականությունն արժեքները՝ ընդգծում է, կարևորում, առաջին պլան մղում հայրենագուրկ հայության գոյապահպանությունն ապահովող օբյեկտի՝ հայրենիքի գաղափարը:

Սովորական հողը, տարածքը Նժդեհի համոզմամբ դեռևս հայրենիք չէ. այն հայրենիք է դառնում իր հոգևոր արժեքներով: «Հայաստան երկիրը,– գրում է Նժդեհը,– հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբենը, Մամիկոնյանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործությունները»²⁰⁹:

Հազարամյակների անխոնջ ջանքերով կերտված հայրենիքը հեշտությամբ չի տրվում: Դա ձեռք է բերվում ամեն մի սերունդի և նրա առանձին անդամի կողմից, ձեռք է բերվում հայրենաճանաչմամբ, հայրենապաշտությամբ: Նժդեհի համոզմամբ «հայը Հայաստանից դուրս ենթակա է վատասերումի: Այդ չարիքի դեմ պայքարել հնարավոր չէ միայն ցեղային արժեքների, առաքինությունների և սրբությունների խոր ճանաչումով ու վերապրումներով – մի բան, որ հիմնավորեցի և անվանեցի Ցեղակրոնություն»: Դրա նպատակն էր անհայրենիք հայությանը հոգևոր ու քաղաքական անտուն-անտիրությունից փրկելով դարձնել հայրենատեր: Դա հայրենատիրական շարժում էր, որի մեջ վերանորոգվելով միայն պիտի միանային հայության բոլոր հատվածները²¹⁰: Իսկ ինչո՞ւ հայոց ազգային գաղափարախոսու-

²⁰⁹ Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 247:

²¹⁰ Նույն տեղում, էջ 304:

թյունը պետք է անվանվեր հայրենիքի մի գավառի՝ Տարոնի անունով հարցին Նժդեհը պատասխանում է. «Սուրբ է հայրենի երկրի ամեն մի բուռ հողը, սակայն ճիշտ է և այն, որ հայրենիքներն ունեն իրենց պատմառազմավարական տեսակետից ամենակարևոր ու ամենանվիրական երկրամասը, այն երկրամասը, ուր ցեղը ավելի շատ է արյուն թափել, մշակութային գանձեր դիզել, հերոսական պատմություն ստեղծել, այն երկրամասը, առանց որի հայրենիքը չէր կարող գոյատևել: Այս առումով ճակատագրորեն մեծ է Տարոնի խորհրդանշական նշանակությունը: Տարոնն է եղել Հայաստանի հոգևոր գլխավոր կենտրոնը, Տարոնում է ստեղծվել հայոց հերոսավեպը՝ էպոսը, Տարոնում են ծնվել Մաշտոցն ու Խորենացին, Տարոնում են գործել Մամիկոնյանները, Տարոնն է նոր ազատամարտի կենտրոնը և այլն: Ինչպես սիոնականությունը, տարոնականությունը ևս նոր ուսմունք է, բայց իր թիկունքում ունի սրբազան Սիոնի ու հերոսական Տարոնի ոգի ներշնչող հազարամյա գաղափարները: Տարոնականության մեջ մշակվել է ամբողջական հայրենիքի մասին հստակ տեսություն: Տարոնականությունը կորցրած հայրենիքը ազատագրելու և այնտեղ ապրելու հույս ներշնչող ու կամք կերտող ուսմունք է: Ինչպես տեսնում ենք, Նժդեհը սրբագործում է Տարոն աշխարհը իր աշխարհ բերած սուրբ մարդկանցով և սրբազան իրադարձություններով: Այս նոր շարժումը հիմնադրեցին Գ. Նժդեհն ու Հ. Ասատրյանը: Շարժման հենարանը հանդիսացավ «Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը», որը հիմնադրվել էր 1917 թ. ԱՄՆ-ում: 1938 թ. ապրիլին Սոֆիայում «Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը» սկսեց լույս ընծայել «Տարոնի Արծիվ» ամսաթերթը, որով սկիզբ դրվեց տարոնական շարժմանը²¹¹:

²¹¹ Տե՛ս Մ. Լալայան, Ցեղակրոն և Տարոնական շարժումը, Երևան, 2011, էջ 78:

Հայոց ազգային ինքնության գաղափարախոսությունը

Հայոց ազգային ոգու ինքնաճանաչման՝ ինքնության միջնադարից կյանքի կոչված գաղափարը նոր թափով ու որակով բորբոքվեց XX դարասկզբին: Սեփական հայրենիքին ու ժողովրդին, նրա պատմությունն ու մշակույթը ճանաչելու խնդիրը առաջնային է դառնում նաև այս շրջադարձային փուլում: Հ. Թումանյանի կարծիքով մինչև այդ ժամանակ հայ ժողովուրդը այդ արժեքները ընկալել է ենթագիտակցորեն, զգացմունքով, հախուռն, առանց հասկանալու, թե ինչ ենք սիրում և ինչու, այժմ գալիս է ժամանակը՝ նրանց էությանը հետամուտ լինելու, նրանց լեզուն ու միտքը հասկանալու²¹²: Էթնիկական ինքնությունը բարդ, մշակութափոփոխական համակարգ է:

«Հայոց ազգային ինքնությունը»՝ իբրև հավաքական հասկացություն, ավելի համապարփակ ու բազմաշերտ է, քան ազգային գաղափարախոսության մյուս տարրերը՝ սրբագործված հայրենիքի, արարչական ծագման, ազգային միասնության հիմնադրույթները, այդ պատճառով էլ ազգային ինքնության բնույթը քննելի է գիտական, հոգեբանական, մշակութաբանական և այլ մակարդակներում, որի նպատակն է հայտնաբերել, ազգային ոգու, սովորական աչքով անտեսանելի շերտերը:

Էթնոհոգեբանները նույնպես գտնում են, որ էթնիկական հատկանիշները մարդու վարքի վրա ազդում են ենթագիտակցորեն: Երբ անհատի էթնիկական սոցիալականացումն ընթանում է նրան ծնած ազգի միջավայրում, նրա ազգային ինքնությունը լինում է ամբողջական ու անհատական: Հայինը և՛ իր երկատ-

²¹² Տե՛ս Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, 1995, էջ 137-138:

ված հայրենիքում էր բարդ ու բազմաշերտ, և՛ հայկական սփյուռքում²¹³:

Որպես հնդեվրոպական ժողովուրդ՝ ասիական արևելքում մեզ համարում ենք յուրահատուկ քաղաքակրթություն կրող ու կերտող, մեր երկիրը՝ երկիր դրախտավայր, մարդկության հնագույն օրրան: Հայ մտածողությունը բնութագրվում է որպես պատմության մեջ ազգային նախասկզբի հաստատման և հայ ազգի պատմական կեցության հոգևոր-բարոյական հիմքերի բացահայտման ու հիմնավորման փորձ: Ելնելով ազգային միասնականությունից ու անկախությունից զուրկ ազգի գաղափարախոսներ՝ հայ մտածողները ձևակերպում են ազգի հոգևոր-բարոյական միասնության գաղափարը՝ որպես նրա գոյապահպանման ու անկախության ձեռք բերման երաշխիք:

Հայկական աշխարհայացքը ձգտում է ընկալել այն բոլորը, ինչը հասու էր ժամանակի հասարակագիտական ու մշակութային մտքին՝ բացահայտելու և իմաստավորելու համար դարասկզբի մտավոր ու հոգևոր ձեռքբերումները:

Եվ ասպարեզ է իջնում ազգային արժեքների իմաստավորման համազգայնացման ու համաշխարհայնացման ուղիները մշակող տաղանդավոր գործիչների համաստեղությունը. Կոմիտասը հայտնագործում է հայ երգարվեստի, Թորամանյանը՝ հայկական ճարտարապետության, Աբեղյանը՝ հայ բանագիտության, Աճառյանը՝ հայոց լեզվամտածողության, Լեոն՝ հայոց պատմության հազարամյա գաղտնիքները:

Դարասկզբի հայ իրականության մեջ սկսված մշակութային աննախընթաց շարժումը, գեղարվեստի բոլոր ճյուղերի, հայագիտության և հայերենագիտության բոլոր ասպարեզների վերելքը

²¹³ Տե՛ս Ա. Նալչաջյան, Ազգային ինքնություն, Երևան, 2012, էջ 27:

կերտեցին հայոց ազգային ինքնության դարաշրջանին համահունչ գաղափարախոսական կոտ համակարգ:

Երաժիշտ-բանաստեղծ, երաժշտագետ, երգիչ, խմբավար, հայկական կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտասին Խրիմյան Հայրիկը 1901 թ. ամռանը գործուղեց Գերմանիա, որպեսզի նա մասնակցի Բեռլինի եկեղեցական երաժշտության համաշխարհային կոնգրեսին: Բայց նա հայ երգը օտարների ներկայացնելու մի հսկայական ծրագիր իրագործեց: 1906 թ. Փարիզում Կոմիտասի ծավալած գործունեության տպավորության տակ տեղի երաժշտական ամսագրերից մեկը գրում է. «Այս համերգը մի հայտնություն, մի սքանչանք էր, ես կարծում եմ՝ մեզանից ոչ ոք չի կասկածում այս արվեստի գեղեցկության վրա, որ իսկապես ո՛չ եվրոպական է, ո՛չ էլ արևելյան, բայց եզակի է իր բնույթով, շնորհագեղ քաղցրությամբ, թափանցող և հուզիչ քնքշությամբ: ... Երգերն արեգակ ունեն, բայց ոչ կիզիչ արևը Արաբիայի կամ Պարսկաստանի անապատների: Մի տևական հովվերգություն՝ անդորր ու քաղցր, և այդ էր իսկապես Հայաստանի հավիտենական կյանքը...»²¹⁴:

Բազմաթիվ համերգներից ու դասախոսություններից բացի՝ Կոմիտասը հրատարակեց բազմաթիվ ուսումնասիրություններ, զբաղվեց հայկական խազագրության վերծանությամբ, գրի առավ ժողովրդական երգեր, որոնք հայտնություն էին Եվրոպայի երաժշտագետ հասարակության համար, և որոնք ոչ միայն բարձրացնում էին նրա անունը, այլ հռչակում նրա հայրենիքը՝ որպես բարձր քաղաքակրթության և ինքնատիպ երգարվեստի

²¹⁴ Ա. Ժամկոչյան, Կոմիտաս, Երևան, էջ 24-25, հմմ. «Արարատ», 1907, հ. 1-2, էջ 144-146:

երկիր. «Հայ երաժշտությունը հռչակվում է շատ ավելի հարուստ քան եվրոպականը»²¹⁵:

Եվրոպական երաժշտագիտական թերթերից մեկն էլ գրում է. «Այս երգերը արեգակ ունեն..., ոսկեզօծ պարզությամբ, ամողջովին երկնային, որի ջերմությունը մի գգվանք է ծյունապատ լեռանց գագաթների, սաղարթեղ անտառի և խոխոջող վտակած փայլով:

Թերևս սխալ չլիներ ոմանց կարծելը, թե երկնավոր դրախտը Հայաստանում՝ Արարատ լեռան ստորոտին էր, որովհետև այն աշխարհը, որի պատմությունը այնքան չարաբաստիկ եղավ, իրոք ընտրյալ երկիր է»²¹⁶:

«1914 թ. Փարիզում կայացած միջազգային երաժշտական ընկերության համագումարին,– գրում է Ժամկոչյանը,– որին հրավիրված էին աշխարհի 400 խոշորագույն երաժիշտներ, Կոմիտասը դրեց հայ երաժշտության համաշխարհային հռչակի սկիզբը»²¹⁷:

Այսպիսով՝ Կոմիտասը աշխարհին ցույց էր տալիս, որ թուրքական յաթաղանից կոտորվող հայ ժողովուրդը ստեղծել է երգարվեստի ինքնատիպ դպրոց:

Այն, ինչ Կոմիտասը կատարեց երաժշտական ինքնության բացահայտման ուղղությամբ, Թ. Թորամանյանը կատարեց հայ ճարտարապետության ազգային դիմագիծը բացահայտելու ուղղությամբ: Նա առաջինն էր, որ տաղանդավոր գիտնականի հմտությամբ բացահայտեց հայկական ճարտարապետության ծագման հազարամյա ակունքները, զարգացման փուլերը, կրած ու թողած ազդեցությունները: Հայկական ճարտարապետու-

²¹⁵ Թեոդիք, Ամենուն տարեցույց, 1926, էջ 486:

²¹⁶ «Արարատ», 1907, Ա, էջ 144:

²¹⁷ Ա. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 63:

թյանն անտեղյակ եվրոպացուն և հենց իրեն՝ հայ ժողովրդին, ներկայացրեց հայկական ինքնատիպ ճարտարապետության գոյության փաստը: 1912 թ. Վիեննայի արվեստի պատմության ինստիտուտի պրոֆ. Յ. Ստիժիգուվսկու առաջարկությամբ Թորոմանյանը Վիեննա ուղարկեց իր հարուստ ուսումնասիրությունները (1000 գծագիր, չափագրություն, լուսանկար), որը Ստիժիգուվսկին «Հայկական ճարտարապետությունը և Եվրոպան» խորագրով (երկու հատորով) հրատարակեց, և որի շնորհիվ, թեև Ստիժիգուվսկու անունով, հայկական ճարտարապետությունը միջազգային ճանաչում ստացավ որպես ինքնուրույն ճարտարապետական դպրոց:

Ակադեմիկոս Մ. Աբեղյանը՝ դասական հայագիտության նոր փուլի տաղանդավոր հիմնադիրը, հայ նոր բանագիտության ռահվիրանը, համակարգեց պատմավիպական ու քնարական ժանրերի ժողովրդական ստեղծագործությունները, մշակեց դրանց գոյացման և պատմատիպաբանական զարգացման տեսությունները, հայտնաբերեց «Սասնա ծռերի» տարբերակներ, բացահայտեց նրա ժանրային գեղարվեստական հատկանիշները, ի հայտ բերեց նրա պատմական ատաղձն ու առասպելական շերտերը, մեկնաբանեց հայ ժողովրդի հավատալիքները, հայ հին գրականության պատմությունը և այլն:

Հայագիտության մի քանի կարևորագույն բնագավառների ի հայտ բերողն ու տաղանդավոր հետազոտողն է ակադ. Հ. Աճառյանը: Նրա 1926-1935 թթ. յոթ հատորով հրատարակած և 11 հազ. բառարմատ պարունակող «Հայերեն արմատական բառարանի» մասին Ա. Մեյեն ասել է. «Ոչ մի լեզվի համար չկա այսքան ճոխ, այսքան կատարյալ ստուգաբանական բառարան»: Հայագիտական մեծահարուստ նյութերով բացառիկ երևույթ է նաև 5-հատորանոց «Հայոց անձնանունների բառարանը», որում

տաղանդավոր հայագետը հավաքել, ուսումնասիրել և գետեղել է հայ մատենագրության մեջ հիշված գրեթե բոլոր անձնանունները՝ տալով դրանց ստուգաբանությունը և այդ անունները կրող գործիչների կենսագործունեությունը: Բացառիկ արժեքավոր է նրա «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» վեցհատորյակը:

Հայոց պատմության ստեղծման և ժողովրդականացման գործում նույնպիսի տիտանական աշխատանք է կատարել Լեոն: Բացառիկ արժեք է ներկայացնում գրեթե գեղարվեստական, հյուսել լեզվով շարադրված եռահատոր «Հայոց պատմությունը»: Ժողովրդի բոլոր մակարդակներին մատչելիությամբ այն անգերազանցելի է հայ պատմագրության մեջ:

Հայ գեղարվեստական գրականության համակարգում ևս առանցքային տեղ ունի ազգային ինքնության-ինքնաճանաչման գաղափարի գեղարվեստական մշակման խնդիրը: Հայ գրողները՝ անբաժան իրենց ժողովրդի ճակատագրից, ինչքան տաղանդավոր, այնքան խորությամբ են թափանցում նրա ոգու ներքին ծալքերը: 1910-ական թթ., ելնելով ազգի առջև ծառացած գերբարդ խնդիրներից և իր առաքելության բարձր գիտակցությունից, առաջինը Հ. Թումանյանը ձեռնամուխ եղավ բացահայտելու իր տառապած ժողովրդի ինքնությունը: Այս հսկայածավալ թեմայի մեկնաբանման հիմնական ժանր ընտրեց քաղաքական հրապարակախոսությունը և ստեղծեց իր պոեզիայի հանճարեղ արժեքներին համահունչ հրապարակախոսական արժեքներ: Թումանյանի հրապարակախոսությունը թեմատիկ առումով հայ ժողովրդի հոգեկերտվածքի յուրատեսակ հանրագիտարան դարձավ²¹⁸:

²¹⁸ Տե՛ս Ժ. Մխիթարյան, ազգային ինքնաճանաչողությունը Հովհաննես Թումանյանի հրապարակախոսությունում, Երևան, 2007, էջ 4:

Ազգային ինքնության բացահայտման թումանյանական համակարգում Հայաստանն ու հայ ժողովուրդը ներկայացվում են պատմական երեք չափումներով՝ անցյալի, որտեղից գալիս ենք, ուր տիրապետողը մաքառումն է, աղետների ու արհավիրքների հաղթահարումը, ժառանգած արժեքների նկատմամբ հպարտությունն ու անանց սերը, ապրվող ժամանակի, որտեղ ենք, ուր իշխողը դարձյալ մեծ տառապանքն է, խիստ միգամածությունն ու փրկության ելքերի փնտրտուքը, գալիքի, թե ուր ենք գնում և ինչպիսի դիմանկարով: Ըստ Ս. Զորյանի՝ Հ. Թումանյանը հայ գրականության համար նույնն է, ինչ որ Պուշկինը ռուս գրականության համար:

...Երկու բանաստեղծն էլ ներկայացնում են միևնույն տարերքը՝ խորին ըմբռնում ցեղային ոգու, ցեղային առանձնահատկությանց և լուսավոր սեր դեպի սեփական ժողովրդի ներկան, անցյալը, ...երկուսն էլ... հայտնաբերում են ցեղային նկարագիրը, ոգին, աշխարհայացքը...: Ինչպես Պուշկինի մոտ, մարդ հինգ զգայարաններով զգում է ռուսն ու ռուսականը, այնպես էլ Թումանյանի երկերում, լինի մանկական ուտանավոր, պոեմ, հեքիաթ, թե լիրիկական հատված, մարդ զգում, տեսնում և շնչում է հայն ու հայկականը...: Նա տալիս է իր ցեղի ոգին»²¹⁹:

Թումանյանի կարծիքով պատմությունը ցեղեր է հիշում, որ իշխել ու նշանավոր են եղել, բայց հենց որ կորցրել են այն հավելել ու անհետացել են: Ցեղեր էլ կան, որ անկախությունը կորցնելուց հետո էլ շարունակել են պահպանել ազգային դեմքն ու դիմագիծը: Այդ ժողովուրդներից է հայ ժողովուրդը, որ բազում փորձություն ու տառապանք է տեսել, բայց իր ազգային դիմագիծը չի կորցրել: Եվ բնական հարց է առաջանում, «թե որն է էս ժողովրդի պատմական ճակատագիրը, սրա գոյության խորհուր-

²¹⁹ Ս. Զորյան, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 312:

դը, ինչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ուր որոնենք էդ ոգին, արդյո՞ք Սասունի, Զեյթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերում, թե՞ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում: Արդյոք հին վանքերի միստիկ կամարների տակ, ուր ծավալվում է «խորհուրդ՝ խորին, անհաս և անսկիզբ», թե՞ դալար մարգերում ու խաղահանգիստ հովիտներում, ուր «լուսնակն անուշ, հովն անուշ, շինականի քունն անուշ»: Արդյո՞ք «Ի խորոց սրտի, խօսք ընդ Աստուծո» խոսողի երկնաչու պաղատանքների մեջ, թե՞ «Վերք Հայաստանի» հայրենասիրական ողբի հառաչանքների ու մորմոքների մեջ»²²⁰:

Ինչպես տեսնում ենք հայ ցեղին աննկուն ոգի ներշնչող ուժի աղբյուրների որոնումները Թումանյանին տանում են հայոց կուսական սարերն ու դաշտերը, աղոթք դարձած երգերը ու համազգային վերքերը: «Իհարկե էս ամեն տեղերում, էս ամենի մեջ» ընդհանրացնում է մեծ գեղագետն ու շարունակում, բայց, դժբախտաբար, այս վեհ ու վեհացնող արժեքների մասին չգիտենք, մենք էլ մեզ չենք ճանաչում: «Երկիր ունենք – չենք ճանաչում, պատմություն ունենք – չենք ճանաչում, ժողովուրդ ունենք – չենք ճանաչում, գրականություն ունենք – չենք ճանաչում, լեզու ունենք – չենք խոսում: ...Չենք հասկանում, թե էդ չգիտենալով ինչքան բան չգիտենք»²²¹:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչողության ու զարթոնքի պահերին է միայն վերելք ապրում վտանգված ժողովրդի ազգային կյանքը: Անդրադառնալով բազմաթիվ կոտորածների, հալածանքների ու հայրենագրկության հետևանքով առաջացած կենցաղային արատավոր դրսևորումներին՝ Թումանյանը բացատրում է նրանց

²²⁰ Հ. Թումանյան, Ընտիր Երկեր, հ. 2, էջ 277:

²²¹ Նույն տեղում, էջ 263:

ծնող պատճառները: «Մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությունով,—գրում է Թումանյանը «Դառնացած ժողովուրդ» հոդվածում,— ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը, նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում:

... Էն հասարակ վարունգի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտքի տակ է ընկնում, էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում»²²²:

Մեծ ազգասերը հայ ժողովրդի նույնիսկ կենցաղային արատներին հանճարեղ բացատրություն է տալիս՝ դրանք անվանելով ոչ թե բնածին, այլ ձեռքբերովի արատներ: Մեծ մտածողը համոզված է՝ ինչ առաքինություններ որ ունեն հայերը, իրենցն է, իսկ ինչ վատն է, պարտադրվել են իրենց բռնակալներից:

Ազգային ինքնության բացահայտմանն ուղղված ստեղծագործություններում Նժդեհը դիմում է փիլիսոփայական խոհերի, աֆորիզմների, թևավոր խոսքերի ու արձակ բանաստեղծությունների արժեք ունեցող տպավորիչ հնարանքների օգնությամբ: Ամենակարևոր մտքերը մատուցում է հանրահայտ առասպելներից, բանահյուսությունից, գիտական գրականությունից, պետական ու քաղաքական հանրահայտ գործիչների պատկերավոր արտահայտություններով ու ասույթներով:

Օրինակ՝ բարոյական ուժն է գոտեպնդում փոքրաթիվ ժողովուրդներին, ըստ Նժդեհի, նա է դեպի հաղթանակ ուղեկցում թույլերին հզոր հակառակորդների դեմ մղած կռիվներում: Ինքնաճանաչության բացակայությունը հանգեցնում է չօգտագործ-

²²² Հ. Թումանյան, Ընտիր երկեր, հ. 2, 1985, էջ 285:

ված ուժերի կորստի: Ազգի ներուժի մեծագույն մասը մնում է թմրած վիճակում, երբ նրանց գոյության մասին չի գիտակցում ազգը, մինչդեռ ինքնաճանաչության արդյունքում ազգը դառնում է ինքնավստահ ու աներկյուղ²²³:

«Սեփական ժողովրդի անունից խոսում են բոլորը, սակայն քչերն են իրականում ճանաչում նրան: Կուզեի, որ դու, հայ երիտասարդ,– խորհուրդ է տալիս մեծ ազգագետը,– որ դու յուրացների ինքնաճանաչությունը որպես ուժի, հաղթանակի և բարձր երջանկության ամենակարճ և ամենաստույգ ճամփան:

Ծանիր զքեզ:

Գիտցիր,– ասում է Դելփեան այդ պատգամը, գիտցիր, որ մարդս գաճաճ է իր ներքին հսկայի բաղդատությամբ:

Ծանիր զքեզ–²²⁴:

Որպես հայոց ազգային նկարագրի ինքնատիպ դրսևորումներ՝ Նժդեհը առանձնացնում է հայոց հերոսական պատմությունը, «Սասունցի Դավիթ» էպոսը, որի հերոսներն ու նրանց բարքն ու գործերը խոր հարգանք են ներշնչում մարդու վրա: Նժդեհը, մեջբերում կատարելով Ալիշանից, որ հայը ոգու ժողովուրդ է, կատարում է դիպուկ ընդհանրացում. հայը ստեղծագործել է՝ միտքը երկնքում, ձեռքը երկրի վրա: Անդրադառնալով հայ ժողովրդի բացառիկ աշխատասիրությանը՝ գրում է. «Երկրագնդի վրա երկու ուժեր չեն հոգնում՝ ժամանակն ու հայը՝ մեկը կործանելով, մյուսը վերաշինելով²²⁵»:

Նժդեհի համոզմամբ հայրենիքը պաշտպանել վաղը կարող են նրանք, ովքեր մինչև վաղը կսովորեն ապրել ու գործել միայն

²²³ Տե՛ս **Գ. Նժդեհ**, Հատընտիր, էջ 36:

²²⁴ Տե՛ս **Գ. Նժդեհ**, նշվ. աշխ., էջ 96:

²²⁵ Նույն տեղում, էջ 257:

այն բանի համար, որի համար արժի մեռնել, և մեռնել այն բանի համար, որի համար արժի ապրել²²⁶:

Ժողովուրդների անգորության ու դժբախտության հիմնական պատճառը համարելով սեփական էության մասին անգիտությունը՝ Նժդեհը անհնար է համարում ազգի երիտասարդության անսխալ դաստիարակությունը, արդյունավետ ազգային անվտանգության ռազմավարության մշակումը՝ առանց սեփական ոգու ճանաչման:

Ազգը գնահատվում է մարդկությանը տված իր արժեքներով: «Իմ ցեղը ավելին է տվել մարդկությանը,– հպարտությամբ հայտարարում է Նժդեհը,– քան ստացել է նրանից»²²⁷:

Հայոց ազգային միասնության՝ ինքնահամախմբման գաղափարախոսությունը

Ինքնահամախմբման՝ ազգային միասնության հիմնախնդիրը դարեր շարունակ հայ ազգային գործիչների մտահոգության ասպարեզն է եղել: Այն նոր թափով ու ծավալով ծառացավ նաև XX դարասկզբին՝ կապված Առաջին համաշխարհային պատերազմի, Հայոց ցեղասպանության, փրկվածների հայրենիքից դուրսմղման, Արևմտահայաստանի բզկտման ու հայաթափման և սփյուռքի առաջացման, Արևելահայաստանի մասնատման, նրա անբաժան մասը հանդիսացող Արցախի ու Նախիջևանի Ադրբեջանին բռնակցման, Կարսի, Իգդիրի և հարակից շրջանների Թուրքիային բռնակցման հետ: Փաստորեն՝ XX դարը ազգային միասնության տեսանկյունից ևս արևելահայության և

²²⁶ Տե՛ս **Գ. Նժդեհ**, նշվ. աշխ., էջ 338:

²²⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 395:

արևմտահայության համար ինչ-որ չափով տարբեր խնդիրներ առաջադրեց:

Անդրադառնալով «ազգային միասնություն» հասկացությանը՝ ամերիկացի ճանաչված գիտնական Անտոնի Դ. Սմիթը գրում է, որ նշված եզրույթն ունի նաև պարզ և ավելի քողարկված ազգայնական նշանակություն: Պարզագույն մակարդակում դա նշանակում է ազգային տարածքի կամ հայրենիքի միացում, եթե նա բաժանված է, և բոլոր ազգակիցների հավաքումը նույն տարածքում: Նույնիսկ այստեղ ազգականները ներկայացնում են առավելապես փիլիսոփայական գաղափար: Հայրենիքից դուրս ապրող ազգակիցները համարվում են «կորած», ու այն հողերը, որտեղ նրանք են բնակվում, հատկապես հայրենիքին սահմանակիցները, համարվում են «չվերադարձված», և պետք է դրանք վերադարձնել ու «փրկել»: Սա ծնում է ազգայնական այնպիսի շարժում, ինչպիսին է «Իռեդենտիզմ»²²⁸, այսինքն՝ ազգային շարժում, որի նպատակն է տարանջատված ժողովուրդների ու ազգերի միավորումը, նախկինում կորցրած տարածքների վերամիավորումը: «Իռեդենտիզմ» եզրույթը կյանքի է կոչվել Իտալիայում 1878 թ.՝ Գարիբալդիի գլխավորությամբ ծավալված ազգային-ազատագրական շարժումների ժամանակ, շարժումներ, որոնց նպատակն էր ավստրոհունգարական սահմանակից հողերը ազատագրելը և իտալական թագավորությանը միացնելը: Քաղաքագիտական բառարանում եզրույթը բացատրվում է նաև «նույն պետության մեջ պետության քաղաքականությունը՝ տվյալ ազգի, ժողովրդի, էթնոսի միացումը», այսինքն՝ «նախկին հողերի միավորում»²²⁹:

²²⁸ **Անտոնի Դ. Սմիթ**, Ազգային ինքնություն, Նևադա, 1991, էջ 74:

²²⁹ Տե՛ս **Ա. Մնացականյան**, Քաղաքագիտություն, համառոտ հանրագիտական բառարան, Երևան, 2019, էջ 146:

Ինչպես տեսնում ենք, Արցախի համար ծավալված պայքարը և ապագայում Նախիջևանի ու հարակից շրջանների համար ծավալվելիք պայքարը իր բնույթով համընկնում է Անտոնի Դ. Սմիթի առաջադրած իռեդենտիզմի չափանիշներին:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի աշխարհասփյուռ լինելուն՝ իբրև բոլոր դարերում դրսևորված ազգակործան երևույթին, նշված ժամանակահատվածում այն առավել զանգվածային ու կործանարար դարձավ: Հայոց ազգայնականության վերը նշված հինգ գաղափարներից առանձնանում և կարևորվում են որպես հայկականության տարածքային և արժեքային համակարգի ամբողջական ըմբռնումը, տարածաշրջանում ու սփյուռքում նրա տեղի ու դերի ազդեցությունը՝ որպես գոյատևման գլխավոր պայման:

Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանության հետևանքով, մեկուկես միլիոն զոհերից բացի, հայրենիքից վտարվեցին ևս մեկ միլիոն հայեր, որոնք պատասպարվեցին բոլոր աշխարհամասերում: Առաջացավ հայ ժողովրդի կեցության մի նոր կարգավիճակ՝ սփյուռք, որը հատկանշվում է ժողովրդագրական, քաղաքական-տնտեսական, հասարակական, հոգեբանական ու մշակութային յուրահատկություններով: Սփյուռքի քաղաքական առանձնահատկության իմաստը, որով նա տարբերվում է հայկական նախկին գաղթօջախներից, բնորոշվում է սեփական հայրենիքում ազգային պետականության գոյությամբ, պետականություն, որը տարբեր ժամանականահատվածներում ու տարբեր ծավալներով ծառայել է սփյուռքահայությանը: Սփյուռքը որակվել է ոչ թե ինչ-որ ցեղի թափառական հատված, այլ պետականակիր ժողովրդի տիտղոսակիր ազգի դրսաբնակ հատված: Քաղաքական այս կարևոր կարգավիճակը կարևորվում է նաև նրանով, որ սփյուռքահայ առանձին գաղթօջախներ

լուրջ ազդեցություն են ունենում իրենց ապրած երկրների և Հայաստանի միջպետական հարաբերությունների ընթացքի, ինչպես նաև հայության համազգային խնդիրների նկատմամբ տվյալ երկրի դիրքորոշման վրա²³⁰:

Արևմտյան Հայաստանից դուրս վտարված հայ զանգվածները սկզբնական շրջանում վերադարձի ակնկալիքով վերաբնակվում էին Հայաստանին հնարավորինս մոտիկ վայրերում՝ Մերձավոր Արևելքի երկրներում՝ Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Եգիպտոսում, Հունաստանում: Սակայն 1922-1923 թթ. Լոզանում կայացած խորհրդաժողովի ընդունած պաշտոնական փաստաթղթերում, երբ ոչ մի հիշատակություն չինչեց հայերի ու Հայաստանի կարգավիճակի մասին, օտար ափերին հայտնված հայությունը, վերադարձից հույսները կտրած, ձեռնամուխ եղավ իրենց տնտեսական ու ազգային կեցությունն ապահովելու և նոր ապրելավայրում արմատավորվելու գործին, որով էլ սկսեց ձևավորվել հայկական սփյուռքը: Հիմնադրվեցին ազգահավաք հաստատություններ՝ ակումբներ, ժողովատեղիներ, վարժարաններ, եկեղեցիներ, որբանոցներ: Գաղութահայության այս նոր հանրույթը 1931 թ. Փարիզի «Յառաջ» թերթը կոչեց «Սփյուռք»²³¹:

Այսուհանդերձ սփյուռքի կազմավորումը տեղի էր ունենում անհաշտ պայքարի պայմաններում: Պայքարը մղվում էր առանձին համայնքների, քաղաքական կուսակցությունների և նույնիսկ հուսահատ ժողովրդի մեջ մեծ տարածում գտած աղանդների միջև: Սփյուռքի կազմավորմանը զուգընթաց Հայաստանում հաստատված խորհրդային վարչակարգը պատերազմ էր հայտարարել կապիտալիստական աշխարհի դեմ, աշխարհ, որտեղ պատսպարվել էին նաև հայ փախստականները: Այս պայմաններ

²³⁰ Տե՛ս Հայոց պատմություն, հ. 4, գիրք 1-ին, Երևան, 2010, էջ 623:

²³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 630:

րում հայրենիք-սփյուռք կապը խարսխված էր միայն ազգային էթնիկական հիմքի վրա, որ պետք է դիմակայեր քաղաքական, կուսակցական գաղափարախոսական գործոններին:

Ազգային ինքնահամախմբման քաղաքականության ու գաղափարախոսության այս բարդ ու հակասական փուլի ջահակիրը դարձյալ Հովհաննես Թումանյանն էր:

Դատապարտելով ազգի ներքին տրոհվածությունը՝ Թումանյանը ազգի գոյատևման ապագան տեսնում էր ազգային միասնությունն ապահովող կառույցների մեջ:

1921 թ. աշնանը համատարած սովի մատնված հայ ժողովրդին օգնելու նպատակով Ա. Մյասնիկյանի նախաձեռնությամբ ստեղծվեց «Հայաստանի օգնության կոմիտեն» (ՀՕԿ), որի նախագահ ընտրվեց Հ. Թումանյանը: Թումանյանի «ամեն կուսակցական տարաձայնություններից վեր» ազգային միասնությունն ստեղծելու կոչին ի պատասխան՝ գաղթաշխարհի քաղաքական կուսակցությունները ընդունեցին համատեղ փաստաթուղթ: Հայացքների մեջ եղած տարբերությունները մի կողմ դնելով՝ կուսակցությունները հռչակեցին, թե իրենք միացած են ուժ տալու Հայաստանին սպառնացող սովի դեմ մղվելիք նվիրական կռիվին: Այս նպատակով քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները 1921 թ. հոկտեմբերին հիմնադրեցին «Հայրենիքի օգնության միություն» (ՀՕՄ) կազմակերպությունը որը դարձավ սփյուռքի առաջին համազգային մարմինը: Մեծ բանաստեղծի մահից հետո աստիճանաբար այս կազմակերպությունները քաղաքականացվեցին: Մի մասը սկսեց ծառայել կոմունիստական, մյուսը՝ ազգային կուսակցություններին, որից հետո՝ 1920-ական թ. վերջերին, խզվեցին և նույնիսկ թշնամական դարձան Խորհրդային Հայաստանի և սփյուռքի միջև կապերը:

Սփյուռքահայության մեջ ազգային շարժումների հետագա աշխուժացումը պայմանավորված էր կորցրած հայրենիքի վերանվաճման և օտար միջավայրում հյուրընկալող ժողովուրդներին չճանաչող ազգային զարթոնքի վերելքով:

1932 թ. նոյեմբերին Սոֆիայում Հայկ Ասատրյանի խմբագրությամբ «Խոռովք» ամսագրի հրապարակմամբ ազդարարվեց ցեղային վերանորոգչական շարժման սկիզբը, որի նպատակն էր մշակել հայ ժողովրդի վերածնության ուղիները: «Արևմտահայ ազատագրական ուխտի» գաղափարախոսությունը,– գրում է Մ. Լալայանը,– ուներ իր հատուկ «դավանանքը, որի զինանշանի վրա գրված էր՝ «Գաղութահայեր բոլոր երկրներու միացեք» կոչը»²³²:

Ազգային միասնության հիմնական գրավականը ներցեղային գաղափարով առաջնորդվելն էր: Ցեղակրոնությունը պատվիրում է մնալ հավատարիմ մարտիկը հայ ցեղի՝ անկախ կուսակցական ու կրոնական համոզմունքներից:

Հայ ժողովրդի ազգային միասնության՝ ինքնահամախմբման համապարփակ ծրագրով հանդես եկավ Գ. Նժդեհը: 1933 թ. ամռանը նա ՀՅԴ 12-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ մեկնեց ԱՄՆ, ուր նախաձեռնեց հայկական սփյուռքը համախմբելու շարժումը, որի համար ստեղծվեցին ցեղակրոն ուխտեր: Այս համազգային շարժման գաղափարախոսական հիմնադրույթները՝ «Ցեղային արթնություն» խորագրով, ինչպես արդեն նշել ենք, Նժդեհը հրատարակեց Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում:

1934 թ. կազմակերպությունը թեև կոչվեց ՀՅԴ ցեղակրոն ուխտ, այնուամենայնիվ ժխտեց ամեն կարգի հատվածականություն, կուսակցականություն, դասակարգային «ես»՝ ի շահ ազգի

²³² Մ. Լալայան, Ցեղակրոն և Տարոնական շարժումները, Երևան, 2011, էջ 15:

ներքին կյանքի: Դա պահանջում է հայոց լիազումար ազգահավաքումը հայրենի երկնքի տակ և ազգային ներդաշնակ մի համակերպություն, որում հայը հայի մեջ տեսնում է ճակատագրի ճշմարիտ իր եղբայրը²³³: Այս շարժումը առաջադրում է «Ճանաչիր ինքդ քեզ» բնաբանը, որը նշանակում է՝ ճանաչիր նախ քեզ ծնող հավաքականությունը՝ ցեղդ, որի ընդհանրական հատկանիշները պայմանավորում են քո անհատական կեցվածքը: Ազգային միասնության միակ գրավականը ներցեղային բարոյականով առաջնորդվելն էր:

Ծլարձակված պառակտիչ ուժերին վերջ տալու համար 1938 թ. ապրիլին Սոֆիայում «Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության» բազայի վրա ցեղակրոնության փոխարեն «Տարոնի Արծիվ» ամսաթերթի հետ ու նրա շուրջ սկիզբ դրվեց տարոնական շարժումը: Նոր հոսանքը ազգային միասնության գաղափարի հետ խորհրդանշեց նաև հայրենիքում ազգի համախմբման գաղափարը:

Տարոնականությունը կորցրած հայրենիքը վերանվաճելու և Հայաստանում համահավաք ազգային կյանքով ապրելու ուսմունք էր, այն տունդարձի ուխտ էր: «Փաստելով, որ օրվա հայությունը զերծ է ազգային ամբողջականության զգացումից, – նշվում է «Տարոնի Արծիվ» թերթի 1938 թ. թիվ 5-6-ի 6-րդ էջում, – որով եւ ազգային միության գիտակցումից, նաև լինելով հատվածապաշտ և եսակենտրոն՝ առաջնորդվում է նախանձի հաշվի վրա հենված ներկուսակցական բարոյականով: Տարոնականությունը՝ իբրև սկզբունք, որդեգրելով ներցեղային բարոյականը, ձգտում է արմատախիլ անել ներքին պայքարի ախտը, բովանդակ հայության ուժերը ներքին ճակատից տեղափոխել և կենտրոնացնել արտաքին վտանգի դեմ»:

²³³ Տե՛ս Մ. Լալայան, նշվ. աշխ., էջ 116:

Որպես ցեղային շարժման հիմնական սկզբունքներից մեկը՝ Մ. Լալայանը գրում է. «Յեղը ժխտում է ամեն կարգի հատվածականություն, կուսակցականություն, դասակարգային «Ես» և շահ՝ ազգային ներքին կյանքում: Դա պահանջադրում է հայոց լիագումար ազգահավաքումը հայրենի երկնքի տակ և ազգային ներդաշնակ մի համակերպություն, որում հայը հայի մեջ տեսնում է ճակատագրի ճշմարիտ իր եղբորը»²³⁴:

Որպես հայ ժողովրդի ինքնահամախմբման բնաբան՝ հավերժորեն ղողանջում է Չարենցի «Գիրք ճանապարհին», որի «պատգամը» հատվածում գաղտնագրվում է հանրահայտ արոստիկոսը՝ ձևավորված առաջին բառերի երկրորդ տառերով: Ըստ սկադ. Հ. Թամրազյանի՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» ժամանակին մահացում եղք համարվող պատգամը այսօրվա և ապագայի, այսինքն՝ հայոց ճանապարհի համար, մնում է հավերժ կենսական, կարող է գրվել մեր դրոշների վրա որպես բացառիկ խիզախ ու իմաստուն, դեպի դարեր առաջնորդող փրկիչ խորհուրդ²³⁵:

Կարևորելով աշխարհասփյուռ հայ ժողովրդի համախմբման գործը՝ Չարենցը ստեղծում է յուրատեսակ նուրբ պատկեր.

«Վերադառնան պիտի դեռ
Հայրենի հողը բուրյան՝
Իբրև նորոգ երկրի տեր
Եվ Թումանյան, Եվ Տերյան»:

Ազգի հոգևոր ուժերի, նույնիսկ սրբազան շիրիմների տեսքով վերադարձը հայրենիք մեծ խորհուրդ ուներ մեծ բանաստեղծի համար:

²³⁴ Մ. Լալայան, նշվ. աշխ., էջ 116:

²³⁵ Տե՛ս Հ. Թամրազյան, Հայ քնարերգուներ, Երևան, 1999, էջ 128:

խորհրդային Հայաստանում, այնուամենայնիվ, 1950-ական թ. վերջերից անհատի պաշտամունքի տեղատվության պայմաններում Հայաստանում ևս սկզբնավորվում է ազգային զարթոնքի ալիք: Այնուամենայնիվ, ազգային գաղափարախոսության նվիրված գրականություն կերտվում է ոչ թե հասարակագիտական գրականության էջերում, այլ գեղարվեստական: Հայ ժողովրդի հայաստանաբնակ և սփյուռքաբնակ հատվածները համախմբվում են: Ազգային այս նոր զարթոնքի՝ հայության ինքնահամախմբման գաղափարախոսության ամենատաղանդավոր կերտողը Հովհաննես Շիրազն էր:

Բանաստեղծի հույսը ազգահավաքն է, սփյուռքի հայության վերադարձը և հաստատվելը Արարատի ստորոտում, Արարատի հովանավոր հայացքի ներքո:

«Շիրազն ասաց՝ Մասիսն է սյունն Հայաստանի,
Հայեր քաջող մագնիս է ձյունն Հայաստանի
Բավ է, հայեր, ցրված վնաք մատներիս պես,—
Բռունցքվելն է հավերժությունն Հայաստանի»:

Ինչպես Սիոնն է հրեաների հայրենիքի հազարամյակներով կերտված խորհրդանիշը, այնպես էլ Մասիսն է հայոց խլված հայրենիքի խորհրդանիշը, որը Շիրազի գրեթե բոլոր ստեղծագործություններում ամենատարբեր ծավալներով ու գույներով, առինքնող հմայքով վավերացնում ու սրբագործում է բանաստեղծը: Եվ այդ սրբագործությունները հայ ազգին արթուն ու զգոն են պահում, այդ ստեղծագործությունների ոգով հայ ժողովուրդը 1960-ական թթ. վերստին արթնանում է թմրության նիրհից, իսկ 80-ականներին՝ «Ղարաբաղի ողբով» ոտքի կանգնում, զենքի դիմում, հայրենիքի այդ հատվածն ազատագրում նրա խիզախ ընթերցողը:

Շիրազը եղավ սփյուռքը և մայր հայրենիքը կամրջող հոգևոր առաջնորդը, մաքառեց արտագաղթի դեմ՝ դառնալով նաև ազգահավաքի անխոնջ քարոզիչը:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո աշխարհասփյուռ հայության համար մի նոր հույս ծագեց, վերստին իրատեսական դարձավ ազգովին ամբողջանալու ձգտումը: Այդ պատերազմում հերոսացան նաև հայազգի բազում շարքայիններ ու զորավարներ, իրենց տաղանդով կերտեցին մեծ հաղթանակը, օտար ափերում թափառող հայերը ևս հպարտացան ու ոգևորվեցին իրենց ազգակիցների փառքով: Այսպիսի նուրբ զգացմունքների բովում ծնվեցին համազգային հպարտության ու ազգային միասնության ոգեշունչ գործեր, որոնցից իր հնչեղությամբ ու հուզականությամբ առանձնանում է տաղանդավոր արձակագիր Հ. Քոչարի «Գեներալի քույրը» ստեղծագործությունը: Աշխարհահռչակ գեներալին նամակ գրած «քնարական հերոսը»՝ «քույրը», ամեն ինչ կորցրած հայ գաղթականի հավաքական կերպարն է, որը իրավամբ հպարտանում է իր աշխարհահռչակ հերոս ազգականով. «Կորցնելով եղբորս՝ ես զգացի ինձ ամբողջովին որբ ու անպաշտպան,– թախիծով գրում է պանդուխտ հայուհին,– ռադիոյով առաջին անգամ ես լսեցի քո անունը, իմ հեռավոր եղբայր, իմ հարազատ...: Չես հիշում ինձ՝ Անահիտին, որին դու թողեցիր Ղարսում և հայ զինվորների հետ գնացիր կռվելու...: Եթե նույնիսկ Դուք իմ արյունակից եղբայրը չեք, ...միննույն է, Դուք, այնուամենայնիվ, իմ եղբայրն եք: Իմ եղբայրը իմ ճակատագրի համար չէր կարող ավելին անել, քան Դուք եք արել»²³⁶:

Այդ պատմվածքում Հ. Բաղրամյանի եզրափակիչ տողերում վերստին ամրագրվում է աշխարհասփյուռ հայ ժողովրդի հո-

²³⁶ Հ. Քոչար, Ընտիր երկեր, Երևան, 1975, էջ 230:

գևոր անսասան միասնության գաղափարը. «Մեզ մի մայր չի ծնել, բայց ծնել է մեզ մի ժողովուրդ և օժտել ընդհանուր զգացումով»²³⁷:

Ինչպես տեսնում ենք, պանդուխտ հայուհու և հերոս եղբոր քույր ու եղբայրության գաղափարը կյանքի է կոչվում բնական ակունքներից: Կա մի գաղափար, որ միացնում է մտավոր որոնումների ներքին տրամաբանությունը, ձգտումը՝ գտնելու այն հիմքը, որ առկա է ազգի կենսաբանական, սոցիալական ու պատմական ակունքներում:

ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումը նոր որակ ու փուլ սկզբնավորեցին Հայաստան-սփյուռք առնչություններում: Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը նոր թափ հաղորդեց հայրենիք-սփյուռք հարաբերությունների ակտիվացմանը. սփյուռքի առջև բացվեցին հայրենիքի դռները, իսկ հայրենիքինը՝ սփյուռքի: Սակայն 1988 թ. ավերիչ երկրաշարժով և Արցախյան պատերազմի հետևանքներով, Ադրբեջանում ապրող 400-հազարանոց հայերի փախուստի ծանր իրավիճակով պայմանավորված հայերի նոր արտագաղթը ստվարացրեց ու աշխուժացրեց սփյուռքի ազգային դիմագիծը: Սփյուռքահայությունը թեև հնարավորություն ստացավ ազատ մուտք գործելու հայրենիք, բայց բախվեց հայրենիքում առկա ծանր իրավիճակին: Սփյուռքը հիասթափվելու, հայաստանցին հուսահատվելու լուրջ առիթներ ունեցան: Այսուհանդերձ, իրավիճակն ու ծանր մտայնությունը նույնիսկ չփոխեցին 2005 թ. սահմանադրության երկքաղաքացիության ինստիտուտի հաստատվելը, 2008 թ. ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը, ավանդական դարձած Հայաստան-սփյուռք համաժողովների, բիզնես ֆորումների, համահայկական

²³⁷ Հ. Քոչար, Ընտիր երկեր, էջ 231:

խաղերի անցկացումը: Սփյուռքը դարձավ ավելի հայաստանակենտրոն, իսկ Հայաստանը չդարձավ սփյուռքակենտրոն²³⁸:

Սփյուռքը ցանցային և կազմակերպված դարձրին ավելի քան 44 համահայկական հասարակական-եկեղեցական, մշակութային, բարեգործական, քաղաքական կուսակցություններ, որոնք իրենց գրասենյակները հիմնեցին Հայաստանում, Լիբանանում, ԱՄՆ-ում:

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը բնականաբար չի ղեկավարել սփյուռքը, նրա հետ չի աշխատել պետական հրամանների, հրահանգների միջոցով: Այս գերատեսչության առջև դրված էր երեք խնդիր՝ աջակցել հայապահպանությանը սփյուռքում, ի հայտ բերել ու համախմբել սփյուռքի ներուժը, մշակել հայրենադարձությունը խթանող ծրագրեր: Գուցե սա է պատճառը, որ Թավշյա հեղափոխությունից հետո փոխվեց սփյուռքի նախարարության կարգավիճակը: ՀՀ նախագահի 1998 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 194 հրամանագրով նախատեսվում էր կյանքի կոչել ազգային միասնության գաղափարախոսությունը և ստեղծել անհրաժեշտ՝ այն իրագործելու համար: Առաջին խորհրդաժողովին քննարկվեցին արտագաղթի, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, ազգային միասնության, հայապահպանության խնդիրներ: Այս գործին մեծապես պետք է նպաստեր ազգային այնպիսի կառույց ինչպիսին ամերիկահայ լոբբին էր, որի ջանքերով Ամերիկայի 4.5 տասնյակից ավելի նահանգները ընդունեցին Հայոց ցեղասպանությունը: 2000 թ. հունիսի 16-ին Մոսկվայում բացվեց «Ռուսաստանի հայերի միություն» համառուսական կազմակերպություն:

²³⁸ Տե՛ս Հ. Հակոբյան, Հայաստան-սփյուռք գործակցության պետական քաղաքականության հիմնախնդիրները, Երևան, 2011, էջ 53:

նը, 2003 թ. Մոսկվայում հիմնադրված «Համաշխարհային հայկական կոնգրես» միջազգային կազմակերպությունը:

«Հայրենիք-սփյուռք» հայագիտության ոլորտի կապերի ամրապնդմանն ու զարգացմանը նպաստեց հայագիտական միջազգային համաժողովների հրավիրումը: Կարևոր քայլերից էր ԵՊՀ-ում սփյուռքագիտության ամբիոնի ու մասնագիտության հիմնումը: Սփյուռքը հայրենիքից դուրս ապրող հայերի համահավաք կյանքով ապրող բազմաշերտ, բազմալեզու, բազմակարծիք հայերի համայնքն է: Հայ ժողովրդի անվտանգության ապահովման ամենակարևոր գործոնը հայոց պետականության գործին աշխարհի բոլոր՝ 10 միլիոն հայերի հնարամիտ ու ստեղծագործ միասնությունն է: Սփյուռքը դարձել է կարևորագույն գործոն՝ տիրապետելով ծանրակշիռ ֆինանսական ու հասարակական քաղաքական լծակների: Սփյուռքի հետ հաշվի են նստում միջազգային այնպիսի հզոր կառույցներ ինչպիսիք են՝ ՄԱԿ-ը, Համաշխարհային բանկը, Եվրոպական հանձնաժողովը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն և այլն:

Ինքնագատագրման՝ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը

Հայ ժողովրդի ինքնագատագրման՝ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, սկզբնավորվելով նախնադարում Հայկ Նահապետի հանրահայտ առասպելով, նույն հզորությամբ ու ոգեղենությամբ վերակերտվեց միջնադարում, «Սասունցի Դավիթ» էպոսում, այնուհետև նոր ժամանակներին ու նոր պահանջներին համապատասխան տեսականորեն մշակվեց, դիվանագիտորեն հիմնավորվեց և իրատեսական ուսմունք դարձավ XVIII դարում Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի, Շահամիր

Շահամիրյանի ու Մովսես Բաղրամյանի ջանքերով: Նրանք՝ որպես ազգային-ազատագրական պայքարի մեծ ու անխոնջ գործիչներ, ասպարեզ իջան համաշխարհային պատմության բեկումնային այն պատմաշրջանում, երբ միջնադարյան կայսրությունները տրոհվում էին ազգային պետությունների, իսկ որպես համաշխարհային ուժային նոր բևեռներ՝ ձևավորվում էին միջազգային համադաշնություններ: Հայաստանը թուրք-պարսկական լծից ազատագրելու նախընթաց շրջանների հայ գործիչների աղերսանքները նշված գործիչները դարձրին համաշխարհային նոր ձևավորվող գերտերությունների շահերը Հայաստանի ազատագրության գործին նպաստող գործոններ:

XVIII դարասկզբին դեպի Ռուսաստան կողմնորոշվելով՝ Օրին հայտնագործեց արտաքին քաղաքական կողմնորոշման՝ օրինետացիայի ռազմավարությունը, ռազմավարություն, որը վտանգված ժողովուրդների համար նշանակում էր հովանավորվել, կողմնորոշվել դեպի այն մեծ տերությունը կամ տերությունների խումբ, որի շահերը տվյալ պատմական պահին համընկնում էին կողմնորոշվող ազգի շահերին:

Քաղաքական թույլ սուբյեկտ հանդիսացող ազգի գոյապահպանության հիմնական երաշխիքը, փաստորեն, դառնում է անսխալ կողմնորոշվելու կարողությունը: XIX դարի 20-ական թթ. հայ հասարակական, մշակութային ու քաղաքական գործիչները նոր մակարդակի հասցրին XVIII դարում հայտնաբերված ռուսական օրինետացիան, որի արդյունքում 1828 թ. Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, իսկ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը հանգեցրեց Սան-Ստեֆանոյի համաձայնագրին ու Բեռլինի վեհաժողովին, որոնց արդյունքում էլ արևմտահայության ազատագրության հարցը «Հայկական հարց» անունով դարձավ միջազգային հարց, աշխարհի քաղաքական կլի-

ման ստեղծող գերտերությունների հետաքրքրությունների ու լուծելիք հարց:

Քաղաքական կյանքի աննախադեպ ակտիվացմանը զուգընթաց XX դարասկզբին արևմտահայության ազատագրության հարցը առավել բարդ ու բազմաշերտ դարձավ, կորուստները՝ անդառնալի, ձեռքբերումները՝ աննախադեպ:

Պատմական այս բարդ ու բախտորոշ փուլում ականավոր պատմաբան Ն. Ադոնցին էր բախտ վիճակվել գիտականորեն ուրվագծել հայկական հարցի շրջանակներն ու նրա լուծման հնարավոր ուղիները: Ադոնցի դասական՝ պատմաբանասիրական ուսումնասիրությունները վերաբերում են հայագիտության գրեթե բոլոր բնագավառներին, իսկ հրապարակախոսական, նույնքան դասական ստեղծագործություններում քննարկվում են հիմնականում արևմտահայության ազատագրության՝ Հայկական հարցի, ցեղասպանության, պահանջատիրության հրատապ խնդիրները: Նա ոչ թե հիմնահարցը ուսումնասիրող սովորական մտավորական էր, այլ Հայկական հարցի մասին համապարփակ ուսմունք ստեղծող տաղանդավոր գիտնական, այնքան երևելի անհատականություն, որ նրա մահախոսականում «Սիոն» պարբերականը գրում է. «Մեր օրերի մեծագույն կորուստն է Ադոնցը» ու երկրորդն է անիկա, Կոմիտասեն ետքը: Անոնք մարդիկ էին, որոնք ազգ մը գտան»²³⁹: Իսկ ակադ. Լ. Խուրշուդյանի կարծիքով Ադոնցի ծառայությունը համեմատելի է Մ. Խորենացու արածի հետ. «Հայոց ազգային գաղափարախոսության ամբողջական համակարգի ստեղծման գործում,– գրում է նա,– առանցքային դեր են կատարել երեք խոշոր ազ-

²³⁹ «Սիոն», 1942, մայիս, հունիս, էջ 122:

գային գործիչներ՝ Մովսես Խորենացին, Նիկողայոս Ադոնցը, և Գարեգին Նժդեհը»²⁴⁰:

Ն. Ադոնցի հրապարակախոսական աշխատությունները, որոնցում մշակվել ու կերտվել է հայկական ազգայնականության եզրափակիչ գաղափարը՝ ինքնազատագրման գաղափարախոսությունը, ծնվել են պատմական կոնկրետ միջավայրում և կոնկրետ նպատակով: Ի դեպ, Ադոնցը նաև ազգային-հասարակական երևելի գործիչ էր, իր ստեղծած գաղափարների անխոնջ քարոզիչը: Նրա ազգային-հասարակական գործունեության առաջին նշանավոր դրվագը աղերսվում է «Սանկտ Պետերբուրգի հայկական խմբակ» կազմակերպության հետ, որը կազմավորվել էր 1907 թ.: Նրա կազմում ընդգրկված էին այնպիսի ականավոր գործիչներ, ինչպիսիք էին Ս. Գուլիշամբարովը, Ա. Թամանյանը, Մ. Պապաջանյանը, Վ. Սուրենյանցը, Ա. Սպենդիարյանը, ինքը՝ Ն. Ադոնցը, և ուրիշներ: Խորհրդի նպատակն էր ռուսական հանրությանը ծանոթացնել Հայաստանի պատմությանն ու մշակութին, հայ ժողովրդին մտահոգող խնդիրներին, բարենպաստ կարծիքներ ստեղծել արևմտահայության ազատագրության խնդիրների մասին:

1912 թ. Բալկանյան պատերազմի հետևանքով ստեղծված նպաստավոր պահին ցարական դիվանագիտությունն էր ցանկանում գործնական կապեր հաստատել արևմտահայության հետ: Ռուսաստանի արտգործնախարարության հանձնարարականով Կ. Պոլիս են ուղարկվել Պետական դոմայի անդամ Մ. Պապաջանյանը, հանրահայտ հասարակական գործիչ Հակոբ Զավոյանը, Նիկողայոս Ադոնցը և ուրիշներ: Նրանք Կ. Պոլսում հանդիպումներ են ունեցել Գ. Զոհրապի, Գ. Նորատունկյա-

²⁴⁰ **Լ. Խուրշուդյան**, Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 1999, էջ 169:

նի, Պ. Հալաջյանի, Մաղաքիա Արք. Օրմանյանի և այլ գործիչների հետ:

1917 թ. վերջին Ադոնցը Ռոստոմի (Ստ. Զորյան), Մ. Աճեմյանի և գեներալ Լ. Տիգրանյանի հետ կարևոր դերակատարություն է ունեցել Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունների ժամանակ Հայկական հարցի վերաբերյալ Վահան Տերյանին տրամադրված փաստաթղթերի ծրարի ստեղծման գործում:

Փարիզում գտնվող հայկական ազգային պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանի խնդրանքով նա կազմել է անհրաժեշտ տեղեկագրեր Հայաստանի սահմանների, բնակչության կազմի ու թվաքանակի վերաբերյալ: Այդ նյութերը հիմք են ծառայել միացյալ պատվիրակության կողմից Ազգերի լիգայի գերագույն խորհրդին ներկայացված բազմաթիվ փաստաթղթերի ու շրջաբերականների համար²⁴¹:

Բացի քաղաքական-պրակտիկ այս բուռն գործունեությունից՝ Ն. Ադոնցը 40-ից ավելի հրապարակախոսական ստեղծագործություններում քննարկում է հայ ժողովրդի ազատագրության՝ արտաքին քաղաքական կողմնորոշման, պատմական հայրենիքում ստեղծվելիք պետության կենսատարածքի և այլ հրատապ հարցեր: Մեծ գիտնականը խորապես գիտակցում էր, որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև բաժանված հայ ժողովրդի ճակատագիրը անխզելիորեն կապված է այդ երկու տերությունների տրամադրությունների ու վարած քաղաքականության հետ: Նման կարգավիճակում գտնվող ոչ մի փոքրաթիվ ժողովուրդ, բնականաբար, չէր կարող մշակել ազգային-ազատագրական պայքարի լայնամասշտաբ այնպիսի ծրագիր, որը միայն խարսխված լիներ սեփական ուժերի վրա, կամ պայքարի սլաքը միանգամից ուղղված լիներ երկու տերությունների դեմ միաժա-

²⁴¹ Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. 2, էջ 230-235:

մանակ: Նման իրավիճակից դուրս գալու իրատեսական ռազմավարությունը իշխողներից մեկի հովանավորությամբ մյուսից ազատագրվելն է: Իշխողներից մեկը՝ Թուրքիան, իր լծի տակ գտնվող հայ ժողովրդին բնաջնջում էր, մյուսը՝ Ռուսաստանը, գաղութացնում էր ժամանակի օրենքների թույլատրելիության շրջանակներում: Հայ ժողովուրդը Ռուսաստանի կազմում պահպանում է իր ֆիզիկական գոյությունը, գույքն ու մշակույթը: Դրա համար էլ ռուսական տիրապետությունը հայոց պատմագրության մեջ բնութագրվում էր որպես «Չարյաց փոքրագույն»:

Ադոնցը իրավացիորեն գտնում էր, որ Հայկական հարցը զուգակցվում է մրցակցող տերություններից միայն Ռուսաստանի շահերի հետ: Այդ համոզմամբ հայերը «իրենց հայացքը հառել են Ռուսաստանի վրա,– գրում է Ադոնցը,– որովհետև ռուսական լույսը եղել է միակ կանթեղը, որը միայնակ կայծկլտում է հայերին շրջապատող մահմեդական գիշերվա մեջ»²⁴²:

Այսուհանդերձ, Ադոնցը համոզված էր, որ ռուսական կայսրության քաղաքական շահերը միշտ չէ, որ կարող են համընկնել հայ ժողովրդի շահերին, ինչն էլ կարող է այս հանգամանքը անտեսելու դեպքում ճակատագրական լինել հայ ժողովրդի համար, ինչպես եղավ, օրինակ, 1915 թ. հուլիսի 16-ին, երբ «մարտավարական նկատառումներով» տարօրինակ մյուս նահանջները, որոնց ընթացքում ցարական զորքերը լքեցին ազատագրված Արևմտյան Հայաստանի տարածքների մեծ մասը, որի արդյունքում թուրքական կոտորածներից հազիվ փրկված, բայց ռուսական զորքերի հետ Արևմտյան Հայաստան վերադարձած հայերը ենթարկվեցին նոր ջարդերի: «Ռուսական զորքերը, անկասկած,– գրում է Ադոնցը,– կկարողանային նվազեցնել ժողովրդի աղետները, բայց, ցավոք սրտի, զենքի հաջողությանը զուգըն-

²⁴² Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 130:

թաց փոխվում էր ռուսական իշխանությունների վերաբերմունքը հայերի ու Հայաստանի նկատմամբ: Դանդաղ առաջխաղացումներով և արագ նահանջներով նրանք սոսկ ծայրահեղության հասցրին երկրի ավերածությունը: Իսկ երբ վերջապես պետք եղավ առանց մեծ դժվարությունների գրավել Հայաստանի նշանակալի մասը, ապա ռուսական իշխանությունները հայերի մնացորդների նկատմամբ սկսեցին այնպիսի քաղաքականություն վարել, որը ոչ միայն չէր համապատասխանում հայ ժողովրդի դարավոր բաղձանքներին, այլև ոչնչով չէր տարբերվում թուրքական վարչակարգից և թուրքական իրավաըմբռնումներից»²⁴³:

Ինչպես տեսնում ենք, արմատապես փոխվում էր Ռուսաստանի վերաբերմունքը, որովհետև փոխվել էին կայսրության հետապնդած նպատակներն ու ծրագրերը:

Ադոնցի համոզմամբ հայ ժողովրդի համար ռուսական կողմնորոշումը կարող է անարդյունավետ լինել նաև այն դեպքում, երբ միջազգային քաղաքական աննպաստ պայմանները հնարավորություն չտային գերտերությանը կատարելու իր հովանավորչությունը: Նույն աշխատության մեկ այլ դրվագում նա կանգ է առնում 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրից հետո Ռուսաստանի համար ստեղծված ծանր իրավիճակի պայմաններում Հայաստանի նկատմամբ անտարբեր դիրքորոշման փաստի վրա:

«Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի վավերացմամբ Հայկական հարցը կարծես թե դուրս է սպրդում Ռուսաստանի ձեռքից,– գրում է Ադոնցը,– Ռուսաստանը, անդամալուծված ակտիվ գործունեության համար թեկուզև ժամանակավորապես, իջնում է համաշխարհային քաղաքականության թատերաբեմից, իջնում է պատմության ամենասուր և պատասխանատու

²⁴³ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 126:

պահին, դրանով իսկ նա հեռանում է Առաջավոր Ասիայի հարցերով տերությունների կոնցերտից, որտեղ դեռ ոչ վաղ նրա ձայնը հնչում էր այնքան ազդեցիկ:

Ռուսաստանի համար Հայկական հարցը այն լծակն էր, որի վրա հենվելով՝ նա կարող էր իր համար հարմար պահին միջամտել Թուրքիայի շուրջ շահերի և մրցակցության մեծ տերությունների խաղին: ...Ռուսաստանն անընդունակ դուրս եկավ մշակելու և յուրացնելու որոշակի փոքրիշատե կայուն հայեցակետ՝ պատմության կողմից նրան վստահված հարցի վերաբերյալ, ընդ որում՝ այնպիսի հայեցակետ, որը զուգակցեր կայսրության շահերը հայ ժողովրդի քաղաքական բաղձանքների հետ»²⁴⁴:

Միշտ էլ կարող են փոխվել հանգամանքները, նպաստավոր պահերը, հովանավորվելու հույսերը: Վտանգված ազգերը, ձգտելով ունենալ հուսալի հովանավորներ, այնուամենայնիվ, նրանք պետք է հույսները դնեն իրենց վրա, ինքնահամախմբմամբ ու խելացի գործունեությամբ հասնեն ինքնազատագրման: Օտարի՝ մեզ օգնելու ցանկությունը, ըստ Ադոնցի, շատ կասկածելի է: Նա իր քաղաքական ու տնտեսական շահերն ունի, որոնց համար մեր չարատանջ հարցը լոկ բարոյական վարագույր է: Նույնիսկ դրսում հղացած ազատագրության կոչը չի կարող արդյունավետ լինել: Երիցս իրավացի է Ադոնցը, երբ սահմանում է, որ «գաղափարը նման է բույսի և ծաղկում է իրեն հողում: Եթե ազատագրության ծառը ներածո չլիներ, այլ տեղական տունկ, տեղի սերմից ծլած Հայաստանը սպանդանոց չէր դառնա այնպիսի տկարությամբ»²⁴⁵:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի՝ Ադոնցի մշակած ուսմունքը և գաղափարաբանությունը ամբողջական

²⁴⁴ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 124:

²⁴⁵ Նույն տեղում, էջ 255:

չէին լինի, եթե չափազանց բարդ պատմաաշխարհագրական միջավայրում գտնվող ու դարերով աղավաղված սահմաններ ունեցող տարածաշրջանում չմշակվեին ազգային պետությանը պատկանող և նրա բազմաբնույթ՝ տնտեսական, մշակութային, ռազմավարական անհրաժեշտ կենսատարածքի ապահովման սկզբունքները: Պատմականորեն ստեղծվել էր մի իրավիճակ, որ տերությունները կպարտադրեին պարտված Թուրքիային, որ նա ճանաչի Հայաստանի քաղաքական անկախությունը ռուսական զորքերի կողմից գրավյալ Արևմտյան Հայաստանի տարածքում: Իսկ Թուրքիայի իրավունքները պետք է ճանաչվեին միայն թուրքերով բնակեցված սահմաններում: Թուրքիայի անդամահատումը, ըստ ազգային հատկանիշների, Ադոնցի համոզմամբ համընկնում է Փոքր Ասիայի կամ Թուրքական Անատոլիայի պատմական բաժանմանը: Ճիշտ է, ըստ Ադոնցի, դժվար է սահմանազատել ազգային տարածքները, բայց անկասկած է մի բան, որ նոր պայմաններում հարազատ գոտուց դուրս հանված էթնիկական ալիքները ետ կդառնան հայրենի ափերը, և տարագրվածները կվերադառնան իրենց օջախները: Տարածաշրջանի երկրներից առավել վիճարկելին Ադոնցը համարում է Հայաստանը, որովհետև հայկական տարածքի սահմանների գծումով որոշվում են նաև մնացյալ ազգային երկրների սահմանները, քանզի Հայաստանն ընկած է Անատոլիայի, Սիրիայի և Միջագետքի հանդիպման անկյունում: Իսկ հայերով բնակեցված մարզերի սահմանների առավել ճշգրիտ ելակետը իրագործված կոտորածներն էին: Նրանք կարող կլինեն ճիշտ որոշել հայկական հողերն այն արյունալի հրդեհների հրացուլքով, որոնք Հայկական հարցի ծագման ժամանակներից բռնկում էին նրանց աչքերի առաջ հայերով տարաբնակեցված շրջաններում:

Ստեղծվելիք ազգային պետության աշխարհագրական ամբողջությունը, ռազմավարական կենսատարածքի ապահովումը կարևորելով՝ Ադոնցը գրում է. «Հայկական բարձրավանդակը որոշակի մեծություն է, որը ոչ մի տարածայնություն թույլ չի տալիս: Ըստ Լինչի պատկերավոր արտահայտության՝ դա լեռնային տանիք է, որը հյուսիսում թեքվում է դեպի Սև ծովի ափերը, հարավում՝ Տիգրիսի երկու վտակների հովիտները, իսկ արևմուտքում հատվում է Եփրատի ջրերով:

Այդ սահմաններում Հայկական լեռնաշխարհը ներկայանում է մի ինչ-որ ամբողջություն, աշխարհագրական, մշակութապատմական, հավասարապես և՛ տնտեսական, և՛ ընդհանուր առմամբ ազգագրական իմաստով: Այստեղ կազմավորվող պետությունը չի կարող համարվել կայուն, եթե այն չի գրավում այդ լեռնային տանիքն ամբողջությամբ իր բնական թեքություններով»²⁴⁶:

Վերոնշյալ սահմանների կարևորությունը չի պայմանավորվում հողերի մեծ կամ փոքր տարածքներով: Նա տարածքների ռազմավարական, տնտեսական, մշակութային կապերի ու հաղորդակցության ցանցի ռազմավարական դիրքն է կարևորում: Նա կարևորում է այն գործոնը, որ քաղաքակիրթ պետությանն ու ժողովրդին անհրաժեշտ են մշակութային համարժեք դրացիություն, ճանապարհներ, որոնք նրան լեռնային կիրճերից հանեն տնտեսական մշակութային մեծ աշխարհի ու շուկա:

Ադոնցը, անդրադառնալով ստեղծվելիք հայոց պետության կենսատարածքի խնդրին, կարևորում է նրա ազգագրական, քաղաքական, աշխարհագրական դիրքի, տնտեսական կառույցների, կապի ու հաղորդակցության միջոցների դերը ստեղծվելիք ինքնիշխան ու հզոր պետության համար:

²⁴⁶ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 212:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրերին Ամենայն հայոց բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի համար առանձնապես հրատապ է դառնում հայ ժողովրդին վերահաս ոչնչացումից փրկելու թերևս միակ միջոցի՝ արտաքին քաղաքական անսխալ կողմնորոշման, հավատարիմ հովանավոր տերության հայտնաբերման խնդիրը:

Միջազգային բարդ հարաբերությունների և դիվանագիտական մութ գործարքների ծալքերում Թումանյանի առաջ ծառանում են Հայկական հարցի իմացության, նրա սահմանման, փոփոխվող փուլերի սահմանազատման, նրա առաջացման պատճառների բացահայտման հարցերը: Հայ ժողովրդի ճակատագիրը կապելով ռուս ժողովրդի հետ՝ Թումանյանը կարևորում էր երկու ժողովուրդների քաղաքական, տնտեսական և մշակութային շահերի համընկման բազմաշերտ ծալքերը: Պատմական էքսկուրսի հիման վրա նա ստեղծեց հայ ժողովրդի ազգային հարցի լուծման ռուսական աջակցության ամբողջական համակարգ, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսություն: Հայկական հարցի, այսինքն՝ արևմտահայության ազատագրության հարցի լուծումը կապելով Ռուսաստանի հետ՝ Թումանյանը կատարեց համոզիչ ընդհանրացում. «Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել Հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու հայկական սարսափներին»²⁴⁷:

Թումանյանը, «Հայկական հարցն ու իր լուծումը» հողվածում պատասխանելով այն հարցին, թե երբ է առաջացել «Հայկական հարցը»՝ որպես հայ ժողովրդի ընդհանրական ազատագրության հարց և ոչ թե միայն 1877-1878 թթ. ազատագրության

²⁴⁷ Հ. Թումանյան, Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1985, էջ 331:

հարց, պատասխանում է. «Էն օրից, ինչ որ վտանգվել է հայ ժողովրդի կյանքը, գույքը, պատիվն ու կուլտուրական զարգացումը: Եվ գոյություն է ունեցել Պարսկաստանում, գոյություն է ունեցել և ունի Տաճկաստանում: Գոյություն չունի և չի ունեցել Ռուսաստանում: Ենթարկվելով թուրքական կոտորածների՝ հայ ժողովուրդը ստեղծեց ընդամենը գոյապահպանության գաղափարախոսություն, որը նշանակում է ձեռք բերել հուսալի հովանավոր: Եվ այդ հովանավորը դարձավ Ռուսաստանը, որի կազմում հայ ժողովուրդը ընդամենը ձգտում էր ձեռք բերել մշակութային ինքնավարություն: Այսինքն՝ Հայկական հարցը Ռուսաստանում ոչ թե քաղաքական հարց է, ազգային-ազատագրական պայքարի անջատողական ծրագիր, այլ քաղաքացիական հարց, որը պետական անկախության փոխարեն առաջադրում է կյանքի, գույքի, պատվի ու կուլտուրական զարգացման ապահովություն: «Այո, անկախությունը լավ բան է,– ասում է Թումանյանը,– բայց եթե անկախությունը թոկ է դառնալու հայությանը խեղդելու համար, չենք ուզում»²⁴⁸:

Հայաստանի ազատագրության լուսաբանման հիմնախնդիրը Թումանյանի համար ունեցել է ոչ թե գիտական, այլ գիտաճանաչողական, արդիական, գաղափարախոսական, ու գործնական նշանակություն: Նա հիմնավորել է, որ Հայկական հարցը պայմանավորված է վաչկատուն, եկվոր թուրքական ցեղերի և հին քաղաքակրթություն ունեցող բնիկների միջև մղվող պայքարով և վերջիններիս բնաջնջման ու նրանց երկրի յուրացման՝ օսմանցիների պահանջով: «Վերցրե՛ք Թուրքիայի քարտեզն ու նայեցե՛ք,– գրում է Թումանյանը,– Դա մի նոր պետություն է, որը դրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին կուլտուրական ազգերի ու նրանց հայրենիքների վրա: Եվ այդ երկրներից մեկը, որ

²⁴⁸ Հ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 136:

նա ձգտում է դարձնել իր հայրենիքը, Հայկական լեռնաշխարհն է: Այս տեսակետից էլ Հայկական հարցը Տաճկաստանին հուզող ամենակարևոր հարցն է: ... Եվ պարբերաբար եվրոպական պետությունների շահերի դիմաց, լուսավոր մարդկության խղճմտանքի դիմաց, ամբողջ հայության մորմոքվող սրտի դիմաց ծառանում է էդ արյունոտ ու արցունքոտ հարցը»²⁴⁹:

Այսպիսով՝ արևմտահայությունը դարձավ ոչ միայն ռուս-թուրքական հակամարտությունների, այլև նոր ձևավորված համաշխարհային ուժային բևեռների խճճված հակամարտությունների ամենադժբախտ զոհը:

Հայ ժողովրդի ինքնազատագրման խնդիրներով մտահոգ Եղիշե Չարենցը «Երկիր Նաիրի» վեպը գրել է պատմական այն ծանր ժամանակաշրջանում, որում բախվում էին ոչ միայն համաշխարհային հակամարտ ուժերը, այլև ներքին թշնամաբար տրամադրված ուժերը՝ պարտված ազգայնական ու իշխանության ձգտող ապազգային՝ կոմունիստական կուսակցության ներկայացուցիչները: Չարենցը բացառիկ տաղանդով է զգում ու մեկնաբանում այդ հակամարտ ուժերի՝ սովորական աչքով անտեսանելի ներազգային դավադրությունները, դավադիրներ, որոնք գուցե իրենք էլ չէին գիտակցում թե ինչու են այս բարդ ու անհասկանալի մթնոլորտում բարոյալքում հայ ժողովրդին: «....Ոչ մի անուն չի կարելի դնել այդ նաիրուրաց տխմարությանը,– գրում է Չարենցը,– քան այն անունը..., ինչպես քանիցս կրկնել ենք... «ազգային դավաճանություն»: Եվ ովքեր էին դրանք, և ով էր դրանց ղեկավարը.- մի քանի լճուկ սինքլորներ, ինչպես ասում էր Համո Համբարձումովիչը, կամ հայվարա սանքյուլտներ, ինչպես կարծում էր Հաջի Օնիկ Էֆենդին, և չհասկացողին թարգմանում ու հասկացնում, որ սանքյուլտներ նշա-

²⁴⁹ Հ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 325:

նակում է անվարտիք շներ...: Եվ ով էր... դրանց ղեկավարը... «վերի գլուխը».- արյունարբու մի սկյութ, ռուսացած մի մոնղոլ, մի գերմանական լրտես, որ, պլոմբած վագոնով հայրենիք վերադարձած, չին զորքերու և անվարտիք ավարաներու օգնությամբ ներսերում խլել էր արդեն իշխանությունն ու հանձնել այն գերմանացիներին՝ այդպիսով գլուխ բերելով իր այն խոստումը, որ տվել էր արյունարբու Վիլհելմ Կայսեր...: Ահա թե ովքեր էին դրանք»²⁵⁰, Նաիրի երկիրը թուրքերին հանձնողները: Սա դիպուկ նկարագրությունն է «Նաիրիի» համար կործանարար այն քաղաքականության, որը վարում էին բոլշևիկները Հայաստանի նկատմամբ:

«Երկիր Նաիրի» պոեմանման վեպում Կարսը ներկայանում է հայ ժողովրդի հափշտակված հայրենքի խորհրդանիշ, տաղանդավոր բանաստեղծի ծանր ապրումների քնարական արտահայտություն հայ կոմունիստների այն վարքագծի, որով պառակտում էին հայկական կռվող բանակը, սերմանում դասալքություն, զորահավաքի ու պաշտպանության կազմալուծում: Ահա այս պայմաններում է Կարսը կործանվում, իր տոհմիկ բնակչությունից դատարկվում...: Ինչպես նշում է նշանավոր չարենցագետ Դ. Գասպարյանը, «Երկիր Նաիրին» հայոց հափշտակված հայրենիքի մոտիկ անցյալի գեղարվեստական պատմությունն է²⁵¹:

Չարենցի՝ ներկուսակցական պայքարի հետևանքով Կարսի կորուստի առաջադրած այս վարկածը հաստատող հետևյալ ուշագրավ փաստաթուղթն է վկայակոչում Դ. Գասպարյանը. «Հույժ գաղտնի Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր

²⁵⁰ Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1987, էջ 168:

²⁵¹ Դ. Գասպարյան, Եղիշե Չարենց, էջ 91:

կազմակերպություններին թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի գառնիզոն մեկնող բոլշևիկներին, անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքություններում, եթե հնարավոր է, ինչպես նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի՝ հիմնական խնդիր դնելով.

1. Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի:

2. Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է...:

3. Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում...:

4. Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը:

Այս նպատակի համար պետք է՝

1. կազմալուծել հայկական կովող բանակը բոլոր միջոցներով, այն է՝

ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին,

բ) ռազմաճակատում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա...,

գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:

2. Հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասկյարը հեղափոխական ասկյար է...»²⁵²:

²⁵² Դ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 234:

Ահա մտայնության այս մթնոլորտում Կարսում հայոց բանակը խուճապահար լքեց դիրքերն ու փախուստի դիմեց: Քաղաքն անցավ թուրքերին: Գնդապետ Մազմանյանը հուսահատությու-
նից ինքնասպան եղավ: Հայրենիքի ողբերգության այս ծանր
մթնոլորտում ծնվեց Չարենցի «Մահվան տեսիլ» բանաստեղծու-
թյունը.

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի.
Իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան²⁵³:

Հայրենիքի պատմական ծանր ճակատագրի գեղարվեստա-
կան պատկերումը Չարենցից հետո գեղարվեստական գրակա-
նության հատուկ ուղղություն ու թեմա դարձավ հետագայի հայ
հայրենասեր գրողների համար: Բնականաբար, խորհրդային իշ-
խանության տարիներին այն առկայծում էր այլաբանության ու
փոխաբերության հնարանքներով ու մեթոդներով:

Ե. Չարենցից հետո հայրենիքի ազատագրության, Հայոց
ցեղասպանության, Հայ դատի ու պահանջատիրության թեմանե-
րը հայ մարդու հոգուն հասկանալի ու ընկալելի դարձրեց, հա-
մակարգեց ու գաղափարայնացրեց Հովհաննես Շիրազը: Նա
հիսուն տարի խորհրդային արգելքների պայմաններում մաքա-
ռեց հանուն հայ ժողովրդի, նրա հայաթափված ու բռնագրավ-
ված հայրենիքի ազատագրման, նրա ոտնահարված իրավունքի
վերականգման համար: Իր ծրագրային ստեղծագործություննե-
րով Շիրազը իրավամբ կերտեց ազատատենչ սերունդներ:

Հայտնի է, որ միայն Հայրենական մեծ պատերազմի տարի-
ներին ԽՍՀՄ-ում առաջնային դարձավ հայրենիքի ու հայրենա-
սիրության թեման: Վտանգի ենթարկված խորհրդային անծայ-

²⁵³ Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1986, էջ 276:

րաժիր հայրենիքի պաշտպանության ու անառիկության գաղափարախոսության մշակմանը զուգահեռ հայ գրողներին ևս հնարավորություն ընձեռվեց վեր հանելու նաև հայոց հայրենիքի, նրա անառիկության, հայ ժողովրդի անհողդողության ու անընկճելիության գաղափարները: Դրա դասական օրինակը Հ. Շիրազի հռչակավոր «Էքսպրոմտն» էր՝ հայրենիքի անդրդվելիության ու անառիկության խրոխտ օրհներգը:

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վարյազ:
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես.-
Դուք հողմերի պես կկորչեք վարյազ:

Հայրենիքի անառիկության ու անդրդվելիության մասին այս հանճարեղ ստեղծագործության հեղինակը, բնականաբար, իրավունք պետք է վաստակած լիներ իր քնարական բազում բանաստեղծություններում ու պոեմներում բարձրացնել և օրակարգի հարց դարձնել, սրբագործել ու գաղափարայնացնել հայաթափված հայրենիքի ու նրա ազատագրության հարցերը: Այս խնդիրներին նվիրված ամենանշանավոր ստեղծագործություններից հիշենք «Հայոց դանթեականը» պոեմը և «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը: «Անվարան կարելի է ասել,- գրում է պրոֆեսոր Ս. Մուրադյանը,- որ հայոց անկախ ու ինքնուրույն պետականության հիմքերը հենց խորհրդային տարիներին նա (Շիրազը - Հ. Մ.) դրեց հայության նոր սերունդների հոգիներում և Եղեռնի դատապարտման, հատուցման ու պատմական արդարության վերականգման իր կարգախոսներով դարձավ 1960-ական թթ. զարթոնքի սերնդի և 80-ական թթ. Արցախյան շարժման ու ազատամարտիկների հերոսական սերնդի գաղափարա-

կան առաջնորդներից մեկը»²⁵⁴։ Շիրազի ստեղծագործությունները՝ ձեռքից ձեռք անցնող բանաստեղծությունները, վիթխարի ներգործություն ունեցան թե՛ ընթերցողների, թե՛ ստեղծագործողների վրա, ազգային ինքնության ու ինքնաճանաչման նպաստավոր մթնոլորտ ստեղծեցին, մթնոլորտ, որում գաղափարապես հասունացավ նաև արցախյան ազատամարտի հերոսական սերունդը։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ստեղծված նպաստավոր այս մթնոլորտում հրապարակվեցին հայրենասիրական բազմաթիվ ստեղծագործություններ՝ Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը», Ն. Զարյանի «Արա Գեղեցիկը», Ս. Զորյանի «Պապ թագավորը»։

1960-ական թթ. կեսերին Հայոց ցեղասպանության 50-ամյակի նախապատրաստման ու կայացման ծրագրերին զուգահեռ ցեղասպանության անտեսված թեման ասպարեզ բերեցին Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն», «Եռաձայն պատարագ», Հ. Քոչարի «Նահապետ», «Կարոտ», Խ. Դաշտենցի «Ռանչապրների կանչը» և այլ ազատասիրական ստեղծագործություններ։

Զունենալով ինքնիշխան պետության և միջազգային քաղաքականության սուբյեկտի կարգավիճակ՝ Խորհրդային Հայաստանի հասարակագետները, իրավագետներն ու պատմաբանները, զրկված լինելով ինքնուրույն քաղաքական գործընթացներ իրականացնելու և տեսական դրույթներ մշակելու հնարավորություններից, գործունեության դաշտ ընտրեցին պատմական հիմնահարցերի ասպարեզ բերելու և ուսումնասիրելու բնագավառը։

Հայ պատմաբաններն ու հասարակագետները ձգտում էին լուսաբանել մոտիկ անցյալի արհավիրքներն ու նրանց ծնած պատճառները։ Առաջադրվում էին միջազգային քաղաքական

²⁵⁴ Ս. Մուրադյան, Հովհաննես Շիրազ, գիրք Բ, Երևան, 2016, էջ 16։

լաբիրինթոսում խճճված, հայ ժողովրդի գլխին պատուհասված իրողությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի դաշնակից տերությունների հաղթանակը, ցարիզմի տապալումը, Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատումը, արևմտահայերի բնաջնջումը, նրանց հայրենիքի յուրացման և Արևելյան Հայաստանի բաժանումը Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի միջև: Իրար հաջորդած ազգակործան երևույթներ են սրանք, որոնք անհասկանալի ու անբացատրելի էին մնում շփոթված ու շփարած հայ ժողովրդի համար: 1960-ական թթ. միայն մի փոքր հնարավորություն ստեղծվեց հետադարձ հայացք գցելու այդ համազգային աղետների վրա, փորձեր արվեցին գտնելու այդ անհուն ողբերգությունների իրական պատճառները:

«Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը» գրքի առաջաբանում ճանաչված միջազգայնագետ պրոֆ. Ա. Եսայանը գրում է. «Մոտ երկու տասնամյակ բուհերում կարդալով «Միջազգային իրավունքի» դասընթաց՝ առիթ եմ ունեցել ունկնդիրներից լսելու բազմաթիվ հարցեր Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագրի գործում միջազգային դիվանագիտության ու միջազգային իրավունքի խաղացած դերի վերաբերյալ: Այդ հանգամանքն է հեղինակին մղել ուսումնասիրելու XX դարի առաջին քառորդում ծագած այն բազմաթիվ «ինչու»-ները, որոնք ուղղում են նոր սերունդները»²⁵⁵: Այս ուշագրավ աշխատության մեջ հեղինակն առաջին անգամ քննարկում է «Հայկական գենոցիդը և միջազգային դիվանագիտությունը», «Հայկական հարցը և Ազգերի լիգան», «Հայկական հարցը և Սովետական Ռուսաստանի հաշտարարական դերը» հիմնախնդիրները: Հեղինակը

²⁵⁵ Ա. Եսայան, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965, էջ 3:

համոզված է, որ իրեն հասու փաստաթղթերը, այնուամենայնիվ, դեռևս իրեն հնարավորություն չեն տվել առաջադրված հարցերը մեկնաբանելու լիակատար ամբողջությամբ:

Վաստակաշատ պատմաբան Մ. Ներսիսյանը ևս անդրադարձավ հայոց ազգային-ազատագրական պայքարի պատմության հետազոտմանը: Այդ խնդիրներին նվիրված նրա աշխատությունները խթանեցին հայ ժողովրդի մտածողության մեջ Արևմտյան Հայաստանի ազատագրության և Հայկական հարցի պատմության մշակման գործընթացը: Ուշագրավ է նրա 1955 թ. հրատարակած «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ.» ծավալուն մենագրությունը: Մ. Ներսիսյանի Հայոց ցեղասպանությանը նվիրված ուսումնասիրություններից ամենանպատակասլացը և շրջադարձայինը 1965 թ. ապրիլի 25-ին «Պրավդայում» հրատարակած Հայոց ցեղասպանության 50-ամյակին նվիրված հոդվածն էր, որը ընկալելի ու ճանաչելի դարձրեց ողջ խորհրդային ժողովրդին Հայոց մեծ եղեռնը:

Նշված հիմնահարցը ակադեմիական մակարդակով աշխարհին ներկայացվեց «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ծավալուն ժողովածուով²⁵⁶: Այս արժեքավոր աշխատության առաջին բաժնում ներկայացված է «Հայերի կոտորածները սուլթան Աբդուլ Համիդի 1876-1908 թթ. օրոք» գլուխը, որն ընդգրկում է 88 ուշագրավ ու արժեքավոր փաստաթուղթ, իսկ երկրորդ բաժնում ներկայացնում է «Հայերի զանգվածային կոտորածները երիտթուրքերի կողմից 1909-1918 թթ.» գլուխը, որն ընդգրկում է 176 արժեքավոր փաս-

²⁵⁶ Տե՛ս Մ. Ներսիսյանի խմբագրությամբ 1966 թ. ռուսերեն հրատարակված «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ժողովածուն:

տաթուղթ: Այս փաստաթղթերի մեծ մասի հեղինակները ցեղասպանության տարիներին Արևմտյան Հայաստանում պաշտոնավարող ռուս ու եվրոպացի դիվանագետներն ու պաշտոնյաներն են, որոնք իրենց պետություններին են ներկայացնում հայ ժողովրդին պատուհասած աղետը: Փաստաթղթերի մի զգալի մասի հեղինակներն էլ հանրաճանաչ պետական քաղաքական ու մշակութային այնպիսի գործիչներ են, ինչպիսիք են՝ Ֆ. Նանսենը, Լ. Զորջը, Յ. Լեփսիուսը, Ա. Վեգները, Հ. Մորգենթաուն և ուրիշներ:

Հայոց ցեղասպանության փաստը այնուհետև միջազգային հանրությանը ներկայացրին ու ճանաչելի դարձրին անվանի պատմաբան միջազգայնագետներ Զ. Կիրակոսյանը²⁵⁷, Ռ. Սահակյանը²⁵⁸, Ե. Սարգսյանը²⁵⁹ և ուրիշներ:

Ահա գեղարվեստական ու պատմագիտական այս ձեռքբերումների արդյունքում քաղաքականապես հասունացավ նաև ինքը՝ հայ ժողովուրդը, և ոտք դրեց ինքնատիպ մի պատմաշրջանի՝ XX դարավերջին, որում հայ ժողովրդին հաջողվեց իրականացնել երեք կարևորագույն ձեռքբերում. առաջին՝ վերականգնեց հայոց անկախ պետականությունը՝ կերտելով Հայաստանի երրորդ հանրապետությունը, երկրորդ՝ ազատագրեց Արցախը և հռչակեց ինքնիշխան հանրապետություն, և երրորդ՝ միջազգայնացրեց Հայոց ցեղասպանության փաստը, որը ընդունելի ու ճանաչելի դարձավ ավելի քան երեք տասնյակ պետություն-

²⁵⁷ Տե՛ս Զ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1965, 1967: Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 1-ին, Երևան, 1982, գիրք 2-րդ, Երևան, 1983:

²⁵⁸ Տե՛ս Ռ. Սահակյան, Սովետաթուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Երևան, 1964:

²⁵⁹ Տե՛ս Ե. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964:

ների կողմից: Կարևորագույն ձեռքբերում էին սրանք, առանց որոնց անհնար կլիներ Հայկական հարցի հաջորդ մակարդակի՝ Հայ դատի ու պահանջատիրության հարցը օրակարգային հարց դարձնելու համար:

ԽՍՀՄ-ը 1980-ական թթ. երկրորդ կեսին հայտնվեց համընդհանուր ճգնաժամի հնոցում: Սոցիալիստական համաշխարհային համակարգը փլուզումից փրկելու համար 1985 թ. մարտին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը ձեռնամուխ եղավ հասարակական-քաղաքական կյանքի բարեփոխումներին: Որոշ ազատություններ տրվեցին զանգվածային լրատվությանը, տնտեսության բազմակացութաձևությանը, կազմակերպվեցին այլընտրանքային ընտրություններ, որի արդյունքում ծնունդ առան ընդդիմադիր հասարակական կազմակերպություններ: Մի շարք հանրապետություններում կյանքի կոչվեցին անկախության տրամադրություններ, բազմազգ հանրապետություններում ծայր առան ազգամիջյան ընդհարումներ և այլն:

Ոգևորված գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությամբ՝ առաջիններից մեկը արցախահայությունն էր, որ 1988 թ. սկզբից «Լենին-կուսակցություն-Գորբաչով» կոչով ադրբեջանական լուծը թոթափելու համար դուրս եկավ պայքարի: Նույն թվականի փետրվարի 20-ին հրավիրեցին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պատգամավորների մարզխորհրդի արտահերթ նստաշրջան, որը որոշեց. «Ընդառաջելով ԼՂԻՄ աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին... լուծել ԼՂԻՄ-ը ադրբեջանական ԽՍՀ կազմից ՀԽՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ն ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական

լուծման համար»²⁶⁰: Այս քաղաքակիրթ քայլին ի պատասխան ադրբեջանցիները Սումգայիթ քաղաքում, որտեղ բնակվում էր 18 հազ. հայ, փետրվարի 27-29-ն իրագործեցին հայերի ցեղասպանություն, որը հետագայում շարունակվեց Ադրբեջանի հայաբնակ մյուս վայրերում: Իսկ կենդանի մնացածները՝ մոտ 400 հազ. ադրբեջանաբնակ հայեր, հալածված ու կողոպտված, դուրս վտարվեցին իրենց բնօրրաններից: Ծայրահեղ ծանր իրավիճակում 1990 թ. օգոստոսի 23-ին, Հայաստանի գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը ընդունեց «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով դրվեց Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը: ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն: Պետական խորհրդանշաններ հաստատվեցին Հայաստանի առաջին հանրապետության դրոշն ու զինանշանը, տնտեսական հիմքը՝ մասնավոր սեփականությունը և ազատ շուկայական հարաբերությունները: Ստեղծվեցին սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, ազգային անվտանգության մարմիններ և այլն: 1991 թ. սեպտեմբերի 21-ին անցկացվեց հանրաքվե, որով Հայաստանը դուրս եկավ ԽՍՀՄ կազմից, որի համար էլ սեպտեմբերի 21-ը հռչակվեց անկախության տոնական օր:

1991 թ. օգոստոսի 30-ին Բաքվում հրավիրված Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգման հռչակագիրը, որով Ադրբեջանը նույնպես դուրս եկավ ԽՍՀՄ կազմից, դարձավ 1918 թ. Մուսաֆաթական Ադրբեջանի իրավահաջորդը: Դա նշանակում էր, որ նրա կազմում չէին կարող լինել ո՛չ Նախիջևանը, ո՛չ էլ Ղարաբաղը, որոնք նշված ժամանակահատվածում չէին մտել Ադրբեջանի կազմի մեջ:

²⁶⁰ «Խորհրդային Ղարաբաղ», 21 փետրվարի, 1988:

Հայտնի է, որ դեռևս 1990 թ. ապրիլի 3-ին կյանքի կոչված «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգերի մասին» ԽՍՀՄ օրենքով միությունից դուրս եկող հանրապետության սահմանների մեջ գտնվող ինքնավար հանրապետություններին ու մարզերին և ազգային համահավաք խմբերին իրավունք էր տրվում վճռելու իրենց պետաիրավական կարգավիճակը: Այս երկու փաստերը արցախահայությանը թույլ էին տալիս օրինական ճանապարհով դուրս գալ Ադրբեյջանի կազմից:

1991 թ. սեպտեմբերի 2-ին՝ Ադրբեյջանի անկախացումից ընդամենը 3 օր հետո, Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂ մարզային և Շահումյանի շրջանային բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ նստաշրջան: Ընդունվեց «Հոչակագիր ԼՂ հանրապետության հոչակման մասին» որոշումը: Նախկին ԼՂԻՄ և Շահումյանի տարածքներում հոչակվեց անկախ հայկական պետություն²⁶¹: Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշումը իրականացվում է մի տարածքի վրա, որի նկատմամբ Ադրբեյջանն իրավական, պատմական ու բարոյական հավակնություններ չուներ: Այսուհանդերձ, ԼՂՀ հոչակումից անմիջապես հետո Ադրբեյջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որով տեղի ունեցածը որակվեց դավադրություն արդբեյջանական անկախության դեմ և պատերազմ հայտարարվեց արցախահայությանը: 1991 թ. դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններ: 1992 թ. հունվարի 6-ին Ստեփանակերտում իր աշխատանքը սկսեց Արցախի ինքնիշխան հանրապետության առաջին գումարման գերագույն խորհրդի նստաշրջանը:

²⁶¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:

Հայ ժողովրդի ձեռքբերումներից կարևորվում է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: 1990 թ. օգոստոսի 23-ի Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում հրապարակված հռչակագրի 11-րդ կետում արձանագրվեց. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»²⁶²: 1998 թ. ապրիլի 24-ին Եվրոխորհրդի վեհաժողովը Հայոց ցեղասպանությունը համարեց XX դարի առաջին ցեղասպանություն: 2000 թ. նոյեմբերին Վատիկանը, Ռուսաստանը, Կանադան, Կիպրոսը, Բելգիան, Լիբանանը, Արգենտինան և այլ երկրներ ճանաչեցին ու դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը, իսկ 2000-ական թթ. ճանաչեցին Ֆրանսիան, Շվեյցարիան, Իտալիան, Սլովակիան, Նիդերլանդները, Լեհաստանը, Գերմանիան, Լիտվան, Չիլին, Շվեդիան: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են նաև ԱՄՆ բազմաթիվ նահանգներ: Բելգիան օրենք ընդունեց Հայոց ցեղասպանությունը մերժող անձանց դատապարտելու մասին, որին հետևեցին նաև այլ երկրներ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին ամբողջ աշխարհում հնչեց «Հիշում եմ և պահանջում» կարգախոսը: Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիան 2016 թ. հունվարի 2-ին, Բունդեսպագի ընդունած բանաձևում դատապարտելով Հայոց ցեղասպանությունը, ընդունեց նաև իր մեղսակցությունը այդ ոճրագործությանը:

Հայոց ցեղասպանության միջազգայնացմանը մեծապես նպաստեց 2015 թ. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պողոսի տաճարում Նորին սրբության Հռոմի պապ Ֆրանցիսկոսի կող-

²⁶² «Խորհրդային Հայաստան», 24 օգոստոսի, 1990:

մից Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված պատարագը: Հայոց ցեղասպանության հարյուրամյակի միջոցառմանը 60 երկրների պատվիրակություններ մասնակցեցին Ծիծեռնակաբերդի արարողությանը: Հայոց ցեղասպանությունը ճանաչեց Լատինական Ամերիկայի 23 օրենսդիր մարմիններ միավորող Լատինամերիկյան խորհրդարանը: Եվրոխորհրդարանը Թուրքիային կոչ էր անում, օգտագործելով 100-ամյա տարելիցը, «ճանաչել Հայոց ցեղասպանությունը և հայ-թուրքական ժողովուրդների հաշտության ճանապարհ բացել»: Որպես պահանջատեր՝ հայ ժողովուրդը այժմ պետք է հստակեցնի, թե այդ փաստը ճանաչելուց հետո ինչպես պետք է անցնել հատուցման փուլին:

Այսքան առանցքային ու դարակազմիկ ձեռքբերումների կողքին XX-XXI դարերի սահմանագլխին հայ ժողովրդի հանրային մտքի առջև ծառացավ նույնքան առանցքային, սակայն դրամատիկ, գրեթե անլուծելի խնդիրներ, որոնք ունեին իրենց ինչպես ներքին ու արտաքին, այնպես էլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները: ԽՍՀՄ փլուզմանը զուգընթաց նրա կազմի մեջ մտնող երկրները ներքաշվեցին նոր հակամարտությունների տարածքային վեճերի, վերաբաժանումների, տնտեսական շրջափակումների մեջ: Հայ ժողովուրդը հայտնվեց առավել բարդ իրավիճակում՝ դարաբաղյան պատերազմ, շրջափակում և այլն: Խզվեցին միջհանրապետական տնտեսական, ավանդական և սոցիալիզմի համաշխարհային համակարգին հարմարեցված հումքի աղբյուրների ու վաճառահանման շուկաների կապերը: Խորհրդային Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների համար նոր Հայաստանը ո՛չ անհրաժեշտ հումքի աղբյուրներ ուներ, ո՛չ էլ վաճառահանման շուկաներ, որի պատճառով նրանք մեքենայորեն անգործության մատնվեցին: Հայաստանը

դարձավ հանքահումքային պաշարներ ունեցող, բայց սեփական վառելիքաէներգետիկ պաշարներից զուրկ երկիր:

Այսպիսով՝ Հայաստանի նորանկախ հանրապետության պետական շինարարությունը սկսվեց ոչ միայն ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի ծանր պահին, այլև Սպիտակի երկրաշարժից կրած անդառնալի կորուստների, լիակատար շրջափակման, էներգետիկ ճգնաժամի, Ադրբեջանից փախած հազարավոր հայերի օրհասական դրության պայմաններում: Նախընթաց հասարակարգի տիրող դասակարգային ու կուսակցական քաղաքականությանն ու գաղափարախոսությանը փոխարինեցին ազգային ու տարածաշրջանային մարտահրավերներն ու գաղափարախոսությունները: Հասարակական-քաղաքական ու տնտեսական նոր պահանջներին համապատասխան անկախության ուղին բռնած երկրներում որոշվեց անցում կատարել դեպի շուկայական հարաբերություններ:

Քաղաքական համակարգի և տնտեսության արդիականացման հիմնական եղանակը այս փուլում նմանակումն էր: Բարեփոխումների մոդելը մեքենայորեն ներմուծվեց դրսից: Արդյունքում ստացվեց այնպես, որ նախկին հասարակարգում հազարավոր մարդկանց քրտնաջան աշխատանքի արդյունքում ձեռք բերված ազգային հարստությունը հայտնվեց փոքրաթիվ մարդկանց ձեռքում, ավերվեց կայացած տնտեսական համակարգը, և ասպարեզ եկան համատարած կողոպուտը, գործազրկությունն ու չքավորությունը: Իշխանության գլուխ անցած պաշտոնյաները, մի կողմից բախվելով միջազգային հանրության կողմից պարտադրված պահանջներին, մյուս կողմից սոցիալիստական փուլը շուտափույթ հաղթահարված տեսնելու ցանկությամբ, նախապես պլանավորված մեթոդներով հարստացան սեփական ժողովրդին կողոպտելու ճանապարհով: ՄԱԿ-ի ազգային փորձագետների

դիտարկումներով հախուռն ու հապճեպ սեփականաշնորհման արդյունքում հանրապետության ընտանիքների միայն 8 տոկոսը տիրացավ մասնավորեցված գույքի ավելի քան 90 տոկոսին²⁶³։ Առավել հարուստ ընտանիքների 4-5 տոկոսի տնօրինությանն անցավ ողջ ազգային հարստության կեսից ավելին։

Իրավիճակը մեղմելու, գործազուրկներին ու չքավորներին օգնելու նպատակով հանրապետությունում 1996 թ. ստեղծվեց նպաստային համակարգ։ Կողոպտված մարդկանց սովից փրկելուն նպատակամղված այս ձեռնարկումները զարմանալիորեն հակառակ արդյունքը տվեցին։ Բացառիկ հերոսական հաղթանակ տարած և նախընթաց շրջանում անհամեմատ բարեկեցիկ ապրած մի երկրում մուրացկանությունը դարձավ ժողովրդի եկամուտի հիմնական աղբյուրը։ Աշխատանքի և արժանապատիվ ապրելու սրբազան արժեքը արժեզրկվեց, մարդը օտարացավ իր ունեցվածքից, հողից, հայրենիքից, կորցրեց ամենաթանկը՝ հավատն ու վստահությունը սեփական հայրենիքի ու պետության նկատմամբ։ Ակնհայտ դարձան քաղաքական, տնտեսական, բարոյական, հոգեբանական ճգնաժամի նոր դրսևորումները։

Ծայր առած համընդհանուր ճգնաժամը դարձավ ոչ միայն աղքատության պարտադրված վիճակ, այլև «ազգային չգիտակցված կեցություն»²⁶⁴, որի արդյունքում մերժվում էին ոչ միայն ազգային ինքնությունը, ապրելու հույսն ու ապագայի նկատմամբ հավատը, այլև ազգային արժանապատիվ ապրելու անհրաժեշտությունը քարոզող գաղափարախոսությունը։ Կյանքի կոչվեց «Ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է» սկզբունքը։ «Կեղծ քաղաքական կատեգորիա է նաև

²⁶³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 259, թ. 1,2:

²⁶⁴ Տե՛ս Սարինյան Ս., նշվ. աշխ., էջ 281:

«ազգային գաղափարախոսություն» հասկացությունը,– հռչակում է Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը,– որովհետև ժողովրդավարության պայմաններում անհնար է ողջ ազգին համախմբել մեկ միասնական գաղափարախոսության շուրջ»²⁶⁵:

Ազգի ապագայի նկատմամբ հավատի կորուստը, սոցիալական անգործությունը առաջացնում են տազնապի տրամադրություն, պարտվողականություն և թերարժեքության բազում բարդույթներ: Այս ամենի արդյունքում վերստին ծայր առավ ամենակործանարարը՝ *զանգվածային արտագաղթը*՝ հայ ժողովրդի գլխին կախված հավերժական չարիքը: Այդ արհավիրքի թողնելիք հետևանքների մասին պատկերացում կազմելու համար թռուցիկ ակնարկով հիշենք զանգվածային արտագաղթի երկու նախադեպ՝ Բագրատունյաց պետության անկմանը և Հայոց մեծ եղեռնին հաջորդած արտագաղթերն ու նրանց թողած կործանարար հետևանքները:

Բագրատունյաց թագավորության (885-1045 թթ.) վերջին տասնամյակներում Բյուզանդական կայսրությունը հայ ժողովրդի դիմադրական ուժերը մեկնդմիշտ ջլատելու նպատակով հեռացնում էր հայ ազնվականությանն ու նրանց զինված ուժերին և վերաբնակեցնում կայսրության տարածքներում:

Հունական այս անխոհեմ քաղաքականությանը հաջորդում են սելջուկյան արշավանքները: Պատմական Հայաստանի մեծ մասը, իսկ հետագայում Բյուզանդական կայսրության ողջ տարածքը լցվում է թուրքական քոչվոր հորդաներով:

Հույների թույլ տված այս սխալը հետագայում կրկնեցին հենց իրենք՝ թուրքերը: Դեռևս XVI դարի սկզբներից պարսիկներին դեմ պատվար ստեղծելու նպատակով նրանք Արևմտյան Հա-

²⁶⁵ «Հայաստանի Հանրապետություն», 26 ապրիլի, 1994:

յաստանը բնակեցրին քրդական ցեղերով: Այնուհետև կյանքի կոչեցին քրդերի ձեռքով հայ ժողովրդին հայրենիքից դուրս վտարելու ու ոչնչացնելու ծրագիրը: Արևմտյան Հայաստանը վերստին հայաթափվեց, քրդերը այնտեղ ձեռք բերեցին գերիշխող դիրք, որի արդյունքում Թուրքիան այսօր Արևմտահայաստանում կանգնած է բազմամիլիոնանոց քրդական զանգվածի դեմ հանդիման:

Ի՞նչ տվեց Բյուզանդական կայսրությանը Հայաստանի հայաթափումը. Հայաստանին տեր դարձան թուրքական հորդանները: Ի՞նչ տվեց Հայաստանը հայաթափելու թուրքական ծրագիրը. Հայաստանին տեր դարձան քոչվոր քրդերը: Հայ ժողովուրդը կորցրեց իր մեծ հայրենիքը, պետականությունը, ազգային միասնությունը, ծվարեց նրա մի փոքր հատվածում, սակայն ձեռք բերեց մեծ սփյուռք: Պատմության այս ահեղ իրողություններից ինչ դասեր պետք է քաղեր Բյուզանդական կայսրության իրավահաջորդ՝ երրորդ Հռոմ իրեն հռչակած ռուսական կայսրությունը:

Այժմ հայ ժողովրդի առաջ ծառացած ամենակարևոր հարցերից առաջինն այն է, թե *ինչի կհանգեցնի հայ ժողովրդի մերօրյա զանգվածային արտագաղթը, և երկրորդ՝ ինչ ընթացք ու ապագա կունենա հայկական սփյուռքը, երրորդ՝ ինչ ճակատագիր կունենան հայաթափված ու քրդերով բնակեցված Արևմտահայաստանը և Արևելյան Հայաստանից 1920-ական թվականներին թուրքերի կողմից խլված փարածքները:*

Անդրադառնալով գաղթաշխարհին՝ պետք է ընդգծել, որ միջնադարյան կյանքի դանդաղ և միապաղաղ պահպանողական իրավիճակը, գաղթօջախների ներփակ դրությունը, գաղթաշխարհում հայոց ազգային նկարագիրը և ավանդույթները պահելու համար բարենպաստ պայմաններ էին ստեղծում, այն-

քան բարենպաստ, որ Կիլիկիայում նույնիսկ ստեղծվեց հայկական պետականություն: Աշխարհասփյուռ հայ գաղթավայրերը դարեր շարունակ հայ ժողովրդի կեցությունն ու պատմությունը ամբողջացնող ու նաև նրա առաջադիմությունն ու առանձնահատկությունները պայմանավորող կարևորագույն գործոնները դարձան:

Տարբեր երկրներում ու տարբեր դարաշրջաններում ծաղկում ապրող գաղթօջախները դարձան նաև հայկական մշակույթի, գիտության ու կրթության կենտրոններ: Հայ առաջավոր զանգվածները, շփվելով հյուրընկալող ժողովուրդների հետ, հաղորդակցվելով մշակույթի համաշխարհային ձեռքբերումներին, ստեղծեցին համազգային մշակույթի բարձրագույն արժեքներ²⁶⁶:

Արդյունաբերական հասարակարգի ձևավորմանը զուգընթաց հյուրընկալող երկրներում հասարակական կյանքը համակարգվում է բոլորի համար ընդհանուր սկզբունքներով: Գաղութները արագորեն կորցնում են ինքնամփոփ կյանքի պայմանները: Ինտեգրվելով հյուրընկալող ժողովուրդներին՝ սփյուռքահայերը կորցնում են ազգային ինքնության այնպիսի արմատական բաղադրիչներ, ինչպիսիք են՝ ցեղի, հայրենիքի, լեզվի, մշակույթի, հոգեկան կերտվածքի էթնոտարբերիչ հատկանիշները: Ազգային այս գլխավոր հատկանիշների կորստից հետո նրանց ազգային պատկանելության ապագան դառնում է մշուշապատ: Այսօր սփյուռքահայ համայնքներ գոյություն ունեն աշխարհի ավելի քան հիսուն երկրներում, սակայն սփյուռքահայերի հիմնական մասը բնակվում է Ռուսաստանի դաշնությունում և ԱՄՆ-ում²⁶⁷: Գերտերություններ են սրանք, որոնց դիրքորոշումներից են կախված նաև Հայաստանի կարգավիճակն ու ապագան: Այս

²⁶⁶ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 298:

²⁶⁷ Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 9:

պայմաններում հայոց ազգային գաղափարախոսության առջև պատմականորեն ծառացած խնդիրներն են.

1. գաղթաշխարհի հայության ազգային ինքնության պահպանումն ու ամրապնդումը,

2. հայրենիք վերադառնալու իրավունքի ձեռքբերումը,

3. Արևելյան Հայաստանից խլված վերոհիշյալ տարածքների ազատագրումը:

Այսպիսով՝ հայ ժողովրդի ինքնազատագրումը Արևմտյան Հայաստանից վտարված հայերի ժառանգների վերադարձն է դեպի իրենց պատմական հայրենիք, Արևելյան Հայաստանից խլված Նախիջևանի, Կարսի, Արդահանի, Սուրմալուի տարածքների վերամիավորումը Արևելահայաստանին ու նրա իրական տերերի՝ այդ տարածքներից վտարված հայերի ժառանգների վերադարձը իրենց պատմական հայրենիք:

Վերադառնալով հայ ժողովրդի ինքնազատագրման գաղափարախոսությանը՝ տեսնում ենք, որ գործ ունենք ոչ թե ավարտված, այլ տակավին չլուծված ու շարունակական երևույթի հետ, երևույթ, որը մեր քննարկած գրեթե բոլոր հանգրվաններում գտնվել է, և այժմ էլ գտնվում է հայ հանրային կյանքի կիզակետում՝ ընդգրկելով մտավոր գործունեության բոլոր բնագավառները՝ դիվանագիտական, հրապարակախոսական, գրականության, գիտության, արվեստի և այլն: Անցնելով ազգային ու միջազգային իրադարձությունների փորձություններով՝ հայ ժողովուրդը հոգեկան տագնապների սպասումներով հյուսել է հույսերի ու հուսախափության, վերելքների ու անկման տրամադրություններ: Մեր խնդիրն է ոչ թե թվարկել դրանք, այլ գտնել նրա լուծման տարբերակներն ու իրադարձությունների զարգացման ընթացքը հայկական ազգայնականության ժամանակակից տեսությունների ու ձեռքբերումների մակարդակում: Մինչ այժմ,

ըստ ակադեմիկոս Ս. Սարինյանի, Հայոց ցեղասպանության, պահանջատիրության, Հայ դատի և առհասարակ նորագույն շրջանի հայոց պատմության վերաբերյալ ուսումնասիրություններում մի ընդհանուր հակում է նկատվում՝ դեպի երևույթի փաստական յուրացումը՝ նորահայտ արխիվների, վավերագրերի և մոռացված հուշերի խորագննին պրպտումներով, սակայն հաճախ անտեսվում է տեսականացված պատմությունը, այլ կերպ ասած՝ պատմության փիլիսոփայությունը: Բայց փաստի գիտակցումն ու բացատրությունը իր լուծման ուղիների մշակումն են պահանջում: Այժմ հայկական հարցը միայն փաստարկով չի լուծվում: Թուրքիան բնաջնջեց բիբլիական մի երկիր, բռնությանմբ տեղահանեց ու քշեց անապաստան հեռուներ, անապատներ, և հիմա ապացույցներ են պահանջում՝ հաստատելու համար, թե կատարվել է ցեղասպանություն: Ամբողջ աշխարհի առաջ, հեռուստատեսության, ռադիոյի, կինոխցիկների, մամուլի, ականատեսների վկայությամբ կատարվեց սումգայիթյան նախահիրը: Կարիք կա՞ արդյոք վերստին ապացուցելու դրանք:

Ս. Սարինյանը կարծում է, որ փաստն ունի իր փիլիսոփայությունը, ներագդման իր ուժը, պատժելիության միջոցները, մեթոդներն ու ծավալները, որի մեկնաբանությանը անհրաժեշտ է իմացության ու հատուցման շրջանակները սահմանելիս²⁶⁸:

Սոցիալիզմի համաշխարհային համակարգի տապալումից հետո ստեղծված նպաստավոր պայմաններում հնարավորություններ ընձեռվեց հայ գիտնականներին ազատ որոնումներ կատարելու Հայկական հարցի լուծման ուղիների հայտնաբերման բնագավառում: Հատկապես ուշագրավ են պրոֆեսոր Հակոբ Հակոբյանի «Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժա-

²⁶⁸ Տե՛ս Ս. Սարինյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 2005, էջ 293-294:

մանակակից միջազգային իրավունքը»²⁶⁹ և ՀՀ ակադեմիայի թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի «Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը», «Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում»²⁷⁰ աշխատությունները:

Հ. Հակոբյանը այս աշխատության մեջ միջազգային իրավական և պատմական առումներով քննարկում է հայոց հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը, ամենատարբեր պատճառներով իրենց բնօրրանը լքած հայերի հայրենիք վերադառնալու խնդիրը, որը կարոտ է մանրակրկիտ ու անկողմնակալ քննության, քանի որ այն շարունակում է մնալ որպես միջազգային դիվանագիտության չարչրկված, բայց դեռևս լուծում չգտած հիմնահարց:

Թուրքիայից այժմ պահանջվում է միայն ճանաչել ցեղասպանության փաստը ու քաղաքական երկխոսություն սկսել հայերի հետ և արդարացի վարվել իր տարածքում ապրող հայ փոքրամասնության հետ: Հայ ժողովրդին բռնագաղթի ենթարկող պետությունը որպես արդարացում վկայակոչում է պատերազմը և ինքնապաշտպանության ու ներքին անվտանգության ապահովումը, մինչդեռ հայրենիք վերադառնալու խնդիրը ավելի հեշտությամբ կլուծվեր, եթե այդ պետությունը ընդուներ իր հանցանքը և կամովին ետ ընդուներ տարագրվածներին: Ինչպես նշեցինք, Հայոց ցեղասպանության փաստը միջազգայնորեն սկսեց ճանաչվել ԽՍՀՄ փլուզումից հետո: Բայց դա վերաբերում է ցեղասպանության փաստի ընդունմանը և ոչ թե հետևանքների

²⁶⁹ Տե՛ս Հ. Հակոբյան, Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000:

²⁷⁰ Տե՛ս Ն. Հովհաննիսյան, Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը, Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Երևան, 2016:

փոխհատուցմանը և վտարվածների սերունդներին հետ ընդունմանը: Հայրենիք վերադառնալը ձգձգվելու դեպքում տարագիր հայությունը պետք է կարողանա հիշել և իր հիշողության մեջ վառ պահել նվիրական հայրենիքի գաղափարը, նշում է Հ. Հակոբյանը և մատնացույց անում հրեաների 1800 տարվա հիշողության ու նպատակին հասնելու փաստը: Հայրենիք վերադառնալու ձգտումը հրեաներին հնարավորություն է տվել ամենուրեք պահպանելու իրենց ազգային ինքնությունը: Որպես օրինակ Հակոբյանը թվարկում է երկու տասնյակից ավելի աշխարհահռչակ հրեաների անուններ և ընդգծում, որ նրանք ամենուրեք աղոթելիս դեմքով դարձել են դեպի Երուսաղեմ. «Եկող տարի հանդիպենք Երուսաղեմում»²⁷¹ միմյանց մաղթած ամենամեծ բաղձանքով, որով Պաղեստինից դուրս անվանի հրեաները սերմանում էին նոր ոգի և նոր հավատ:

«Հայրենիք» հասկացությունը հրեաների համար երբեք վերացական չի եղել և նույնացվել է ազգի բնօրրանի հետ ու նյութականացվել բացառիկ ու անվերապահ իրավունքի միջոցով:

Նույն կերպ պետք է վարվեն նաև հայերը: Իրենց պատմական հայրենիքից արտաքսված հայության հայրենիք վերադառնալու իրավունքը ոչ միայն բխում է Ժամանակակից միջազգային իրավունքի նորմերից ու սկզբունքներից, այլև ճանաչված ու վավերացված է մի շարք միջազգային պայմանագրերով ու համաձայնություններով, որոնք վերաբերում են Հայ դատին:

Հայ դատի և հատկապես տարագիր հայության հայրենիք վերադառնալու հույսերը զգալիորեն կապված են Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձությունների հետ: Բնականաբար, Ռուսաստանի վերաբերմունքը Հայ դատի նկատմամբ պատմա-

²⁷¹ Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 86:

կան զարգացման բոլոր փուլերում կապված է եղել նաև ռուս-թուրքական հարաբերությունների հետ:

Ռուսաստանի դաշնության հայկական գաղթօջախները, հայ-ռուսական հարաբերությունների և այն մարմնավորող ազգային ծրագրերի ու գաղափարախոսությունների համակարգում, առավել կարևոր խնդիրներ ևս ունեն: Հայերի թիվը Ռուսաստանում հասնում է 3 միլիոնի: Այսինքն՝ ՌԴ-ն հայկական այն գաղթավայրն է, որտեղ գրեթե Հայաստանի չափ հայեր են ապրում, և որի բազմակողմանի ազդեցությունը Հայաստանի և հայերի նկատմամբ անմիջական է: Միևնույն պետության մեջ և քաղաքակրթական միջավայրում համերաշխ ապրելու գործոնը մեծ դեր է խաղացել հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների համարկարգում: Հայերի մեծամասնությունը արտաքին ցանկացած հարաբերություններում նախապատվությունը տալիս է Ռուսաստանին, ինչը առաջին հերթին պայմանավորված է տնտեսական, մշակութային և քաղաքական գործոններով: Ռուսաստանը բացարձակ առաջատարն է այն երկրների ցանկում, որտեղից ֆիզիկական անձինք բազմամիլիոնանոց տրանսֆերներ են ուղարկում Հայաստան երկրի բանկային համակարգի մեջոցով: Ռուսաստանը հսկայական հանրային կապիտալ ունի Հայաստանում, հայերն էլ իրենց հերթին՝ Ռուսաստանում: Այս փոխկապակցվածությունը չի կարող չպայմանավորել Հայաստանում ստեղծված իրատեսական քաղաքականությունը²⁷²:

Հայ ժողովրդի ընկալմամբ իրենց և ռուսների միջև սոցիալական տարածությունը ամենամոտն է: Այսուհանդերձ, Ռուսաստանի Դաշնության հայկական գաղթօջախների ապագան նույն-

²⁷² Տե՛ս **Գ. Գրիգորյան**, Ռուսաստանը Հայաստանի հանրային ընկալմամբ, Երևան, 2013, թիվ 5, էջ 52:

պես մշուշապատ է: Ռուսաստանում ավելի սուր է դրված ազգային ինքնության պահպանման հարցը: Կորցնելով լեզուն՝ կենցաղային մեծ շփումների և խառն ամուսնությունների հետևանքով հայերն արագ կորցնում են նաև ազգային բնավորությունն ու հոգեբանությունը:

Հարկ է նշել, որ այս իրավիճակում վտանգված է նաև հայ և ռուս ժողովուրդների ռազմավարական համագործակցության ապագան: Նկատի ունենք հայ ու ռուս ժողովուրդների դեմ ուղղված պանթուրքիզմի գաղափարախոսության ու քաղաքականության վտանգը:

Պանթուրքականները հանդես էին գալիս թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված 4 մլն քկմ տարածքը Թուրքիայի գլխավորությամբ միավորելու պահանջով: «Փոքր թուրանի» սահմանները պանթուրքականները տարածում էին Կ. Պոլսից մինչև Բայկալ լիճ և Մոնղալիայից մինչև Կազան»²⁷³:

Պանթուրքիզմի նիզակը ուղղված է առաջին հերթին Ռուսաստանի դեմ, որի կազմում է ապրում թուրքալեզու ժողովուրդների մեծ մասը, երկրորդը՝ հայ ժողովրդի դեմ Արևմտահայաստանում ու Կովկասում:

Հայտնի է, որ ակռաջին համաշխարհային պատերազմի առաջին փուլում բնաջնջվեց ու դուրս մղվեց արևմտահայությունը, իսկ ավարտական փուլում՝ 1918 թ. օգտվելով նպաստավոր իրավիճակից՝ թուրքերը Արևելյան Հայաստանը ևս ամայացնելու, դեպի Թուրան տանող ճանապարհին ընկած արգելքները վերացնելու համար ավերեցին ու ամայացրին Արևելյան Հայաստանի՝ Նախիջևանի, Շարուրի, Սուրմալուի, Կարսի շրջանները: Ամենուրեք վիստացող թուրք էմիսարներին հաջողվեց հայոց հա-

²⁷³ Տե՛ս Հ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 250:

մար ներքին ճակատ ստեղծել՝ Երևանի նահանգի մուսուլմանական բոլոր շրջաններին ուղքի կանգնեցնել՝ դյուրացնելու օսմանյան բանակների առաջխաղացումը: Երիտթուրքերի պանթուրքիստական ծրագրում Շարուր-Նախիջևանը մի առանձնահատուկ տեղ էր բռնում: Գտնվելով Անատոլիայից Ադրբեջան տանող ուղիների վրա և ունենալով հարմար երկաթուղային ու խճուղային ճանապարհներ՝ այն կարևոր դեր ուներ այդ ծրագրի իրագործման խնդրում: Դրա համար էլ թուրքական իշխանությունները հապշտապ ձեռնամուխ եղան դեպի Ադրբեջան տանող ճանապարհների մաքրագործմանը: Տիրանալով Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղուն՝ նրանք սկսեցին արագորեն մոտենալ Շարուր-Նախիջևանին և ձեռնամուխ եղան հայության վերջին բեկորների բնաջնջմանն ու արտաքսմանը, որի արդյունքում հայթափվեց նաև այս տարածաշրջանը:

«Շարուրի, Նախիջևանի և Գողթնի հայ ազգաբնակչության նկատմամբ կատարվածը ոչ այլ ինչ է, եթե ոչ ցեղասպանություն (գենոցիդ)՝ իր բոլոր դրսևորումներով, որի համար պատասխանատու է ոչ միայն Թուրքիան, այլև Ադրբեջանը»²⁷⁴,– ընդհանրացնում է հիմնահարցի հմուտ մասնագետ, պրոֆ. Է. Զոհրաբյանը:

Հայտնի է, որ 1921 թ. Լենինի և Քեմալի հայադավ գործարքի արդյունքում Ադրբեջանին հանձնվեցին Նախիջևանը և Ղարաբաղը, որի արդյունքում Օսմանյան Թուրքիան Ադրբեջանից բաժանում էր Զանգեզուրի ընդամենը 20-25-կիլոմետրանոց նեղլիկ շերտը, որով Ռուսաստանի և Հայաստանի դեմ ուղղված պանթուրքիզմի գաղափարախոսությունը գրեթե իրականություն դարձավ:

²⁷⁴ Է. Զոհրաբյան, Ազգամիջյան կոիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000, էջ 141:

«1921 թ. խորհրդա-թուրքական պայմանագիրը,– գրում է Հ. Հակոբյանը,– ամենամաքաբարության ձևով ոտնահարելով հայ ժողովրդի իրավունքները՝ գաղթական հայության առջև փակում էր հայրենիք վերադառնալու ճանապարհը: Բայց այդ պայմանագիրը ակնհայտորեն հակասում էր միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին, ուստի և իբրև ապօրինի գործարքի արդյունք պետք է վերանայվի և չեղյալ հայտարարվի ներքոհիշյալ պատճառներով:

1) Պայմանագիրը ստորագրվեց առանց Հայաստանի մասնակցության...:

2) Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն ինքը հրաժարվել էր Ռուսական կայսրությունից՝ իբրև ժառանգություն: Ավելին, կայսրությունն արդեն չկար, և նախկինում նրա մասը կազմող Արևելյան Հայաստանը անկախ, ինքնիշխան խորհրդային հանրապետություն էր: Հետևաբար Ռուսաստանի կառավարությունը իրավունք չունեի մեկ այլ ինքնիշխան պետության տարածքները տնօրինելու իբրև Ռուսական կայսրության ծայրագավառի, հանձնելու մեկ այլ պետության, տվյալ դեպքում քեմալական Թուրքիային...:

3) Ստորագրելով Մոսկվայի պայմանագիրը և Թուրքիայի սեփականությունը ճանաչելով Կարսը, Արդահանը, Սուրմալուն, որը պատմականորեն երբեք չէր եղել թուրքական տիրույթ, և 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանից էր անցել ռուսներին, խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ճանաչում էր թուրքական անեքսիայի արդյունք...:

4) Ռուսաստանի ներկայացուցիչների միջնորդությամբ ստորագրված Կարսի պայմանագիրը վերարտադրում էր Մոսկվայի պայմանագրի դրույթները»²⁷⁵:

²⁷⁵ Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 237:

Հայկական լեռնաշխարհի ամենահայկական տարածքներից մեկը եղել է Նախիջևանը, որը փաստացիորեն Արարատյան դաշտի շարունակությունն է: Ընդհանրապես 1920-ական թթ. մեր կորցրած մյուս շրջանները՝ Սուրմալուն, Իգդիրը, ավելի հստակ Արարատյան դաշտի՝ Արաքսի աջ ափին գտնվող շրջանները, երբեք չեն եղել Երևանի նահագից դուրս տարածք: Այս- քան անարդարություններից հետո հայ ժողովուրդը մինչև այժմ չի մշակել որևէ հայեցակարգ Նախիջևանի և նշված մյուս շրջանների ազատագրության և պահանջատիրության մասին:

1930-ական թթ. միջազգային իրադրության լարվածության պայմաններում միջազգային հանրույթը ևս Հայ դատի խնդիրները չէր շոշափում: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի գրաված գերմանամետ դիրքը և վերջինիս պարտությունը հայ ժողովրդի մոտ նոր հույսեր արթնացրին պահանջատիրության նկատմամբ: Գերմանիայի պարտությունից շատ չանցած՝ Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսում Խորհրդային Միությունը բարձրացրեց Թուրքիայի կողմից հայերից խլված հողերի և սփյուռքահայերի հայրենիք վերադառնալու հարցը՝ «Խլված» անվանելով այն տարածքները, որոնք 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրով Խորհրդային Ռուսաստանն ինքն էր նվիրաբերել թուրքերին²⁷⁶: 6-րդ նիստի ժամանակ՝ 1945 թ. հուլիսի 22-ին, Ստալինի առաջարկով Մոլոտովն ավելի կոնկրետ բացատրություն տվեց՝ նշելով, որ խոսքը վերաբերում է Կարսին, Արդահանին և Արդվինին պայմանով, որ վերջին նահանգը պետք է անցնե՛ր Վրաստանին:

Հայրենիք վերադառնալու գործընթացը էականորեն պայմանավորված է գաղթաշխարհի հայության տրամադրություններով ու ձգտումներով:

²⁷⁶ Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 267:

Հայ ժողովրդի հայրենիքի ազատագրության ու տարագիր հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը փակուղի տանող վտանգավոր մյուս ուժը քրդական գործոնն է, նամանավանդ այժմ, երբ հայոց հայրենիքում քրդերը ոտքի են կանգնել և ազգային-ազատագրական պայքարի դրոշ բարձրացրել:

Հայտնի է, որ միլիոնավոր քրդեր այժմ ոչ միայն ապրում են նաև իրենց ձեռքով բնաջնջված ու բռնագաղթեցված հայերի պատմական հայրենիքում, այլև դրանք հռչակում են իրենց պատմական հայրենիքը:

Չկարողանալով զսպել հայերին կողոպտելու, թալանելու մոլուցքը՝ քոչվորակենցաղ քրդական ցեղային ավագանին կանգնեց թուրքական ոճրագործների կողքին՝ հուսալով, որ երիտթուրքերը բարձր կգնահատեն նրանց ներդրումները Հայոց ցեղասպանության գործում և իրենց կմատուցեն հայաթափ եղած Արևմտյան Հայաստանը:

«Այժմ քրդերը հայտնվել են թուրքական իշխանությունների հետ հակամարտությունների մեջ,– գրում է վաստակաշատ արևելագետ Ն. Հովհաննիսյանը,– զինված բախումներ են լինում քրդերի և թուրքերի միջև ոչ միայն Ստամբուլում այլև Արևմտյան Հայաստանի մարզերում՝ Խարբերդում, Վանում, Դիարբեքիրում և այլ շրջաններում, որոնք հիմնականում բնակեցված են քրդերով: Արդեն բացահայտ խոսվում է թուրքական պետության տրոհման, նոր պետությունների, այդ թվում՝ և քրդական կազմավորման հնարավորության մասին: Սակայն քաղաքական ղեկավարները ..., այդ թվում է քրդական «Բանվորական» կուսակցությունը են նրա ղեկավար Օջալանը,... չեն ճշգրտում, թե որ-

տեղ և ինչ տարածքներում է այդ քրդական պետությունը ստեղծվելու»²⁷⁷:

Քրդական գործիչները չեն թաքցնում, որ քրդական պետությունը Թուրքիայում կստեղծվի այն տարածքներում, որն այժմ գտնվում է նրանց վերահսկողության տակ, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում: Այսպիսով՝ քրդական գործոնը, ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, տիպաբանորեն պատկանում է Հայոց ցեղասպանության իրագործման համակարգին, որով քրդերի պատմական պատասխանատվությունը չի նվազում: Բայց քրդերը մոռանում են, որ իրենք սոսկ Արևմտյան Հայաստանի վերաբնակիչներ են և ոչ տերեր, ու օրինական չէ պետականություն հաստատել ուրիշի պատմական հայրենիքի տարածքների վրա:

Քրդերը Մերձավոր և Միջին Արևելքի հնագույն ժողովուրդներից են, որոնք որոշակի անկայուն ուժ են եղել, և որոնց իրենց նպատակների համար ծառայեցրել են տարածաշրջանի հզոր տերությունները, ինչպես, օրինակ, Արաբական խալիֆայությունը, շահական Պարսկաստանը, Օսմանյան կայսրությունը: Նրանք այժմ հոծ զանգվածով ապրում են Իրաքում, Իրանում, Սիրիայում և Թուրքիայում: Այս երկրներում քրդերն ունեն որոշակի կարգավիճակ: Իրաքում 1950-ական թթ. նույնիսկ ձեռք բերեցին ինքնավարություն, սակայն մնացած երկրներում որոշակի կարգավիճակ չունեն:

Հայ ժողովրդի ինքնագատագրման գաղափարախոսության առաջադրման հարցը քննարկելիս թե՛ Արևմտյան Հայաստանում, թե՛ Արևելյան Հայաստանի՝ 1920-ական թթ. Թուրքիային անցած տարածքներում բախվում ենք քրդական գործոնին, քանի որ նրանք այդ տարածքները համարում են քրդական տա-

²⁷⁷ Ն. Հովհաննիսյան, Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը, Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի լուծման հայկական հայեցակարգում, Երևան, 2016, էջ 23:

րածք: Երբ Հայոց ցեղասպանության հարցին մոտենում ենք քրդերի դիրքորոշման տեսանկյունից, ակնհայտ է դառնում, որ քրդերը Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ դարձան ցեղասպանության մասնակից՝ որպես երրորդ կողմ՝ կանգնելով օսմանյան ոճրագործների կողքին և ընդդեմ հայերի: Ն. Հովհաննիսյանի կարծիքով այդպիսին էր Հայկական հարցում քրդական գործոնի առաքելությունը Թուրքիայում²⁷⁸:

Ահա թե պատմական ինչպիսի պատասխանատվություն պետք է կրեն քրդերը Հայոց ցեղասպանության գործում:

Ըստ Սևրի պայմանագրի՝ քրդերը նույնպես պետք է ունենային իրենց պետությունը, որը սահմանակցելու էր հայոց պետությանը: Քրդական հարցի նման լուծումը սկզբունքային նշանակություն ուներ Հայկական հարցի լուծման համար, որի ճանապարհից վերանում էր քրդական գործոնը, քանի որ նախատեսվում էր նրա կազմում ներառել Եփրատ գետից հարավ ընկած շրջանները, մասնավորապես Դիարբեքիի վիլայեթը, Բիթլիսի և Վանի վիլայեթների այն հատվածները, որոնք չէին մտնելու Հայաստանի կազմի մեջ: Նշված պայմանագրի երրորդ բաժնի 62-64-րդ հոդվածներով նախատեսվում էր քրդական պետության մեջ մտցնել նաև Մոսուլի վիլայեթը: Փաստորեն՝ Սևրի պայմանագիրը ուրվագծեց Թուրքիայի տարածքում տեղակայված հատյալ Քրդստան՝ դուրս թողնելով Իրաքի, Իրանի ու Սիրիայի քրդերին²⁷⁹:

Այսուհանդերձ, ըստ Ն. Հովհաննիսյանի, Հայաստանը չունի որևէ սահմանազատված հայեցակարգ քրդական հարցում, մինչդեռ 100 տարուց ավելի է, որ քրդերի մասնակցությամբ իրագործվեց Հայոց ցեղասպանությունը, և նրանք տեր դարձան Արևմտյան Հայաստանին: Ճանաչված արևելագետը Հայաստա-

²⁷⁸ Տե՛ս Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 54:

²⁷⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 58:

նի երրորդ հանրապետության հիմքում առաջարկում է որպես համայն հայության գերակա հիմնախնդիր դնել հետևյալ պահանջները.

- հայեցակարգը մշակելու համար ստեղծել համահայկական հանձնաժողով Հայաստանի, Արցախի և սփյուռքի ներկայացուցիչների մասնակցությամբ,

- ՀՀ ԱԳ նախարարության կազմում ստեղծել հատուկ մարմին, անցկացնել քննարկումներ, սահմանել Արևմտյան Հայաստանի հիմնախնդիրների կարգավորման շրջանակները և այլն:

Այնուհետև Ն. Հովհաննիսյանը առաջարկում է հայկական հայեցակարգի հետևյալ տարբերակները.

առաջին՝ արևմտահայերի վերադարձն իրենց բնակավայր. դա ամենախաղաղ ճանապարհով լուծումն է, համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին, հեշտ լուծելի է, եթե Թուրքիան համաձայնի կամ ստիպված լինի համաձայնել,

երկրորդ՝ տարածքային ինքնավարություն. կարելի է ընդունել այն դեպքում, եթե Թուրքիան ճանաչի արևմտահայերի անկախությունը կամ Արևելահայաստանի հետ միավորվելու նրա պահանջը,

երրորդ՝ մշակութային ինքնավարություն. այս տարբերակի դեպքում քրդերը, մինչև վերջին մարդը չէ, որ կլքեն Արևմտյան Հայաստանը,

չորրորդ՝ ֆինանսական և նյութական փոխհատուցում. պետք է իրագործվի 1,5 մլն սպանված և 1 մլն արտաքսված հայերի ժառանգներին ֆինանսական և նյութական համարժեք փոխհատուցում տալու պահանջը:

Որպես իդեալական տարբերակ Ն. Հովհաննիսյանը առաջադրում է Հայաստանի Հանրապետությանը միավորվելու տարբերակը²⁸⁰:

²⁸⁰ Տե՛ս Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 64:

ԱՄՓՈՓՈՒՄ

Էթնիկական ինքնության հարցը՝ որպես ազգային գաղափարախոսության, որպես ազգային տեսակի ինքնաճանաչման հիմնադրույթ, նախնադարյան առասպելներից մինչև այժմ առաջնային տեղ ունի: «Ո՞վ է հայը», և «ի՞նչ է հայոց ֆենոմենը» հարցերը մշտապես զբաղեցրել են հայ մտածողին: Իրականում հայը խորհրդավոր ու անմեկնելի է եղել մարդկային հասարակության ողջ ընթացքում: Աստվածաշնչում նա ներկայանում է գերընտիր, Աստծու կողմից արարված, զտարյուն, արիացի, Նոյ Նահապետի սերունդ:

Հնագույն առասպելները հային մարմնավորում են Հայկի, Արա Գեղեցիկի, Վահագնի, Սասունցի Դավթի պես: Հայի հայրենիքն իր սրբազան Արարատով, Աստվածաշնչում ներկայանում է որպես ջրհեղեղից փրկված ընտիրների բնօրրան: Անողորք ու դաժան ճակատագիրը, սակայն, հային իջեցրեց երկնային արքայությունից և դարձրեց սովորական մահկանացու:

Հայագիտությունը բազում փորձեր է արել ճշտելու, թե որն է դրա պատճառը՝ ռասայակա՞ն կառուցվածքը, աշխարհագրակա՞ն միջավայրը, թե՞ պատմական ճակատագիրը: Ակնհայտ է միայն, որ եթե մեր ազգի մեծերին չհաջողվեր վերականգնել ու ամբողջացնել պարբերաբար կորցրած ազգային արժեքները, մեր ցաքուցրիվ, բայց ահռելի ներուժը չնպատակամղեր ազգապահպանման գործին, դժվար է ասել, թե ուր կտանեին հային իր իսկ արյունով ներկված հինավուրց ճանապարհները:

Հայի հոգևոր վարքագծի բնորոշ կողմը, օտարի լծից ազատագրվելու ու մասնատված հայրենիքը միավորելու հարատև տենչն է եղել: Ամենաձանր իրավիճակներում անգամ հայը գտել է գոյատևման կենարար թելը. երբեմն վեհաշուք տաճար, եր-

բեմն անառիկ ամրոց է կառուցել, երբեմն էլ հազիվ մատուռ կամ խաչքար է կերտել՝ իր ճակատագրի պես բարդ, իր հոգու պես ջինջ, իր վշտի պես անհուն, իր կամքի պես աննկուն:

Յուրաքանչյուր ազգի նկարագրի հիմնական տեսակը արտացոլվում է նրա իղձերը, ձգտումները մտածելակեպը ու գործելակերպը բացահայտող ազգային գաղափարախոսության միջոցով:

Ազգային գաղափարախոսությունը տեսական հայացքների ավարտուն համակարգ է: Նրա նպատակն է առաջադրել ազգի առջև ծառացած կենսական հրատապ խնդիրների լուծման գաղափարներ, արմատավորել դրանք ազգի գիտակցության մեջ և ուղենշել նրանց լուծման իրատեսական մայրուղիները: Այն հանդես է եկել նախ որպես պարզունակ աշխարհընկալում, հավատք, զգացում, ապա՝ ուսմունք ու ամբողջական աշխարհայացք, որոնց շրջանակներում տրվում է ազգային արժեքների բացարձակ գիտակցումը այլ արժեքների շարքում: Նրա կայացմանը նախորդել են մշակութաբանական բնույթի ստեղծագործություններ, ֆոլկլորային հավաքածուներ, գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք նպատաուղղված էին ժողովրդի մեջ առաջացնելու հայրենասիրական ու ազգային զգացմունքներ, և նրանք, իրոք, դառնում էին հզոր նյութական ուժ, երբ տիրապետում էին ազգի հիմնական զանգվածին:

Ազգային գաղափարախոսություններն ունեն երկու ուղղվածություն. հզոր ազգերի դեպքում հետապնդում են նվաճողական, իսկ թույլերի պարագայում՝ ինքնապաշտպանական նպատակներ: Իրենց զավթողական ծրագրերը անարգել իրագործելու և ենթակա ժողովուրդներին ենթակա վիճակում պահելու համար, մեծ տերություններն իրենց գաղափարախոսությունները անարգել պարտադրելու համար արժեզրկում ու մերժում էին նվաճված

ժողովուրդների ոչ միայն գոյատևելու իրավունքը, այլև գոյապահպանության գաղափարախոսությունը, այսինքն՝ նրանք ձգտում էին գաղափարապես ևս նվաճել քաղաքականապես արդեն նվաճված ժողովուրդներին:

Քաղաքականության թույլ սուբյեկտ հանդիսացող ազգերն էլ ստեղծում են իրենց գոյապահպանության գաղափարախոսությունը, որն ընդհանուր անունով հայտնի է նացիոնալիզմ անունով, որին բազմազգ պետությունների տիրուսակիր ազգերի մտավորականները մեկնաբանում են որպես ազգայնամոլություն, իսկ իրենք՝ ազգայնականություն: Մեր հետազոտության արդյունքում եկանք այն եզրակացության, որ բոլոր մակարդակների և ուղղվածության ազգային գաղափարախոսությունների հիմքում դրված են երեք հիմնական՝ սեփական ազգի արարչական ծագման, հայրենիքի սրբագործման և ազգային ինքնության՝ ինքնաճանաչման գաղափարները: Սակայն յուրաքանչյուր ազգի ապրելավայրից, գրաված տեղից ու կարգավիճակից են կախված նրա գաղափարախոսության առանձնահատուկ հիմնադրույթները՝ ենթահամակարգերը, նրբերանգները, ուղղվածությունն ու բովանդակությունը:

Ներկա հետազոտությունը հնարավորություն տվեց համոզվելու, որ հայ ժողովրդի համար առանձնապես կարևորվել է նաև ազգային միասնության՝ ինքնահամախմբման և սեփական ուժերով ազատագրության՝ ինքնազատագրման գաղափարները, ինչը ենթադրում է ինքնահամախմբվելու և սեփական ուժերով հայրենիքը ազատագրելու միջոցով անկախ ու ինքնիշխան պետականության ստեղծում:

Այսպիսով՝ հայոց ազգային գաղափարախոսությունը սահմանում ենք որպես տեսական համակարգերի ու հայացքների այն ամբողջությունը, որը ներառում է հայ ժողովրդի արարչա-

կան ծագման, պատմական հայրենիքի սրբագործման, ազգային ինքնության, ինքնահամախմբման և ինքնազատագրման գաղափարների ամբողջությունը:

Հայոց ազգայնականությունը հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրագույն դրսևորումն է, որը ծնվել ու վերածնվել է ազգային կեցության զարթոնքի ու վերելքների պահերին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց ինքնության առաջին մեծ պոռթկումը տեղի է ունեցել V դարում, երբ ազգային մտածողությունը հասել է ազգային գաղափարաբանության հայտնագործման ու համակարգման մակարդակին: Հաջորդ զարթոնքը ի հայտ է եկել դասական միջնադարում, որն իր արտացոլումն է գտել «Սասունցի Դավիթ» էպոսում: Երրորդ նշանավոր թռիչքը կատարվել է XVIII դարավերջին Մադրասում, չորրորդը՝ XIX դարում, հինգերորդը՝ արդի դարաշրջանում՝ 1900 թվականից մինչև այժմ: Հայոց ազգային զարթոնքի շրջադարձային այս հինգ հանգրվաններում ծնվեցին հայ ժողովրդին հաղթանակի հավատ ներշնչող մեծերը՝ Խորենացին, Ալիշանը, Աբովյանը, Րաֆֆին, Թումանյանը, Տերյանը, Նժդեհը և մյուս տաղանդավորները, որոնք առաջնորդեցին ու ինքնաճանաչ դարձրին հայ ժողովրդին՝ մղելով նրան ազատության ու անկախության:

Մեր ուսումնասիրության արդյունքում համոզվեցինք, որ հայոց ազգային գաղափարախոսությունն իր բնույթով գոյապահպանական է, որը պայմանավորված է պատմաաշխարհագրական այն միջավայրով, որտեղ նա ծնունդ է առել ու կերտել իր հազարամյակների պատմությունը:

Հայկական բարձրավանդակը մի բնական միջնաբերդ էր Մերձավոր Արևելքում: Ոչ մի նվաճող չէր կարող հաստատվել

Միջազգետքում, Պարսից ծոցում, Ասորիքում, Փոքր Ասիայում՝ առանց նախապես Հայկական բարձրավանդակում ամրանալու: Դրա համար էլ նա հավերժական կռվածադիկ է եղել բոլոր ժամանակների աշխարհակալ պետությունների ու ազգերի՝ Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի, Արաբական խալիֆայության, սելջուկների, թաթար-մոնղոլների, թուրքերի ու ռուսների համար: Այսուհանդերձ նվաճողների այս տիպի հերթափոխը թող չստեղծի այն տպավորությունը, թե հայ ժողովուրդը լռելյալն հպատակվել է նրանց: Հայ ժողովրդի պատմությունը իմաստավորում ու զարդարում են նրա մղած հերոսական այն պատերազմները, որոնց արդյունքում հայ ժողովուրդը կերտել է 10 ինքնիշխան պետականություն՝ Ուրարտուի, Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների, Զաքարյանների, Հեթումյանների գլխավորությամբ և XX դարում կերտված երեք հանրապետություններով:

Ք. ա. VIII-VII դարերում ձևավորված հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությունը ի հայտ եկավ միայն V դարում հայոց գրերի գյուտի ու համազգային բարձր մշակույթի ձեռքբերման արդյունքում և 428 թ. Արշակունյաց պետության անկման հետևանքով վտանգված ժողովրդի գոյապահպանությունը ապահովող գաղափարախոսության մշակման անհրաժեշտությամբ: Այն ծնունդ առավ հայոց նախարարական ամենակենսունակ տների՝ Բագրատունիների և Մամիկոնյանների նախաձեռնությամբ: Սահակ Բագրատունին Մովսես Խորենացուն, իսկ Վահան Մամիկոնյանը Ղազար Փարպեցուն հանձնարարեցին գրել հայ ժողովրդի պատմությունը, նրանք նույնիսկ գրվելիք հայոց պատմության ծրագիրն ու պահանջներն էին առաջադրել:

Հայ ժողովրդի արարչական ծագման, հայրենիքի սրբագործման և ազգային ինքնության ակունքների որոնումները Խո-

րենացուն հասցրել են մարդկության առաջացման աստվածաշնչյան ակունքներ, համաշխարհային ջրիեղել ու Նոյ Նահապետի առասպելական ժամանակներ: Այս առասպելի հիման վրա մինչև XIX դարավերջը հայագիտության մեջ անվերապահորեն տիրապետում էր այն տեսակետը, որ մարդկությունը առաջացել է Հայաստանում. այն հանդիսացել է ոչ միայն հայերի այլև մարդկության նախահայրենիքը, հայ ժողովուրդը՝ ամենահին, Աստծու կողմից արարված ժողովուրդը:

Ուշագրավ է, որ պատմահամեմատական լեզվաբանությունը երկար որոնումներից ու կասկածանքներից հետո հանգեց այն եզրակացության, որ, իրոք, հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը հանդիսացել է Հայկական բարձրավանդակը:

Հայկի ու Բելի տիեզերական առասպելը ևս խորենացին դարձրել է ազգային ավանդավեյ, որը մեզ տանում է այն նախապատմական դարերը, երբ խորիների հիմնադրած Վանի թագավորությունը սկսում է միավորել Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերին ու ցեղապետություններին՝ կազմավորելով համահայկական պետություն:

Տոհմանցեղային լեզուների համախմբման և ազգային լեզուների առաջացման պահից սկսած՝ ձևավորվում են նաև հայ ժողովուրդը, նրա համազգային լեզուն, իսկ նախնադարյան տարանջատ ցեղերի սովորական կայանատեղից Հայկական լեռնաշխարհը դառնում է կազմավորվող միասնական հայ ժողովրդի սրբագործած հայրենիքը: Վիպական, նախադեպը չունեցող խորաթափանցությամբ է Փավստոս Բուզանդը կերտում հայոց հողի մոզական ուժի գաղափարը Շապուհի կողմից Արշակ թագավորի հավատարմությունը ստուգելու հայտնի պատումով:

Առասպելականի, վիպականի և պատմականի անծայրաժիր հորիզոններում է մշակվել նաև հայոց ազգային ինքնության գաղափարը: Հարևան ժողովուրդների համոզմամբ ևս հայ ժողովրդի ընտրյալ լինելու ուշագրավ փաստն է հաստատում ալանների արքայադստերը՝ Սաթենիկին վերագրված հանրահայտ ուղերձը հայոց Արտաշես թագավորին:

V դարի հայ դասական պատմագիրներ Փավստոս Բուզանդը, Եղիշեն ու Ղազար Փարպեցին հավաստի փաստերի հիման վրա մշակեցին ազգային միասնության՝ ինքնահամախմբման և ազգային ազատագրական պայքարի՝ ինքազատագրման կուռ ու ամբողջական գաղափարախոսությունը: Հանուն հայրենիքի, նրա ոտնահարված պատվի և ազատության համար գիտակցված մահը Եղիշեն հռչակեց անմահություն, ազգային ազատագրության սրբագործված ծրագիր ու գաղափարախոսություն:

Ստեղծված ծանր իրավիճակում, երբ անհնար էր դարձել քաղաքական անկախության համար գերակշիռ ուժերի դեմ ռազմի դաշտում պայքարը շարունակելը, հայ ժողովուրդը դուրս եկավ քաղաքական պայքարի դաշտ՝ աշխարհում առաջինը քրիստոնեությունն ընդունելով որպես պետական կրոն: Հայոց եկեղեցին, ծեսի ու հավատալիքի կրողը լինելուց բացի, դարձավ համահայկական կենտրոնացված կազմակերպություն:

Հայոց ազգայնականությունը 400 տարվա ընդմիջումից հետո վերաարձարծվեց ու մշակվեց X դարում. «Սասունցի Դավիթ» էպոսում: Արաբների դեմ մղած հաղթական ճակատամարտերում են ծնվել էպոսի հերոսները: Էպոս ստեղծող ժողովուրդը իր առջև նպատակ էր դրել նախ գտնելու, թե մոռացված անցյալի որ կետից է վերընձյուղվել հայ կյանքը, Հայաստանն ազատագրողների՝ ջոջանց տան ակունքները: Ժողովուրդն իր ըմբռնումով ինքն է ի հայտ բերում իր նշանավոր նախնիներին՝ Սանա-

սարին ու Բաղդասարին, ինքն է կերտում Մեծ ու Փոքր Միերների և Դավթի կերպարները:

Յեղային ինքնության խորունկ որակները էպոս ստեղծողները դրսևորեցին նաև հայոց պատմական հայրենիքի գաղափարի կերտման ու սրբագործման ժամանակ: Այդ հայրենիքը նույնպես պատմական հիշողության մեջ մտավ հերոսական առասպելներով ու երգերով:

Ազգային ինքնության, ինքնահամախմբման ու ինքնագատագրման գաղափարները ամբողջացան ու կատարելության հասան էպոսի հերոսական շրջանում՝ երկրորդ և երրորդ՝ Մեծ Միերի ու Դավթի ճյուղերում, որոնց կերպարները նույնպես կերտվել են պատմական որոշակի հիշողությունների ու նրանց իմաստավորող նախնադարյան առասպելների համադրության վրա: Էպոսի այս ճյուղերի պատմական հենքը արաբական լծից Հայաստանի ազատագրումն էր՝ Աշոտ Ա Բագրատունու և Աշոտ Բ Երկաթի գլխավորությամբ: Այստեղ առասպելական նյութը օգտագործվել է դարաշրջանի հանրահայտ գործիչների հետ կուռ միասնությամբ: Աշոտ Ա-ին և Աշոտ Բ Երկաթին էպոս ստեղծողները վերագրել են դյուցազնական, առասպելական կերպարներին հատուկ գծեր՝ նրանց դարձնելով ազգային-ազատագրական անսասան պայքարի գաղափարակիրներ: Փոքր Միերի դյուցազնական հատկանիշները ևս, թեև սերում են առասպելաբանական նախահիմքից, բայց այն ևս ենթարկվել է վիպականացման: Յեղի սպառված կենսական ուժի պահպանության հույսով է էպոսաստեղծ ժողովուրդը Փոքր Միերին պատսպարել Վանի քարաժայռի խոռոչում: Այդ հավատով է հայ ժողովուրդը Արտաշեսյան հարստության վերջին ներկայացուցչին՝ Արտավազդին պատսպարել Արարատի վիհում, իսկ Փոքր Միերին՝ Վանի ժայռախորշում:

Ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությունը որքան էլ ամբողջական էր միջնադարում, այնուամենայնիվ նրանում տիրապետողը ոչ թե գիտականն էր, այլ դարաշրջանին բնորոշ առասպելական, վիպական ու կրոնական շերտերն էին: Ագրարային հարաբերությունից արդյունաբերականին անցման ժամանակաշրջանում է տեղի ունենում հանրության թի բարձրագույն ձևի՝ ազգի, հետևաբար նաև ազգային գաղափարախոսության ձևավորման բարդ ու տևական գործընթացը: Ընթացող համաեվրոպական այս երևույթը XVIII դարում իր արտահայտությունն է գտնում ոչ թե թուրք-պարսկական լծի տակ հեծող Հայաստանում, այլ հայկական գաղթաշխարհում:

«Ազգ» ֆենոմենի բնութագրման, նրա ծագման, հատկանիշների վերաբերյալ առաջադրվել են բազմաթիվ սահմանումներ ու մոդելներ: Ամփոփելով դրանք մեր «Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները» գրքում՝ առաջադրել ենք հետևյալ սահմանումը. ազգը ավատատիրական հասարակարգից բուրժուականին անցման ժամանակաշրջանում ձևավորված մարդկանց այն կայուն ընդհանրությունն է, որն ուրիշ ազգերից տարբերվում է իր ծագմամբ, պատմական հայրենիքով, լեզվով ու հոգեկան կերտվածքի՝ էթնոտարբերիչ հատկանիշներով, իր նախորդ մակարդակներից՝ տնտեսական կյանքի, սոցիալական կառուցվածքի, քաղաքական համակարգի և գաղափարախոսության՝ նախազգային հանրույթներից տարբերող հանրորոշ հատկանիշներով:

Ինչպես տեսնում ենք, ազգային գաղափարախոսությունը ազգի զարգացման, հանրության մակարդակը որոշող եզրափակիչ հատկանիշն է: Հայ ժողովրդի տնտեսական սոցիալական, քաղաքական և գաղափարախոսական կյանքում կատարվող տեղաշարժերն առաջինը նկատում ու փորձում են մեկնաբանել հնդկահայ լուսավորիչները:

Վենետիկի Մխիթարյաններն առաջինը ստեղծեցին հայոց լեզվի դասագրքեր, բառարաններ, հայոց պատմության հսկայական արժեք ունեցող ուսումնասիրություններ: Աշխարհին և հայ ժողովրդին ներկայացրին նախընթաց դարերի հայ դասական արժեքները, որոնք և հիմք դարձան հայ ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման ու ինքնաճանաչման համար: Մովսես Բաղրամյանը, հենվելով այդ ժառանգության վրա, քաղաքականացրեց այն գաղափարը, որ հայոց հայրենիքը՝ իբրև մի ընտրյալ երկիր՝ իր Արարատով, Նախիջևանով, դրախտի չորս գետերով և նրանց սրբագործող ավանդազրույցներով, վկայում է, որ Աստված առաջնություն է տվել այդ երկրին, ճանաչել նրան հետջրհեղեղյան մարդկության առաջին բնօրրան: Իսկ Շահամիր Շահամիրյանը ավելի աննախադեպ թռիչք կատարեց. իր սահմանադրության՝ «Որոգայթ փառացի» հենց առաջին հոդվածով Հայաստանը հռչակեց որպես հայ ժողովրդի հայրենիք: Նա նույնիսկ Հայաստանի քաղաքական քարտեզը տպագրեց և կցեց իր ստեղծած սահմանադրությանը:

Պատմական հայրենիքի գաղափարը սրբագործելուց ու սահմանադրությամբ վավերացնելուց հետո հնդկահայ լուսավորիչները առաջադրեցին և հիմնավորեցին հայ ժողովրդի արարչական գաղափարը: Աշխարհի երկրորդ ծնունդը կապելով Նոյ Նահապետի հետ՝ Բաղրամյանը ներկայացրեց նաև հայ ժողովրդի արքայական ու ազնվական տների ծագումնաբանությունը՝ Նոյ Նահապետից մինչև Ղարաբաղի մելիքները: Անդրադառնալով ազգային ինքնության խնդրին՝ Բաղրամյանը գրել է, որ ինքն իրեն ճանաչելու համար ազգը պետք է որոշակի գիտելիքներ ունենա իր մասին:

Հնդկահայ լուսավորիչները նախապատրաստեցին հայ կյանքի ազգային քաղաքական զարթոնքը, որը նպատակաուղ-

ված էր հայ ազգին լուսավորելու միջոցով համախմբել նրա ցաքուցրիվ ներուժը և նախապատրաստել նոր մարդու՝ ապագա հայի անհատականության բացահայտմանն ու ինքնահամախմբմանը: Ինքնահամախմբման կարողությունն է գոտեպնդում ու ինքնազատագրման մղում թմրությունից արթնացած ժողովրդին: Ուշագրավ է, որ այս անվանի գործիչները մշակեցին հայ ժողովրդի ազատագրության բազմակողմանի մշակված ծրագիր:

Հայաստանը փրկելու նախընթաց շրջանի աղետաբերությունները Իսրայել Օրին դարձրեց համաշխարհային ներհակ ուժերը Հայաստանի ազատագրության գործին ծառայեցնելու գիտականորեն մշակված ու դավանագիտորեն հիմնավորված ծրագիր: Կողմնորոշվելով դեպի Ռուսաստան՝ նա գծագրեց Հայաստանի ազատագրության այն նախաշավիղը, որով քայլեց հայ ժողովուրդը մի ամբողջ հարյուրամյակ՝ մինչև 1828 թվականը:

Հայաստանի ազատագրության՝ Հովսեփ Էմինի ծրագրով նախատեսվում էր ստեղծել հայ-վրացական եվրոպական տիպի վարժված բանակ, ազատագրել Հայաստանը և ստեղծել հայ-վրացական դաշնային պետություն:

Շահամիր Շահամիրյանը Հայաստանի ազատագրության խնդիրը մի կողմից կապում էր հայ-վրացական համագործակցության, մյուս կողմից՝ Ռուսաստանի աջակցության հետ: Բացի դրանից՝ նա Հայաստանի ազատագրության խնդիրը դարձնում է համազգային՝ կարևորելով արտերկրի հայության և Արցախի մեկիջությունների տեղն ու դերը:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի տեսաբաններից առաջինը Մովսես Բաղրամյանն էր, որ հերքեց դրսի անշահախնդիր օգնության գաղափարը և առաջադրեց ինքազատագրման իրատեսական գաղափարը: Հայ ժողովրդին, որին

թուրքերն ու պարսիկները պահում էին պատմության ետնաբեմում, Բաղրամյանը տեսականորեն դարձրեց իրատեսական քաղաքական ուժ:

XIX դարում հայոց ազգային զարթոնքը աննախադեպ զարգացավ, որին նպաստեցին քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի շրջադարձային իրադարձությունները: Հատկապես 1828 թ. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմները, 1861 թ. ճորտատիրական կարգերի վերացումը Ռուսաստանում և այլն: Ձևավորվող հայ ազգային գաղափարախոսությունները կերտողները հանդիսացան հայ ժողովրդի տաղանդավոր գործիչները՝ Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Ղ. Ալիշանը, Ռ. Պատկանյանը, Ս. Նազարյանցը, Գ. Արծրունին, Րաֆֆին: Նրանք նորովի կյանքի կոչեցին նախնադարյան առասպելներով ամրագրված հայ ժողովրդի արարչական ծագման ու սրբագործված հայրենիքի գաղափարները: Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը դարձավ հայոց ազգային քաղաքական զարթոնքի առաջին ղողանջը և ազգային համախմբման ու ազատագրական պայքարի քաղաքական ծրագիրը:

Անդրադառնալով հայրենիքին՝ դեռևս 1849 թ. «Բազմավեպում» հրատարակած «Ազգասիրություն» հոդվածում Ղ. Ալիշանը ազգի գրեթե ժամանակակից սահմանումն է տալիս՝ գաղափարայնացնելով ցեղի ու հայրենիքի տեղն ու դերը ազգային գաղափարախոսության համակարգում. սուտ է այն փիլիսոփան, հոչակում է մեծանուն մտածողը, որ ազգասիրությունը հակադրում է մարդասիրությանը, որ հայրենիքը աղանդ է հոչակում, և ասում է, թե երկիրը հայրենիք է լավ մարդու:

Հայի ու նրա հայրենիքի փոխադարձ կապի դասական սահմանումը տալիս է Ռ. Պատկանյանը «Հայ և հայություն» բանաստեղծությամբ:

Ազգային բյուրեղացման շրջադարձային այս պատմաշրջանում, հալածական հայի ու նրա ավերված հայրենիքի ծանր ու աղետալի իրավիճակի, հայրենիքի համար տառապող որդու կերպարի, նրա մղած աննահանջ պայքարի դրամատիկ թեման ասպարեզ է բերել Րաֆֆին «Սամվել» վեպում:

Նշված հեղինակների աշխատություններում մշակվում են նաև ազգային գաղափարախոսության մյուս դրույթները: Խ. Աբովյանի ստեղծագործություններում զգալի տեղ են գրավում հայ ժողովրդի հոգեկերտվածքի՝ նրա մտածելակերպի ու գործելակերպի ճանաչման հարցերը: Հայոց ինքնության ոգեղենությունն ու կենսունակությունը ի հայտ է բերում նաև Ղ. Ալիշանը՝ ընդգծելով, որ օտարները նույնպես ընդունում են, որ հայ ազգը մտավոր մեծ ներուժ ունեցող ազգ է: Պետականազուրկ հայ ժողովրդի մշակութային-լուսավորական այլ հաստատությունների բացակայությունը XIX դարի երկրորդ կեսին հայ մամուլի վրա է դրել ազգի մտավոր գործունեության, գրականության, հրապարակախոսության, ազգային ինքնության բացահայտման պատասխանատվությունը: Արևելահայ կյանքում մեծ դեր են խաղում «Հյուսիսափայլը» և «Մշակը»: Կարևորվում են Ս. Նազարյանի «Հայերի կոչումը մարդկության մեջ» և Գրիգոր Արծրունու «Հայերի կոչումը Ասիայում» ուսումնասիրությունները: Աբովյանին, Ալիշանին, Րաֆֆուն շատ էր մտահոգում հայոց ազգային միասնության խնդիրը:

XIX դարի երկրորդ կեսին առաջնային դարձավ հատկապես հայ ժողովրդի ազգային-ազտագրական պայքարի գաղափարախոսության կերտման խնդիրը: «Վերք Հայաստանի» վեպի հե-

րոս Աղասին հայ ժողովրդի ինքնազատագրման առաջին գեղարվեստական կերպարն էր մեր նոր գրականության մեջ: Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» ստեղծագործություններում պոեզիայի դաշտ է բերվում հայրենանվեր հերոսներին: Հայրենիքի համար մարտիրոսանալու պատրաստակամությամբ են տոգորված Միքայել Նալբանդյանի բանաստեղծությունները: Ազգի ազատության հասնելու մասին Նալբանդյանը, Պատկանյանը, Բաֆֆին ստեղծում են ազգային-ազատագրական պայքարի ամբողջական ուսմունք:

Հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությունը ավելի ամբողջացավ ու կատարելության հասավ արդի դարաշրջանում՝ 1900-2020 թթ.: Այս 120-ամյա պատմաշրջանը ազգային գաղափարախոսություն ստեղծելու և քարոզելու հնարավորությունների ընձեռման առումով կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջին փուլում ընդգրկել ենք 1900-1920 թ. վերջը, մինչև առաջին հանրապետության անկումը, որը ազգային գաղափարախոսության համար նպաստավոր ու արգասաբեր էր:

Երկրորդ փուլում ընդգրկել ենք 1921-1991 թթ., Խորհրդային Հայաստանի 70-ամյա պատմաշրջանը, որում կոմունիստական կուսակցության դիկտատուրան, թեև արգելում էր ցանկացած ազգայնական դրսևորում, սակայն համազգային մշակույթի ընդհանուր վերելքը մեծապես նպաստեց ազգային ինքնաճանաչմանը: Երրորդ փուլն ընդգրկում է Ետխորհրդային 30-ամյակը, որի սկզբնական շրջանում ազգային գաղափարախոսությունը թեև որակվեց «կեղծ կատեգորիա», սակայն ոչ մի արգելք չստեղծվեց՝ այն կյանքի կոչելու համար:

Հայ ժողովուրդը իր անդառնալի կորուստների ծանր օրերին զինվորագրեց ոչ միայն անձնազոհ ազատամարտիկ որդիներին, այլև հայրենանվեր մտավորականներին, որոնք ներդրեցին

իրենց հոգևոր ներուժը և կատարելագործեցին ազգի փրկության ու բարգավաճման վարդապետությունը:

Վերածնվող հայ ոգու արարիչը այս հանգրվանում ևս դարձավ հայ գրականությունը: Նրան էր վիճակվել գտնել ազգային ոգու վերակերտման նոր մայրուղիները: Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ է սկիզբ առնում բանաստեղծի, ժողովրդի ու նրա հայրենիքի միասնության գաղափարը: «Հայոց լեռներում» և «Հայրենիքիս հետ» բանաստեղծություններով, Տերյանի «Երկիր Նաիրի» շարքով, Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծություններով հայ ու համաշխարհային գրականությունը հարստացավ հայրենասիրական ոգով: Յեղակրոնության և տարոնականության ուխտերով հայրենիքի ու ցեղի սրբագործման ամբողջական ուսմունք ստեղծեց Գարեգին Նժդեհը: Հայոց ազգային ինքնության խորքային շերտերը հայտնագործեցին Կոմիտասը, Թորամանյանը, Աբեղյանը, Աճառյանը, Լեոն:

Արդի դարաշրջանում հայ ժողովրդի հոգեկերտվածքի հանրագիտարանը դարձան Հ. Թումանյանի ստեղծագործությունները: Ազգային ինքնաճանաչության բացակայությունը Գ. Նժդեհի համոզմամբ հանգեցնում է չօգտագործված ազգային ներուժի մեծ մասի անտեղի կորստյան: Նժդեհը բանաձևեց այն գաղափարը, ըստ որի՝ հայրենիքը վաղը պաշտպանել կարող են նրանք, ովքեր կսովորեն ապրել այն բանի համար, որի համար արժի մեռնել, և մեռնել այն բանի համար, որի համար արժի ապրել:

Ազգային միասնության խնդիրը ևս նոր թափով ծավալվեց՝ կապված Առաջին համաշխարհային պատերազմի, Հայոց ցեղասպանության, փրկվածների հայրենագրկման ու սփյուռքի առաջացման, Արևելահայաստանի մասնատման հետ: Ինքնահամախմբումը իմաստավորվում է որպես հայկականության տարածքային ու արժեքային համակարգի ամբողջության ըմբռնում:

Ազգային միասնության գաղափարախոսության կերտմանը դարձյալ անդրադարձան Թումանյանը՝ «Հայաստանի օգնության կոմիտեի» (ՀՕԿ) ստեղծմամբ և Նժդեհը՝ ցեղակրոն ու տարոնական շարժումներով:

Որպես հայ ժողովրդի ինքնահամախմբման բնաբան՝ հավերժորեն ղղանջեց Չարենցի «Գիրք ճանապահին», որի «պատգամը» հատվածում գաղտնագրված է հանրահայտ արոստիկոսը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» պատգամը:

Հետպատերազմյան շրջանում հայ ժողովրդի հայաստանաբնակ և սփյուռքաբնակ զանգվածները համախմբվում են Հովհաննես Շիրազի պոեզիայի հայրենանվեր գաղափարների շուրջ:

Քաղաքական կյանքի աննախադեպ ակտիվացմանը զուգընթաց՝ XX դարասկզբին, Արևմտահայության ազատագրության հարցը առավել բարդ ու բազմաշերտ դարձավ: Ականավոր պատմաբան Ն. Ադունցին էր բախտ վիճակվել առաջինը գիտականորեն ուրվագծել Հայկական հարցի շրջանակներն ու նրա լուծման հանարավոր ուղիները: Նա քննարկեց հայ ժողովրդի արտաքին քաղաքական կողմնորոշման, պատմական հայրենիքում ստեղծվելիք պետության կենսատարածքի հարցեր: Ստեղծվելիք պետության կարևորությունը չի պայմանավորվում հողերի մեծ կամ փոքր տարածքներով: Ն. Ադունցը կարևորում է այն գործոնը, որ քաղաքակիրթ պետությանն ու ժողովրդին անհրաժեշտ են մշակութային համարժեք դրացիություն, ճանապարհներ, որ նրա լեռնային կիրճերից հանեն տնտեսական մշակութային մեծ աշխարհ ու շուկա:

Անդրադառնալով բազմիցս արծարծված «Հայկական հարցին»՝ Հ. Թումանյանը, գտնում է, որ Հայկական հարցը Ռուսաստանում ոչ թե քաղաքական հարց է, այլ քաղաքացիական հարց,

որը պետական անկախության փոխարեն առաջադրում է կյանքի, գույքի, պատվի ու կուլտուրական զարգացման ապահովություն:

Ահա գեղարվեստական ու պատմագիտական այս հսկայական ձեռքբերումների արդյունքում քաղաքականապես հասունացավ նաև ինքը՝ հայ ժողովուրդը, և ոտք դրեց մի պատմաշրջան, որում հայ ժողովրդին հաջողվեց երեք կարևորագույն ձեռքբերում՝ առաջին՝ վերականգնել հայոց անկախ պետականությունը՝ երրորդ հանրապետությունը, երկրորդ՝ ազատագրել Արցախը և հռչակել ինքնիշխան հանրապետություն, և երրորդ՝ միջազգայնացնել Հայոց ցեղասպանության փաստը և ընդունելի ու ճանաչելի դարձնել բազմաթիվ պետությունների կողմից: Կարևորագույն ձեռքբերումներ էին սրանք, առանց որոնց անհնար կլիներ «Հայկական հարցի» հաջորդ մակարդակին՝ Հայ դատի ու պահանջատիրության հարցը միջազգային մակարդակով օրակարգի հարց դարձնելու համար:

Անդրադառնալով հայ ժողովրդի ինքնազատագրման գաղափարախոսությանը՝ տեսնում ենք, որ գործ ունենք ոչ թե ավարտված, այլ տակավին չլուծված ու շարունակական երևույթի հետ, երևույթ, որը մեր քննարկած գրեթե բոլոր հանգրվաններում գտնվել է հայ հանրային կյանքի կիզակետում: Անցնելով ազգային ու միջազգային իրադարձությունների փորձություններով՝ հայ ժողովուրդը հոգեկան տագնապների սպասումներով ստեղծել է հույսերի ու հուսախաբության վերելքների ու անկումների տրամադրություններ: Այժմ մեր խնդիրն է ոչ թե թվարկել դրանք, այլ գտնել նրա լուծման տարբերակները ժամանակակից տեսությունների ձեռքբերումների մակարդակում:

ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծվեցին միայն նպաստավոր պայմաններ՝ ազատ որոնումներ կատարելու այդ ուղղությամբ, հատկապես ուշագրավ են պրոֆ. Հակոբ Հակոբյանի «Հայրենիք

վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը» և ՀՀ ակադեմիայի թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի «Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը», «Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում» աշխատությունները: Թուրքիայից այժմ պահանջվում է միայն ճանաչել ցեղասպանության փաստը ու քաղաքական երկխոսություն սկսել հայերի հետ և արդարացի վարվել իր տարածքում ապրող հայ փոքրամասնության հետ: Հայրենիք վերադառնալը ձգձգվելու դեպքում տարագիր հայությունը պետք է կարողանա հիշել և իր հիշողության մեջ վառ պահել նվիրական հայրենիքի գաղափարը: Հ. Հակոբյանը մատնացույց է անում հրեաների 1800 տարվա հիշողության արդյունքում նպատակին հասնելու փաստը: Իրենց պատմական հայրենիքից արտաքսված հայության հայրենիք վերադառնալու իրավունքը ոչ միայն բխում է ժամանակակից միջազգային իրավունքի նորմերից, այլ ճանաչված ու վավերացված է մի շարք միջազգային վավերագրերով, որոնք վերաբերում են Հայ դատին: Բնականաբար Ռուսաստանի վերաբերմունքը Հայ դատի նկատմամբ պատմական զարգացման բոլոր փուլերում կապված է եղել ռուս-թուրքական հարաբերությունների հետ: ՌԴ-ն հայկական այն գաղթավայրն է, որտեղ Հայաստանի չափ հայեր են ապրում: Հայերը արտաքին ցանկացած հարաբերություններում նախապատվությունը տալիս են Ռուսաստանին: Ռուսաստանը հսկայական հանրային կապիտալ ունի Հայաստանում, հայերն էլ՝ իրենց հերթին Ռուսաստանում: Այս փոխկապակցվածությունը չի կարող չպայմանավորել Հայաստանում ստեղծվելիք իրատեսական քաղաքականությունը: Հարկ է նշել, որ հայ և ռուս ժողովուրդները ունեն նաև ռազմավարական սերտ համագործակցություն: Նկատի ունենք հայ և ռուս ժողովուրդների դեմ ուղղված պանթուրքիզմի վտանգը:

Հայտնի է, որ 1921 թ. Լենինի և Քեմալի հայադավ գործարքի արդյունքում Ադրբեջանին հանձնվեցին Նախիջևանը և Ղարաբաղը, որի արդյունքում էլ Օսմանյան Թուրքիան Ադրբեջանից բաժանում էր Զանգեզուրի ընդամենը 20-25 կմ-անոց շերտը:

Հայկական լեռնաշխարհի ամենահայկական տարածքներից մեկը եղել է Նախիջևանը, որը փաստացիորեն Արարատյան դաշտի շարունակությունն է: Ոչ միայն Նախիջևանը, այլև 1920-ական թթ. կորցրած մեր մյուս շրջանները՝ Սուրմալուն, Իգդիրը, ավելի հստակ՝ Արարատյան դաշտի՝ Արաքսի աջ ափին գտնվող շրջանները, երբեք չեն եղել Երևանի նահանգից դուրս տարածք: Այսքան անարդարություններից հետո հայ ժողովուրդը մինչև այժմ չի մշակել որևէ հայեցակարգ Նախիջևանի և նշված մյուս շրջանների ազատագրության մասին:

Հայ ժողովրդի հայրենիքի ազատագրության ու տարագիր հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը փակուղի տանող վտանգավոր մյուս ուժը քրդական գործոնն է, նամանավանդ այժմ, երբ հայոց հայրենիքում քրդերը ոտքի են կանգնել: Հայտնի է, որ միլիոնավոր քրդեր այժմ ոչ միայն ապրում են նաև իրենց ձեռքով բնաջնջված հայերի պատմական հայրենիքում, այլև դրանք հռչակում են իրենց հայրենիքը: Քրդական գործոնը տիպաբանորեն պատկանում է Հայոց ցեղասպանության իրագործման համակարգին, որով քրդերի պատասխանատվությունը չի նվազում: Այսուհանդերձ, Հայաստանը չունի որևէ սահմանազատված հայեցակարգ քրդական հարցում: Հիմնահարցի մասնագետ Ն. Հովհաննիսյանը առաջարկում է համայն հայության գերակա հայեցակարգ մշակելու համար ստեղծել համահայկական հանձնաժողով Հայաստանի, Արցախի և սփյուռքի ներկայացուցիչների մասնակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
ա) Հայոց ֆենոմենը	8
բ) Հայոց ազգային գաղափարախոսության էությունը.....	14
գ) Ինչո՞ւ է վտանգված հայության գոյությունը.....	33
ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆ	
Առասպելական, վիպական, պատմական և կրոնական շերտերը հայոց ազգայնականության ակունքներում.....	46
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԳՐՎԱՆ	
Հայոց ազգայնականության առասպելական, վիպական և պատմական շերտերը «Սասունցի Դավիթ» էպոսում	73
ԵՐՐՈՐԴ ՀԱՆԳՐՎԱՆ	
Հայ ազգի և ազգայնականության ձևավորման գարթոնքը XVIII դարում	94
ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆԳՐՎԱՆ	
Հայ ազգի և հայոց ազգայնականության ձևավորումը XIX դարում	128
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՎԱՆ	
Հայոց ազգայնականությունը արդի դարաշրջանում	163
ԱՄՓՈՓՈՒՄ	251

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՆՋԵԼ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻՉՄ

**ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐՈՒՄ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 07.04.2021:
Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 17:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՆԵՆՁԵԼ ԳԵՐԱՄԻՄԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ



Յ. Գ. Մանուկյանը ծնվել է 1944 թ. Իջևանի շրջանի Աջաջուր գյուղում: 1968 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և ասիստենտի պաշտոնով աշխատանքի անցել նույն ֆակուլտետի Հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության նորաբաց ամբիոնում:

Աղբյուրագիտության բաժնի փակվելու պատճառով տեղափոխվել է Գիտական կոմունիզմի ամբիոն, իսկ նրա՝ Քաղաքագիտության ամբիոնի վերակառուցվելուց հետո՝ 2001-2008 թթ., վարել այդ ամբիոնի վարիչի պաշտոնը:

Պատմական գիտությունների թեկնածու, Գիտական կոմունիզմի ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, քաղաքագիտության պրոֆեսոր լինելը նրան հնարավորություն են տվել զբաղվելու մի քանի հարակից գիտություններով և հրատարակած մենագրություններում («Պոլոս Տարոնացի», Եր., 1982 թ., «Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները», Եր., 1988, «Հայության գոյապահպանության գաղափարախոսությունը», Եր., 1994, «Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության», Եր., 2002, «Հայ քաղաքական մտքի պատմություն», Եր., 2013, «Մովսես Բաղրամյան», Եր., 2015, և «Արարատիզմ») մշակելու հայագիտության մի նոր ուղղություն՝ քաղաքական հայագիտություն:

Հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրների լուծմանը նվիրված հայագիտական հետազոտությունների՝ հայոց պատմության, դիվանագիտության, միջազգայնագիտության, գրականության, փիլիսոփայության ընձեռած նյութերը հեղինակը բերել է քաղաքական դաշտ, կատարել քաղաքագիտական վերլուծություններ՝ առաջարկելով քաղաքական լուծումներ: